

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ՔՐԵԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

ՀՏԴ 341.4  
ԳՄԴ 67.412  
Պ 505

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը:*

Պետրոսյան Գուրգեն

Պ 505 Միջազգային քրեական իրավունք/ Գ. Պետրոսյան: Ուսում-  
նական ձեռնարկ: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 340 էջ:

Միջազգային քրեական իրավունքը միջազգային իրավունքի բացառիկ իրավունքի ճյուղ է: Այն սկիզբ է առնում Նյուրենբերգի միջազգային դատավարությունից: Այդ դատավարությունից ի վեր միջազգային հանցագործության շարքին են դասվում մարդկության դեմ հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը և ցեղասպանությունը: Թեև այս հանցագործությունները պարբերաբար բարձրաձայնվում են թե՛ քաղաքական խոսքում, թե՛ զանգվածային լրահոսում, սակայն քչերն են պատկերացնում վերոհիշյալ հանցակազմերի իրավաբանական բովանդակությունն ու նշանակությունը: Այս աշխատությունը հնարավորինս մատչելի ներկայացնում է միջազգային քրեական իրավունքի ձևավորման յուրօրինակ աղբյուրներն ու սկզբունքները, ինչպես նաև ոլորտի արդի խնդիրներն ու մարտահրավերները: Աշխատությունը հասցեագրվում է քրեական կամ միջազգային իրավունքի մասնագետներին, կարող է օգտակար լինել նաև միջազգայնագետներին, պատմաբաններին ու քաղաքագետներին:

ՀՏԴ 341.4  
ԳՄԴ 67.412

ISBN 978-5-8084-2506-4

© ԵՊՀ հրատ., 2021  
© Պետրոսյան Գ., 2021

## **Foreword by Judge Professor Dr. Bertram Schmitt**

Dear reader,

This is the first textbook on international criminal law published in Armenian. As such, already, it is of obvious importance and can be said to mark the beginning of a new era.

An era in which discussions about international criminal law can be brought closer to many more people, and in which these discussions will be informed by a proper understanding of the foundations and intricacies of international criminal law.

International criminal law tends to be discussed, certainly in the academic world, mostly in English and French. These are also the working languages of the International Criminal Court, even though, in accordance with Article 50 of the Rome Statute, its official languages further include Arabic, Chinese, Russian, and Spanish.

Importantly, this volume is published in the official language of a country which, to date, has signed, but not yet ratified the Rome Statute. As such, the value of a textbook which can contribute to an informed exchange of views cannot be overestimated.

It is in this sense also that good textbooks are in general of value: to provide students, academics, or individuals simply interested in a specific topic with a foundation to form their own views and thus enable them to participate in shaping the future discussions about international criminal law. It is my hope that this textbook will further positively promote the understanding of the aims, the functioning and the benefits of international criminal law and the International Criminal Court.

Professor Dr. Bertram Schmitt

Judge at the International Criminal Court

## Նախաբան

Մույն աշխատանքի նպատակը միջազգային քրեական իրավունքի բարդ համակարգում ուղեցույց ծառայելն է: Լինելով միջազգային իրավունքի առանձնահատուկ ճյուղ՝ քրեական իրավունքն իր տերմինաբանությամբ և ազգային իրավական տարբեր համակարգերից ներառած առանձին տարրերով առանձնակի դժվարություններ է առաջացնում ինչպես ուսանողների, այնպես էլ պրակտիկ իրավաբանների և մասնագետների համար: Իրավունքի այս ճյուղի նշանակությունն ու դերը Հայաստանի Հանրապետության համար մեծ է: Միջազգային ասպարեզում առկա մարտահրավերները ավելի են պարտավորեցնում իրավունքի վերոհիշյալ ճյուղի առանձնահատկությունների լրջորեն ուսումնասիրումն ու տիրապետումը:

1945 թ. Նյուրնբերգյան դատավարության բացման խոսքում ամերիկացի գլխավոր դատախազը՝ Ռոբերտ Ջեքսոնը, նշել է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հանցագործություններն այնքան կործանարար էին, որ մարդկությունը չէր կարող հանդուրժել դրանց անտեսումը: Այդ դատավարությունից ի վեր չորս հանցակազմեր միջազգային նշանակություն ստացան: Դրանք են՝ մարդկության դեմ հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը և ցեղասպանությունը: Թեև այս հանցագործությունների մասին պարբերաբար բարձրաձայնում են թե՛ քաղաքական խոսքում, թե՛ զանգվածային լրահոսում, սակայն քչերն են պատկերացնում վերոհիշյալ հանցակազմերի իրավաբանական բովանդակությունն ու նշանակությունը:

Այս աշխատությունը հնարավորինս մատչելի ներկայացնում է միջազգային քրեական իրավունքի ձևավորման յուրօրինակ աղբյուրներն ու սկզբունքները, ինչպես նաև ոլորտի արդի խնդիրներն ու մարտահրավերները: Աշխատությունը բաղկացած է հինգ բաժնից:

1. *Միջազգային քրեական իրավունքի տեսություն և պատմություն*: Այս բաժինը ներկայացնում է իրավունքի ճյուղի ձևավորման պատմական փուլերը, հետապնդվող նպատակն ու նշանակությունը: Շեշտը դրվում է մասնավորապես Նյուրնբերգյան դատավարության արդյունքում ձևավորված սկզբունքների վրա, որոնք մինչ օրս արդիական դերակատարություն ունեն ոչ միայն միջազգային քրեական իրավունքում, այլև ազգային քրեաիրավական տարբեր համակարգերում:

2. *Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր մաս*: Միջազգային իրավունքի այս ճյուղում բարդություններ են առաջանում մասնավորապես այն պատճառով, որ ձևավորվել են երկու տարբեր և մասամբ իրարամերժ իրավական համակարգերի՝ ռոմանագերմանական ու անգլոսաքսոնյան սկզբունքների համակցությամբ: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ավելի խորաթափանց հայացք նետել այս ոլորտի առանձնահատկությունների վրա:

3. *Միջազգային քրեական իրավունքի հատուկ մաս*: Այս բաժինը ներկայացնում է միջազգային հանցագործությունների ձևակերպման պատմական և քաղաքական ասպեկտները, ինչպես նաև միջազգայնորեն վերջիններիս ճանաչումը: Առանձնակի ուշադրություն է հատկացվում հանցակազմերի առանձին տարրերին:

4. *Միջազգային քրեական դատավարություն*: Դատավարական տեսանկյունից բարդությունները սակավ չեն, ուստի այս ոլորտի խորքային ուսումնասիրությունն ավելի քան անհրաժեշտ է: Միջազգային քրեական դատավարության առանձնահատկությունները դիտարկվում են մասնավորապես Միջազգային քրեական դատարանի պրակտիկայի լույսի ներքո: Միևնույն ժամանակ ներկայացվում է Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը, ինչի շնորհիվ ավելի հեշտ է հասկանալ միջազգային քրեադատավարական նրբությունները:

5. *Միջազգային բնույթի հանցագործություններ և միջազգային համագործակցություն*: Այս բաժինը ներկայացնում է միջազգային

բնույթի հանցագործությունները, ինչպես նաև պետությունների միջև քրեական գործերի շուրջ միջազգային պայմանագրերից բխող համագործակցությունը:

Աշխատությունը կարող է օգտակար լինել ոչ միայն քրեական իրավունքի կամ միջազգային իրավունքի մասնագետներին, այլև միջազգայնագետներին, պատմաբաններին և քաղաքագետներին:

Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանին, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աննա Մարգարյանին, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Գևորգյանին, Արհբյուրյոյի նախագահ Աշոտ Պետրոսյանին, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ինչպես նաև Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարանի իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Քրիստոֆ Զաֆերլինգին այս աշխատանքի շրջանակներում ցուցաբերած աջակցության համար:

Գուրգեն Պետրոսյան  
իրավ. գիտ. դոկտոր,

Ֆրիդրիխ-Ալեքսանդր Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարան  
2021 թ. Նյուրնբերգ

Dr. Gurgen Petrossian, LL.M. (Heidelberg)



## Բովանդակություն

ԲԱԺԻՆ I. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	
ԳԼՈՒԽ 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	
ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
1. «Միջազգային քրեական իրավունք» հասկացությունը .....	21
2. Միջազգային քրեական իրավունքի նպատակը .....	25
2.1. Կանխարգելիչ .....	26
2.2. Պատժիչ .....	27
2.3. Վերականգնողական .....	28
2.4. Լրացուցիչ նպատակներ .....	29
2.4.1. Փոխլրացում .....	30
2.4.2. Ճշմարտության ամրագրում .....	30
2.4.3. Հաշտեցում .....	31
ԳԼՈՒԽ 2. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	
ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ	
3. Միջազգային քրեական իրավունքի ձևավորումը .....	33
4. Միջազգային քրեական իրավունքի ձևավորման փուլերը .....	36
4.1. Միջազգային հանցագործությունների պատմական	
սահմանումը .....	36
4.2. Առաջին աշխարհամարտ .....	38
4.2.1. Լայպցիգյան դատավարություններ .....	39
4.2.2. Ստամբուլյան դատավարություններ .....	41
4.3. Երկրորդ աշխարհամարտ .....	43
4.3.1. Նյուրնբերգյան դատավարություններ .....	45
4.3.2. Տոկիոյի դատավարություններ .....	51
4.4. Սառը պատերազմ .....	52
4.5. Միջազգային ժամանակավոր և հիբրիդային դատարաններ .....	53
ԳԼՈՒԽ 3. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	
5. Նյուրնբերգյան սկզբունքներ .....	62
5.1. Անձնական պատասխանատվությունը .....	63

5.2. Ունիվերսալության սկզբունքը .....	64
5.3. Պետության ղեկավարի անձեռնմխելիության բացակայության սկզբունքը .....	66
5.4. Պատասխանատվության սկզբունքը վերադասի հրամանի պարագայում.....	68
5.5. Արդար դատաքննության սկզբունքը .....	68
5.6. Միջազգային հանցագործությունները .....	70
5.7. Պատասխանատվության սկզբունքը հանցակցության պարագայում.....	70
6. Հատուկ սկզբունքներ.....	71
6.1. Դրոշի սկզբունքը .....	71
6.2. Քաղաքացիության սկզբունքը.....	72
6.3. Nullum crimen sine lege .....	72
6.4. Nulla poena sine lege .....	74
6.5. Ne bis in idem .....	75
6.6. Հետադարձ ուժի արգելքը .....	75
7. Միջազգային քրեական իրավունքը՝ պոզիտիվ և բնական իրավունքների ներքո.....	77
8. Միջազգային քրեական իրավունքի աղբյուրները.....	78
8.1. Առաջնային աղբյուրներ.....	78
8.2. Երկրորդական աղբյուրներ .....	80
8.3. Երրորդական աղբյուրներ .....	80
9. Անցումային արդարադատություն.....	81
9.1. Քրեական հետապնդում.....	84
9.2. Համաներում.....	84
9.3. Ճշմարտության հանձնաժողովներ .....	85
9.4. Փոխհատուցում .....	86
9.5. Պաշտոնատար անձանց ստուգում .....	86
ԲԱԺԻՆ II. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ	
ԳԼՈՒԽ 4. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ	
10. Միջազգային հանցակազմ.....	88

10.1. Օբյեկտիվ կողմը.....	90
10.2. Սուբյեկտիվ կողմը .....	93
11. Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ .....	95
11.1. Անմեղսունակությունը .....	96
11.2. Հարբած վիճակում հանցանք կատարելը .....	96
11.3. Անհրաժեշտ պաշտպանություն .....	97
11.4. Ծայրահեղ անհրաժեշտությունը .....	99
11.5. Փաստական կամ իրավական սխալ .....	101
11.6. Հրաման կամ կարգադրություն կատարելը.....	103
11.7. Անձեռնմխելիությունը.....	104
11.8. Այլ հանգամանքներ .....	105
<b>ԳԼՈՒԽ 5. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ</b>	
12. Անձնական պատասխանատվություն.....	107
12.1. Կատարող.....	109
12.2. Joint Criminal Enterprise .....	112
12.3. Հրամայող, հրահրող, դրդող.....	114
12.4. Օժանդակող, խրախուսող, այլ կերպ աջակցող.....	116
12.5. Միասնական նպատակին նպաստող.....	117
13. Վերադասի պատասխանատվություն.....	118
13.1. Հիերարխիա .....	119
13.2. Իմացությունը.....	121
13.3. Պարտականությունները.....	123
13.4. Պատճառահետևանքային կապ .....	125
14. Հանցավորը և կամովին հրաժարում .....	126
14.1. Հանցավորը.....	126
14.2. Կամովին հրաժարում.....	126
<b>ԲԱԺԻՆ III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ</b>	
<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍ</b>	
<b>ԳԼՈՒԽ 6. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	
15. Ընդհանուր դրույթներ.....	127
15.1. Ցեղասպանության կոնվենցիա.....	130

15.2. «Ցեղասպանություն» եզրույթը Հռոմի ստատուտում .....	136
16. Հանցակազմի կառուցվածքը .....	139
16.1. Կոնտեքստուալ հատկանիշներ.....	142
16.1.1. Պաշտպանվող խումբ .....	144
16.1.2. Հատուկ դիտավորությունը.....	148
16.1.3. Լրիվ կամ մասնակի ոչնչացումը .....	151
16.2. Առանձին գործողություններ .....	154
16.2.1. Խմբի անդամների սպանությունը .....	154
16.2.2. Խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը.....	155
16.2.3. Որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը .....	156
16.2.4. Խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցներ գործադրելը .....	157
16.2.5. Երեխաներին բռնի փոխանցելը մարդկային մեկ խմբից մյուսին .....	158
17. Ցեղասպանության հրահրում .....	159
<b>ԳԼՈՒԽ 7. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ</b>	
18. Ընդհանուր դրույթներ.....	164
19. Հանցակազմի կառուցվածքը .....	168
19.1. Կոնտեքստուալ հատկանիշներ.....	169
19.1.1. Հարձակում .....	169
19.1.2. Պարբերական և լայնածավալ .....	170
19.1.3. Քաղաքացիական բնակչություն .....	171
19.1.4 .Սուբյեկտիվ կողմը .....	173
19.2. Առանձին հանցագործություններ.....	173
19.2.1. Սպանություն .....	174
19.2.2. Բնաջնջում .....	176
19.2.3. Ստրկատիրություն .....	176
19.2.4. Տեղահանություն.....	178

19.2.5. Անօրինական ազատագրկում.....	180
19.2.6. Խոշտանգում .....	181
19.2. Բռնաբարություն և սեռական բնույթի այլ գործողություններ.	183
19.2.8. Առանձին խումբ մարդկանց նկատմամբ հետապնդում.....	185
19.2.9. Բռնի անհետացում.....	186
19.2.10. Ապարտեիդի հանցագործություն.....	187
19.2.11. Նմանատիպ անմարդկային այլ գործողություններ .....	188
<b>ԳԼՈՒԽ 8. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
20. Ընդհանուր դրույթներ.....	191
20.1. Ժնկյան օրենքներ .....	193
20.2. Հաագայի օրենքներ.....	195
21. Հանցակազմի կառուցվածքը .....	197
21.1. Կոնտեքստուալ հատկանիշներ.....	197
21.1.1. Զինված ընդհարում .....	197
21.1.2. Միջազգային և ոչ միջազգային զինված ընդհարում .....	199
21.1.3. Պաշտպանվող օբյեկտ .....	201
21.1.4. Հանցագործության և ընդհարման փոխադարձ կապը .....	203
21.2. Սուբյեկտիվ կողմը .....	203
22. Առանձին գործողություններ .....	203
22.1. Միջազգային զինված ընդհարում .....	205
22.2. Ոչ միջազգային զինված ընդհարում .....	207
<b>ԳԼՈՒԽ 9. ԱԳՐԵՄԻԱՅԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ</b>	
23. Ընդհանուր դրույթներ.....	211
24. Հանցակազմի կառուցվածքը .....	214
24.1. Կոնտեքստուալ հատկանիշներ.....	215
24.1.1. Պետության կողմից ուժի գործադրումը .....	215
24.1.2. Այլ պետության ինքնիշխանությունը.....	216
24.1.3. ՄԱԿ-ի կանոնադրության բացահայտ ոտնահարումը.....	216
24.1.4. Ղեկավար դերակատարությունը.....	217
24.2. Առանձին գործողությունները.....	217
24.3. Սուբյեկտիվ կողմը .....	218

ԲԱԺԻՆ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՎ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

25. Միջազգային քրեական իրավագործություն	220
26. Միջազգային քրեական դատարանի իրավասություն	224
26.1. Իրավասություն	225
26.2. Գործարկման մեխանիզմ	229
26.3. Փոխըացման պայմաններ	231
26.3.1. Պետության դերակատարությունը	233
26.3.2. Ne bis in idem	236
26.3.3. Գործի լրջությունը	237
27. Միջազգային քրեական վարույթ	240
27.1. Նախնական ուսումնասիրություններ և հետաքննություն	241
27.2. Նախաքննություն	245
27.3. Դատավարություն	246
27.4. Փոխհատուցում	248
27.5. Վերաքննություն	250
28. Միջազգային քրեական դատավարության առանձնահատկությունները	251
28.1. Ապացույց	252
28.2. Ապացույցների բացահայտումը (Disclosure)	256
28.3. Վկայի հարցաքննություն	258
28.4. Համագործակցություն	259
29. Միջազգային քրեական դատարան	259
30. Դատարանի մարմինները և մասնակիցները	262
30.1. Նախագահությունը և առանձին պալատները	262
30.2. Դատախազություն	263
30.3. Ռեգիստր	263
30.4. Վկաներ	264
30.5. Տուժողներ	264
30.6. Պաշտպանյալ	267

ԲԱԺԻՆ V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ  
 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
 ԳԼՈՒԽ 11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. Ընդհանուր դրույթներ.....271

32. Առանձին հանցագործություններ.....273

32.1. Ծովահենություն.....273

32.2. Ահաբեկչություն.....275

32.3. Մարդու ազատության դեմ ոտնձգող հանցագործություններ.....281

32.4. Տնտեսական հանցագործություններ .....285

32.5. Կիբեռհանցագործություններ.....290

32.6. Ջենքի և թմրանյութերի անօրինական առևտուրը .....291

ԳԼՈՒԽ 12. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
 ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

33. «Միջազգային համագործակցություն» հասկացությունն ու  
 տեսակները քրեական գործերի շրջանակներում .....294

34. Միջազգային համագործակցություն .....295

34.1. Միջազգային համագործակցություն պայմանագրի շուրջ.....295

34.2. Ինտերպոլ .....296

35. Տարածաշրջանային համագործակցություն.....299

35.1. Եվրոպական համագործակցության սկզբունքներ.....299

35.2. Շենգենյան համագործակցություն .....301

35.3. ԵՄ համագործակցություն.....302

35.4. ԱՊՀ համագործակցություն.....308

36. Երկկողմ պայմանագրեր.....309

37. Քրեական գործերով համագործակցություն.....310

37.1. Քրեական գործերով փոխադարձ օգնություն.....311

37.2. Հանձնում .....312

38. Գրականության ցանկ.....314

## Հասպարկումներ

ACtHPR: African Court for Human and Peoples Rights

ASP: Assembly of State Parties

ECCC: Extraordinary Chambers in the Courts of Cambodia

ECtHR: European Court for Human Rights

IACoHR: Inter-American Commission for Human Rights

IACtHR: Inter-American Court for Human Rights

ICC: International Criminal Court

ICTR: International Criminal Tribunal for Rwanda

ICTY: International Criminal Tribunal for the former Yugoslavia

ILC: International Law Commission

IMT: International Military Tribunal

IMTFE: International Military Tribunal for Far East

IRMCT: International Residual Mechanism for Criminal Tribunals

JCE: Joint Criminal Enterprise

KSC: Kosovo Specialist Chambers

NMT: Nuremberg Military Tribunal

OPCD: Office of the Public Counsel for the Defence

OPCV: Office of the Public Counsel for the Victims

OTP: Office of the Prosecutor

SCSL: Special Court for Sierra Leone

SS: Schutzstaffel

STL: Special Tribunal for Lebanon

TFV: Trust Fund for Victims

ՄՔԴ: Միջազգային քրեական դատարան



## Տերմինաբանություն

ACtHPR	Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան դատարան
actio libera in causa (lat.)	action free in its cause
actus reus (lat.)	օբյեկտ և օբյեկտիվ կողմ
ad hoc (lat.)	հատուկ առիթով
apartheid (engl.)	ռասայական խտրականության հանցագործություն
Appeals Chamber	Վերաքննիչ պալատ
ASP	Անդամ պետությունների ասամբլեա
aut dedere aut judicare (lat.)	կա՛մ արտահանձնիր, կա՛մ դատապարտիր
cheapeu elements (fr. engl.)	կոնստեքստուալ հատկանիշներ
civil law (engl.)	ռոմանագերմանական իրավական համակարգ
combatant (engl.)	մարտիկ, զինյալ
common law (engl.)	անգլոամերիկյան իրավական համակարգ
common plan (engl.)	միասնական պլան
condition sine qua non	պատճառ-պայման
co-perpetrator, jointly with another(engl.)	այլ անձանց հետ համատեղությամբ անմիջական կատարող
crimes against humanity (engl.)	մարդկության դեմ հանցագործություններ
criminal charges (engl.)	քրեական մեղադրանք
criminal conduct (engl.)	հանցավոր արարք
cross-examination (engl.)	խաչաձև հարցաքննություն
danger commun (fr.)	հանրային վտանգ

defence (crim. law, (engl.))	արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ, պաշտպանություն ժողովուրդների
delicta iuris gentium (lat.)	հանցագործություն, միջազգային հանցագործություն
deterrent effect(engl.)	կանխարգելիչ ազդեցություն
direct-examination (engl.)	ուղիղ հարցաքննություն
dolus directus (lat.)	ուղղակի դիտավորություն
dolus eventualis (lat.)	անզուշություն
dolus speicialis (lat.)	առանձնակի դիտավորություն
duress (engl.)	Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք
ECCC	Կամբոջայի դատարանների արտառոց պալատներ
EctHR	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ejusdem generis (lat.)	մշտական մարդկանց խումբ
Elements of Crimes (EoC) (engl.)	հանցագործությունների հատկանիշներ
essential contribution (engl.)	էական ներդրում
ex post facto (lat.)	դրանից հետո
Extremes Unrecht ist kein Recht (germ.)	ծայրահեղ անարդարությունը իրավունք չէ
Gacaca	Ռուանդայի համայնքային ավանդական դատարան
hors de combat (fr.)	մարտից դուրս
IACoHR	Ինտերամերիկյան մարդու իրավունքների հանձնաժողով
IACtHR	Ինտերամերիկյան մարդու իրավունքների դատարան

ICTR	Ռուանդայի միջազգային քրեական դատարան / տրիբունալ
ICTY	Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարան / տրիբունալ
IMT	Միջազգային ռազմական տրիբունալ
indirect perpetration, through another person (engl.)	անուղղակի կատարող, մեկ այլ անձի միջոցով
individual perpetrator (engl.)	անմիջական կատարող
induce (engl.)	դրդող
Internationales Strafrecht (germ.)	միջազգային քրեական իրավունք
in absentia (lat.)	բացակայությամբ
Investigation (engl.)	հետաքննություն
IRMCT	Միջազգային քրեական տրիբունալների մեխանիզմ
ius ad bellum(lat.)	պատերազմի իրավունք
ius in bello (lat.)	պատերազմում իրավունք
Ius naturae (lat.)	բնական իրավունք
ius positivum (lat.)	պոզիտիվ իրավունք
Joint control (engl.)	համատեղ վերահսկողություն
Joint Criminal Enterprise (engl.)	համատեղ հանցավոր ձեռնարկություն
jus cogens (lat.)	պարտադիր նորմ
knowlegde-based approach (engl.)	իմացության վրա հիմնված մոտեցում
Kristallnacht (germ.)	դիմապակիների գիշեր
KSC	Կոսովոյի մասնագիտացված պալատներ
lex humana (lat.)	մարդկային օրենք

lex talionis (lat.)	ական ընդ ական
like-minded states (engl.)	դատարանի կողմնակից պետություններ
lone genocidal maniac (engl.)	անհատ ցեղասպան
mens rea (lat.)	սուբյեկտ և սուբյեկտիվ կողմ
Mischlinge (germ.)	խառնուրդ
Mord (germ.)	պայմանականորեն սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում
Nacht und Nebel Erlass (germ.)	գիշեր և մառախուղի հրաման
ne bis in idem (lat.)	երկու անգամ ոչ՝ նույն դեպքին
necessity (engl.)	ծայրահեղ անհրաժեշտություն
Nichtblutfremde (germ.)	գտարյուն
NMT	Նյուրնբերգի ռազմական տրիբունալ
non-combatant (fr.)	ոչ զինյալ
Notwehrlage (germ.)	անհրաժեշտ պաշտպանության վիճակ
nulla peona sine lege (lat.)	չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով
offence (crim. Law) (engl.)	հանրորեն վտանգավոր արարք
ordering (engl.)	հրամայող
preliminary examination (engl.)	նախնական ուսումնասիրություն
Pre-Trial Chamber	Նախաքննության պալատ
probative value (engl.)	ապացուցողական արժեք
purpose-based approach (engl.)	նպատակի վրա հիմնված մոտեցում
Rechtsgut (germ.) protected interests (engl.)	հանցագործության առարկա
Regulations of the Court (RoC)	դատարանի կանոնակարգեր

Regulations of Office of the Prosecutor (RoP)	դատախազի գրասենյակի կանոնակարգեր
Regulations of Trust Fund for Victims (RoTFV)	տուժողների վատահոլության ֆոնդի կանոնակարգեր
restoration (engl.)	վերականգնում
retribution (engl.)	արժանի պատիժ
Rules of Procedure and Evidence (RPE)	ընթացակարգի և ապացույցների կանոններ
Schreibtischtäter (germ.)	գրասեղանի հանցագործներ
SCSL	Միերա Լեոնեի հատուկ դատարան
shared intent (engl.)	ընդհանուր, միասնական մտադրություն
Siegerjustiz (germ.)	հաղթողի արդարադատություն
single judge (engl.)	Միանձնյա քննող դատավոր
situation (engl.)	իրավիճակ
soliciting (engl.)	հրահրող
specific direction (engl.)	հատուկ նպատակաուղղվածություն
STL	Լիբանանի հատուկ դատարան
substantial effect (engl.)	էական ազդեցություն
Täter hinter dem Täter	ոճրագործը ոճրագործի հետևում
Totschlag (germ.)	հասարակ սպանություն
transitional justice (engl.)	անցումային արդարադատություն
transnational crime (engl.)	վերազգային հանցագործություններ, անդրազգային հանցագործություններ
Trial Chamber	Դատավարության պալատ
trigger mechanism (engl.)	գործարկման մեխանիզմներ

tu-quoque-argument (fr.)	Դու նույնպես փաստարկ
Völkermord (germ.)	ցեղասպանություն
Völkermordabischt (germ.)	ցեղասպանական մտադրություն
Völkerstrafrecht (germ.)	միջազգային քրեական իրավունք
Volljude, Halbjude, Vierteljude (germ.)	լրիվ հրեա, կիսով հրեա, մեկ քառորդ հրեա
war crimes (engl.)	պատերազմական
Weltrechtsprinzip (germ.)	հանցագործություններ
Wiedereindeutschungsfähig (germ.)	ունիվերսալ իրավասություն
	զերմանացի դառնալու ունակ

**ԲԱԺԻՆ I**  
**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**  
**ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳԼՈՒԽ 1**  
**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**  
**ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**1. «Միջազգային քրեական իրավունք» հասկացությունը**

Քրեական իրավունքի մասին խոսելիս առաջին երևույթը, որ հնարավոր է պատկերացնել, քրեական օրենսգրքով նախատեսված հանրորեն վտանգավոր առանձին արարքն է, ինչպես, օրինակ, մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունը, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունը և այլն: Միջազգային քրեական իրավունքի պարագայում պատկերը բոլորովին այլ է: Այն տարբերվում է ազգային քրեական իրավունքից ոչ միայն հանցագործությունների սահմանափակ շրջանակով, այլև իր ձևավորման առանձին և յուրօրինակ ճանապարհով, որը ներառում է միջազգային իրավունքի, քրեական և քրեադատավարական իրավունքների հիմնական սկզբունքների համակցությունը: Այդ իսկ պատճառով դժվար է միջազգային քրեական իրավունքը պարզապես դիտարկել որպես միջազգային կամ քրեական իրավունքի առանձին մի մաս:

Միջազգային իրավունքի տեսանկյունից միջազգային քրեական իրավունքը ներառում է թե՛ տարածաշրջանային և թե՛ ունիվերսալ միջազգային պայմանագրերի դրույթներ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սկզբունքներ: Այդ շարքին են դասվում նաև միջազգային և տարածաշրջանային կառույցների որոշումները, եզրակացությունները, վճիռները և հատկապես Միջազգային

արդարադատության ստատուտի 38-րդ հոդվածով նախատեսված իրավունքի այլ աղբյուրները<sup>1</sup>: Միջազգային քրեական իրավունքում առանցքային դերակատարություն ունի միջազգային սովորության իրավունքը, որն էլ հենց զարկ տվեց միջազգային քրեական իրավունքի ձևավորմանը:

Քրեական իրավունքի տեսանկյունից միջազգային քրեական իրավունքը հիմնված է նյութական և դատավարական իրավունքների հիմնական սկզբունքների վրա: Այդ սկզբունքները իրենց հերթին ձևավորվել են երկու իրավական՝ ռոմանագերմանական (*civil law*) և անգլոամերիկյան (*common law*) համակարգերի համակցմամբ: Միջազգային քրեական իրավունքում իրարամերժ համակարգերի համակեցությունը զարգացել է պատմական իրադարձությունների և, մասնավորապես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալի հիման վրա:

Լինելով միջազգային և քրեական իրավունքների համադրություն՝ իրավունքի այս ճյուղը նախատեսում է անձնական քրեական և ոչ պետական պատասխանատվություն՝ սահմանելով անձի համար պատիժ<sup>2</sup>: Թեև միջազգային հանցագործությունների մեջ պետությունների դերակատարությունը մեծ է, սակայն պետությունները չեն դիտվում իբրև միջազգային քրեական իրավունքի ուղղակի կրողներ<sup>3</sup>: Այդուհանդերձ, դա չի բացառում, որ անձնական քրեական պատասխանատվությունը կհանգեցնի նաև պետական պատասխանատվության, եթե միջազգային հանցագործություն կատարողը ի պաշտոնն հանդես է գալիս պետության անունից: Պետական պատասխանատվությունը, այնուամենայնիվ, չի տեղավորվում միջազ-

---


<sup>1</sup> Տե՛ս *M. C. Bassiouni*, Introduction to international criminal law, 2nd ed. Leiden, 2013, էջ 13, նաև՝ Հռոմի ստատուտի 21-րդ հոդվածը:

<sup>2</sup> Տե՛ս *C. Safferling*, Internationales Strafrecht: Strafanwendungsrecht-Völkerstrafrecht - Europäisches Strafrecht. Berlin, Heidelberg, 2011, էջ 38-39:

<sup>3</sup> Տե՛ս *R. Cryer/H. Friman/D. Robinson/E. Wilmshurst*, An introduction to international criminal law and procedure. Cambridge, 2014, էջ 5:



գային քրեական իրավունքի ճյուղում, այլ միջազգային իրավունքի առանձին ճյուղ է, որի պարագայում հղում պետք է անել 2001 թ. ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի (ILC) կողմից սահմանված պետական պատասխանատվության նախագծին:



Միջազգային քրեական իրավունքն (*international criminal law*) իր բառացի կիրառման պարագայում առնչվում է իրավունքի երեք տարբեր ոլորտների: Միջազգային քրեական իրավունքն առաջին հերթին վերաբերում է քրեական գործերի շրջանակում միջազգային համագործակցությանը: Այն կարող է ներառել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են պետությունների իրավապահ մարմինների միջև տվյալների փոխանակումը, արտահանձնմանն առնչվող պետական համագործակցությունը և ցանկացած այլ գործողություն, որը վերաբերում է քրեական գործերի շրջանակներում երկու ու ավելի պետությունների միջև հետաքննական, նախաքննական, հետախուզական կամ դատավարական համագործակցությանը:

Երկրորդ տեսանկյունից միջազգային քրեական իրավունքը ներառում է այնպիսի հանցագործությունների շրջանակ, որոնք չեն սահմանափակվում մեկ պետության սահմաններում, և որոնց դեմ

պայքարը կոլեկտիվ բնույթի է: Այլ կերպ ասած՝ անդրազգային (*transnational crimes*) հանցագործությունների դեմ պայքարը միջազգային համագործակցության հարթակում է և բխում է միջազգային պարտավորություններից<sup>4</sup>: Այդպիսի հանցագործություններ են՝ ծովահենությունը<sup>5</sup>, տեռորիզմը<sup>6</sup>, մարդկանց առք ու վաճառքը կամ թրաֆիքինգը<sup>7</sup>, կոռուպցիան<sup>8</sup>, փողերի լվացումը<sup>9</sup>, թմրանյութերի<sup>10</sup> և զենքի<sup>11</sup> անօրինական վաճառքը, կիբեռնահանցագործությունները<sup>12</sup>, ինչպես նաև ապարտեիդի հանցագործությունը (*apartheid*)<sup>13</sup> և խռտանգումների ենթարկելը<sup>14</sup>:

---

<sup>4</sup> Տե՛ս *F. G. Madsen*, *Transnational organized crime*. London, New York, 2009, էջ 25, նաև՝ Պալերմոյի կոնվենցիան, UN Convention against Transnational Organized Crime, 2000:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention on the Law of the Sea, 1982:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention for the Suppression of the Financing of Terrorism, 1999:

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ, UN Protocol to Prevent, Suppress and Punish Trafficking in Persons Especially Women and Children, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime, 2000:

<sup>8</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention against Corruption, 2003:

<sup>9</sup> Տե՛ս, օրինակ, COE Convention on Laundering, Search, Seizure and Confiscation of the Proceeds from Crime and on the Financing of Terrorism, 2005:

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention against Illicit Traffic in Narcotic Drugs and Psychotropic Substances, 1988:

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, UN Protocol against the Illicit Manufacturing of and Trafficking in Firearms, 2001:

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, Բուդապեշտի կոնվենցիան, COE Convention on Cybercrime, 2001:

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention on the Suppression and Punishment of the Crime of Apartheid, 1973, ի տարբերություն այլ հանցագործությունների դասվում է *jus cogens* նորմերի շարքին:

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, UN Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 1985, ի տարբերություն այլ հանցագործությունների՝ դասվում է *jus cogens* նորմերի շարքին:

Երրորդ տեսանկյունից միջազգային քրեական իրավունքը<sup>15</sup> վերաբերում է նեղ շրջանակի հանցագործություններին, որոնք ոչ միայն հանրորեն վտանգավոր են, այլև վտանգում են մարդկության գոյությունը և ոտնահարում են համամարդկային արժեքները (*Völkerstrafrecht*): Այդ շարքին են դասվում չորս հանցագործություններ՝ մարդկության դեմ հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ցեղասպանությունը և ագրեսիայի հանցագործությունը: Նշյալ հանցագործությունները միջազգային քրեական իրավունքի հիմքն են, դրանցից յուրաքանչյուրը պատմականորեն ձևավորվել է յուրովի՝ իր ուրույն տեղը զբաղեցնելով Միջազգային քրեական դատարանի ստատուտում:

## 2. Միջազգային քրեական իրավունքի նպատակը

Թեև առաջին հայացքից միջազգային քրեական իրավունքը և ազգային քրեական իրավունքը ունեն որոշակի նմանություններ, բայց չպետք է շփոթել, թե միջազգային քրեական իրավունքը լրացնում կամ ընդլայնում է ազգային քրեական իրավունքը<sup>16</sup>: Այն սկիզբ է առնում միջազգային իրավունքից և պաշտպանում է ոչ թե անձնային կամ ներպետական, հասարակական շահերը հանրորեն վտանգավոր արարքներից, այլ ապահովում է ժողովուրդների, պետությունների և ողջ մարդկության խաղաղ գոյատևումը:

Միջազգային քրեական իրավունքի նպատակներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է դրանք բաժանել *հիմնականի* և *լրացուցիչի*:

Միջազգային քրեական իրավունքը, ինչպես և ազգային քրեական իրավունքը, հետապնդում է կանխարգելիչ, պատժիչ և վերա-

---

<sup>15</sup> Գերմաներեն «*Völkerstrafrecht*» թարգմանաբար նշանակում է «ժողովուրդների քրեական իրավունք»: Այս եզրույթն ավելի ճիշտ է բնութագրում առարկան, քան անգլերեն «*international criminal law*»-ն:

<sup>16</sup> Տե՛ս C. Safferling (note 2), էջ 67:

կանգնողական հիմնական նպատակներ, սակայն, ի տարբերություն ազգային քրեական իրավունքի՝ այս նպատակները դիտարկվում են ավելի լայն ու ընդհանուր ասպեկտներից:

### 2.1 Կանխարգելիչ

Միջազգային քրեական իրավունքի կանխարգելիչ նպատակը (*deterrent effect, preventive*) պոտենցիալ հանցագործների շրջանում վախ առաջացնելն է այն բանից, որ իրենց հանցավոր արարքները անպատիժ չեն մնա: Միջազգային քրեական իրավունքի զսպիչ մեխանիզմներին բնորոշ է նաև այն, որ անկախ այն հանգամանքից՝ տվյալ պետության սահմաններում միջազգային քրեական իրավունքի դրույթները ներդաշնակեցվա՞ծ են ազգային իրավունքին, թե՞ ոչ, և անկախ քաղաքական անպատժելիության մթնոլորտից՝ նշված անձինք շարունակում են մնալ միջազգային քրեական իրավունքի տիրույթում: Եթե պետությունը, որտեղ տեղի են ունեցել միջազգային քրեական իրավունքի իրավասության մեջ գտնվող հանցագործություններ, ի վիճակի չէ կամ չի ցանկանում պատժել ոճրագործներին, միևնույնն է, վերջիններս չեն ազատվում պատասխանատվությունից: Սակայն կանխարգելիչ կամ վախեցնող էֆեկտը կարող է գործել միայն այն դեպքում, եթե պատժելիության ռիսկը գնահատվի որպես իրատեսական<sup>17</sup>: Ուստի հնարավոր է տարբերակել զսպման հետևյալ տեսակները՝ *ընդհանուր, առանձնահատուկ և նպատակաշի՛ն*<sup>18</sup>: Միջազգային քրեական իրավունքի ձևավորումը և գործնական կիրառումը ինքնին կանխարգելման ընդհանուր տեսակ են: Առանձնահատուկ կանխարգելումը պետության կամ միջազգային մարմնի

---

<sup>17</sup> Տե՛ս *C. Stahn*, A critical introduction to international criminal law. Cambridge, United Kingdom, New York, NY, USA, 2019, էջ 179, *C. H. Wheeler*, The right to be present at trial in international criminal law. Leiden, Boston, 2019, էջ 83, *M. Aksenova*, Complicity in international criminal law. Oxford, Portland, Oregon, 2016, էջ 232:

<sup>18</sup> Տե՛ս *J. Schense*, in: J. Schense/L. Carter, Two steps forward, one step back: The deterrent effect of international criminal tribunals, 2017, էջ 25:

նախաձեռնած գործողություններն են, որոնց նպատակն է առանձին պայմաններում կանխարգելել միջազգային բնույթի հանցագործությունները: Նպատակային կանխարգելումն ուղղված է առանձին անձանց կամ խմբերի դեմ՝ պատժի սպառնալիքով ետ պահելու նրանց հանցավորությունից: Դա կարող է ենթադրել առանձին կարևոր անձանց ձերբակալություններ, հետապնդում, որոնց հիման վրա կարող են կանխվել հնարավոր հանցագործությունները:

Ինչպես Հռոմի ստատուտի նախաբանը, այնպես էլ ad hoc տրիբունալների վերաբերյալ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը<sup>19</sup> հիշատակում և առանձնացնում են այս դատական մարմինների կանխարգելիչ բնույթը<sup>20</sup>: Դեռևս 1945 թ. Միջազգային ռազմական տրիբունալի իր բացման խոսքում ԱՄՆ գլխավոր դատախազ Ռոբերտ Ջեքսոնն ընդգծեց, որ արարքները, որոնց համար մեղադրվում են նացիստական Գերմանիայի ղեկավարները, այնքան հրեշավոր են, որ չեն կարող հանդուրժվել և անտեսվել միջազգային հանրության կողմից<sup>21</sup>: Այս դատավարությունն էլ ինքնին ստեղծված էր որպես կանխարգելիչ գործոն: Նշյալ մոտեցումը հետագայում արդեն միջազգային քրեական իրավունքում վերահաստատվեց ad hoc տրիբունալների առանձին վճիռներով<sup>22</sup>:

## 2.2 Պատժիչ

Միջազգային քրեական իրավունքի կանխարգելման մեխանիզմների՝ հնարավոր հանցագործների վրա ավելի գործուն ազդեցություն ունենալու նպատակով առաջին պլան են մղվում պատժիչ

---

<sup>19</sup> Տե՛ս UN SC Resolution 827 (1993), UN SC Resolution 955 (1994):

<sup>20</sup> Տե՛ս, օրինակ, „to put an end to impunity for perpetrators of these crimes and thus to contribute to the prevention of such crimes” ICC Preamble:

<sup>21</sup> Տե՛ս Second Day, Wednesday, 11/21/1945, Part 04, in Trial of the Major War Criminals before the International Military Tribunal. Volume II, Nuremberg: IMT, 1947, էջ 98-102:

<sup>22</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Rutaganda*, Appeals Chamber, Judgment, 6 December 1999, para. 455, ICTY, *Prosecutor v. Nikolić*, Trial Chamber, Judgment, 2 December 2003, paras, 89-90:

գործողությունները (*retribution, retributive*): Դրանք կարող են կիրառվել ինչպես ազգային դատական ատյաններում, այնպես էլ միջազգային մարմիններում: Միջազգային քրեական իրավունքի տեսության մեջ պատժի նպատակը չի դիտվում որպես վրեժխնդրության արտահայտման ավելի փափուկ եղանակ<sup>23</sup>, այլ արտահայտում է միջազգային հանրության անհանդուրժողականությունը միջազգային հանցագործությունների անպատժելիության նկատմամբ: Այս մոտեցումն ընդունվեց ու նաև ավելի ընդլայնվեց նախկին Հարավսլավիայի *ad hoc* տրիբունալի վերաքննիչ պալատի կողմից առ այն, որ միջազգային հանրությունը չի կարող հանդուրժել մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի լուրջ խախտումները<sup>24</sup>:

Պատժիչ գործողություն ասելով՝ հնարավոր է պատկերացնել ոչ միայն պատիժ սահմանելը, այլև ենթադրյալ հանցագործների հետախուզումը, հետապնդումն ու արդարադատությունը: Պատժի չափի սահմանումն իր հերթին՝ որպես ողջ գործընթացի վերջնական ելակետ, ներառում է ոչ միայն ազատագրկումը, այլև փոխհատուցումը: Պատժի կիրառումը, սակայն, դրված է անդամ պետությունների վրա, քանի որ միջազգային քրեական արդարադատությունը գրկված է վերազգային (*supranational*) պատժի կիրառման գործառնությոց<sup>25</sup>:

### 2.3 Վերականգնողական

Պատիժ սահմանելու նպատակը նաև վերականգնողական է (*restorative*), քանզի դատական գործընթացները թույլ են տալիս արձանագրել այն վնասը, որը հասցվել է միջազգային հանցագործության պատճառով: Վնասը ճանաչելը, մեղքի առկայությունը որոշելը,

---

<sup>23</sup> Հմմտ. *lex talionis* – ակն ընդ ական:

<sup>24</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Aleksovski*, Appeals Chamber, Judgment, 24 March 2000, para, 185, ICTY, *Prosecutor v. Nikolić*, Trial Chamber, Judgment, 2 December 2003, paras, 86-87, նաև՝ *G. Niemann*, in: W. de Lint/M. Marmo/N. Chazal, *Criminal Justice in International Society*, 2014, էջ 135-137:

<sup>25</sup> Տե՛ս *K. Ambos*, *Treatise on international criminal law: General Part*, 1st ed. Oxford, 2013, էջ 57, նաև՝ Հոմսի ստատուտի 103-րդ հոդվածը:

պատժի չափը սահմանելը և փոխհատուցելը վերականգնողական արդարադատության կարևորագույն բաղադրիչներ են<sup>26</sup>: Վերականգնողական արդարադատությունը հնարավոր է դիտարկել երկու ուղղություններով՝ ուղղակի կամ անուղղակի: Ուղղակի իմաստով տուժողների այս կամ այն կերպ մասնակցությունը քրեական դատավարությանը, որը միայն վերջին տարիներին է դարձել միջազգային քրեական դատավարության անբաժան մաս, վերականգնողական արդարադատության մի ձևաչափ է: Անուղղակի կարելի է սահմանել այն վերականգնողական արդարադատությունը, որտեղ տուժողները դատավարության ընթացքում չունեն ակտիվ դերակատարություն և ուղիղ քրեական դատավարության շահառու չեն: Այդպիսին են նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի *ad hoc* տրիբունալները, որտեղ տուժողները մասնակցել են դատավարությանը վկայի կարգավիճակով: Այսպիսով, վերականգնողական արդարադատությունը այս պարագայում միայն անուղղակի և վերացական ազդեցություն է գործում միջազգային հանրության վրա: Միջազգային քրեական դատարանի ստեղծմամբ տուժողներին տրվեցին ավելի լայն իրավունքներ՝ ինչպես դատավարությանը տուժողի կարգավիճակով ակտիվ մասնակցելու, այնպես էլ փոխհատուցում ստանալու: Այս պարագայում արդեն խոսքը անուղղակի վերականգնողական արդարադատությանը զուգահեռ նաև ուղղակի վերականգնողական արդարադատության մասին է:

#### 2.4 *Լրացուցիչ նպատակներ*

Միջազգային քրեական իրավունքի լրացուցիչ նպատակներից են՝ *փոխլրացումը*, *ճշմարտության ամրագրումը*, *հաշտեցումը* և *միջազգային խաղաղության ու ապահովության ձգտումը*:

---

<sup>26</sup> Տե՛ս *K. Fisher*, *Moral accountability and international criminal law: Holding agents of atrocity accountable to the world*. London, 2012, էջ 155-157:

#### 2.4.1 Փոխլրացում

Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածը նախատեսում է, թե Միջազգային քրեական դատարանը որ դեպքում կարող է քննել գործերը: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ միջազգային քրեական իրավունքը և մասնավորապես Հռոմի ստատուտը առաջնորդվում են այն մոտեցմամբ, որ անդամ և ոչ անդամ պետությունները պարտավորվեն հետապնդել միջազգային հանցագործություններն իրենց ազգային դատական համակարգերում: Միջազգային քրեական դատարանը միջազգային քրեական արդարադատության վերջին միջոցն է և չի լրացնում ազգային քրեական իրավունքը, այլ փոխլրացնում է այն (փոխլրացման սկզբունք – *principle of complementarity*)<sup>27</sup>:

#### 2.4.2 Ճշմարտության ամրագրում

Միջազգային քրեական իրավունքի նպատակն է ամրագրել այն իրողությունը, այն ճշմարտությունը, որը տեղի է ունեցել (*truth-finding process*): Ցանկացած քրեական դատավարություն իր հերթին նպատակ է հետապնդում գտնելու տվյալ իրավիճակի ճշմարտությունը, սակայն, ըստ իրավական համակարգի, լինի այն ռոմանագերմանական, թե անգլոամերիկյան, ճշմարտությունը կարող է տարբերվել: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ինկվիզիցիոն քրեական դատավարության ընթացքում (*civil law*) դատական գործընթացի նպատակը իրական ճշմարտությունն ամրագրելն է, մինչդեռ անգլոամերիկյան քրեադատաիրավական համակարգում (*common law*), որը հիմնված է ընդդիմական, հակառակորդային ձևաչափի վրա, նպատակն իրական ճշմարտությունը (*real truth*) բացահայտելը չէ: Այդ դատավարական համակարգի հիմքում ընկած է միայն *դատական ճշմարտությունն ամրագրելը (trial truth)*<sup>28</sup>: Թեև

---

<sup>27</sup> Տե՛ս *S. Batohi*, in: G. Werle/L. Fernandez/M. Vormbaum, *Africa and the International Criminal Court*, 2014, էջ 52:

<sup>28</sup> Տե՛ս *T. Weigend*, *Should We Search for the Truth, and Who Should Do It*, N.C. J. Int'l l. & com. reg 2011, էջ 396:



միջազգային քրեական դատավարությունները բավական լայնածավալ են և գնահատական են տալիս ինչպես պատմական, այնպես էլ որոշակի առումով քաղաքական իրադարձություններին<sup>29</sup>, այնուամենայնիվ չեն կարող դիտարկվել որպես պատմական ճշմարտության ամրագրում<sup>30</sup>: Քրեական դատավարության էությունն այն է, որ մեղադրյալը ողջամիտ կասկածից վեր ենթարկվի պատասխանատվության<sup>31</sup>:

### 2.4.3 Հաշտեցում

Թեև հաշտեցումը չի դիտարկվում միջազգային քրեական պոզիտիվ որևէ նորմով, այնուամենայնիվ միջազգային քրեական իրավունքի լրացուցիչ նպատակն է նաև հաշտեցումը: Թե որքանով է այն արդյունավետ, այլ քննարկման առարկա է, սակայն մեղադրյալի կամ դատապարտվածի զղջանքը կամ զղջմանն ուղղված գործողությունները, այդ թվում՝ փոխհատուցումը, կարող են մեծ դեր խաղալ հասարակությունների հաշտեցման գործընթացում: Այսպիսի օրինակ է դատապարտյալ *Ալ Մահդիի* մեղքի ընդունումը դատավարության ժամանակ և զղջման խոսքը<sup>32</sup>: Իր հաշտեցման գործառույթի մասին է բարձրաձայնել Միջազգային քրեական դատարանը՝ դատապարտելով Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության փոխնախագահ *ժան Պիեռ Բեմբային* և մատնանշելով, որ համաչափ

---

<sup>29</sup> Տե՛ս, ի տարբերություն պատմական փաստի արձանագրման, *M. A. Drumbl*, *Atrocity, punishment, and international law*. Cambridge, 2007, էջ 176:

<sup>30</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Karadžić*, Trial Chamber, Decision, 8 July 2009, para. 46:

<sup>31</sup> Տե՛ս *C. Safferling*, *Can Criminal Prosecution be the Answer to Massive Human Rights Violations?*, *German Law Journal*, 2010, էջ 1481-1482:

<sup>32</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Al Mahdi*, Trial Chamber, Transcript, 22 August 2016, paras. 13-16. *“I am really sorry. I am really remorseful and I regret all the damage that my actions have14 caused. I regret what I have caused to my family, my community in Timbuktu, what I15 have caused my home nation, Mali, and I’m really remorseful about what I had caused the16 international community as a whole”*:

պատժի սահմանման դեպքում ոչ միայն կամրագրվի տուժողներին հասցված վնասը, այլև դա հիմք կհանդիսանա խաղաղության վերականգնման և հաշտեցման համար<sup>33</sup>:

---

<sup>33</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Decision on Sentence, 21 June 2016, paras. 71-72, նսև՝ ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Decision on Sentence pursuant to article 76 of the Statute, 23 May 2014, para. 91:

**ԳԼՈՒԽ 2**  
**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ**  
**ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

**3. Միջազգային քրեական իրավունքի ձևավորումը**

1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում՝ դիվանագիտական կոնֆերանսի ընթացքում, ստորագրվեց Հռոմի ստատուտը, որը հիմք դրեց մշտական Միջազգային քրեական դատարանի ձևավորմանը: Այս փաստաթղթով կարծես վերջակետ դրվեց միջազգային քրեական իրավունքի ձևավորման ավարտական փուլին: Սակայն նշյալ իրավունքը զարգացող խրթին ոլորտ է, որը միաժամանակ բախվում է ոչ միայն միջազգային իրավունքի տարատեսակ հիմնարար սկզբունքների, այլև դիմագրավում է միջազգային և ներքին զանազան քաղաքական իրադարձությունների: Միջազգային քրեական իրավունքի ձևավորման ժամանակաշրջանը ընդհանուր առմամբ հնարավոր է պատմականորեն դիտարկել վեց փուլով:

Միջազգային քրեական իրավունքի գիտական ոլորտում ընդունված է դիտարկել միջազգային քրեական իրավունքի ծագումը և կիրառումը Նյուրնբերգյան դատավարություններով: Սակայն միջազգային իրավունքի որոշ մասնագետներ այս ոլորտի նյութական իրավունքի ձևավորման առաջին շրջանը ներկայացնում են դեռևս միջին դարերի ավարտին՝ մասնավորապես պայմանավորելով այն Պետեր ֆոն Հագենբախի 1474 թ. միջազգային դատավարությամբ<sup>34</sup>: Վերջինս մեղադրվում էր պատերազմական հանցագործությունների համար 28 անդամից բաղկացած միջազգային *ad hoc* տրիբունալի առջև, որն իր վճռով մահվան դատապարտեց դաժան դուքսին<sup>35</sup>: Մի-

---

<sup>34</sup> Տե՛ս *W. Schabas, An Introduction to the International Criminal Court*, 2011, էջ 2:

<sup>35</sup> Տե՛ս *J. Holling, Internationaler Strafgerichtshof und Verbrechensprävention*, 2015, էջ 8-10, նաև՝ *G. Gordon, The Trial of Peter Von Hagenbach: Reconciling History, Historiography, and International Criminal Law* 2012, էջ 5, *E. Mendes*,

չազգային քրեական իրավունքի մեկ այլ սկզբնաղբյուր է Վեստֆալիայի 1648 թ. խաղաղության պայմանագիրը: Դրա կարևորագույն դրույթներից է ժամանակակից միջազգային իրավունքի սկզբունք դարձած պետական ինքնիշխանությունը: Այս սկզբունքի առկայությունը առաջին հայացքից խթան էր միջազգային դատավարությունների համար, սակայն մյուս կողմից այն նախատեսում էր հումանիտար ինտերվենցիայի՝ տվյալ ժամանակահատվածին համապատասխանող պայմանները<sup>36</sup>:

Այսպիսով, միջազգային քրեական իրավունքի ձևավորման առաջին փուլ կարելի է դիտարկել 1919 թ. Վերսալյան խաղաղության պայմանագրի կնքման, ինչպես նաև դրան նախորդող ժամանակահատվածում Գերմանիայում (Լայպցիգյան դատավարությունները) և Օսմանյան կայսրությունում (Մտամբուլյան դատավարությունները) տեղի ունեցող՝ պատերազմական հանցագործությունների վերաբերյալ ազգային քրեական դատավարությունները:

Երկրորդ փուլը ներառում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված Նյուրնբերգյան ու Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալները և դրանց հաջորդող իրադարձությունները:

Երրորդ փուլը վերաբերում է միջազգային իրավունքի մասնագետների ջանքերին՝ Նյուրնբերգյան դատավարություններից հետո մշտական քրեական դատարանի ստեղծման ուղղությամբ:

Հետաառըպատերազմյան ժամանակահատվածում առաջացած ռազմական կոնֆլիկտների հետևանքով միջազգային քրեական իրավունքի ձևավորումը թևակոխեց չորրորդ փուլը, որի ընթացքում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ստեղծվեցին միջազգա-

---


Peace and justice at the International Criminal Court: A court of last resort. Cheltenham, UK, Northampton, MA, 2010, էջ 132:

<sup>36</sup> St' u C. Kress, Major Post-Westphalian Shifts and some Important Neo-Westphalian Hesitations in the State Practice on the International Law on the use of Force, Journal on the use of Force and International Law, 2014, էջ 12:

յին երկու կարևորագույն *ad hoc* դատական մարմինները (ICTY, ICTR)՝ նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալները, որոնց նպատակը պատժելն էր իրենց իրավասության տակ գտնվող միջազգային ոճրագործներին: Վերջիններիս շնորհիվ ամրապնդվեց այն գաղափարը, որ միջազգային հանրությունը մշտական միջազգային քրեական դատարանի կարիք ունի:

Թեև 2002 թ. հուլիսի 1-ից Միջազգային քրեական դատարանը սկսեց իր գործունեությունը, որով միջազգային քրեական իրավունքի ձևավորումը հասավ իր վերջնակետին՝ հինգերորդ փուլին, սակայն անհրաժեշտ է հիշատակել, որ նույն ժամանակահատվածում միջազգային քրեական իրավունքը սկսեց զարգանալ նաև զուգահեռ ուղղությամբ. տարբեր զինված ընդհարումների և տարատեսակ իրավասությունների արդյունքում ստեղծվեցին տարբեր ձևաչափերով հիբրիդային դատարաններ: Դրանց շարքին են դասվում Սիերա Լեոնեի հատուկ դատարանը (SCSL), Լիբանանի հատուկ տրիբունալը (STL), Կամբոջայի դատարանների արտառոց պալատները (ECCC), Արևելյան Թիմորի՝ ծանր հանցագործությունների հատուկ կոլեգիան, Մենեգալի աֆրիկյան արտակարգ պալատը, Կոսովոյի մասնագիտացված պալատները (KSC) և այլն:

Այսպիսով, միջազգային քրեական իրավունքը թևակոխեց նաև վեցերորդ փուլը:



#### 4. Միջազգային քրեական իրավունքի ձևավորման փուլերը

Ինչպես արդեն նշվեց, միջազգային քրեական իրավունքը առանձնահատուկ բնագավառ է, որտեղ խաղի կանոններն այլ են, քան ազգային քրեական և քրեադատավարական իրավունքներում: Քաղաքականության, միջազգային իրավունքի ու ազգային քրեական և դատավարական իրավունքների համադրումից ստեղծվել է մի յուրօրինակ կառույց, որն այսօր գործում է մարդկության գոյության պահպանման ու խաղաղության նպատակով: Թե որքանով է այն համապատասխանում իրականությանը կամ ինչ հաջողություններ է առ այսօր գրանցել, այլ հարց է: Միջազգային քրեական իրավունքի ձևավորումը և զարգացումը առնչվում են ոչ միայն նպատակին, այսինքն՝ մարդկության պահպանությանը, այլև ուղղակիորեն կապված են միջազգային ճանաչված հանցակազմերի հատակեցման հետ:

##### *4.1 Միջազգային հանցագործությունների պատմական սահմանումը*

Յուրաքանչյուր միջազգային հանցագործություն անցել է պատմական զարգացման յուրօրինակ ուղի: Այսպիսով, պատերազմական հանցագործությունները, որոնք ամենավաղ կողիֆիկացված նորմերն են, ի տարբերություն մնացած երեք միջազգային հանցագործությունների՝ ձևակերպվել են շվեյցարացի գործարար Հենրի Դյունանտի ջանքերի շնորհիվ: Վերջինս, 1859 թ. Սուլֆերինոյի դաժան ճակատամարտի ժամանակ համոզվելով, որ վիրավոր զինվորներին պատշաճ օգնություն ցուցաբերելու դեպքում բազում անձինք կարող են փրկվել, այդ նպատակով մոբիլիզացրել է կանանց և երեխաներին: Մի քանի տարի անց՝ 1864 թ., Դյունանտի ջանքերով ձևավորվեց Ժնևյան առաջին կոնվենցիան, որը սահմանում է միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը: Այն ներառում է վիրավորների և հիվանդների պաշտպանությունը մարտի դաշտում: Որոշ ժամանակ անց միջազգային մարդասիրական իրավունքին միացան Հաագայի 1899 թ. և 1907 թ. կոնվենցիաները, որոնցում քրեականացվում են այն

գործողությունները, որոնք հակասում են պատերազմական սովորույթներին: Եթե Ժնևյան կոնվենցիայով նախատեսված էր առանձին խումբ մարդկանց պաշտպանությունը, ապա Հասագայի կոնվենցիաներով արգելք էր դրվում առանձին պատերազմական մեթոդներ կիրառելու վրա, ինչպիսին, օրինակ, որոշ զինատեսակների, քիմիական նյութերի օգտագործումն էր:

«Մարդկության դեմ հանցագործություն» եզրույթն<sup>37</sup> առաջին անգամ քաղաքական մանիֆեստի տեսքով կիրառվեց Առաջին աշխարհամարտի ընթացքում, երբ Անտանտը բնութագրեց Օսմանյան կայսրության գործողությունները իր սահմաններում բնակվող քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ՝ որպես քրիստոնեության դեմ հանցագործություն, այնուհետև՝ մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություն<sup>38</sup>: Այս քաղաքական հռչակագիրը, որը նոր հասկացություն էր ներառում, ակնհայտորեն հանցակազմ չէր պարունակում, սակայն մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն Նյուրնբերգյան խարտիայի ձևավորման գործընթացում, այլև մեդադրական եզրակացությունը ներկայացնելու ժամանակ:

Ագրեսիայի հանցագործությունը կամ նվաճողական պատերազմ վարելը, թեպետ Ազգերի լիգայի իրավաբանական հանձնա-

---

<sup>37</sup> Նախ որպես քրիստոնեության դեմ հանցագործություն, այնուհետև՝ մարդկության ու քաղաքակրթության դեմ հանցագործություն:

<sup>38</sup> Տե՛ս *R. G. Hovannisian*, *The Armenian genocide in perspective*, 1991, էջ 30, *M. C. Bassiouni*, *Crimes against humanity: Historical evolution and contemporary application*. Cambridge, 2011, էջ 88-89, «*Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի նոր հանցագործությունները՝ Դաշնակից պետությունների կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են Բարձր դռանը՝ այս հանցագործությունների համար Օսմանյան կառավարության բոլոր անդամների անձնական պատասխանատվության ենթարկելու մասին, այդ թվում՝ այն գործակալների, որոնք ներգրավված են այդ սպանություններում*», 1915 թ., մայիսի 25, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսական կայսրության համատեղ հռչակագիր:

խմբի կողմից բազմիցս քննարկվել էր<sup>39</sup>, բայց ոչ բոլոր պետություններն էին համաձայն ընդունելու այդ ձևակերպումը: Համենայն դեպս, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դաշնակիցներին հաջողվեց համաձայնության հասնել ագրեսիայի հանցագործության շուրջ, որի արդյունքում այն կողիֆիկացվեց Նյուրնբերգյան խարտիայում:

«Ցեղասպանություն» եզրույթը, որն առաջին անգամ կիրառեց Ռաֆայել Լեմկինը՝ նացիստական Գերմանիայի գործողությունները հրեաների նկատմամբ և երիտթուրքերի գործողությունները հայերի նկատմամբ իր աշխատության մեջ բնութագրելու համար<sup>40</sup>, 1951թ. միջազգայնորեն լայն ճանաչում ստացավ կոնվենցիայի տեսքով: Թեև Ռաֆայել Լեմկինին չհաջողվեց գործածել «ցեղասպանություն» եզրույթը Նյուրնբերգի դատավարությունում, այն կարճ ժամանակ անց համալրեց *jus cogens* նորմերի ցանկը:

Նախքան միջազգային հանցագործությունների ձևակերպման ընթացքը Նյուրնբերգյան դատավարությունից առաջ և հետո դիտարկելը անհրաժեշտ է ուսումնասիրել Առաջին աշխարհամարտից հետո տեղի ունեցող միջազգային քրեական իրավունքին առնչվող իրադարձությունները և, մասնավորապես, Վերսալի ու Սերի խաղաղության պայմանագրերով նախատեսված քրեական հետապնդումները:

#### 4.2 Առաջին աշխարհամարտ

Առաջին աշխարհամարտում կենտրոնական տերությունների պարտությունը ստիպեց յուրաքանչյուր անդամ պետության ստանձնելու առանձին պետական պատասխանատվություն և խաղաղության պայմանագիր կնքելու Անտանտի անդամների հետ՝ ի երաշխա-

---

<sup>39</sup> Տե՛ս *S. Saypin*, *The crime of aggression in international criminal law: Historical development, comparative analysis and present state*. The Hague, The Netherlands, Berlin, 2014, էջ 31-33:

<sup>40</sup> Տե՛ս *R. Lemkin*, *Axis rule in occupied Europe: Laws of occupation, analysis of government, proposals for redress*. Clark, N.J., 2005, էջ 79:



վորումն իրենց պետական պատասխանատվության պարտակա-  
նությունների կատարման.

- 1919 թ. հունիսի 28-ին Վերսալի խաղաղության պայմանա-  
գիրը Գերմանիայի հետ,
- 1919 թ. սեպտեմբերի 10-ին Մեն-Շերմենի խաղաղության  
պայմանագիրը Ավստրիայի հետ,
- 1919 թ. նոյեմբերի 14-ին Նոյիլ-Սուր-Սեյնի խաղաղության  
պայմանագիրը Բուլղարիայի հետ,
- 1920 թ. հունիսի 4-ին Տրիանոնի խաղաղության պայմանա-  
գիրը Հունգարիայի հետ,
- 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի խաղաղության պայմանագի-  
րը Օսմանյան կայսրության հետ, այնուհետև՝ արդեն Թուր-  
քիայի Հանրապետության հետ 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի  
պայմանագիրը:

#### *4.2.1 Լայպցիգյան դատավարություններ*

Առաջին աշխարհամարտում պարտված Գերմանիան, ստորագ-  
րելով Վերսալի 1919 թ. խաղաղության պայմանագիրը, պարտավոր-  
վում էր ոչ միայն պատժել պատերազմական հանցագործներին, այլև  
նույն պայմանագրի 227-րդ հոդվածի համապատասխան՝ Գերմա-  
նիայի կայսր Վիլհելմ 2-րդը պետք է քրեական պատասխանատվու-  
թյուն կրեր՝ կատարած պատերազմական հանցագործությունների և  
միջազգային սովորության նորմերը խախտելու համար: Նույն պայ-  
մանագրի 228-րդ հոդվածով Գերմանիան պարտավորվում էր պա-  
տասխանատվության ենթարկել պատերազմական հանցագործնե-  
րին: Պետության ղեկավարի դատավարությունը, այնուամենայնիվ,  
տեղի չունեցավ, քանի որ կայսրը ապաստանեց Նիդերլանդներում և  
այլևս մեծ քաղաքականություն չվերադարձավ: Երբ Անտանտը Նի-  
դերլանդների կառավարությունից պահանջեց արտահանձնել կայ-  
սերը, մերժում ստացավ այն սկզբունքային հիմնավորմամբ, որ պե-  
տության գլուխն օժտված է առանձնակի անձեռնմխելիությամբ, և

պատերազմ վարելը չի կարող դիտարկվել որպես քաղաքական հանցագործություն<sup>41</sup>: Այս սկզբունքը մինչ օրս բավականին խնդրահարույց է միջազգային քրեական իրավունքում: Սուդանի Հանրապետության նախկին նախագահ Ալ Բաշիրի հանդեպ արդեն տասնամյակից ավելի է, ինչ Միջազգային քրեական դատարանը քրեական հետապնդում է սկսել: Ի հեճուկս բոլոր պահանջների՝ իր բոլոր քաղաքական այցելությունների ընթացքում ոչ մի ընդունող պետություն չի ձեռնարկել որևէ գործողություն՝ ձերբակալելու և արտահանձնելու Միջազգային քրեական դատարանին Սուդանի այն ժամանակ գործող նախագահ Ալ Բաշիրին<sup>42</sup>: Մինչդեռ անդամ պետությունները, ըստ Հռոմի ստատուտի 87-րդ և 89-րդ հոդվածների, պարտավոր են համագործակցել Միջազգային քրեական դատարանի հետ<sup>43</sup>:

Թեև Անտանտը պատրաստել էր մեղադրյալների 900 հոգուց կազմված ցանկ, այնուամենայնիվ ընդամենը ցածրաստիճան 10 զինվորական դատապարտվեց մինչև 5 տարվա ազատազրկման: Իսկ բարձրաստիճան մեղադրյալներ էին միայն գերմանական սուզանավի երկու օբերլեյտենանտներ, որոնք բաց ծովում հարձակում էին գործել «Լազարեթ» նավի վրա, սակայն պատժվել էին ոչ թե հենց հարձակման, այլ նավաբեկյալներին գնդակահարելու համար<sup>44</sup>: Ան-

---

<sup>41</sup> Տե՛ս *K. Sellars*, in: C. Krefß/S. Barriga, *The crime of aggression: A commentary*, 2017, էջ 46-47, նաև՝ *W. A. Schabas*, *The trial of the kaiser*, Oxford, 2018, էջ 76:

<sup>42</sup> Տե՛ս, օրինակ, *X. Rice*, *Chad refuses to arrest Omar al-Bashir on genocide charges*, *The Guardian* 22 July 2010, *The Guardian*, <https://www.theguardian.com/world/2010/jul/22/chad-refuses-arrest-omar-al-bashir>, *Omar al-Bashir arrest request rejected by Malawi*, *bbc news* 14 October 2011, <https://www.bbc.com/news/world-africa-15308198>:

<sup>43</sup> Հարավաֆրիկյան Հանրապետությունը անհամաձայնություն հայտնեց իր պարտականությունները չկատարելու վերաբերյալ ՄՔԴ մեղադրանքներին և սկսեց Հռոմի ստատուտից դուրս գալու գործընթաց, որը հետագայում կասեցրեց, սակայն ավելի ուշ՝ 2017 թ. հոկտեմբերի 27-ից, Բուրունդին դադարեցրեց իր անդամությունը Հռոմի ստատուտին:

<sup>44</sup> Տե՛ս *J. Matthäus*, in: P. Heberer/J. Matthäus, *Atrocities on trial: Historical perspectives on the politics of prosecuting war crimes*, 2008, էջ 8-11:

տանտի նախատեսած՝ հինգ միջազգային դատավորից բաղկացած դատարանի ստեղծումը, որը պետք է դատեր Գերմանիայի կայսերը և գերմանացի պատերազմական այլ հանցագործների, մնաց անկատար, իսկ պատժելու պարտականությունը տրվեց Գերմանիայի ազգային դատարանին<sup>45</sup>:

#### 4.2.2 Մտամբուլյան դատավարություններ

Ամբողջովին այլ պատկեր ուներ արևելյան հատվածում ձևավորվող պատերազմական հանցագործների քրեական հետապնդումը: Եթե Լայպցիգի դատավարություններում հետապնդվում էին մասնավորապես այն զինվորականները, որոնք մարտի դաշտում՝ պատերազմական իրավիճակում, խախտել էին պատերազմական սովորութային նորմերը, 1919 թվականից մինչև 1921 թվականները, Օսմանյան կայսրությունում քաղաքական իրադարձությունների զուգահեռ ձևավորվեց Մտամբուլի ռազմական դատարանը, որտեղ որպես մեղադրյալ էին կանչված ոչ թե ցածրաստիճան զինվորականներ, այլ քաղաքական գործիչներ, որոնք մեղադրվում էին սեփական քաղաքացիների նկատմամբ հանցագործություններ կատարելու, մասնավորապես հայերի բնաջնջումը կազմակերպելու և իրականացնելու մեջ: Օսմանյան քրեական դատավարությունը, պատկանելով ռոմանագերմանական իրավահամակարգին, ինկվիզիցիոն բնույթի էր: Մտամբուլի ռազմական դատարանը հիմնված էր սուլթանի 1918 թ. դեկտեմբերի 14-ի N 233 դեկրետի և Օսմանյան կայսրության քրեական ու ռազմական քրեական օրենսգրքերի վրա<sup>46</sup>: Ար-

---

<sup>45</sup> Այդ դատավարությունները տևեցին շուրջ վեց տարի՝ 1921-1927 թթ., և ընթանում էին Գերմանիայի Լայպցիգ քաղաքի Ռայքսգեռիխտսգեբյուդենում (Leipziger Reichsgerichtsgebäude), սակայն նույն ժամանակ քաղաքական ճնշումների պատճառով մեղադրյալները կա՛մ ազատ էին արձակվում, կա՛մ անմեղ ճանաչվում, սե՛ս *W. Schabas, The abolition of the death penalty in international law. Cambridge, 2002, էջ 235-236*:

<sup>46</sup> Տե՛ս *R. H. Kévorkian, The Armenian genocide: A complete history. London, New York, 2011, էջ 776, T. Akçam, A Shameful act: The Armenian genocide and the question of Turkish responsibility. New York, N.Y., Metropolitan Books, 2007,*

տակարգ դատարանի ստեղծումը պայմանավորված էր նաև այն բանով, որ կանոնավոր դատարանները ի վիճակի չէին լինի այդ տեսակ քրեական գործերը արդյունավետ քննելու: 1919 թ. հունվարի 8-ին Ստամբուլի ռազմական դատարանը սկսեց իր գործունեությունը: Դատարանը գտնվում էր բրիտանացիների ուշադրության ներքո, և չնայած քաղաքական ներքին ճնշումներին<sup>47</sup>, դատարանին հաջողվեց ներգրավել բարձրաստիճան քաղաքական գործիչների, սակայն գլխավոր մեղադրյալներ էնվերը, Թալեաթը և Ջեմալը՝ օսմանյան կառավարության կարևորագույն ներկայացուցիչները, բացակայում էին դատավարություններից, ինչի պատճառով իրենց գործի քննությունը տեղի ունեցավ *in absentia*: Թեև գլխավոր դատավարության ժամանակ կառավարության մեղադրյալ անդամները վկայակոչում էին *nulla poena sine lege* սկզբունքը և օսմանյան սահմանադրության 32-րդ, 85-րդ և 89-րդ հոդվածների հիման վրա դատարանի իրավասության բացակայությունը, Ստամբուլի ռազմական տրիբունալը գտավ, որ մեղադրական եզրակացության մաս են կազմում ոչ թե քաղաքական հանցագործությունները, այլ հանրորեն վտանգավոր արարքները, որոնք սահմանված են Օսմանյան կայսրության քրեական օրենսգրքի 170-րդ և Օսմանյան կայսրության ռազմական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածներով<sup>48</sup>: Տրիբունալի կարևորագույն ար-

---

էջ 284, *J. Balint*, in: K. Heller/G. Simpson, *The Hidden Histories of War Crimes Trials*, 2013, էջ 86:

<sup>47</sup> Քաղաքական ցույցերի արդյունքում ավելին քան 41 քաղաքական բարձրաստիճան ներկայացուցիչներ կալանքից ազատ արձակվեցին, տե՛ս *V. N. Dadrian/T. Akçam*, *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials*. New York, 2011, էջ 14:

<sup>48</sup> Տե՛ս *J. Bucknill/H. Utijian*, *The Imperial Ottoman Penal Code*, 1913, *G. Petrossian*, *Staatenverantwortlichkeit für Völkermord*, 2018, էջ 69-73, *Ս. Փափազյան*, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, նաև *V. N. Dadrian and T. Akçam* (note 47), էջ 116-119, *Ս. Մնուժյան*, Ճանաչում և դատասպարտում: Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013, էջ 80-88:

ձանագրումներից էր նաև այն, որ հայերի տեղահանության մասին օրենքը զրկել էր սեփական քաղաքացիներին սահմանադրական բոլոր երաշխիքներից, ինչն էլ հնարավոր էր դարձրել ոճրագործություններ կատարելը<sup>49</sup>:

Ստամբուլի ռազմական տրիբունալը 63 դատավարություն է անցկացրել, սակայն ներկայումս միայն 24-ի արձանագրություններն են պահպանվել<sup>50</sup>: Դրանցից են գլխավոր դատաքննությանը (որտեղ մեղադրվում էին կառավարության անդամները) զուգահեռ անցկացվող՝ Տրապիզոնի, Խարբերդի, Երզնկայի, Բաբերդի և Յոզղաթի դատավարությունները: Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ, սակայն, Ստամբուլյան դատավարությունների վճիռները ճանաչվեցին առոչինչ:

Թե՛ Լայպցիգյան դատավարությունները և թե՛ Ստամբուլյան դատավարությունները ստեղծեցին առաջին նախադեպը և փորձը՝ պատժելու և՛ սեփական քաղաքացիների հանդեպ կատարված ոճրագործությունները, և՛ պատերազմական սովորույթներ խախտելը: Թե որքանով էին այս դատավարությունները արդյունավետ, այլ հարց է, սակայն դրանք պարարտ հող ստեղծեցին Նյուրնբերգյան և Տոկիոյի դատավարությունների համար:

### *4.3 Երկրորդ աշխարհամարտ*

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Եվրոպայի հրեաների զանգվածային ոչնչացումը իրագործվում էր նացիստական Գերմանիայի կառավարության ամենաբարձր հովանու ներքո. այդ ծրագրում ներգրավվել էին բազմաթիվ նախարարություններ և պետական կառույցներ: Դեռևս պատերազմի ընթացքում դաշնակիցների կողմից գործողություններ էին ծրագրվում՝ պատժելու նացիստական Գերմանիայի նվաճողական և բնաջնջող քաղաքականությունը:

---

<sup>49</sup> Տե՛ս V. N. Dadrian and T. Akçam (note 47), էջ 95-95:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 202:

Դաշնակիցների՝ 1941 թ. օգոստոսի 14-ի համատեղ հռչակագիրը՝ Ատլանտյան խարտիան<sup>51</sup>, սահմանեց նացիստական կռալիցիայի նկատմամբ ընդհանուր քաղաքականության և հետագայում միջազգային համագործակցության առաջին սկզբունքները: Դրան հաջորդեց 1943 թ. հոկտեմբերի 30-ի Մոսկվայի հռչակագիրը, որով դաշնակիցները համաձայնեցին Գերմանիայի և Ճապոնիայի կապիտուլյացիայի և վերջիններիս պատերազմական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու շուրջ: Արևմտյան դաշնակիցների կողմից արդեն 1943 թ. ստեղծվել էր առանձին հանձնաժողով<sup>52</sup>, որը զբաղված էր գերմանացիների պատերազմական հանցագործությունների հետախուզմամբ և ապացույցների հայթայթմամբ: 1945 թ. օգոստոսի 8-ին Մոսկվայի հռչակագրի հիման վրա ուժի մեջ մտավ Լոնդոնի ստատուտը կամ Նյուրնբերգյան ստատուտը, որը պարունակում էր գերմանացի ռազմական հիմնական դերակատարների պատժի համար նախատեսված սկզբունքներն ու հանցակազմերը: Լոնդոնի ստատուտի 6-րդ հոդվածը նախատեսում էր հետևյալ հանցակազմերը՝ հանցագործություններ ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Լոնդոնի ստատուտի օրինակով Ճապոնիայի կապիտուլյացիայից ամիսներ անց՝ 1946 թ. հունվարի 19-ին, սահմանվեց նաև Տոկիոյի ստատուտը կամ Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական տրիբունալի ստատուտը:

---

<sup>51</sup> ա) տարածքային ընդարձակումից հրաժարվելը, բ) համաշխարհային առևտրի և ապրանքատեսակների հավասար մատչելիությունը, գ) ուժի մերժումը, դ) ազգերի ինքնորոշման իրավունքը, ե) տնտեսական համագործակցությունը, զ) ժողովուրդների անվտանգությունը բռնակալությունից, զ) ծովերի ազատությունը և ը) հարասն անվտանգության համակարգ ապահովելու համար զինաթափումը. այս սկզբունքները հետագայում դարձան ՄԱԿ-ի հիմքը, մանրամասն տե՛ս *I. Brownlie*, in: R. S. Pathak, *International law in transition: Essays in memory of judge Nagendra Singh*, 1992, էջ 12-15:

<sup>52</sup> United Nations War Crimes Commission (UNWCC).

### 4.3.1 Նյուրնբերգյան դատավարություններ

Նյուրնբերգյան դատավարությունները հսկայական դերակատարություն ունեն ոչ միայն արդի միջազգային քրեական իրավունքում, այլև միջազգային հարաբերություններում և ողջ միջազգային իրավունքում: Բեկումնային իրադարձությունը փոխեց ժամանակակից իրավամտաճողությունը և նոր կանոններ սահմանեց միջազգային քաղաքականությունում: Սակայն անհրաժեշտ է տարբերակել Նյուրնբերգյան երկու դատավարությունները.

- Միջազգային ռազմական տրիբունալի (*International Military Tribunal - IMT*) դատավարություն<sup>53</sup> (20 նոյեմբերի 1945 - 1 հոկտեմբերի 1946), որը միջազգային բնույթի էր:
- Նյուրնբերգյան դատավարությունները ԱՄՆ ձեռնարկած առանձին գործերի վերաբերյալ դատավարություններ էին<sup>54</sup>, որոնք այլևս միջազգային բնույթի չէին (*Nürnberg Military Tribunal - NMT*):

1945 թ. Յալթայի փետրվարյան կոնֆերանսով, այնուհետև նույն թվականի հուլիսին Պոտսդամի համաձայնությամբ Գերմանիան բաժանվել էր դաշնակիցների միջև չորս գոտու: Յուրաքանչյուր գոտում գործում էր տվյալ պետության իրավասությունը: Ուստի նմանատիպ դատավարություններ տեղի էին ունենում Գերմանիայի ողջ տարածքում, այդ թվում՝ և՛ ֆրանսիական, և՛ բրիտանական, և՛ խորհրդային գոտիներում:

Նյուրնբերգ քաղաքի դերակատարությունը հիտլերյան Գերմանիայում հսկայական էր: Նացիստական Գերմանիայի ղեկավար կազմի նպատակն էր այս քաղաքը դարձնել աշխարհի մայրաքաղաք: Այստեղ էին կառուցվում նացիստական խորհրդանիշները, Նյուրնբերգ քաղաքում էին ընդունվել ռասայական օրենքները (*Nürnberger Gesetze*), որով հրեաները կորցրեցին իրենց մարդկարգավիճակը: Սակայն դատարանի ընտրությունը պայմանավորված

---

<sup>53</sup> Եզակիով:

<sup>54</sup> Հոգնակիով:

էր տէխնիկական պատճառներով. Նյուրնբերգ քաղաքում էր գտնվում միակ դատարանը, որի քրեակատարողական հիմնարկը հենց դատարանի շէնքում էր և, չնայած ումբակոծություններին, կանգուն էր մնացել:

Միջազգային ռազմական տրիբունալը քառակողմ միջազգային կառույց էր, որտեղ երկուական դատավոր և դատախազ էին ներկայացված Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, ՄԲ-ից և ԽՍՀՄ-ից: Թէև տրիբունալի իրավասությունը սահմանափակվում էր ժամանակի առումով (*ratione temporis*)՝ 1939-1945 թվականներով, սակայն Գերմանիայի բնակչության նկատմամբ հանցագործությունները տրիբունալի իրավասությունից դուրս էին<sup>55</sup>: Տրիբունալի քննության առարկա չէր նաև Հոլոքոստը մի պարզ պատճառով, որ պատերազմի ավարտին դեռևս չէին հայտնաբերվել այն հրեշավոր ոճրագործությունները, որոնք կատարվել էին նացիստական իշխանությունների կողմից: Ամերիկյան մեղադրողների նպատակներից էր մեղադրել նացիստական վերնախավին ագրեսիվ պատերազմ վարելու մեջ, քանզի կարծում էին, որ մնացած բոլոր դաժանությունները, ոճրագործությունները սկիզբ են առել ագրեսիվ պատերազմ վարելու պատճառով, ուստի այլ հանցակազմերը ստորադասվում են ագրեսիվ պատերազմ վարելուն<sup>56</sup>:

Ընթացակարգային տեսանկյունից տրիբունալը ազատ էր որոշելու սեփական դատավարական կարգը: Այստեղ առաջին անգամ տրիբունալի իրավաբանները հայտնվեցին դժվարին իրավիճակում, երբ ռոմանագերմանական (Ֆրանսիա, ԽՍՀՄ, Գերմանիա<sup>57</sup>) և անգլոամերիկյան (ՄԲ, ԱՄՆ) իրավահամակարգերը հանդիպեցին: Տարածայնությունները իրավաբանների միջև բազմաթիվ էին ոչ միայն այն պատճառով, որ վերջիններս չէին հասկանում միմյանց տերմինաբանությունը, այլև որ դատավարական մոտեցումները տարբեր-

---

<sup>55</sup> Տե՛ս C. Safferling (note 2), էջ 51:

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>57</sup> Պաշտպանները:



վում էին միմյանցից ոչ միայն մանրուքների առումով, այլև սկզբունքորեն: Ինկվիզիցիոն դատավարական համակարգում դատավորը ակտիվ դերակատարություն ունի ճշմարտության բացահայտման գործում: Անգլոամերիկյան համակարգում դատավորը արբիտրի դերում է, և կողմերն են իրենց նախաձեռնությամբ հանդես գալիս, այսինքն՝ մրցակցային համակարգ է: Թե՛ փաստեր հավաքագրելու, թե՛ ապացույցներ ներկայացնելու տեսանկյունից դատարանի իրավաբանների համար առեղի դժվարություններ էին առաջանում: Նույնպիսի իրավաբանական դժվարություններ էին առաջանում խաչաձև հարցաքննության պարագայում (*cross examination*): 1945 թ. հոկտեմբերի 29-ին Նյուրնբերգյան ստատուտի 24-րդ հոդվածին համապատասխան՝ տրիբունալի կողմից ընդունվեց անգլոամերիկյան մրցակցային ընթացակարգը:

Մեղադրյալների փաստաբանները հիմնվում էին օրենքի բացակայության և հետադարձ ուժի արգելքի վրա, ինչպես նաև մատնանշում էին դաշնակիցների կողմից կատարված հանցագործությունները, մասնավորապես՝ խորհրդային բանակի կողմից 1940 թ. 4400 լեհ սպաների սպանող Գատինում, ամերիկյան և խորհրդային բանակների կողմից կատարված սեքսուալ բնույթի հանցագործությունները Գերմանիայում կամ գերմանական քաղաքների ամբողջական ուրակոծությունները<sup>58</sup>:

Դատավարությունները ավարտվեցին 1946թ. հոկտեմբերի 1-ին. տասը ամսվա դատական լուսմներից հետո տրիբունալը վճռեց 12 մեղադրյալի նկատմամբ կիրառել մահապատիժ՝ կախաղանի միջոցով<sup>59</sup>, երեք մեղադրյալի նկատմամբ՝ ցմահ ազատազրկում, չորս մեղադրյալի նկատմամբ՝ ազատազրկում և երեք մեղադրյալի նկատմամբ՝ ազատ արձակում:

---

<sup>58</sup> Tu-quoque-Argument, միջազգային քրեական իրավունքում լայնորեն հայտնի պաշտպանական ռազմավարություն:

<sup>59</sup> Վերջիններիս համար այն պատվազրկող եղանակ էր, քանի որ զինվորականները կնայնորեն գնդակահարվել, քան կախաղան բարձրացվել:

Միջազգային ռազմական տրիբունալի վճռից հետո նույն դատական նիստերի դահլիճում սկսվեցին արդեն Նյուրնբերգյան ռազմական դատավարությունները՝ հիմնվելով ԱՄՆ վերահսկիչ խորհրդի կողմից ընդունված օրենքի վրա (Control Council Law N. 10): Օրենքը Նյուրնբերգյան ստատուտի պես նպատակ էր հետապնդում Գերմանիայի ամերիկյան գոտում պատասխանատվության ենթարկել առանձին անձանց խմբերին, որոնք հսկայական դեր են ունեցել պատերազմական հանցագործություններում: 12 դատավարությունների նպատակն էր քննել նացիստական Գերմանիայի տարբեր ուղղություններում կատարված հանցագործությունները:

- Բժիշկների դատավարությունը՝ 1946 թ. դեկտեմբերի 9-ից 1947 թ. օգոստոսի 20-ը, քննում էր այն բժիշկների գործերը, որոնք գիտափորձեր էին կատարում մարդկանց վրա: Այդ դատավարությունների հիման վրա ստեղծվեց գիտափորձեր կատարելու Նյուրնբերգյան բժշկական վարքականոնը՝ սկզբունքները, որոնցով բժիշկները պետք է առաջնորդվեն իրենց գիտափորձերը կատարելիս:
- Միլիտի դատավարությունը՝ 1947 թ. հունվարի 2-ից մինչև ապրիլի 17-ը, վերաբերում էր գերմանական ավիացիայի կողմից կատարված հանցագործություններին, քաղաքների և խաղաղ բնակչության ռմբակոծություններին:
- Դատավորների և իրավաբանների դատավարությունը՝ 1947 թ. փետրվարի 17-ից մինչև դեկտեմբերի 14-ը, վերաբերում էր արդարադատական համակարգում գործող անձանց, որոնք զբաղված էին ռասայական օրենքների գործարկմամբ:
- Փոլի դատավարությունը՝ 1947 թ. հունվարի 13-ից մինչև նոյեմբերի 3-ը, վերաբերում էր նացիստական Գերմանիայի տնտեսական նախարարության կողմից կատարված տնտեսական հանցագործություններին, մասնավորապես՝ բռնագրավումներին, հարկադիր աշխատանքին և այլն:

- Ֆլիկի դատավարությունը՝ 1947 թ. ապրիլի 19-ից մինչև դեկտեմբերի 22-ը, վերաբերում էր գերմանացի տնտեսվար Ֆրիդրիխ Ֆլիկի կողմից կատարված տնտեսական հանցագործություններին, որը, օգտագործելով հրեական աշխատանքային ուժը, զինում էր գերմանական բանակը:
- «ԻԳ Ֆառբենի» դատավարությունը՝ 1947 թ. օգոստոսի 14-ից մինչև 1948 թ. հուլիսի 30-ը: «ԻԳ Ֆառբեն»<sup>60</sup> կոնցենտր հայտնի էր ցիկլոն Բ գազի արտադրությամբ, որն օգտագործվում էր համակենտրոնացման ճամբարներում:
- Ռասսենզիդլունդգսամթ (ՌՌԻՇԱ) ռասայական տեղակայման նախարարության դատավարությունը՝ 1947 թ. հուլիսի 1-ից մինչև 1948 թ. մարտի 10-ը: Այս նախարարությունը զբաղված էր հրեաների տեղահանությամբ և նրանց սեփականության բռնագավթմամբ:
- Այնզագգռուփենի (*Einsatzgruppen*) դատավարությունը՝ 1947 թ. սեպտեմբերի 15-ից 1948 թ. ապրիլի 10-ը: Դեռևս նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության կայացման ընթացքում Գյորինգի կողմից ստեղծվել էր Ադոլֆ Հիտլերի անվտանգությունը ապահովող զինված մարմին, որը կոչվում էր Շուտցշտաֆել (կարճ՝ *SS, Schutzstaffel*): Այս ուժային խումբը դեռ մինչև Ադոլֆ Հիտլերի իշխանության գալն ապահովում էր Հիտլերի ֆիզիկական անվտանգությունը: *SS Einsatzgruppen*-ի կողմից էին կազմակերպված Գերմանիայում 1938 թ. ջարդերը, որոնք հայտնի էին կրիստալնախտ անվանմամբ (*Kristallnacht*), երբ բոլոր հրեաների խանութների դիմապակիները ջարդվեցին, իսկ խանութներն ավերվեցին: Իշխանության գալով՝ այս կառույցը վերածվեց բանակին զուգահեռ առանձին անկախ զինված մարմնի, որն ուղիղ ենթարկվում էր Ադոլֆ Հիտլերին՝ Ֆյուրերին: Պատերազմական գործողությունների ընթացքում և բա-

---

<sup>60</sup> Այսօր հայտնի է որպես BAYER AG:

նակի առաջխաղացման ժամանակ SS Einsatzgruppen-ի կազմի մեջ գտնվող Այնզագրուփը շարժվում էր բանակի հետևից և այրում ռուսական, սլավոնական գյուղերն ու բնաջնջում բնակչությանը<sup>61</sup>:

Այս դատավարության ընթացքում ԱՄՆ դատախազ Բենջամին Ֆերենչը առաջին անգամ կիրառեց «ցեղասպանություն» եզրույթն իր մեղադրական եզրակացության մեջ:

- Կրուփի դատավարությունը՝ 1947 թ. դեկտեմբերի 8-ից 1948 թ. հուլիսի 31-ը, երրորդ տնտեսական դատավարությունն է, որտեղ մեղադրյալի աթոռին նստած էր գերմանական տանկաշինության մագնատը:
- 11-րդ դատավարությունը՝ 1947 թ. նոյեմբերի 4-ից մինչև 1949 թ. ապրիլի 13-ը, վերաբերում էր նացիստական Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը և նրա կողմից նվաճողական պատերազմ վարելու քաղաքականությանը:
- Վերջին դատավարությունը՝ 1947 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1949 թ. ապրիլի 14-ը, վերաբերում է բարձրաստիճան ռազմական ներկայացուցիչների կատարած հանցագործություններին<sup>62</sup>:

Հարկ է մատնանշել այն հանգամանքը, որ այս դատավարությունների ընթացքում և դրանց ավարտից հետո գերմանական հասարակությունը չէր ընդունում այն իրողությունը, որ մեղադրյալներն իրոք հանցագործներ են: Դատավարությունները բնութագրվում էին որպես հաղթողի արդարադատություն «*Siegerjustiz*», իսկ վճիռները չէին ընդունվում հասարակության կողմից: Թեև Նյուրնբերգյան դատավարություններից հետո որոշ ժամանակ պատերազմական դա-

---

<sup>61</sup> Մանրամասն տե՛ս *B. Carruthers, SS terror in the east: The Einsatzgruppen on trial.* Barnsley, 2013; նաև՝ *G. van Tonder, SS Einsatzgruppen.* Barnsley, South Yorkshire, 2018:

<sup>62</sup> Դատավարության վերաբերյալ տվյալները հասանելի են Green Series-ի, Միջազգային ռազմական տրիբունալի դատավարությունները՝ Blue Series-ի միջոցով:

տավարությունների վերաբերյալ լռություն էր տիրում թե՛ քաղաքականության մեջ, թե՛ գերմանական մեղիայում, նույնատիպ գործընթաց սկսվեց 1960-ական թթ.: «*Լուսավորչության*» նոր այլք բարձրացավ Գերմանիայում, որով հայտնի դարձան Ֆրանկֆուրտյան դատավարությունները: Գերմանիայի գլխավոր դատախազ Ֆրանց Բաուերի խիզախության շնորհիվ այն անձինք, որոնք պատերազմից հետո կրկին զբաղեցնում էին իրենց նախկին պաշտոնները, քրեական հետապնդման ենթարկվեցին արդեն նոր հանգամանքների բերումով և նոր ապացույցների հիման վրա:

#### *4.3.2 Տոկիոյի դատավարություններ*

Տոկիոյի դատավարությունները<sup>63</sup> ընթանում էին նույն սկզբունքով, ինչ Նյուրնբերգյան դատավարությունները: Տարբերությունը, սակայն, Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալից այն էր, որ Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական տրիբունալում պատվիրակված էին մասնագետներ<sup>64</sup> ոչ թե չորս, այլ տասնմեկ պետությունից<sup>65</sup>: Միևնույն ժամանակ Տոկիոյի տրիբունալի ստատուտը չուներ այն միջազգային հիմքը, որով օժտված էր Նյուրնբերգի տրիբունալը: Տեսության մեջ Տոկիոյի տրիբունալի լեգիտիմությունը լայն քննարկման առարկա է<sup>66</sup>: Դատավարությունների մասին տեղեկությունները սակավ են, իսկ ճապոնացիների վերաբերմունքը այդ դատավարություններին՝ մերժողական, ինչպես թուրքական մերժողական քաղաքականությունը: Հարկ է նշել Չինաստանում ճապոնական կայսրության կողմից կատարված զանազան ոճրագործությունները: Դրանցից են մասնավորապես Նանկին քաղաքում տեղի ունեցած իրադարձությունները. քաղաքն ամբողջովին վերածվել էր կա-

---

<sup>63</sup> Տե՛ս International Military Tribunal for Far East (IMTFE):

<sup>64</sup> Դատավորներ, դատախազներ և այլ իրավաբաններ:

<sup>65</sup> Ավստրալիա, Կանադա, Չինաստան, Ֆրանսիա, Բրիտանական Հնդկաստան, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Ֆիլիպիններ, Խորհրդային Միություն, Միացյալ Թագավորություն և Միացյալ Նահանգներ:

<sup>66</sup> Տե՛ս U. C. Safferling (note 2), էջ 56:

վատության որջի, և բռնի ուժով սեռական ծառայություններ էին մատուցվում ճապոնական բանակին<sup>67</sup>:

Տոկիոյի դատավարության վճիռը կայացվեց 1948 թ. նոյեմբերի 12-ին, որով 28 մեղադրյալի նկատմամբ տարբեր պատժատեսակներ կիրառվեցին<sup>68</sup>: Գերմանիայի տեղային դատավարությունների նման դատավարություններ տեղի ունեցան նաև Արևելքում, որոնց վերաբերյալ տեղեկությունները համեմատաբար դժվար հասանելի են:

#### *4.4 Սառը պատերազմ*

Սառը պատերազմի տարիներին միջազգային քրեական իրավունքը, մասնավորապես՝ Նյուրնբերգյան սկզբունքները, մղվեցին երկրորդ պլան: Թեպետ իրավագետները միջազգային հարթակներում փորձում էին բարձրացնել միջազգային քրեական դատարան ստեղծելու կարևորության հարցը, այնուամենայնիվ այդ խոսակցությունները լռեցվում էին աշխարհի տարբեր հատվածներում ռազմական իրադարձությունների առկայության պատճառով:

Միջազգային քրեադատավարական միակ դեպքն առնչվում է Երկրորդ աշխարհամարտի իրադարձություններին: 1960 թ. մայիսին իսրայելական կառավարության հաջող օպերացիայի շնորհիվ Երուսաղեմ բերվեց Ադոլֆ Այխմանը, որը ցեղասպանության հանցակազմի շրջանակներում պատմության մեջ առաջին մեղադրյալն էր: 1961 թ. Երուսաղեմի առաջին աստանի դատարանի կողմից վերջինս դատապարտվեց մահվան՝ հրեաների նկատմամբ իրականացրած ցեղասպանության համար<sup>69</sup>: Նրա՝ վերաքննիչ դատարան բերված բողոքը մերժվեց: Ադոլֆ Այխմանը, որը հրեաների ցեղասպանության «ճարտարապետն» էր, ենթարկվեց մահապատժի 1962 թ. հունիսի 1-ին:

---

<sup>67</sup> Տե՛ս *G. Petrossian*, Elements of Superior Responsibility for Sexual Violence by Subordinates, *Manitoba Law Journal* 2019, էջ 128:

<sup>68</sup> Տե՛ս *T. P. Maga*, Judgment at Tokyo: The Japanese War Crimes Trials, 2001, էջ 21-25:

<sup>69</sup> Տե՛ս *Israel v. Eichmann*, Judgment, 11 December 1961, para. 244:

Վերոնշյալ դատավարությունների շարքից են նաև Գերմանիայում հրեաների ցեղասպանությանն առնչվող՝ Ֆրանկֆուրտյան վերաբացված դատավարությունները: Դրանց մեկնարկը պայմանավորված էր նրանով, որ Նյուրնբերգյան դատավարությունները չէին կենտրոնացել հրեաների ցեղասպանության վրա, իսկ հրեաների ցեղասպանությունը քննության չէր առնվել միայն այն պատճառով, որ ցեղասպանության հանցակազմը դեռևս չէր ձևավորվել: ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան ուժի մեջ մտավ միայն 1951 թ. Ռաֆայել Լեմկինի ջանքերով: Միևնույն ժամանակ Նյուրնբերգյան դատավարության ընթացքում դեռևս չէին հայտնաբերվել բոլոր այն փաստաթղթերը, ինչպես նաև Արևելքում՝ Խորհրդային Միության հսկողության տակ գտնվող բոլոր նյութերը և ճամբարները, որոնք վկայում էին ցեղասպանության մասին: Նյուրնբերգյան դատավարություններից հետո կարծես միտում կար բոլոր մեղադրյալներին քողարկելու, նրանց հանցանքները կոծկելու և մոռացության մատնելու: Ֆրանկֆուրտյան դատավարությունները հենց այդ երևույթի դեմ ուղղված գործողություններ էին<sup>70</sup>:

#### *4.5 Միջազգային ժամանակավոր և հիբրիդային դատարաններ*

Նյուրնբերգյան դատավարություններից 40 տարի անց մարդկությունը մեկ անգամ ևս ստիպված եղավ կանգնել արհավիրքի առջև: Ռուանդայի ցեղասպանությունը և նախկին Հարավսլավիայում զինված ընդհարումները մարդկությանը ստիպեցին կրկին անցնել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հանցագործությունների դատապարտման ճանապարհով: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ստեղծվեցին նախկին Հարավսլավիայի (ICTY)<sup>71</sup>, այնուհետև՝ Ռուանդայի (ICTR)<sup>72</sup> ժամանակավոր (*ad hoc*)

---

<sup>70</sup> Տե՛ս *R. Steinke, Fritz Bauer: Oder Auschwitz vor Gericht. München, 2013, D. O. Pendas, The Frankfurt Auschwitz trial, 1963 - 1965: Genocide, history, and the limits of the law. Cambridge, 2006:*

<sup>71</sup> Տե՛ս UN Security Council, Resolution 827 (1993), Decides to establish the International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious

դատարանները: Նրանց ընդդատությունը սահմանափակված էր թե՛ ժամանակով, թե՛ տարածությամբ:

Թեև նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանում որպես մեղադրյալներ ներգրավված էին ինչպես բոսնիացի մուսուլմաններ, այնպես էլ խորվաթ կաթոլիկներ, այնուհանդերձ ակներև էր այն հանգամանքը, որ Դատարանը միտում ունի պատժելու մասնավորապես ուղղափառ սերբերին իրենց կատարած հանցագործությունների համար, մինչդեռ բոլոր կողմերն էլ նույնաքանակ հանցագործություններ էին կատարել: Արդյունքում Դատարանը հաստատեց այն փաստը, որ Բոսնիայի և Հերցեգովինայի կազմում գտնվող ինքնահռչակ Սերբիայի Հանրապետության ռազմական և քաղաքական գործիչների կողմից Սրբերենիցա քաղաքում կատարվել է ցեղասպանություն տեղի մուսուլմանական բնակչության նկատմամբ: Այս փաստը հետագայում հաստատեց նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանը<sup>73</sup>, որով ամրագրվեց, որ Սերբիան և Մոնտենեգրոն, այնուհետև Սերբիան, պետական պատասխանատվություն են կրում Սրբերենիցա քաղաքում ցեղասպանությունը չկանխելու համար<sup>74</sup>:

---

Violations of International Humanitarian Law Committed in the Territory of the Former Yugoslavia since, 1991:

<sup>72</sup> Տե՛ս UN Security Council, Resolution 955 (1994), Decides hereby, having received the request of the Government of Rwanda (S/1994/1115), to establish an international tribunal for the sole purpose of prosecuting persons responsible for genocide and other serious violations of international humanitarian law committed in the territory of Rwanda and Rwandan citizens responsible for genocide and other such violations committed in the territory of neighbouring States, between 1 January 1994 and 31 December 1994 and to this end to adopt the Statute of the International Criminal Tribunal for Rwanda annexed hereto:

<sup>73</sup> Տե՛ս ICJ, *Bosnia And Herzegovina v. Serbia and Montenegro*, Judgment, 26 February 2007, paras. 385-395, ICTY, *Prosecutor v. Krstić*, Judgment, 2. August 2001, 19 April 2004, ICTY, *Prosecutor v. Blagojevic and Jokic*, 15 January 2005:

<sup>74</sup> Տե՛ս ICJ, *Bosnia And Herzegovina v. Serbia and Montenegro*, Judgment, 26 February 2007, para. 4, նաև՝ *L. Melvern*, *A people betrayed: The role of the West in Rwanda's genocide*. London, 2000, էջ 53:



Ռուանդայի ցեղասպանության պարագայում դատարանն իր առջին մեղադրյալի հարցում մեծ երկընտրանքի առջև կանգնեց. Ռուանդայում տեղի՞ է ունեցել ցեղասպանություն, թե՞ ոչ: Հույսունքի և թուխսիների միջև ձևավորված ատելությունը բելգիական գաղութականության հետևանք էր: Բելգիացի գաղութատերերը տարանջատում էին հասարակությունն ըստ արտաքին տեսքի: Կարճահասակ և ոչ գրավիչ արտաքինով անձանց դատում էին հույսունքի շարքին, իսկ հաղթանդամ և, ըստ իրենց պատկերացումների, գեղեցիկ արտաքինով ռուանդացիներին՝ թուխսիների: Դրանով վերջիններս սոցիալապես ավելի բարվոք կարգավիճակ էին ձեռք բերում: Նմանատիպ բաժանումը սեպ խրեց երկու խմբերի միջև, որը հետագայում վերաճեց էթնիկական ատելության<sup>75</sup>: Այս հիմքով գործ հարուցելու համար Դատարանի առջև ծառայավոր դժվարին մի խնդիր. եթե հանցագործությունը կատարվել է սոցիալական խտրականության հիման վրա, ապա այն չի կարող որակվել որպես ցեղասպանություն: Սակայն դատարանը շրջանցեց այս մոտեցումն այն հիմնավորմամբ, որ սոցիալական տարանջատումը, որը սուբյեկտիվորեն ձևավորվել էր տարիների ընթացքում, վերածվել է օբյեկտիվ հանգամանքի<sup>76</sup>: Այսինքն՝ հասարակության մեջ արհեստականորեն ձևավորվել է էթնիկական տարանջատում:

Թեև հանցագործությունը կատարած անձանց համեմատ դատարանի կայացրած դատավճիռների թիվը զգալիորեն փոքր էր, սակայն Ռուանդայի միջազգային քրեական դատարանը ողջունեց անդամ պետությունների օժանդակությունն ու համագործակցությունը Ռուանդայի հանցագործների հայտնաբերման ու դատապարտման հարցում: Զինված ընդհարումների հետևանքով առաջա-

---

<sup>75</sup> Մանրամասն տե՛ս *G. Prunier, The Rwanda crisis: History of a genocide*, 7th ed. London, 2010, էջ 26, նաև՝ *L. Melvern, Conspiracy to murder: The Rwandan genocide*. London, 2006, էջ 8:

<sup>76</sup> Տե՛ս *ICTR, Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, 702:

ցած փախստականների հոսքի մեջ էին ընդգրկվում նաև այն անձինք, որոնք պատասխանատու էին պատերազմական հանցագործությունների համար, և փախստականներին ընդունող պետությունները ձեռնամուխ էին լինում մակրոհանցագործությունների հայտնաբերմանն ու պատժմանը<sup>77</sup>:

Յուրօրինակ էին նաև ռուանդական հատուկ դատարանները: Քանի որ ցեղասպանության ժամանակ իրավագետների 90 %-ը սպանվել էր, ուստի Ռուանդայի հասարակությունն անդրադարձավ ավանդական դատական համակարգին՝ «Գաչաչա» (Gacaca)<sup>78</sup> դատական գործընթացին: Այս յուրօրինակ համակարգը ներառում էր համայնքային ներկայացուցիչների կողմից գործերի հասարակ քննությունն ու դատապարտումը<sup>79</sup>:

Ռուանդայի միջազգային քրեական դատարանը իր վերջին գործը քննեց 2015 թ., նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը փակվեց Սլադիչի վճռով 2017 թ., որից հետո երկու դատարանները միաձուլվեցին մի նոր համակարգում, որն այժմ կոչվում է Միջազգային քրեական տրիբունալների մեխանիզմ<sup>80</sup>: Այս կառույցը հետամուտ է վաղաժամկետ ազատամների, քրեակատարողական հարցերի և վերաքննիչ բողոքների քննությանը:

Ժամանակավոր (ad hoc) դատարաններին զուգահեռ պրակտիկայում հայտնի են նաև հիբրիդային դատարանները, որոնք, բացի նրանից, որ ժամանակավոր են, նաև դրանց իրավասությունը վերաբերում է կոնկրետ մեկ կամ մի քանի իրադարձությունների: Ժամա-

---

<sup>77</sup> Sté u. C. Safferling/G. Petrossian, *Kriegsverbrecher unter den Flüchtlingen: Der Umgang der deutschen Justiz mit verdeckt nach Deutschland einreisenden Völkerrechtsverbrechern*, JA 401 (2019):

<sup>78</sup> Գաչաչա դատական համակարգի գործունեությունը փոխարինվել է ներկա դրությամբ Abunzi – Աբունզի դատական համակարգով, մանրամասն տե՛ս u. K. Doughty, *Remediation in Rwanda: Grassroots Legal Forums*. Philadelphia, 2016, էջ 130:

<sup>79</sup> Մանրամասն տե՛ս u. P. Clark, *The Gacaca courts, post-genocide justice and reconciliation in Rwanda: Justice without lawyers*. Cambridge, 2010:

<sup>80</sup> International Residual Mechanism for Criminal Tribunals (IRMCT).

նակավոր և հիբրիդային դատարանների միջև տարբերությունն այն է, որ վերջիններս կազմված են ոչ միայն միջազգային դատավորներից և մասնագետներից, այլև ազգային դատավորներից ու անձնակազմից, ինչպես նաև հիմնվում են ոչ միայն ազգային օրենքի, այլև կա՛մ ՄՄԿ-ի կողմից ընդունված բանաձևի, կա՛մ առանձին ստատուտի վրա: Այդպիսի օրինակ է Իրաքում Մադամ Հուսեյնի դատավարությունը<sup>81</sup>:

Հիբրիդայինների շարքին է դասվում Սիերա Լեոնեի հատուկ դատարանը<sup>82</sup>: Գլխավոր մեղադրյալը՝ Լիբերիայի նախկին նախագահ Չարլզ Թեյլորը, Սիերա Լեոնեում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմում իր միջամտության և կատարած պատերազմական հանցագործությունների համար դատապարտվեց 50 տարվա ազատազրկման<sup>83</sup>:

Այլ օրինակ է Լիբանանի հատուկ տրիբունալը<sup>84</sup>, որը տարիներ շարունակ քննում է Ռաֆիկ Հարիրիի սպանությունը: Այս դատարանը վերոհիշյալ դատարաններից տարբերվում է այն բանով, որ ահաբեկչության հիման վրա ձևավորված տրիբունալ է: Թեև Լիբանանի ազգային օրենքն է գործում, սակայն դատարանի անձնակազմը բաղկացած է միջազգային մասնագետներից: Դատարանը ստեղծվել է Լիբանանի կառավարության դիմումի հիման վրա առ այն, որ ազգային մարմիններն ի վիճակի չեն ապահովելու գործի արդար քննությունը: Ներկայումս առկա են վերացական մեղադրյալներ, որոնց իսկությունն ու գոյությունը դեռևս հայտնի չեն: Գործը քննվում է նրանց բացակայությամբ, թեև վերացական շահերը ներկայացվում են հենց դատարանի պաշտպանի ինստիտուտի կողմից: Մեղադրյալների ի հայտ գալու պարագայում և Վճռի հետ վերջիններիս անհամաձայ-

---

<sup>81</sup> Iraqi Special Tribunal (IST).

<sup>82</sup> Special Court for Sierra Leone (SCSL).

<sup>83</sup> S'e'u SCSL, *Prosecutor v. Taylor*, Appeals Chamber, Judgment, 26 September 2013:

<sup>84</sup> Special Tribunal for Lebanon (STL).

նության դեպքում դատարանը պարտավոր է նոր քննություն իրականացնել:

Եվս մեկ օրինակ է Կամբիա խմբերների դատարանը Կամբոջայում<sup>85</sup>, որը քննում է 1970-ականներին այդ երկրում Պոլ Պոտի կողմից իրականացված հանցագործությունները: Դատարանը ներկայումս քննում է Պոլ Պոտի աջակիցներին՝ որպես հանցակիցների: Թե որքանով է Կամբոջայում տեղի ունեցածը ցեղասպանություն, տեսության մեջ հնչող կարծիքները դեռևս շատ հակասական են: Սակայն իր վերջին վճռով դատարանը փաստեց, որ Կամբոջայի ազգային փոքրամասնությունների դեմ իրականացված գործողությունները ցեղասպանություն են<sup>86</sup>:

Վերոնշյալ շարքից է նաև Եվրոպական միության կողմից ստեղծված՝ Կոսովոյի վերաբերյալ միջազգային հիբրիդային դատարանը<sup>87</sup>: Այն ուղղված է Կոսովոյի Հանրապետության անկախանալու ժամանակահատվածում տեղի ունեցած պատերազմական հանցագործությունների բացահայտմանն ու դատապարտմանը:

Դեռ Առաջին աշխարհամարտից հետո միջազգային հանրությունը ակտիվորեն քննարկում էր մշտական միջազգային քրեական դատարան հիմնելու հարցը, ուստի ժամանակավոր դատարանների առկայությունը ստիպեց միջազգային հանրությանը վերադառնալ մշտական քրեական դատարան ստեղծելու գաղափարին և իրականացնել այն: 1998 թ. Հռոմի կոնֆերանսում հաջողվեց համակողմանի համաձայնության հասնել միջազգային քրեական դատարան (ICC) ստեղծելու գաղափարի իրականացման շուրջ: Թե որքանով է այս դատարանն արդարացրել իրեն ստեղծման օրվանից, դեռևս մեծ հարց է: Նշված հիբրիդային դատարանների առկայությունը վկայում է այն մասին, որ Միջազգային քրեական դատարանի ընդդատությունն ունիվերսալ չէ: Հռոմի ստատուտի ոչ անդամ պետություններից

---

<sup>85</sup> Extraordinary Chambers In The Courts Of Cambodia (ECCC).

<sup>86</sup> *Sté u ECCC, Prosecutor v. Chea, Samphan, Case 002/02*, Judgment, 16 November 2018, para. 4153-4176:

<sup>87</sup> Kosovo Specialist Chambers & Specialist Prosecutor's Office (KSC).

են ԱՄՆ-ն, Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը: Հայաստանի Հանրապետությունը թեև ստորագրել է Հռոմի ստատուտը, սակայն սահմանադրական խոչընդոտների պատճառով դեռևս չի վավերացրել այն:

Թե՛ կառուցվածքային առումով և թե՛ նյութական տեսանկյունից դատարանում դեռևս առկա են բազում բացեր: Դատարանը գտնվում է աֆրիկյան պետությունների քննադատությունների թիրախում, քանզի մինչ օրս այն քննության է առել միայն աֆրիկյան իրադարձությունները: Նման շարունակական քաղաքականությունը հանգեցրել է այն բանին, որ անդամ աֆրիկյան հանրապետությունները ցանկանում են ստեղծել իրենց տարածաշրջանային միջազգային քրեական դատարանը՝ դուրս գալով Հռոմի ստատուտից:

Այս դատարանն առաջին անգամ իր պրակտիկայում նախատեսում է նաև տուժողների մասնակցություն և վնասների հատուցում, սակայն մինչ օրս կայացած վնասների հատուցման վճիռները չեն գոհացնում: Երեք վճռի հիմքով կայացած վնասների հատուցումը կատարվում է մասնավորապես անդամ պետությունների կողմից ազատ հանգանակության հիման վրա գոյացած գումարների շնորհիվ: Գործին կից տուժողների թիվն ահռելի է, իսկ սահմանված գումարը՝ անհամատեղելի: Այսօրվա վարույթները վերաբերում են Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությանը, Լիբիային, Սուդանին, Քենիային, Կոտ դ' Իվուարին, Մալիին, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությանը և Ուգանդային:

<b>Միջազգային քրեական դատարան</b>	<b>Տեսակը և իրավասությունը</b>	<b>Գործունեությունը</b>
Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալ	պատերազմական հանցագործություններ, խաղաղության դեմ հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ	1945 թ. նոյեմբերի 20 - 1946 թ. հոկտեմբերի 1

<p>Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական տրիբունալ</p>	<p>պատերազմական հանցագործություններ, խաղաղության դեմ հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ</p>	<p>1946 թ. ապրիլի 29 - 1948 թ. նոյեմբերի 12</p>
<p>Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարան</p>	<p><i>ad hoc</i> նախկին Հարավսլավիայի տարածքում 1992 թվականից տեղի ունեցող պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, ցեղասպանությունը</p>	<p>1992-2017 թթ.</p>
<p>Ռուանդայի միջազգային քրեական դատարան</p>	<p><i>ad hoc</i> Ռուանդայում 1994 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը տեղի ունեցող պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, ցեղասպանությունը</p>	<p>1994-2015 թթ.</p>
<p>Միջազգային քրեական դատարան</p>	<p>ընդհատությունը՝ սկսած 2001 թվականից, ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, ագրեսիայի հանցագործություն</p>	<p>սկսած 2001 թվականից</p>
<p>Միերա Լեոնեի հատուկ դատարան</p>	<p>հիբրիդային դատարան, 1996 թ. նոյեմբերի 30-ից սկսած պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները</p>	<p>2002 թ. հունվարի 16 - 2013 թ. դեկտեմբերի 2</p>

<p>Կամբոջայի Կարմիր խմբերների տրիբունալ</p>	<p>հիբրիդային դատարան, 1975 թ. ապրիլի 17-ից մինչև 1979 թ. հունվարի 6-ը ընկած ժամանակահատվածում կատարված միջազգային հանցագործությունները, այդ թվում՝ ազգային օրենքով նախատեսված հանցագործությունները</p>	<p>սկսած 2003թ. հունիսի 6-ից</p>
<p>Լիբանանի հատուկ տրիբունալ</p>	<p>հիբրիդային դատարան, Լիբանանի վարչապետի 2005 թ. փետրվարի 14-ի սպանությունը, ահաբեկչություն</p>	<p>սկսած 2009 թ. մարտի 1-ից</p>
<p>Կոսովոյի մասնագիտացված դատարան</p>	<p>հիբրիդային դատարան, 1998 թ. հունվարի 1-ից 2000 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, այլ հանցագործություններ՝ նախատեսված Կոսովոյի ազգային օրենքով:</p>	<p>սկսած 2016 թվականից</p>

**ԳԼՈՒԽ 3**  
**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**  
**ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԸ**

**5. Նյութերեզյան սկզբունքներ**

Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր և հիմնական սկզբունքները ուղիղ իմաստով առնչվում են Միջազգային ռազմական տրիբունալի գործունեության ու վճռի հիմքում ընկած և ձևավորված սկզբունքներին: 1946 թ. արդեն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում անհրաժեշտություն առաջացավ որպես միջազգային իրավունքի սկզբունքներ կողմից կայացնելու Նյութերեզի ստատուտում տեղ գտած առանձնահատկությունները<sup>88</sup>: 1950 թ. ՄԱԿ-ի միջազգային իրավունքի կոմիտեն (ILC) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հաստատմանը ներկայացրեց Նյութերեզյան յոթ սկզբունք, որոնք են.

- I. անձնական պատասխանատվության սկզբունքը,
- II. ունիվերսալության սկզբունքը,
- III. պետության ղեկավարի անձեռնմխելիության բացակայության սկզբունքը,
- IV. պատասխանատվության սկզբունքը վերադասի հրամանի պարագայում,
- V. արդար դատաքնության սկզբունքը,
- VI. միջազգային հանցագործություններ են խաղաղության դեմ հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները,

---

<sup>88</sup> Տե՛ս UN General Assembly, 1946, Resolution 94 (I), Committee on the Codification of International Law, UN General Assembly, Resolution 95 (I), Affirmation Of The Principles Of International Law Recognized By The Charter Of The Nürnberg Tribunal:



VII. պատասխանատվության սկզբունքը հանցակցության պարագայում:

Դրանք մինչ օրս ուղեցույց են ոչ միայն միջազգային իրավունքում, այլև ազգային քրեական իրավունքի անբաժան մասն են<sup>89</sup>:

### 5.1 Անձնական պատասխանատվությունը

*«Any person who commits an act which constitutes a crime under international law is responsible therefor and liable to punishment»*

Այս սկզբունքն ընկած է Միջազգային ռազմական տրիբունալի ստատուտի 6-րդ հոդվածի հիմքում, որով պայմանավորված է, որ տրիբունալը կարող է պատասխանատվության ենթարկել այն անձանց, որոնք, թե՛ որպես կազմակերպության անդամ, թե՛ իրենց անձնական շահերից ելնելով, կատարել են հանցագործություններ հանուն Առանցքի ուժերի (նացիստական Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա և այլ պետություններ): Այս սկզբունքը ՄՄԿ-ի բանաձևում ընդհանրացվել է, առաջնային ուշադրության է արժանացել անձնական պատասխանատվության հարցը: Այստեղ հարկ է նշել, որ թեև քրեական իրավունքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը որոշ եվրոպական պետությունների իրավական համակարգում ընդունելի երևույթ է, սակայն Միջազգային ռազմական տրիբունալը առաջնորդվեց այն սկզբունքով, որ քրեական պատասխանատվության չեն կարող ենթարկվել վերացական կազմակերպությունները՝ միաժամանակ գնահատելով և հանցավոր հռչակելով նացիստական Գերմանիայի որոշ միավորումներ, այդ թվում՝ նացիստական կուսակցության քաղաքական առաջնորդների կորպուսը<sup>90</sup>, Schutzstaffel-ը (SS)<sup>91</sup>, Գադտնի պետական ոստիկանությունը

---

<sup>89</sup> Տե՛ս Principles of International Law recognized in the Charter of the Nürnberg Tribunal and in the Judgment of the Tribunal, 1950:

<sup>90</sup> IMT, Judgment, 1 October 1946, էջ 86:

(ԳԵՍՏԱՊՈ) և Անվտանգության ծառայությունը (Sicherheitsdienst SD)<sup>92</sup>: Սակայն այս կազմակերպությունների ցանկացած անդամի պատասխանատվությունը պետք է գնահատվեր անձնապես<sup>93</sup>:

*«If satisfied of the criminal guilt of any organization or group, this Tribunal should not hesitate to declare it to be criminal because the theory of "group criminality" is new, or because it might be unjustly applied by some subsequent tribunals. On the other hand, the Tribunal should make such declaration of criminality so far as possible in a manner to ensure that innocent persons will not be punished».*

(Միջազգային ռազմական տրիբունալի 1946 թ.

հոկտեմբերի 1-ի դատավճիռ, էջ 82):

Նացիստական Գերմանիան ևս որպես պետություն չէր կարող դիտարկվել հանցավոր միություն, սակայն Տրիբունալը նացիստական Գերմանիան դիտարկեց որպես պետություն, որը կառավարվում է հանցագործների կողմից «*State run by criminals*» եզրույթի ներքո:

## 5.2 Ունիվերսալության սկզբունքը

*«The fact that internal law does not impose a penalty for an act which constitutes a crime under international law does not relieve the person who committed the act from responsibility under international law».*

Միջազգային հանցագործություններն ունիվերսալ բնույթի են և, անկախ այն հանգամանքից, թե ազգային օրենքը քրեականացնում է

---

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 91:

<sup>92</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 97:

<sup>93</sup> *«If satisfied of the criminal guilt of any organization or group, this Tribunal should not hesitate to declare it to be criminal because the theory of "group criminality" is new, or because it might be unjustly applied by some subsequent tribunals. On the other hand, the Tribunal should make such declaration of criminality so far as possible in a manner to ensure that innocent persons will not be punished»*, տե՛ս *D. Luban*, in: G. Mettraux, Perspectives on the Nuremberg Trial, 2008, էջ 666:

միջազգային հանցագործությունը, թե ոչ, անձը, որը կատարել է նման հանցագործություն, կարող է պատասխանատվության ենթարկվել ամենուրեք՝ անկախ հանցագործությունը կատարելու կամ իր գտնվելու վայրից<sup>94</sup>:

Այսօր այս սկզբունքը սկսում է լայնորեն տարածվել ազգային իրավահամակարգերում: Ելնելով Հռոմի ստատուտի փոխլրացման սկզբունքից՝ անդամ պետությունները նույնպես պարտավորվում են հետապնդել և պատժել միջազգային հանցագործությունները: Ունիվերսալության սկզբունքի կիրառումը պրակտիկայում ավելի վառ արտահայտվեց 1990-ականներին, երբ հազարավոր փախստականներ արտագաղթեցին նախկին Հարավսլավիայից և Ռուսնոսթրալիայից՝ ռազմական բախումներից խուսափելու նպատակով: Այդ փախստականների շարքերում էին նաև բազում հանցագործներ, որոնք փախչում էին ոչ թե ռազմական բախումներից, այլ պատրվակ էին բերում դրանք, որպեսզի խուսափեն իրենց կատարած հանցագործությունների համար պատժից: «Արաբական գարնան» հետևանքով դեպի Եվրոպա զանգվածային արտագաղթ սկսվեց նաև Թունիսից, Սոմալիից, Եգիպտոսից, Եմենից և Լիբիայից: Փախստականների մեծ մասը, այնուամենայնիվ, փախչում էր Սիրիայի քաղաքացիական պատերազմից: Դրանց թվում էին նաև այն անձինք, որոնք միջազգային տարատեսակ հանցագործությունների էին օժանդակել կամ անձամբ կատարել դրանք<sup>95</sup>: Գերմանիայի, Շվեդիայի և Ֆրանսիայի ազգային դատական համակարգերը, առաջնորդվելով ունիվերսալության սկզբունքով, հետապնդում և դատապարտում են փախստականների կողմից իրենց հայրենիքում կատարված միջազգային հանցա-

---

<sup>94</sup> Տե՛ս *A. Cassese*, *Cassese's international criminal law*, 3rd ed. Oxford, 2013 էջ 267, նաև՝ *C. Damgaard*, *Individual Criminal Responsibility for Core International Crimes: Selected Pertinent Issues*. Berlin, Heidelberg, 2008 էջ 61, *M. Boot*, *Genocide, crimes against humanity, war crimes: Nullum crimen sine lege and the subject matter jurisdiction of the International Criminal Court*. Antwerpen, 2002, էջ 215:

<sup>95</sup> Տե՛ս *C. Safferling and G. Petrossian* (note 77), էջ 404:

գործությունները: Այդ հետապնդումը հիմնվում է *aut dedere aut judicare* միջազգային պարտավորության վրա<sup>96</sup>:

*5.3 Պետության ղեկավարի անձեռնմխելիության բացակայության սկզբունքը*

*«The fact that a person who committed an act which constitutes a crime under international law, acted as Head of State or responsible government official, does not relieve him from responsibility under international law».*

Միջազգային իրավունքը ճանաչում է պետության ղեկավարների և գլուխների անձեռնմխելիության երկու տեսակ՝ գործառական և անձնական: Միջազգային հանցագործությունների պարագայում պետության ղեկավարն օժտված չէ որևէ տեսակի անձեռնմխելիությամբ: Թեպետ Միջազգային ռազմական տրիբունալի գործունեության մեջ սա առանցքային սկզբունք էր, որով պատասխանատվության էին ենթարկում նացիստական Գերմանիայի բարձրաստիճան ներկայացուցիչներին, այնուամենայնիվ այսօր այս սկզբունքը գործնականում լի է հակասություններով: Տասը տարի շարունակ Սուդանի նախագահ Ալ Բաշիրը վկայակոչում էր իր անձեռնմխելիության հարցը Միջազգային քրեական դատարանի՝ իրեն ձերբակալելու և արտահանձնելու որոշումների կապակցությամբ: Հռոմի ստատուտի անդամ պետությունները, որոնք միջազգայնորեն պարտավոր են համագործակցել Միջազգային քրեական դատարանի հետ, տարիներ շարունակ խուսանավում էին Սուդանի Հանրապետության նախագահի ձերբակալման հարցում: Այստեղ կարևոր է հիշատակել այն հանգամանքը, որ Միջազգային քրեական դատարանը չունի որևէ ուժային մարմին, որը կօժանդակեր իրեն ձերբակալման գործողություններում: Այդ իսկ պատճառով Միջազգային քրեական դա-

---

<sup>96</sup> St´u BVerfG, Judgment, 12. December 2000, Az. 2 BvR 1290/99, paras. 17, 38, C. Ritscher, in: C. Safferling/S. Kirsch, Völkerstrafrechtspolitik: Praxis des Völkerstrafrechts, 2014, էջ 224:

տարանի գործողությունները կախված են անդամ պետությունների ակտիվ օժանդակությունից:

Հռոմի ստատուտի 87-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ էթե անդամ պետությունը չի կատարում համազործակցության մասին Դատարանի պահանջը, ինչը հակասում է կանոնադրության դրույթներին, դրանով իսկ Դատարանին թույլ չտալով իրականացնել կանոնադրությամբ իր գործառույթներն ու լիազորությունները, Դատարանը կարող է այդ պահանջի վերաբերյալ եզրակացություն տալ և հարցն ուղղել Անդամ պետությունների ասամբլեային (ASP) կամ այդ հարցով դիմել Անվտանգության խորհրդին<sup>97</sup>:

Եվ մինչ օրս, չնայած Դատարանի ձեռնարկած միջոցառումներին, այդպես էլ չի հաջողվել ձերբակալել Սուդանի Հանրապետության նախագահին Դարֆուր նահանգում իրականացրած ենթադրյալ ցեղասպանության հիմքով: 2019 թ. ապրիլյան հեղաշրջման արդյունքում Ալ Բաշիրը հրաժարական տվեց և ձերբակալվեց ազգային մարմինների կողմից: Նրան առաջադրվեց կոռուպցիայի գործով մեղադրանք: Ալ Բաշիրի արտահանձնումը Միջազգային քրեական դատարան ներկայումս գրեթե բացառված է:

Միջազգային քրեական դատարանը, այնուամենայնիվ, հիմնվելով Միջազգային ռազմական տրիբունալի պրակտիկայի վրա, կայացրեց որոշում, ըստ որի՝ թեև պետության ղեկավարներն օժտված են անձեռնմխելիությամբ, սակայն այն չի կարող գործել Միջազգային դատարանների պարագայում<sup>98</sup>:

Պետության ղեկավարների անձեռնմխելիության հարցը ուղիղ թելով կապված է նաև պետության ինքնավարության և ինքնիշխանության հետ: Այդ իսկ պատճառով էլ գործնականում միջազգային իրավունքում առաջանում են իրավական բազմաթիվ այլ խնդիրներ:

---

<sup>97</sup> Տե՛ս ՄՔԴ գործարկման մեխանիզմները, trigger mechanism:

<sup>98</sup> «*There is no Head of State immunity under customary international law vis-à-vis an international court*», տե՛ս ICC, *Prosecutor v. Al Bashir*, Judgment in the Jordan Referral re Al-Bashir Appeal, Appeals Chamber, 6 May 2019, para. 2, տե՛ս նաև SCSL, *Prosecutor v. Taylor*, Trial Chamber, Decision on Immunity from Jurisdiction, 31 May 2004, para. 57:

5.4 Պատասխանատվության սկզբունքը վերադասի հրամանի պարագայում

*«The fact that a person acted pursuant to order of his Government or of a superior does not relieve him from responsibility under international law, provided a moral choice was in fact possible to him»*

Այս սկզբունքը հիմնված է Միջազգային ռազմական տրիբունալի ստատուտի 8-րդ հոդվածի բովանդակության վրա, ըստ որի՝ ընդունելի և արդարացի չէ պարզապես հիմնվել վերադասի հրամանի և պահանջի վրա: Այս սկզբունքի անհրաժեշտությունն առաջացավ այն բանից հետո, երբ Միջազգային ռազմական տրիբունալի բոլոր մեղադրյալները վկայակոչում էին այն փաստը, որ իրենք պարզապես կատարել են Հիտլերի հրամանները: Դատարանն իր վճռում նշեց, որ սպանելու կամ խոշտանգելու հրամանը երբևէ միջազգային իրավունքում չի դիտարկվել զինվորի համար որպես իր գործողությունների արդարացում: Սակայն Դատարանը կարող է հրամանի առկայությունը մեղմացուցիչ հանգամանք համարել պատիժը նշանակելիս<sup>99</sup>:

Այս սկզբունքը լայն տարածում գտավ պրակտիկայում, ըստ որի՝ ոչ իրավական հրամանի կատարումից հրաժարվելը կարող է հիմք հանդիսանալ ապաստան հայցելու համար, եթե հրամանը չկատարելը հանգեցրել է հետապնդումների<sup>100</sup>:

5.5 Արդար դատաքննության սկզբունքը

*«Any person charged with a crime under international law has the right to a fair trial on the facts and law».*

Արդար դատաքննության սկզբունքը, որն այսօր դիտվում է որպես իրավական պետության առաջնային և հիմնային սկզբունքներ-

---

<sup>99</sup> Տե՛ս IMT, Judgment, 1 October 1946, էջ 224:

<sup>100</sup> Տե՛ս *R. Bernhardt*, Use of Force. War and Neutrality Peace Treaties (A-M), 1st ed. s.l., 2014, էջ 179:

րից մեկը, միջազգային քրեական իրավունքում ձևավորվեց դժվարություններով, որոնք կարելի է խմբավորել երկու մասի:

(1) Դաշնակիցները նացիստական Գերմանիայի կապիտուլյացիայից հետո սկզբնական բանակցություններում չէին կարողանում համաձայնության հասնել դատավարությունների շուրջ: Մեծ Բրիտանիան և ԽՍՀՄ-ը կողմ էին այն բանին, որ դատավարություն տեղի չունենա, քանի որ մեղադրյալների չարագործություններն ակներև են. հանցագործներին հարկավոր է պարզապես մահապատժի ենթարկել: Այս թեզին ընդդիմախոսեց ԱՄՆ նախագահը, որն իր անձնական պատկերացումների հիման վրա կարողացավ համոզել բանակցությունների մյուս կողմերին իրականացնելու արդար դատաքննություն<sup>101</sup>: Ըստ այդմ՝ Միջազգային ռազմական տրիբունալի արդար դատաքննության բաղադրամասերն էին.

- մեղադրական եզրակացությունը, որը ներառում էր թարգմանված մեղադրանքը և պետք է տրամադրվեր մեղադրյալներին պատշաճ ժամանակում,
- դատական քննության ցանկացած հատվածում բացատրություններ տալու մեղադրյալների իրավունքը,
- դատաքննության և լսումների իրականացումը մեղադրյալներին հասկանալի լեզվով,
- պաշտպանություն ունենալու մեղադրյալների իրավունքը,
- իրենց պաշտպանության համար փաստեր ներկայացնելու մեղադրյալների իրավունքը և վկաներին հարցեր ուղղելու իրավունքը:

(2) Արդար դատաքննության անբաժան մասեր են նաև անմեղության կանխավարկածը, կողմերի հավասարությունը, դատավորների անկախությունը և այլն: Քանի որ միջազգային քրեական դատավարությունները քաղաքական մեծ ուշադրության ներքո են, վերոհիշյալ սկզբունքները կարող են պարբերաբար ոտնահարվել:

---

<sup>101</sup> Տե՛ս *J. Hafetz*, Punishing atrocities through a fair trial: International criminal law from Nuremberg to the age of global terrorism. Cambridge, 2018, էջ 5-6:

Հարկ է նշել, որ քաղաքականացված լինելն արտացոլվում է ոչ միայն Նյուրնբերգյան դատավարություններում, այլև թե՛ *ad hoc* դատարաններում և թե՛ Միջազգային քրեական դատարանում: Նույն Նյուրնբերգյան դատավարությունը դիտարկվում էր որպես հաղթողների արդարադատություն «Siegerjustiz»: Այսպիսի հակվածություն կարելի է տեսնել նաև նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի գործերում, որտեղ հատկապես սերբ մեղադրյալների առկայությունն արդեն կասկածի տակ էր դնում ողջ դատական համակարգի անկախությունը: Այսօր Միջազգային քրեական դատարանը պարբերաբար քննադատության է արժանանում մասնավորապես աֆրիկացի մեղադրյալներ ներգրավելու համար:

#### 5.6 Միջազգային հանցագործությունները

*«The crimes hereinafter set out are punishable as crimes under international law:*

*(a) Crimes against peace:*

*(b) War crimes:*

*(c) Crimes against humanity».*

Միջազգային հանցագործությունները, որոնք, ըստ Նյուրնբերգյան սկզբունքների, երեքն են, այսօր կողիֆիկացվել են Հռոմի ստատուտում: Այդ հանցագործությունները միջազգային քրեական իրավունքի հիմքն են, որի շուրջ ստեղծվել է իրավունքի այս յուրօրինակ ճյուղը: Նշյալ հանցագործություններին է ավելացել հետագայում ցեղասպանությունը:

#### 5.7 Պատասխանատվության սկզբունքը հանցակցության պարագայում

*«Complicity in the commission of a crime against peace, a war crime, or a crime against humanity as set forth in Principle VI is a crime under international law».*

Այս սկզբունքը, լայն տարածում ունենալով անգլոամերիկյան իրավական համակարգում, կարծես իր բնույթով նոր հանցակազմ էր



ստեղծում: Միջազգային ռազմական տրիբունալի ստատուտի 6-րդ հոդվածին անդրադառնալով՝ Դատարանը հստակեցրեց, որ հանցակցությունը նոր հանցակազմ չի ստեղծում, այլ նպատակ է հետապնդում պատժելու նրանց, ովքեր մասնակցել են «ընդհանուր ծրագրին»: Ըստ այդմ՝ պատասխանատվության են ենթարկվում նրանք, ովքեր դեկավարել, կազմակերպել են և մասնակցել ու դրդել «ընդհանուր ծրագրի» ստեղծմանը<sup>102</sup>:

## 6. Հատուկ սկզբունքներ

Նյութներգյան սկզբունքներին առընթեր միջազգային քրեական իրավունքում ձևավորվել են նաև առանձին հատուկ սկզբունքներ, որոնք սկիզբ են առնում քրեական, քրեադատավարական և միջազգային իրավունքի աղբյուրներից: Դրանցից են՝ դրոշի սկզբունքը, քաղաքացիության սկզբունքը, հետադարձ ուժի արգելքը, կրկնակի դատապարտվածության արգելքը, օրինականության սկզբունքը և այլն:

### 6.1 Դրոշի սկզբունքը

Միջազգային քրեական իրավունքի առանցքային մասն է դրոշի սկզբունքը, որը սկիզբ է առնում միջազգային իրավունքից: Միջազգային քրեական իրավունքում այս սկզբունքը գործնականում կիրառելի է Հռոմի ստատուտի անդամ պետությունների և Միջազգային քրեական դատարանին դիմում ներկայացրած պետությունների սահմաններում: Եթե միջազգային հանցագործությունը տեղի է ունեցել անդամ պետության սահմաններում, ապա Միջազգային քրեական դատարանը լիազորություն ունի քննելու այն՝ անկախ մեղադրյալի քաղաքացիության պատկանելությունից: Միջազգային քրեական իրավունքի շրջանակներում գործող ատյանները չեն առաջնորդվում դրոշի սկզբունքով, որովհետև իրենց ընդդատությունն ու լիազորությունները սահմանափակված են տարածքի և ժամանակի

---

<sup>102</sup> Sté u IMT, Judgment, 1 October 1946, էջ 225:

մեջ: Ի տարբերություն վերջիններիս՝ Միջազգային քրեական դատարանի ընդդատությունը միջազգային հանցագործությունների վերաբերյալ մասամբ ունի վերսալ է:

### *6.2 Քաղաքացիության սկզբունքը*

Միջազգային քրեական դատարանի ընդդատությունը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք անդամ պետության քաղաքացի են: Ըստ այդմ՝ ՄՔԴ-ն կարող է քննել այն ենթադրյալ միջազգային հանցագործությունները, որոնք կատարվել են անդամ պետությունների քաղաքացիների կողմից ոչ անդամ պետությունների սահմաններում: Միջազգային քրեական իրավունքի շրջանակներում գործող այլ դատական ատյանները ևս այս դեպքում չեն առաջնորդվում այս սկզբունքով այն պարզ պատճառով, որ վերջիններիս ընդդատությունը կարող է վերաբերել առանձին դեպքերի մասնակիցներին՝ անկախ իրենց պատկանելությունից կամ գտնվելու վայրից:

### *6.3 Nullum crimen sine lege*

*Չկա օրենք, չկա հանցագործություն* սկզբունքը կամ *օրինականության* սկզբունքը ինչպես քրեական և քրեադատավարական իրավունքում, այդպես էլ միջազգային քրեական իրավունքում առանցքային դեր ունի: Հռոմի ստատուտի 22-րդ հոդվածը, հիշատակելով այս սկզբունքը և դասելով այն միջազգային քրեական իրավունքի կարևորագույն հիմքերի շարքին, ընդլայնում է դրա բովանդակությունը հետևյալ ուղղություններով.

-անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության այն արարքի համար, որի կատարման պահին այն չի եղել Հռոմի ստատուտի իրավասության շրջանակներում:

-հանցակազմի հատկանիշները չեն կարող մեկնաբանվել ի վնաս կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտվածի: Այս սկզբունքն արգելում է անալոգիայի կիրառումը:

Ակնհայտ է, որ նշյալ սկզբունքը մասամբ հակասում է որոշ սկզբունքների, մասնավորապես միջազգային հանցագործություններ-

րի ունիվերսալության սկզբունքին: Խնդիրը, այնուամենայնիվ, ոչ թե նյութական դաշտում է, այլ դատավարական: Մասնավորապես, Հռոմի ստատուտը իրավասու է միայն այն արարքների համար, որոնք գտնվում են իր իրավասության շրջանակներում այն ուժի մեջ մտնելու պահից ի վեր, այսինքն՝ 2002 թ. հուլիսի 1-ից: Հռոմի ստատուտի պրակտիկ կիրառումը նաև սահմանափակված է այլ տեխնիկական խոչընդոտներով, ինչպիսիք են, օրինակ, անդամության պահից ի վեր իրավասությունը և այլն: Այս հարցերին դեռևս անդրադարձ կլինի հետագա գլուխներում: Նյութական տեսանկյունից միջազգային հանցագործությունները չեն պարունակում որևէ խոչընդոտ: Հռոմի ստատուտի դատավարական և տեխնիկական արգելքը ստիպեց Մենեգալի իշխանություններին ստեղծել առանձին ազգային դատական ատյան, որպեսզի Չադի նախկին նախագահի կողմից 1980-ականներին Չադի Հանրապետությունում կատարված միջազգային հանցագործությունները քննվեն, քանի որ ՄՔԴ-ն այս հարցում իրավասություն ունենալ չէր կարող: Վերջինս Չադում հետապնդումներից խույս տալու նպատակով ապաստանել էր Մենեգալում<sup>103</sup>:

Նյուրնբերգի դատավարության մեղադրյալների փաստաբանները հիմնականում այս սկզբունքի առնչությամբ էին բարձրաձայնում *ex post facto* խնդիրները, որոնք առաջ էին եկել Միջազգային ռազմական տրիբունալի ստեղծմամբ:

*«[t]he maxim ‘nullum crimen sine lege’ is not a limitation of sovereignty but is in general a principle of justice. To assert that it is unjust to punish those who in defiance of treaties and assurances have attacked neighbouring states without warning is obviously untrue for in such circumstances the attacker must know that he is*

---

<sup>103</sup> Տե՛ս *R. Dubler SC/M. Kalyk, Crimes Against Humanity in the 21st Century: Law, Practice and Threats to International Peace and Security*. Boston, 2018, էջ 293, նաև՝ *A. Peters, Beyond human rights: The legal status of the individual in international law*. Cambridge, 2016, էջ 150:

*doing wrong, and so far from it being unjust to punish him, it would be unjust if his wrong were allowed to go unpunished»<sup>104</sup>.*

Տրիբունալի հեղինակները այս հարցի առնչությամբ կարծում էին, որ բոլոր այն գործողությունները, արարքները, որոնցում մեղադրվում էր նացիստական Գերմանիայի ղեկավար կազմը, ազգերի կողմից մշտապես համարվել են հակաօրինական, ինչից ելնելով էլ ստեղծվել է Միջազգային ռազմական տրիբունալը: Այսպիսով, Տրիբունալի իրավասությունը *ex post facto* օրենսդրություն չէ<sup>105</sup>: Ակնհայտ է, որ այս սկզբունքը, որին հաջորդում է նաև հետադարձ ուժի արգելքը, իրավական մեծ խոչընդոտ էր Միջազգային ռազմական տրիբունալի մեղադրողների համար: Սակայն նշյալ հարցի շուրջ քաղաքական համաձայնությունը ստիպեց ամրագրել, որ այն հանցակազմերը, որոնք ընդգրկված էին Տրիբունալի ստատուտի մեջ, պատահականորեն ընտրված արարքներ չէին, դրանց ամրագրումը սովորության իրավունքի կողմից փակացում էր:

#### *6.4 Nulla poena sine lege*

Եթե նախորդ սկզբունքը վերաբերում է առանց օրենքի հանցագործության բացակայությանը, ապա այս սկզբունքը վկայակոչում է պատժի կիրառումը բացառապես օրենքին համապատասխան և ըստ մեղքի պատասխանատվության: Նշյալ սկզբունքը տեղ է գտել նաև Հռոմի ստատուտի մեջ. ըստ 23-րդ հոդվածի՝ դատապարտված անձը կարող է պատժվել միայն Հռոմի ստատուտին համապատասխան:

---

<sup>104</sup> Տե՛ս IMT, Judgment, 1 October 1946, էջ 217, նաև՝ *C. Kreß*, *Nulla poena nullum crimen sine lege*, Max Planck Encyclopedia of Public International Law; *B. van Schaack*, *Legality & International Criminal Law*, American Society of International Law, 2009, էջ 103:

<sup>105</sup> Տե՛ս *S. Darcy*, in: W. Schabas/M. M. DeGuzman/D. M. Amann, *Arcs of global justice: Essays in honour of William A. Schabas*. 2018, էջ 305-310:

### 6.5 *Ne bis in idem*

Կրկնակի դատվածությունը բացառելը միջազգային քրեական իրավունքի այն կարևորագույն սկզբունքներից է, որը թույլ չի տալիս մեղադրյալին կրկնակի դատել նույն հանցագործության համար: Այս սկզբունքը նաև կարող է դադարեցնել մեղադրյալի նկատմամբ հետապնդումը, եթե վերջինս այդ արարքի համար դատապարտվել է կամ անմեղ ճանաչվել: Սակայն այս դեպքում ևս առաջանում են իրավական բազում խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել հակասության: Հռոմի ստատուտի 20-րդ հոդվածը այս սկզբունքը առանցքային է համարում և տալիս է դրա բնութագիրը՝ նշելով, թե որ դեպքում կրկնակի դատվածության արգելքը կլինի հաղթահարված, մասնավորապես՝ այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ հետապնդումը ձևական է կամ նպատակ է հետապնդում արհեստականորեն երկարաձգելու դատավարությունը: Արգելքը համարվում է հաղթահարված, եթե կան կասկածներ, որ մեղադրյալի նկատմամբ իրականացված դատավարությունը չի համապատասխանում միջազգային իրավունքի չափանիշներին, կամ արդարադատությունը չի եղել անկախ ու անաչառ<sup>106</sup>: Այս պարագաներում մեղադրյալի նկատմամբ հնարավոր է կիրառել միջազգային քրեական հետապնդում՝ հաշվի առնելով Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերի բացառումը<sup>107</sup>:

### 6.6 *Հետադարձ ուժի արգելքը*

Ինչպես ազգային քրեական իրավունքում, այնպես էլ միջազգային քրեական իրավունքում հետադարձ ուժի արգելքը կարևորագույն սկզբունքներից է՝ ելնելով մարդասիրական և մարդու հիմնարար իրավունքներից: Թեև այս սկզբունքը միջազգային քրեական իրավունքում դատավարական առումով և ուղիղ իմաստով հազվադեպ է

---

<sup>106</sup> Մանրամասն Տե՛ս *M. M. El Zeidy*, *The principle of complementarity in international criminal law: Origin, development and practice*. Boston, 2008, էջ 284:

<sup>107</sup> Տե՛ս *S. Log*, in: *S. Yee*, *International Crime and Punishment*, 2003, էջ 178-180:

գործում՝ ելնելով միջազգային հանցագործությունների բնույթից, այն հիմնարար է Հռոմի ստատուտի շրջանակներում: Հռոմի ստատուտի 24-րդ հոդվածը նշում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել պատասխանատվության Հռոմի ստատուտով նախատեսված արարքների համար՝ նախքան ստատուտի ուժի մեջ մտնելը:

Հետադարձ ուժի արգելքը, ինչպես և այլ սկզբունքներ, լայն քննարկման առարկա էին Նյուրնբերգյան դատավարությունների ընթացքում<sup>108</sup>: Հետադարձ ուժի արգելքի հաղթահարումը պայմանավորված էր այլ սկզբունքների հաղթահարմամբ և միջազգային հանցագործությունների բացառիկ բնույթի վկայակոչմամբ: Հնարավոր է առանձնացնել այս սկզբունքի վրա ներազդող երկու կարևոր գործոն. առաջին՝ արարքի կատարման պահին այն քրեականացված էր միջազգային իրավունքի սահմաններում և երկրորդ՝ հակասում էր միջազգային հանրության կողմից ճանաչված ընդհանուր սկզբունքներին<sup>109</sup>:

Նշված սկզբունքի ոտնահարումը պարբերաբար խնդրո առարկա է դառնում, երբ միջազգային հանցագործությունները պատժելու նպատակով միջազգային կամ ազգային նոր գործիքակազմ է ձևավորվում<sup>110</sup>: Անկախ այն բանից, թե միջազգային ինչ մարմին է ստեղծվում՝ ժամանակավոր, միջազգային կամ հիբրիդային դատարան կամ ազգային ատյան, հետադարձ ուժի արգելքը մեղադրյալների համար շարունակում է մնալ պաշտպանական լավագույն մեթոդներից մեկը:

---

<sup>108</sup> St' u *R. Citron*, in: C. Safferling/H. R. Reginbogin, *The Nuremberg Trials: International Criminal Law Since 1945: 60th Anniversary International Conference*, 2006, էջ 147:

<sup>109</sup> St' u *V. Spiga*, *Non-retroactivity of Criminal Law: A New Chapter in the Hisse'ne Habre Saga*, *Journal of International Criminal Justice*, 2011, էջ 12:

<sup>110</sup> St' u *D. O. Pendas*, *Retroactive Law and Proactive Justice: Debating Crimes against Humanity in Germany, 1945-1950*, *Central European History*, 2010, էջ 440:

## 7. Միջազգային քրեական իրավունքը՝ պոզիտիվ և բնական իրավունքների ներքո

Տեսության մեջ դրական և բնական իրավունքները իրավունքի տարբեր ճյուղերում պարբերաբար հայտնվում են հակասության մեջ: Մա ակներև էր նաև Նյուրնբերգյան դատավարությունների ընթացքում, ինչից ելնելով էլ սահմանվեցին իրավունքի նոր կանոնները միջազգային քրեական իրավունքում: Դրական իրավունքի տեսության ներկայացուցիչների մոտեցմամբ «*ius positivum*» կամ «*lex humana*» են բոլոր այն իրավական նորմերը, որոնք ստեղծված են մարդու կողմից և ուղեցույց են առանձին ոլորտներում կամ գործողություններում մարդկանց կամ հասարակության համար: Այն, ինչ գրված և սահմանված է, պարտադիր է: «*Հրամանը հրաման է, օրենքը՝ օրենք*»<sup>111</sup> սկզբունքի հիման վրա նացիստական Գերմանիայում հրեաների և քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ կատարվում էին տարատեսակ վայրագություններ: Օրենքը<sup>112</sup> թույլ էր տալիս դա: Ի դեմս դրական իրավունքի՝ գործում է բնական իրավունքը՝ «*ius naturae*», որի տեսության ներկայացուցիչները առաջնահերթությունը վերապահում են այն իրավունքներին, որոնք տրված են մարդկանց ի ծնե՝ անկախ ամեն տեսակ իշխանություններից<sup>113</sup>: Հակադիր տեսությունների բախումից միջազգային քրեական իրավունքի զարգացման փուլում ձևավորվեց նոր տեսություն, ըստ որի՝ «*extremes Unrecht ist kein Recht*»՝ «*ճայրահեղ անարդարությունը արդարություն չէ*»: Նյուրնբերգում սահմանվեց տեսություն, ըստ որի՝ ազգային օրենքում չքրեականացված արարքների համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն, եթե դրանք կատարման պահին

---

<sup>111</sup> Տե՛ս *G. Radbruch*, in: E. Wolf/H.-P. Schneider, Rechtsphilosophie, 1973, էջ 327:

<sup>112</sup> Նյուրնբերգյան ռասայական օրենքներ, տե՛ս Nürnbergger Rassengesetze:

<sup>113</sup> Տե՛ս *S. Kirste*, in: E. Hilgendorf/J. C. Joerden, Handbuch Rechtsphilosophie, 2017, էջ 15:

քաղաքակիրթ ազգերի կողմից դիտվում են ընդհանուր սկզբունքներին հակասող: Այս տեսությունը զարգացրեց գերմանացի իրավաբան Գուստավ Ռադբրուխը, որը սահմանեց այսպես. այնտեղ, որտեղ դրական իրավունքը անտանելի չափերի է հասնում որպես «սխալ իրավունք», պետք է զիջի արդարությանը: Այս բանաձևը, որը կոչվեց հենց հեղինակի անունով<sup>114</sup>, լայն տարածում գտավ Գերմանիայում՝ վերամիավորման ընթացքում քննվող քրեական դատական քննություններում<sup>115</sup>:

*«The conflict between justice and legal certainty should be able to be solved because positive law secured by statutes and power even takes priority when its contents are unjust and inappropriate, unless the contradiction between positive law and justice reaches such an extent that law as "unjust legislation" gives way to justice»<sup>116</sup>.*

## **8. Միջազգային քրեական իրավունքի աղբյուրները**

Միջազգային քրեական իրավունքի աղբյուրները կարելի է բաժանել երեք խմբի՝ առաջնային, որոնք են, մասնավորապես, միջազգային դատարանների ստատուտները, դրանց կանոնակարգերը և դատական նախադեպը, երկրորդական, որոնք են՝ միջազգային պայմանագրերը, մարդու իրավունքների վերաբերյալ հռչակագրերը, կոնվենցիաները, միջազգային սովորության իրավունքն ու սկզբունքները, երրորդական, որոնք են՝ ազգային իրավունքի սկզբունքները և տեսության մեջ ընդունված դոկտրինաները:

### *8.1 Առաջնային աղբյուրներ*

Առաջնային աղբյուրների խմբին են դասվում.

---

<sup>114</sup> Radbruchsche Formel.

<sup>115</sup> Մասնավորապես, Արևելյան Գերմանիայի քաղաքացիների գնդակահարությունների գործերում, որտեղ զինվորներին թույլ էր տրված կանխել փախուստի կամ սահմանի անցման փորձերը, տե՛ս *Mauerschützenprozesse*:

<sup>116</sup> Տե՛ս *G. Radbruch, Rechtsphilosophie III*. Heidelberg, 1990, էջ 89:



- Միջազգային ռազմական տրիբունալի (Նյուրնբերգի դատարանի), Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական դատարանի (Տոկիոյի դատարանի) ստատուտները, կանոնները և նախադեպերը:
- Ռուանդայի և նախկին Հարավսլավիայի միջազգային ռազմական դատարանների ստատուտները, կանոնները և նախադեպերը:
- 1998 թ. Հռոմի ստատուտը (Միջազգային քրեական դատարան).
- Հանցագործությունների հատկանիշները (Elements of Crimes)՝ որպես առանձին փաստաթուղթ և դատարանի գործունեության համար ուղեցույց (Հռոմի ստատուտի 9-րդ հոդված),
- Ընթացակարգի և ապացույցների կանոնները (Rules of Procedure and Evidence)՝ որպես դատավարական կանոններ Միջազգային քրեական դատարանի ընթացակարգի վերաբերյալ (Հռոմի ստատուտի 51-րդ հոդված),
- Դատարանի կանոնակարգերը (Regulations of Court)՝ որպես դատարանի գործունեության ձևավորված և հաստատված կանոնակարգ (Հռոմի ստատուտի 52-րդ հոդված),
- Դատախազի գրասենյակի կանոնակարգերը (Regulations of Office of the Prosecutor)՝ որպես դատախազի գործունեության ձևավորված և հաստատված կանոնակարգ,
- Գրասենյակի կանոնակարգերը (Regulations of Registry)՝ որպես գրասենյակի գործունեության ձևավորված և հաստատված կանոնակարգ,
- Տուժողների վստահության ֆոնդի կանոնակարգերը (Regulations of Trust Fund for Victims)՝ որպես ֆոնդի գործունեության ձևավորված և հաստատված կանոնակարգ:
- Հիբրիդային դատարանների ստատուտները և նախադեպերը:

Միջազգային քրեական դատարանի տեսանկյունից Դատարանը ի սկզբանե առաջնորդվում է իր հիմնադիր փաստաթղթերով, այնուհետև հաշվի է առնում միջազգային այլ դատարանների հիմնադիր ստատուտները, ինչպես նաև նախադեպերը: Չպետք է մոռանալ, որ չնայած իր ձևավորման յոթանասուն տարիներին՝ իրավունքի այս ճյուղը դեռևս զարգացման առաջին փուլում է: Իր իրավասության տակ գտնվող ոչ բոլոր հանցակազմների հատկանիշների, ինչպես նաև սեփական գործունեության վերաբերյալ Դատարանն ունի ստույգ գործելաոճ, հետևաբար այն հաշվի է առնում նաև դատական այլ համակարգերի փորձը:

### *8.2 Երկրորդական աղբյուրներ*

Երկրորդական աղբյուրները ներառում են ընդհանուր առմամբ բոլոր միջազգային պայմանագրերը, մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային դատարանների (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ECtHR, Ինտերամերիկյան մարդու իրավունքների հանձնաժողովի IACoHR և Դատարանի IACtHR, Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան դատարանի ACtHPR) որոշումներն ու դատավճիռները, միջազգային, տարածաշրջանային կառույցների որոշումներն ու բանաձևերը: Այս աղբյուրները Դատարանն օգտագործում է որոշումներ և վճիռներ կայացնելիս:

### *8.3 Երրորդական աղբյուրներ*

Հռոմի ստատուտի 21-րդ հոդվածը մատնանշում է, որ Դատարանը որոշումներ կայացնելիս կարող է օգտվել ազգային փորձից, եթե այն չի հակասում միջազգային ընդունված չափորոշիչներին և սկզբունքներին: Միջազգային քրեական դատարանում իրավահամեմատական գործունեությունը լայնորեն կիրառվում է, որի շրջանակներում Միջազգային քրեական դատարանը կա՛մ հիմնվում է որևէ ազգային փորձի վրա, կա՛մ ինքն է ստեղծում նոր փորձ:

## 9. Անցումային արդարադատություն

Միջազգային քրեական իրավունքը հաճախակի առնչվում է անցումային արդարադատության (*Transitional Justice*) գործիքներին, որի արդյունքում հարց է առաջանում, թե որն է ինչի աղբյուրը: Արդյո՞ք միջազգային քրեական իրավունքը անցումային արդարադատության մի մասն է, թե՞ անցումային արդարադատությունը միջազգային քրեական իրավունքի աղբյուրներից մեկն է: Երկու տարբերակներն էլ ներկայումս ընդունելի են: Մինչ քննարկելը, թե ինչ առնչություն ունի անցումային արդարադատությունը միջազգային քրեական իրավունքի հետ, հարկ է հստակեցնել, թե ինչ է անցումային արդարադատությունը:

Անցումային արդարադատությունը մի ոլորտ է, որի վերաբերյալ դժվար է որևէ հստակ և պարզ սահմանում տալ: Այն ներառում է իրավական, քաղաքական, պատմական, սոցիալական, մշակութային և հոգեբանական զանազան գործիքներ՝ մեկ հասարակարգից անցում կատարելով այլ հասարակարգի<sup>117</sup>: Այլ կերպ ասած՝ անցումային արդարադատությունը անցյալի և ապագայի միջև կապող, վերամշակող գործընթաց է, որը միտված է բնորոշելու անցյալի գործողությունները և առաջնորդվելու դրանցով ապագայում: Ընդհանուր առմամբ, անցումային արդարադատությունը մտադիր է վերականգնել քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահությունը կամ հաշտեցնել թշնամական խմբավորումներին<sup>118</sup>: Այնուամենայնիվ, անցումային արդարադատության վերաբերյալ հստակության բացակայությունը և անորոշությունը ստիպում են այս ոլորտին անդրադառնալ անհատական դեպքերով:

Քանի որ «*անցումային արդարադատություն*» եզրույթը բոլորովին նոր է և օգտագործվում է մասնավորապես իրավագիտության և քաղաքագիտության սահմաններում՝ սկսած 1990-ականներից, գրա-

<sup>117</sup> Տե՛ս *G. Petrossian*, *Transitional Justice und Armenien*, ADK 2019, էջ 14-17:

<sup>118</sup> Քաղաքական, էթնիկական, կրոնական և այլ խմբավորումներ:

կանության մեջ որոշ հեղինակներ փորձ են արել սահմանելու այն: Ոմանք այն կարծիքին են, որ անցումային արդարադատության նախահիմքերը հնարավոր է գտնել ֆրանսիական հեղափոխությունում<sup>119</sup>, ոմանք հետադարձ հայացք են նետում ավելի հեռու և օրինակներ են բերում դեռևս անտիկ շրջանից<sup>120</sup>: Մարդկության պատմության մեջ հասարակարգերի փոփոխություններ եղել են միշտ, սակայն դժվար է այդ փոփոխություններից հետո օգտագործած գործիքակազմը համապատասխանեցնել անցումային արդարադատության պահանջներին:

Այսօր անցումային արդարադատությունը հասկացվում է որպես «*Werkzeugskiste*» գործիքատուփ՝ անցումային հասարակությունների համար: Այս գործիքակազմը ներառում է այնպիսի մեխանիզմներ կամ գործիքներ, ինչպիսիք են՝ քրեական հետապնդումը, համաներումը, ճշմարտության հանձնաժողովների ստեղծումը, փոխհատուցումները, հանրային ծառայության վերանայումը, ինչպես նաև ոչ իրավական մի շարք միջոցառումներ՝ հիշատակի և համակարգային բարեփոխումներ, այլ գործողությունների իրականացում և այլն<sup>121</sup>:

Միևնույն ժամանակ պետք է հիշել, թե ինչպես է տեղի ունեցել անցումը մեկ հասարակարգից մյուսին: Անցման եղանակները տարբեր են: Այսպես, անցման ձևերից մեկը խաղաղ հեղափոխությունն է, որի պարագայում որևէ պայմանավորվածություն նախկին հասարակարգի հետ անհրաժեշտ չէ, օրինակ՝ Գերմանիայի միավորման դեպքում: Անցման այլ ձև է, երբ նախկին հասարակարգը ինքն է նախաձեռնում անցումը նոր հասարակարգին, ինչպես, օրինակ, Խորհրդային Միության փլուզումը, Բուսանիայի Ֆրանկոյի կամ Չիլիի Պինոչե-

---

<sup>119</sup> Տե՛ս *E. Posner/A. Vermeule*, *Transitional Justice as Ordinary Justice*, *Harvard Law Review*, 2003, էջ 772:

<sup>120</sup> Տե՛ս *J. Elster*, *Closing the books: Transitional justice in historical perspective*. Cambridge, 2004, էջ 3:

<sup>121</sup> Տե՛ս *J. Iverson*, in: *J. Iverson/C. Stahn/J. S. Easterday*, *Jus Post Bellum: Mapping the Normative Foundations*, 2014, էջ 90:

տի ռեժիմների անցումները: Նման գործիքների իրականացման մեկ այլ եղանակ են հին և նոր հասարակարգերի միջև տեղի ունեցող փոխզիջումներն ու բանակցությունները: Որպես «ոսկե օրինակ» կարելի է բերել Հարավային Աֆրիկան (ապարտեիդ): Թեև այս անցումները համեմատաբար խաղաղ են իրականացվել, սակայն «արյունոտ» անցումները ևս հնարավոր է դասակարգել անցումային արդարադատության սահմանումների մեջ, ինչպես, օրինակ, ինտերվենցիաների (Պոլ Պոտի ռեժիմի տապալումը, ԱՄՆ միջամտությունը Աֆղանստանում և Իրաքում և այլն) կամ պատերազմների պարագայում:

Դժվար է սահմանել նաև անցումային արդարադատության գործընթացի սկիզբն ու ավարտը: Գերմանիան մինչ օրս դեռ գտնվում է և՛ նացիստական Գերմանիայի, և՛ Արևելյան Գերմանիայի ռեժիմներից անցումային արդարադատության գործընթացում: 2015 թ. Լյուսեբերգի Հողային դատարանը չորս տարվա ազատազրկման դատապարտեց 94-ամյա Օսկար Գրյոնինգին՝ Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարի հաշվապահին՝ 300 հազար մարդու սպանություններին օժանդակելու համար: Նացիստական իշխանությունների արխիվների ուսումնասիրությունը և Երկրորդ համաշխարհային պատերազմի նյութերի հրապարակումները շարունակում են դիտվել որպես անցումային արդարադատության մեխանիզմներ: Սա նշանակում է, որ նման գործընթացները կարող են տևել մի քանի տասնամյակ:

Անցումային արդարադատության առումով կարող են հետապնդվել տարբեր նպատակներ. մի կողմից՝ պատժիչ, մյուս կողմից՝ վերականգնողական նպատակներ, ինչպիսիք են փոխհատուցման տարբեր եղանակները: Երկու նպատակների հետին պլանում են նաև գործնական այլ նպատակներ, ինչպես հաշտեցումը, ճշմարտությունը, խաղաղությունը և արդարությունը: Յուրաքանչյուր պետության և յուրաքանչյուր հասարակության մեջ այդ գործիքները կամ մեխանիզմներն աշխատում են տեղական սովորույթներին և ա-

վանդություններին համապատասխան: Հարց է, թե որքանով են այդ գործիքները հաջողության հասնում իրենց անցումային և վերականգնման նպատակներում:

### *9.1 Քրեական հետապնդում*

Քրեական հետապնդումները ոչ միայն անցումային արդարադատության մեխանիզմների առանցքային մասն են, այլև ինքնին ժողովրդավարության հիմնասյուներից են: Ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների քրեական հետապնդումը ազգային սահմաններում ոչ միայն փոխլրացնում է Միջազգային քրեական դատարանի դերակատարությունը և թեթևացնում ծանրաբեռնվածությունը, այլև իր ազգային պատասխանն է տալիս միջազգային հանցագործություններին: Անձնական պատասխանատվությունը, այդ հանցագործությունների անհատականացումը պարզ պատկեր են ստեղծում, որ միջազգային հանցագործությունները կոլեկտիվ և անանուն չեն, այլ ունեն անհատական դերակատարներ<sup>122</sup>: Միջազգային հանցագործությունները, սակայն, չեն սահմանափակում անցումային արդարադատության քրեական հետապնդման գործիքակազմը: Դրանք կարող են պարունակել նաև քրեական այլ հանցակազմեր, ինչպես, օրինակ, կոռուպցիա, մասնավոր սեփականության հափշտակություններ, քաղաքական սպանություններ և այլն:

### *9.2 Համաներում*

Հաշտեցումը միշտ չէ, որ կարող է ձևավորվել պատժի միջոցով: Նախկին հասարակարգի ներկայացուցիչներին «չհալածելը» կարող է նաև հանգեցնել հաշտության մեկ այլ եղանակի: Այնուամենայնիվ, անցումի ընթացքում վաղաժամ համաներումը չի կարող արդյունավետ համարվել: Սիերա Լեոնեում քաղաքացիական պատերազմից հետո ընդունվեց ընդհանուր համաներում, որն անպատիժ թողեց

---

<sup>122</sup> Sté u G. Werle/M. Vormbaum, *Transitional Justice: Vergangenheitsbewältigung durch Recht*. Berlin, Heidelberg, 2018 էջ:

հարյուրավոր պատերազմական հանցագործների, նախկին զանգվածային մարդասպանները անպատիժ վերախնտեզրվեցին հասարակությանը: Դա հետագայում հանգեցրեց փրկվածների, տուժածների հոգեկան բարդությունների: Գրականության մեջ համաներումը տարբերակվում է հետևյալ կերպ.

- բլանկետային համաներում – տվյալ ժամանակահատվածում բոլոր հանցագործությունների համաներում,
- խմբային համաներում – մարդկանց որոշակի խմբի կողմից կատարված հանցագործությունների համաներում,
- մասնակի համաներում – որոշ հանցագործությունների համաներում,
- ընդհանուր համաներում – բոլոր հանցագործությունների համաներում:

### *9.3 Ճշմարտության հանձնաժողովներ*

Հարավային Աֆրիկայի ճշմարտության հանձնաժողովի ստեղծումը ոսկե օրինակ է հետագայում նման հանձնաժողովների ստեղծման համար:

Երկարատև բանակցությունների արդյունքում վերջ տրվեց Հարավային Աֆրիկյան Հանրապետությունում ապարտեիդի կառավարմանը, և հասարակության մեջ վերականգնողական արդարադատության պահանջ առաջացավ: Դրա հիման վրա 1995 թ. ստեղծվեց ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը (Truth and Reconciliation Commission - TRC)<sup>123</sup>: Հանձնաժողովի նպատակն էր արձանագրել մարդու իրավունքների խախտումները, հայտնաբերել և նույնականացնել ապարտեիդից տուժածներին և ներում շնորհելու որոշում կայացնել<sup>124</sup>: Հանձնաժողովը բաղկացած էր երեք կոմիտեներից, որոնք պատասխանատու էին անձի կողմից կատարված՝ մարդու իրավունքների խախտումների բացահայտման և վերականգն-

---

<sup>123</sup> Reconciliation Act, 1995.

<sup>124</sup> TRC, Policy Framework For Urgent Interim Reparation Measures.

ղական գործողությունների համար: Մարդու իրավունքների խախտումների կոմիտե (Committee on Human Rights Violation), համաներման կոմիտե (Commitee for Amnesty) և ռեպարացիայի և ռեաբիլիտացիայի կոմիտե (Committee for Reparation and Rehabilitation): Մարդու իրավունքների խախտումների կոմիտեն կատարում էր հետաքննություններ: Տուժողները և հանցագործները, անցնելով կոմիտեներով, մարդու իրավունքների խախտումների հայտնաբերման և նույնականացման դեպքում ստանում էին փոխհատուցում, իսկ պատասխանատուները՝ ըստ իրենց մեղքի՝ ներում<sup>125</sup>:

Նման հանձնաժողովներ ստեղծվեցին նաև Հարավային Ամերիկայում, այսպես կոչված՝ «հարկադիր անհետացման» դեպքերը քննելու նպատակով:

#### 9.4 Փոխհատուցում

Նախկին հասարակարգում տեղի ունեցած՝ մարդու իրավունքների ոտնահարումների հետևանքով առաջացած վնասը, ըստ անցումային արդարադատության մեխանիզմների, պետք է փոխհատուցվի: Փոխհատուցման մի քանի ձևեր նախատեսված են միջազգային և միջազգային սովորույթային իրավունքում: Եթե կրած վնասը հնարավոր չէ վերականգնել (*restitution*), պետությունը պարտավոր է նյութապես փոխհատուցել վնասը (*compensation*), եթե վնասը հնարավոր չէ նյութապես փոխհատուցել կամ վերականգնել, ապա պետությունը պարտավոր է ձեռնարկել խորհրդանշական միջոցառումներ (*satisfaction*)՝ այդպես ցուցաբերելով վնասները:

#### 9.5 Պաշտոնատար անձանց ստուգում

Անցումային արդարադատության կարևոր գործիքներից է նաև նախկին հասարակարգի պաշտոնատար անձանց գործելաճի

---

<sup>125</sup> Տե՛ս *G. Petrossian/C. Safferling*, Victims before the International Criminal Court. Berlin, 2021, էջ 256-258, նաև *C. Villa-Vincicio*, in: E. Doxtader/C. Villa-Vicencio, To repair the irreparable: Reparation and reconstruction in South Africa, 2004, էջ 74-75:



ստուգումը: Այդ գործիքը ավելի հայտնի է որպես «լուստրացիա», «վերանայում», «ինստիտուցիոնալ բարեփոխում» կամ վեթինգ (vetting): Այս գործիքը ներառում է մի շարք գործողություններ՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական որակավորումը և վարքագիծը ստուգելու համար: Այդ ստուգումները մասնավորապես իրականացվում են հետևյալ չափանիշներով<sup>126</sup>.

- մարդու իրավունքների խախտումներ,
- կոռուպցիա,
- պաշտոնական դիրքի չարաշահում,
- մասնագիտական հմտություններ,
- բարեվարքություն,
- ֆինանսական հնարավորություններ:

Այսպիսով, միջազգային քրեական իրավունքը և անցումային արդարադատության գործիքները կիրառման ընթացքում շատ դեպքերում խաչվում են, որի պարագայում հաշվի են առնում միմյանց արդյունքները:

---

<sup>126</sup> Sté u S. Rumin, in: A. Mayer-Rieckh, Justice as prevention: Vetting public employees in transitional societies, 2007, էջ 403:

## ԲԱԺԻՆ II

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

#### ԳԼՈՒԽ 4

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

#### 10. Միջազգային հանցակազմ

Ակնհայտ է, որ միջազգային քրեական իրավունքի տեսությունը և միջազգային հանցակազմի կառուցվածքն ու տարրերը դեռևս հստակորեն չեն ձևավորվել: Մա պայմանավորված է նրանով, որ միջազգային քրեական իրավունքի ընդհանուր մասի ձևավորումը և հստակեցումը Հռոմի կոնֆերանսում դիվանագետների ու միջազգային քրեական մասնագետների ուշադրության կենտրոնում չեն եղել, քանի որ վերջիններս զբաղված էին Միջազգային քրեական դատարանի գործունեության շուրջ հիմնարար համաձայնություն փնտրելով, իսկ տեսությունն ու Դատարանի հետագա գործունեությունն արդեն թողնված էին հենց Դատարանին<sup>127</sup>: Բանակցող կողմերը ելնում էին այն սկզբունքից, որ միջազգային քրեական իրավունքի տեսությունը ոչ միայն պետք է հիմնվի միջազգայնորեն ճանաչված իրավական ուսմունքի վրա, այլև պետք է գործնականում կիրառելի լինի: Այդ է պատճառը, որ ժամանակավոր միջազգային քրեական դատարանները հանցակազմի կառուցվածքի վերաբերյալ առանձին և յուրօրինակ միջազգային քրեական իրավունքի ուսմունք են ստեղծել՝ չհիմնվելով միայն ազգային փորձի վրա: Միջազգային քրեական դատարանը Հռոմի ստատուտով նախատեսված հանցագործությունների համար օգտագործում է յուրօրինակ մոտեցում, որը մասամբ հիմնված է անզլոամերիկյան հանցակազմի երկաստիճան կառուց-


---

<sup>127</sup> St' u K. Ambos, Internationales Strafrecht: Strafanwendungsrecht, Völkerstrafrecht, Europäisches Strafrecht, Rechtshilfe, 5th ed. München, 2018, էջ 164, նաև՝ G. Werle/F. Jeßberger, Völkerstrafrecht, 4th ed. Tübingen, 2016, էջ 174:

վածքի՝ իրավախախտման և պաշտպանության վրա (offence-defence)<sup>128</sup>: Այս երկաստիճան մոտեցումը տարբերվում է գերմանական եռաստիճան կառուցվածքից (*Tatbestandsmäßigkeit, Rechtswidrigkeit, Schuld*) և հայկական երկաստիճան (օբյեկտ և սուբյեկտ, վերջիններս էլ օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի) մոտեցումից:

Ինչպես հայտնի է ազգային քրեական իրավունքի տեսությունից, հանցակազմի թեկուզ մեկ տարրի բացակայությունը հանգեցնում է հանցագործության բացակայության, այդպես էլ միջազգային քրեական իրավունքի տեսության մեջ հանցակազմի բոլոր տարրերը պետք է բավարարված լինեն, որպեսզի հնարավոր լինի պնդել միջազգային հանցագործության առկայությունը:

Միջազգային քրեական դատարանների դատական պրակտիկայից ելնելով՝ միջազգային հանցակազմի կառուցվածքը բաղկացած է երկու մասից՝ հանրորեն վտանգավոր արարքից (offence), որը պարունակում է օբյեկտ (material element – *actus reus*) և սուբյեկտ (mental element – *mens rea*) և հանցավոր արարքը բացառող հանգամանքներից (defence), որոնց պարագայում հանցավորությունը բացառվում է:



<sup>128</sup> Տե՛ս *A. Cassese*, International criminal law: Cases and commentary. Oxford, 2011, էջ 324, նաև՝ *E. van Sliedregt*, Individual Criminal Responsibility in International Law. Oxford, 2012, էջ 40:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային հանցակազմի այն յուրահատկությունը, որ, ի տարբերություն ազգային օրենքով սահմանված հանցակազմի, այն երկաստիճան է: Այսինքն՝ օբյեկտիվ կողմը և սուբյեկտիվ կողմը ի հայտ են գալիս երկու անգամ՝ մի անգամ կոնստեքստուալ հատկանիշների (*cheapeu elements*) պարագայում, երկրորդ անգամ՝ առանձին կոնկրետ գործողության: Կոնստեքստուալ հատկանիշները բնութագրում են համատեքստում առկա այն բնորոշումները, որոնք թույլ կտան արձանագրել միջազգային հանցագործության առկայությունը.

- ցեղասպանության պարագայում՝ պաշտպանվող խմբի առկայությունը, լրիվ կամ մասնակի ցեղասպանական մտադրությունը այլ գործողությունների համատեքստում,
- մարդկության դեմ հանցագործության պարագայում՝ համատարած կամ պարբերական հարձակում քաղաքացիական բնակչության վրա, այդ հարձակումների մասին իմացություն,
- պատերազմական հանցագործության պարագայում՝ միջազգային կամ ազգային զինված ընդհարման առկայություն, դրա մասին իմացություն, պատերազմական սովորույթներով պաշպանվող անձի կամ օբյեկտի առկայություն,
- ագրեսիայի հանցագործության պարագայում՝ ագրեսիայի գործողություն, որը բնույթով, մասշտաբով և ծանրությամբ հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, ռազմական կամ քաղաքական անձի առկայություն, որն ունի պետական ինստիտուտների նկատմամբ ազդեցություն:

Այս հատկանիշների առկայության պարագայում միայն հնարավոր է անդրադառնալ առանձին գործողությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի հատկանիշներին:

### 10.1 Օբյեկտիվ կողմը

Material Element (*actus reus*) հանցակազմի օբյեկտիվ կողմը, ինչպես հայկական իրավունքում, այդպես էլ միջազգային քրեական

իրավունքում, հանրորեն վտանգավոր արարքը բնութագրում է գործողությամբ կամ անգործությամբ, արարքի ու հետևանքների միջև պատճառական կապով և հանցագործությունը բնութագրող այլ հանգամանքներով:

Միջազգային քրեական իրավունքը հանցավոր արարքը (*conduct*) նկարագրում է մասնավորապես գործողությամբ: Անգործությունը դիտարկվում է միայն առանձին դեպքերում, օրինակ՝ որպես վերադասի պատասխանատվություն, երբ վերադասը հնարավորություն ուներ իմանալու ենթակաների կողմից կատարված, կատարվող կամ կատարվելիք հանցագործությունների մասին և ոչինչ չի ձեռնարկել դրանք կանխելու, զսպելու և հայտնելու ուղղությամբ (Հռոմի ստատուտի 28-րդ հոդված)<sup>129</sup>:

Հանցավոր արարքի հետևանքը (*consequence*) հասարակությանը հասցվող վնասն է: Հանցավոր արարքը և հետևանքը փոխկապակցված են պատճառահետևանքային կապով: Միջազգային քրեական դատարանի վերաքննիչ պալատը նշել է, որ պատճառահետևանքային կապը սկզբունք չէ, այլ դատարանի կողմից կիրառվող հատուկ բանաձև, որի շնորհիվ հնարավոր է պարզել արարքի և հետևանքի միջև առկա կապը<sup>130</sup>:

Ինչպես ազգային քրեական իրավունքի տեսության մեջ, այնպես էլ միջազգային քրեական իրավունքում, հայտնի են պատճառահետևանքային կապի հետևյալ բանաձևերը.

- But-for-test. պատճառ-պայման (*condition sine qua non*),
- անհրաժեշտ պատճառ,
- համապատասխան, ադեկվատ պատճառ,
- անմիջական պատճառ,

---

<sup>129</sup> Sté u C. Safferling (note 2), էջ 98, *K. Ambos*, Remarks on the General Part of International Criminal Law, *Journal of International Criminal Justice*, 4 (2006), էջ 661:

<sup>130</sup> Sté u *Prosecutor v. Lubanga*, Decision establishing the principles and procedures to be applied to reparations (7 August 2012), para. 250, ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber I Judgment, 14 March 2012, para. 999:

- իրական պատճառ<sup>131</sup>:

Թե որ բանաձևը կկիրառվի պատճառափոխության փոխարեն կապը պարզելու համար, կախված է կոնկրետ հանգամանքներից և դատավորների իրավական պատկերացումներից<sup>132</sup>: Մակայն մինչ այժմ Միջազգային քրեական դատարանի պրակտիկայում պատճառափոխության փոխարեն առարկա չի դարձել: Բեմբայի նախաքննության ընթացքում փորձ արվեց կիրառելու պատճառ-պայման բանաձևը՝ վերադասի պատասխանատվությունը պարզելու համար, սակայն այնուհետև դատարանի կողմից այդ բանաձևը մերժվեց, ինչպես նաև մերժվեց պատճառափոխության կապի գործոնը՝ վերադասի պատասխանատվությունը ընդհանրապես պարզելու համար<sup>133</sup>:

Օբյեկտիվ կողմի մյուս կարևորագույն հատկանիշը հանցագործությունը բնութագրող այլ հանգամանքներն են, որոնք միջազգային քրեական իրավունքում, բացի ժամանակից, տարածությունից, հանցագործության գործիքներից, առանձնանում են նաև գործողությունների պարբերական և լայնածավալ կիրառմամբ, քաղաքական իրա-

---

<sup>131</sup> Մանրամասն տե՛ս *U. Առաքելյան*, Հանցագործության օբյեկտիվ կողմը /*Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Ն. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, 2007, էջ 141*:

<sup>132</sup> Օրինակ՝ անհրաժեշտ պատճառի բանաձևը լայն կիրառում ունի Մեծ Բրիտանիայում, տե՛ս *R. v. Hennigan*, 1971, 3 All E.R. 133, իրական պատճառի բանաձևը՝ ԱՄՆ-ում, տե՛ս *Commonwealth v. Rementer* 598 A. 2d 1300, Բելգիայում և Նորվեգիայում՝ ադեկվատ պատճառի բանաձևը, տե՛ս ennu and Verhaegan, *Droit Pénal Général*, 1991, նաև՝ *M. Akse nova* (note 17), էջ 128:

<sup>133</sup> *Sté u ICC, Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Judgment, 21 March 2016, para. 211-213, ICTY, *Prosecutor v. Blaškić*, Case No. IT-95-14-A, Appeals Chamber, Judgment, 27 January 2005, para. 77, “...causation has not traditionally been postulated as a *conditio sine qua non* for the imposition of criminal liability on superiors for their failure to prevent or punish offence committed by their subordinate”. *O. Triffterer*, Causality, a Separate Element of the Doctrine of Superior Responsibility as Expressed in Article 28 Rome Statute?, *Leiden Journal of International Law*, 15 (2002), էջ 203:

դարձություններով և առանձին հանցագործությունների կոնտեքստուալ բնույթով (*circumstances*):

### 10.2 Սուբյեկտիվ կողմը

Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածը ամրագրում է հանցակազմի սուբյեկտիվ կողմը (*Mental Element* կամ *mens rea*): Այն մասնավորապես վկայակոչում է, որ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել, եթե Հռոմի ստատուտով նախատեսված հանցագործությունը կատարվել է դիտավորությամբ (*intent*) և իմացությամբ (*knowledge*): Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել «իմացություն» հասկացությանը և չշփոթել գիտակցության հետ, որը դիտավորության չափանիշ է<sup>134</sup>: Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 3-րդ մասով իմացությունը վերաբերում է բոլոր այն հանգամանքներին, որոնք տեղի են ունենում իրադարձությունների շրջանակներում կամ, այսպես ասած, կոնտեքստուալ պայմաններում<sup>135</sup>:

Սույն հոդվածի առաջին մասը, սակայն, միևնույն ժամանակ անդրադառնում է Հռոմի ստատուտով նախատեսված հանցագործությունների առանձնահատկություններին՝ «*unless otherwise provided*»: Մասնավորապես, ցեղասպանության պարագայում սուբյեկտիվ կողմը, բացի սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատկանիշներից, պարունակում է բացառիկ սուբյեկտիվ հատկանիշ (*dolus speicialis*), նման բացառիկություն գոյություն ունի նաև ագրեսիայի հանցագործության սուբյեկտիվ հատկանիշներում: Այսպիսով, Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածը տալիս է ընդհանուր պատկերացում միջազգային հանցագործությունների սուբյեկտիվ կողմի վերաբերյալ:

Դրա հետ մեկտեղ՝ Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի պահանջն է, որ սուբյեկտիվ կողմի հատկանիշները ուղիղ իմաստով առնչվեն և

---

<sup>134</sup> Տե՛ս *Ս. Գաբուզյան*, Հանցավորությունը բացառող հանգամանքներ / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազիկյան, Ն. Մաղաքյան, Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, 2007, էջ 199-208:

<sup>135</sup> Տե՛ս *K. Ambos* (note 127), էջ 207:

վերաբերեն օբյեկտիվ կողմի հատկանիշներին (*conduct, consequences, circumstances*): Այսպիսով, հանցագործը Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 2-րդ մասի ա կետի համաձայն՝ պետք է ցանկանա կատարել հանրորեն վտանգավոր արարք (*dolus directus*)<sup>136</sup>: Պարզ ասած՝ հարկավոր է, որ հանցագործը գիտակցի՝ ինչ է անում, և եթե գիտակցում է իր արարքը, ապա ցանկանում է նաև կատարել դա<sup>137</sup>: Սույն հոդվածի բ կետի համապատասխան՝ հանցագործը պետք է դիտավորություն ունենա և գիտակցի հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացումը (*Erfolg*), իսկ ըստ սույն հոդվածի 3-րդ մասի՝ պետք է իմանա հանցագործության հանգամանքների մասին: Ինչպես կարելի է առաջին հայացքից նկատել, Հռոմի ստատուտը լրում է անզգուշությամբ կատարված հանցագործությունների մասին (*dolus eventualis*): Մա պայմանավորված է նրանով, որ միջազգային հանցագործությունների պարագայում անզգուշությունը բացառված է, սակայն գրականության մեջ պատերազմական որոշ հանցագործությունների դեպքում անզգուշությունը դիտարկվում է որպես մեղքի ձև<sup>138</sup>:


---

<sup>136</sup> Մանրամասն տե՛ս *J. van der Vyver*, The International Criminal Court And The Concept Of Mens Rea In International Criminal Law, U. Miami Int'l & Comp. L. Rev. 57, 2005, էջ 63:

<sup>137</sup> Տե՛ս *C. Safferling* (note 2), էջ 105, *M. E. Badar*, The Concept of Mens Rea in International Criminal Law: The Case for a Unified Approach. Oxford, 2013, էջ 387:

<sup>138</sup> Տե՛ս *A. Cassese*, The Statute of the International Criminal Court: Preliminary Reflections, Eur. J. Int'l L. 1999, էջ 153-154:





## 11. Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ

Թեպետ Հռոմի ստատուտը ակնհայտորեն չի օգտագործում անգլոամերիկյան «defence» հասկացությունը, այն 31-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածներով վկայակոչում է բոլոր այն հանգամանքները, որոնց պարագայում քրեական պատասխանատվությունը կարելի է հասկանալ անգլոամերիկյան «defence» հասկացության ներքո<sup>139</sup>: Բացի վերոհիշյալ հոդվածներից՝ առանձնակի ուշադրության է արժանանում Հռոմի ստատուտի՝ անձանց պատասխանատվության ենթարկելու ցենզր: Ըստ այդմ, համաձայն Հռոմի ստատուտի 26-րդ հոդվածի՝ չեն կարող հետապնդվել այն անձինք, որոնց 18 տարին չի լրացել հանցագործությունը կատարելու պահին<sup>140</sup>: Միջազգային քրեական իրավունքի տեսությունում պատասխանատվությունից ազատող

<sup>139</sup> Տե՛ս K. Ambos (note 25), էջ 301, նաև՝ C. Safferling, *Vorsatz und Schuld: Subjektive Tãterelemente im deutschen und englischen Strafrecht*. Tübingen, 2008, էջ 294:

<sup>140</sup> Տե՛ս C. Safferling/G. Petrossian, *Victims of International Crimes*, 2021, էջ 200:

հանգամանքները լինում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական, սակայն բոլոր այդ հանգամանքները դիտարկվում են մեկ սկզբունքի ներքո<sup>141</sup>: Պատասխանատվությունից ազատող հանգամանքներն են.

- անմեղսունակությունը,
- հարբած վիճակում հանցանք կատարելը,
- անհրաժեշտ պաշտպանությունը,
- ծայրահեղ անհրաժեշտությունը,
- վիաստական կամ իրավական սխալը,
- հրաման կամ կարգադրություն կատարելը,
- անձեռնմխելիությունը,
- այլ հանգամանքներ:

### *11.1 Անմեղսունակությունը*

Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի համաձայն՝ քրեական պատասխանատվության չի կարող ենթարկվել այն անձը, որը հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին տառապել է այնպիսի հոգեկան հիվանդությամբ, որի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության վտանգավորությունը կամ չէր կարող ղեկավարել իր գործողությունները<sup>142</sup>:

### *11.2 Հարբած վիճակում հանցանք կատարելը*

Հարբած վիճակում հանցագործություն կատարելը, ի տարբերություն անմեղսունակության, այնքան էլ լայն տարածում չունի ազգային քրեական իրավահամակարգերում: Այս հանգամանքը որպես բացառման տեսակ դիտարկելը տարբերվում է ազգային կարգավորումից, սակայն, հաշվի առնելով միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում լայն տարածում ստացած այն հանգամանքը, որ նման հանցագործությունների գերակշիռ մասը կատարվում է հար-

---

<sup>141</sup> St' u A. Eser, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, էջ 1135:

<sup>142</sup> St' u ՀՀ ՔՕ, հոդված 25:

բաժնի վիճակում, Հռոմի ստատուտում ամրագրվեց այն բացառությունը, որ եթե հանցանք կատարած անձը օգտագործել է ակոհոլ, թմրամիջոցներ կամ թմրեցնող այլ նյութեր ու գիտակցել է, որ նման նյութերի օգտագործումը կարող է ռիսկային լինել, ապա հարբած վիճակում հանցանք գործելը չի կարող դիտվել որպես պատասխանատվությունից ազատող հանգամանք (Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ կետ): Հետևաբար հարբած վիճակում լինելը արարքից ազատող հանգամանք կարող է համարվել միայն այն դեպքում, եթե *actio libera in causa* պայմանները չեն բավարարվել<sup>143</sup>:

### 11.3 Անհրաժեշտ պաշտպանություն

Միջազգային քրեական իրավունքի տեսությունում անհրաժեշտ պաշտպանությունը չի կարող դիտարկվել ցեղասպանության կամ մարդկության դեմ կատարվող հանցագործությունների պարագայում<sup>144</sup>: Անհրաժեշտ պաշտպանության վիճակ (*Notwehrlage*) կարող է առաջանալ միայն պատերազմական հանցագործությունների դեպքում: Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի 1-ին մասի գ կետում արձանագրված անհրաժեշտ պաշտպանությունը վկայակոչելու համար պետք է քննարկել այս հատվածում տեղ գտած երեք կարևոր տարրեր. ա) անձը ներգրավված է պաշտպանական գործողության մեջ, բ) բռնության հետևանքով անձին կամ գույքին սպառնում է որակյալ վտանգ, և գ) դրա դեմ կիրառվում է համաչափ պաշտպանություն:

Առաջին պետք է հաշվի առնել, որ անձը գտնվում է պաշտպանողական գործողության մեջ: Այս հանգամանքը հնարավոր չէ դիտարկել միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից, քանի որ

---

<sup>143</sup> St´u C. Safferling (note 2), էջ 120, K. Ambos (note 127), էջ 216, A. Eser (note 141), էջ 1139-1142:

<sup>144</sup> Ազդեցիկ է հանցագործության պարագայում հնարավոր չէ վկայակոչել Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածում հիշատակված անձնական անհրաժեշտ պաշտպանությունը, քանի որ ազդեցիկ է պարագայում խոսքը բացառապես ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածում նշված կոլեկտիվ ինքնապաշտպանության մասին է:

վերջինս ռազմական պաշտպանական գործողությունների մաս է, ըստ որի՝ հարձակողական գործողություններում մարտիկը չի կարող վկայակոչել անհրաժեշտ պաշտպանության վիճակը, թեև ռազմավարական հարձակումը բխել է ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի դրույթներից և եղել է պաշտպանողական բնույթի: Այս դեպքում անհրաժեշտ պաշտպանությունը պետք է դիտարկել ոչ թե ընդհանուր *ius ad bellum*, այլ *ius in bello* միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում և առանձին դեպքերում<sup>145</sup>: Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի գ կետը անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի դիտում այն, որ ոտնձգություն է կատարվում ոչ թե անմիջականորեն պաշտպանվողի նկատմամբ, այլ ուրիշ, կողմնակի անձանց նկատմամբ, որոնք հարձակման վտանգի տակ են, կամ պատերազմական հանցագործությունների դեպքում՝ գույքի նկատմամբ, որն առանձնակի նշանակություն ունի մարդկանց կամ մարտիկների համար:

Երկրորդ տարրը վերաբերում է իրական և հակաօրինական ուժի գործադրմանը: Այս տարրը ներառում է երեք կարևոր պայման: Ըստ առաջինի՝ գործադրվող ուժը չի ենթադրում ֆիզիկական ներգործություն պաշտպանվողի նկատմամբ, այն կարող է մեկնաբանվել ավելի լայն իմաստով՝ ներառելով նաև հոգեբանական ազդեցություն կամ իրական և փաստացի սպառնալիք<sup>146</sup>: Հաջորդ պայմանը վերաբերում է իրական կամ ակնհայտ ուժի գործադրմանը, ըստ որի՝ հակազդող միջոցներին դիմելը չպետք է լինի ոչ վաղաժամ կամ կանխարգելիչ նպատակ հետապնդող և նույնիսկ ոչ պատժողական, բայց միննույն ժամանակ պաշտպանվողը կարող է դիմադրել, երբ վտանգը դառնում է բացահայտ, կամ պաշտպանվողի նկատմամբ արդեն ուժ է կիրառվում: Երրորդ պայմանը վերաբերում է գործադրվող ուժի ապօրինությանը (*unlawful*): Այս պարագայում խոսքը վե-

---

<sup>145</sup> Sté u E. van Sliedregt (note 128), էջ 234, K. Ambos (note 25), էջ 334:

<sup>146</sup> Sté u K. Ambos, in: A. Cassese/P. Gaeta/J. R. Jones, The Rome Statute of the International Criminal Court: A commentary; Volume 1-2, 2002, էջ 1003:

րաբերում է այն դեպքերին, երբ գործողությունները արդարացված չեն որևէ իրավական հիմքով<sup>147</sup>:

Երրորդ տարրը պաշտպանվողի դեմ ուղղված ուժի իրավաչափ և ողջամիտ հակազդումն է: Այս պարագայում արդեն գործում են ազգային օրենքով նախատեսված պահանջները<sup>148</sup>:

Անհրաժեշտ պաշտպանության ստուգման մեթոդաբանությունը<sup>149</sup>:

1. անհրաժեշտ պաշտպանության վիճակ՝  
ա. ուժի կիրառում՝
  - I. պաշտպանվող կողմ,
  - II. պաշտպանության կարիք ունեցող,
  - III. առանձնակի նշանակության գույք,  
բ. իրական և փաստացի գործողություն,
  - գ. ապօրինիություն,
2. հակազդող գործողություն՝  
ա. ողջամտություն,  
բ. իրավաչափություն,
3. անհրաժեշտ պաշտպանության վերաբերյալ գիտակցություն:

#### *11.4 Ծայրահեղ անհրաժեշտությունը*

Թեև ազգային օրենքով ծայրահեղ անհրաժեշտությունը (*necessity*) և ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը (*duress*) համարվում են առանձին տեսակի արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ<sup>150</sup>, սակայն Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի դ

---

<sup>147</sup> Տե՛ս A. Eser (note 141), 1146:

<sup>148</sup> Տե՛ս, օրինակ, Գ. Ղազինյան, Հանցագործության սուբյեկտիվ կողմը / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, 2007, էջ 323-350:

<sup>149</sup> Տե՛ս C. Safferling (note 2), էջ 114:

<sup>150</sup> Տե՛ս ՀՀ ՔՕ, հոդվածներ 44-րդ և 45-րդ, նաև՝ K. J. Heller, The Nuremberg Military Tribunals and the origins of international criminal law. Oxford, New York, 2011, էջ 302, Նյուրնբերգում *duress*-ը դիտարկվել է որպես անհրաժեշտություն, նույն մոտեցումը կիրառվել է ժամանակավոր միջազգային դա-

կետը ներառում է երկու հանգամանքները մեկ բնութագրում: Ըստ Հռոմի ստատուտի՝ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններից են՝ ա) կյանքին կամ առողջությանն անմիջականորեն սպառնացող վտանգը, բ) անհրաժեշտ և իրավաչափ հակազդումը, գ) սուբյեկտիվ պատկերացմամբ վտանգը վերացնելու գիտակցությունը: Ծայրահեղ անհրաժեշտության վիճակ կարող է առաջանալ միջազգային քրեական իրավունքում միայն երկու դեպքում. երբ վտանգ է սպառնում կյանքին, ծանր վտանգ է սպառնում մարդու առողջությանը, այդ թվում՝ երբ ծանր վնաս է հասցվում մարդու առողջությանը որևէ անձի կողմից, կամ եթե շրջակա պայմաններն են հանգեցնում այդ վտանգի առաջացմանը: Այստեղ պետք է ավելացնել, որ ազգային օրենքով նախատեսված պաշտպանվող շահերը, այդ թվում՝ անձի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ ոտնձգությունը, միջազգային քրեական իրավունքով նախատեսված չեն:

Հակազդող գործողությունը, ինչպես որ անհրաժեշտ պաշտպանության պարագայում, պետք է լինի անհրաժեշտ և իրավաչափ: Այսինքն՝ վտանգը պետք է լինի իրական և փաստացի, որի դեպքում այն կանխելու անհրաժեշտություն առաջանա: Միևնույն ժամանակ հակազդումը չպետք է անհամաչափ հետևանքներ առաջացնի<sup>151</sup>:

Երրորդ պայմանը հակազդողի սուբյեկտիվ պատկերացումն ու գիտակցումն են այն մասին, որ իր կողմից հակազդմամբ կկանխվի կյանքի կամ առողջության նկատմամբ վտանգը: Եթե հակազդումը

---

տարանների պրակտիկայում: Գերմանական քրեական իրավունքը անհրաժեշտությունը դիտարկում է որպես արդարացնող ծայրահեղ անհրաժեշտություն (§ 34 StGB) և ներող ծայրահեղ անհրաժեշտություն (§ 35 StGB) (*duress – Nötigungsnotstand*):

<sup>151</sup> Տե՛ս *M. Joyce*, *Duress: From Nuremberg to the International Criminal Court, Finding the Balance Between Justification and Excuse*, *Leiden Journal of International Law* 28 (2015), էջ 635:

գերազանցի առկա վտանգը, ապա դրանով կսահմանազանցվի ծայրահեղ անհրաժեշտությունը<sup>152</sup>:

Ծայրահեղ անհրաժեշտության ստուգման մեթոդաբանությունը<sup>153</sup>.

1. ծայրահեղ անհրաժեշտության վիճակ՝
  - ա. վտանգ՝
    - I. հակազդողի կյանքին կամ առողջությանը,
    - II. այլ անձի կյանքին կամ առողջությանը,
  - բ. առաջացած վտանգը՝
    - I. անձի կողմից,
    - II. շրջակա պայմաններից,
  - գ. իրական և փաստացի վտանգ,
2. հակազդում՝
  - ա. անհրաժեշտ,
  - բ. իրավաչափ,
3. գիտակցություն՝
  - ա. ծայրահեղ անհրաժեշտության իմացություն,
  - բ. հակազդման ցանկություն,
  - գ. սահմանազանցման ցանկության բացակայություն:

### *11.5 Փաստական կամ իրավական սխալ*

Անգլոամերիկյան իրավական համակարգից ներմուծված փաստական կամ իրավական սխալների հասկացությունը, Հռոմի ստատուտի 32-րդ հոդվածի համաձայն, կարող է ազատել քրեական պատասխանատվությունից: Մյուրիհանդերձ, սա վերաբերում է հանցակազմի սուբյեկտիվ կողմին: Սկզբունքորեն օրենքի չիմացությունը պատասխանատվությունից ազատող հանգամանք չէ, բայց եթե բացակայում է կատարողի դիտավորությունը, ապա արարքի հանցա-

---

<sup>152</sup> St´u C. F. Moran, A Perspective on the Rome Statute’s Defence of Duress: The Role of Imminence, International Criminal Law Review 18 (2018), էջ 165:

<sup>153</sup> St´u C. Safferling (note 2), էջ 118:

վորությունը բացառվում է: Նույնը վերաբերում է փաստական սխալին<sup>154</sup>:

Փաստական սխալն առնչվում է այն դեպքերին, երբ կատարողը չի պատկերացնում կամ գիտակցում, որ տվյալ գործողությունը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Եթե հնարավոր չէ նույնականացնել, որ տվյալ շենքը հիվանդանոց է, դժվար է պատկերացնել, որ այդ շենքը գտնվում է մարդասիրական իրավունքի պաշտպանության տակ: Եթե ռազմական առաջնորդը 14 տարեկան երեխաների է անդամագրում իր զինվորական ստորաբաժանումների շարքերը՝ վստահ լինելով, որ նրանք 16 տարեկան են, նա չի կարող դիտվել որպես պատերազմական հանցագործ: Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ մահմեդականը հարձակում է գործում կարմիր խաչի նշանով ավտոմեքենայի վրա՝ չհասկանալով կարմիր խաչի նշանակությունը:

Իրավական սխալների (Հռոմի ստատուտի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) դեպքում ևս անձը, իմանալով բոլոր փաստական հանգամանքները, չի պատկերացնում կամ գիտակցում, որ տվյալ պետության սահմաններում կատարած գործողությունն իր մեջ ենթադրում է հանցակազմ: Իրավական սխալը, այնուամենայնիվ, պրակտիկայում պատասխանատվությունից ազատվելու համար առանձնակի նշանակություն և դերակատարություն չի ունենում<sup>155</sup>:

---

<sup>154</sup> Թե՛ փաստական, թե՛ իրավական սխալները Նյուրնբերգում լայն քննարկման առարկա են եղել: Գրեթե բոլոր դատական գործընթացներում պաշտպանյալները արդարանում էին, որ առաջնորդվել են հրամանով և իրավական առումով չեն գիտակցել իրենց հանցավորությունը: Միջազգային ռազմական տրիբունալի դատավարությունը մերժեց թե՛ փաստական սխալի, թե՛ իրավական սխալի առկայությունը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, մանրամասն տե՛ս *O. Triffterer/J. D. Ohlin*, in: *O. Triffterer/K. Ambos*, Rome Statute of the International Criminal Court: A Commentary, 2016, էջ 1162-1165:

<sup>155</sup> Տե՛ս *K. Ambos* (note 127), էջ 226, մանրամասն տե՛ս *K. J. Heller*, Mistake of Legal Element, the Common Law, and Article 32 of the Rome Statute: A Critical Analysis, *Journal of International Criminal Justice* 6 (2008), էջ 425-440:



### 11.6 Հրաման կամ կարգադրություն կատարելը

Միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում լայն տարածում ունի պաշտպանության այն ձևը, երբ վկայակոչվում է, թե հանցագործությունները կատարվել են վերադասի հրամանի հիման վրա<sup>156</sup>: Այս տեսակի պաշտպանության հիմքում ընկած է ինչպես իրավական սխալի առկայությունը (Հռոմի ստատուտի 32-րդ հոդվածի 2-րդ մաս), այնպես էլ ծայրահեղ անհրաժեշտությունը (Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի 1-ին մասի գ կետ): Այսինքն՝ կատարողը հարկադրված է եղել կատարել ապօրինի գործողություն՝ իր կյանքը չվտանգելու համար:

Սկզբունքորեն, ըստ Հռոմի ստատուտի 33-րդ հոդվածի, հրամանի կամ կարգադրության կատարումը չի ազատում անձնական պատասխանատվությունից: Այս մոտեցումը սկիզբ է առնում Նյուրնբերգյան սկզբունքներից և դատավարական ռազմավարությունից, որպեսզի գլխավոր մեղադրյալները չազատվեին պատասխանատվությունից այդ պատճառաբանությամբ, թեև շատերը պարտավոր էին կատարել հրամանները: Սակայն սույն հոդվածի 1-ին մասով Հռոմի ստատուտը նախատեսում է երկու բացառություն՝ հարկադրանքի առկայությունը, երբ հրաման կատարողը կարող էր գրկվել կյանքից հրամանը չկատարելու դեպքում, և երկրորդ՝ եթե հրաման կատարողը չի գիտակցում, որ հրամանը ապօրինի կամ ակնհայտ ապօրինի է:

Նույն հոդվածի 2-րդ մասով Հռոմի ստատուտը վկայակոչում է, որ ցեղասպանությունը և մարդկության դեմ հանցագործությունը ակնհայտ ապօրինի են:

---

<sup>156</sup> Տե՛ս *T. McKeown*, The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant's Philosophy, SSRN Electronic Journal (2014), էջ 3-8, նաև՝ *P. Gaeta*, The Defence of Superior Orders: The Statute of the International Criminal Court versus Customary International Law, EJIL. 1999, էջ 175-181:

Միևնույն ժամանակ վկայակոչումը, որ տվյալ արարքը կատարվել է հրամանի հիման վրա, կարող է դատարանի կողմից դիտվել որպես մեղմացուցիչ հանգամանք:

### 11.7 Անձեռնմխելիությունը

Ինչպես արդեն նշվել էր սկզբունքներում, պետության ղեկավարները, որոնք օժտված են առանձնահատուկ անձեռնմխելիությամբ, անկախ բոլոր հանգամանքներից, անձեռնմխելի չեն Միջազգային քրեական դատարանի առջև: Այս մոտեցումը դատարանն արձանագրեց 2019 թ.՝ ավելացնելով, որ սկզբունքը սկիզբ է առել դեռևս միջազգային սովորության իրավունքից<sup>157</sup>: Միևնույն ժամանակ Հռոմի ստատուտի 27-րդ հոդվածը չի նախատեսում որևէ բացառություն: Սույն հոդվածում շեշտվում է, որ իշխանության մաս կազմելը կամ պաշտոնյա լինելը որևէ կերպ չի կարող ազդել դատական քննության վրա: Սրանից բխում է նաև, որ Վիեննայի՝ 1961 թ. դիվանագիտական հարաբերությունների մասին միջազգային պայմանագրի դրույթները որևէ ազդեցություն ունենալ չեն կարող, եթե խոսքը Միջազգային քրեական դատարանի մասին է: Սակայն այստեղ առաջանում է պրակտիկ կիրառման դժվարություն այն պետությունների համար, որոնք չեն ընդունում Միջազգային քրեական դատարանի իրավասությունը: Հարկ է հավելել, որ պետության ղեկավարի, արտաքին գործերի նախարարի և դիվանագիտական անձնակազմի համար անձեռնմխելիությունը գործում է բոլոր պետություններում անխտիր, ինչն իր հերթին հաստատվել էր Միջազգային արդարադատության դատարանի կողմից<sup>158</sup>: Թե միջազգային որ պայմանագիրն է կիրառելիության տեսանկյունից ավելի բարձր տեսական և գործնական առումներով, դժվար է հստակ պատասխանել: Սակայն սովորության իրավունքի աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում,

---

<sup>157</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Al Bashir*, Judgment in the Jordan Referral re Al-Bashir Appeal, Appeals Chamber, 6 May 2019, para. 2:


<sup>158</sup> Տե՛ս ICJ, *Arrest Warrant Case (Congo v. Belgium)*, Judgment, 14 February 2002, 3:

որ պետական ինքնիշխանությունը, ինչպես նաև վստահության մթնոլորտում ձևավորված դիվանագիտական հարաբերություններն ավելի կարևոր և նպատակահարմար են դիտվում պետությունների կողմից, քան Հռոմի ստատուտը, որն իր կիրառելիությամբ և ունիվերսալությամբ դեռևս ավելի ցածր աստիճանի վրա է գտնվում:

### *11.8 Այլ հանգամանքներ*

Առաջնորդվելով Հռոմի ստատուտի 21-րդ հոդվածի դրույթներով՝ Միջազգային քրեական դատարանը իրավասու է տեսականորեն կիրառելու նաև այլ հանգամանքներ, որոնք բացառում են պատասխանատվությունը: Դրանց շարքին կարող են դասվել համաներումը, ներումը կամ տարատեսակ քաղաքական իրադարձությունները, որոնց առկայության դեպքում Միջազգային քրեական դատարանի գործունեությունը կարող է դիտվել ոչ արդյունավետ: Այդպիսիք են, օրինակ, խաղաղության վերաբերյալ բանակցությունները կամ անցումային արդարադատության մեխանիզմների կիրառումը: Պետք է հաշվի առնել, որ Միջազգային քրեական դատարանը, առաջնորդվելով փոխլրացման սկզբունքով (Հռոմի ստատուտի 17-րդ հոդված), հիմք է ստեղծում անդամ և ոչ անդամ պետությունների համար հաղթահարելու այն բարդությունները, որոնք առաջացել են իրենց պետական սահմանների ներսում: Ոչ բոլոր միջազգային կոնֆլիկտների դեպքում է Միջազգային քրեական դատարանի միջամտությունը քաղաքականապես արդյունավետ: Այդ իսկ պատճառով Հռոմի ստատուտով Դատարանին է տրված միջամտության անհրաժեշտությունը ինքնուրույն որոշելու հնարավորությունը:

29-րդ հոդվածով, սակայն, չի սահմանափակվում իր իրավասության տակ գտնվող հանցագործությունների վաղեմության ժամկետը: Այսինքն՝ Դատարանը իրավասու է քննելու նաև այն գործերը, որոնք պետությունները երկար տարիներ անհաջող քննությունից կամ բանակցություններից հետո ի վիճակի չեն եղել ինքնուրույն հաղթահարելու:



## ԳԼՈՒԽ 5

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### 12. Անձնական պատասխանատվություն

Ի տարբերություն մարդու իրավունքների տարածաշրջանային դատարանների (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ինտերամերիկյան մարդու իրավունքների դատարան, Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան դատարան) և Միջազգային արդարադատության դատարանի, որոնցում սահմանվում է մարդու իրավունքների ոտնահարման համար պետական պատասխանատվությունը, Միջազգային քրեական դատարանը, ինչպես արդեն նշվել է միջազգային քրեական իրավունքի սկզբունքներում, սահմանում է միայն ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը: Ո՛չ պետությունների, ո՛չ իրավաբանական անձանց գործողությունները չեն կարող քննվել Միջազգային քրեական դատարանի կողմից:

Միջազգային հանցագործությունների պարագայում հնարավոր չէ պատկերացնել միայն մեկ անձի մասնակցություն և միայն մեկ անձի քրեական պատասխանատվություն: Միջազգային հանցագործությունները կոլեգիալ բնույթ ունեն, և տարբեր անձանց տարատեսակ դերակատարությունն ու մասնակցությունը հանգեցնում են միջազգային հանցագործության առաջացմանը: Դժվար է պատկերացնել մեկ անձի, որը կատարել է ցեղասպանություն, քանզի ցեղասպանությունն ինքնին միայնակ կամ հանկարծակի տեղի չի ունենում: Նույն կերպ դժվար է պատկերացնել մեկ անձի կողմից հետապնդումներ մի խումբ մարդկանց նկատմամբ: Այս բոլոր դեպքերում խոսքը մի խումբ անձանց կողմից մեկ այլ խումբ անձանց նկատմամբ կատարվող հանցագործությունների մասին է: Թեև միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում դեռևս կան հատուկենտ նախադեպեր, երբ անհատները դատապարտվել են ցեղասպանության կամ մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար, այնուամենայնիվ դա չի նշանակում, որ համակարգում գործող հան-

ցակիցները տարբեր միջոցներով չեն օժանդակել այդ հրեշագործությունների ի կատար ածմանը: Քրեական իրավունքի սկզբունքներից վերացարկվելով՝ կարելի է պնդել, որ ողջ մարդկությունն է իր անգործությամբ նպաստել միջազգային հանցագործություններին: Այս տեսանկյունից հնարավոր է կոլեկտիվ պատասխանատվություն վերագրել Օսմանյան կայսրության ամբողջ բնակչությանը, որն այս կամ այն կերպ հանդուրժում կամ օժանդակում էր հայ ժողովրդի նկատմամբ կատարվող հանցագործություններին: Այդ պատասխանատվությունը ևս անցնում է ժառանգաբար, օրինակ՝ այսօր Թուրքիայի բնակչությունը գրեթե ամբողջովին հանդուրժում է հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանության հարցում ժխտողական քաղաքականությունը: Նույն կերպ հնարավոր է խոսել գերմանացի ժողովրդի կոլեկտիվ պատասխանատվության մասին: Այնուամենայնիվ, վերադառնալով քրեական իրավունքի պատասխանատվության անհատականության սկզբունքին՝ Միջազգային քրեական դատարանը կարող է պատասխանատվության ենթարկել անձին միայն իր կատարած հանրորեն վտանգավոր գործողությունների համար: Համաձայն Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձնական պատասխանատվությունը ինքնաբերաբար չի հանգեցնում միջազգային իրավունքի շրջանակներում պետական պատասխանատվության:

Ինչպես ցանկացած կազմակերպություն, այդպես էլ մարդկանց ցանկացած խմբավորում բաղկացած է տարբեր գործառույթներ իրականացնող անձանցից: Ըստ այդմ՝ հնարավոր է առանձնացնել երեք տեսակի գործառույթ՝ իրականացնող անձանց: Առաջին խմբում ներառված են այն անձինք, որոնք հրամայում կամ կարգադրում են կատարել հանցագործություններ, այլ կերպ ասած՝ «գրասեղանային հանցագործները» (*Schreibtischtäter*), երկրորդ խումբն ընդգրկում է այն անձանց, որոնք մշակում են հրամանը կամ կազմակերպում են հրամանի գործնական կիրառումը: Երրորդ խումբը ներառում է արդեն ծրագիրն անմիջականորեն կատարող անձանց: Հռոմի ստատու-

տի 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են հանցակցության հետևյալ տեսակները.

- որպես կատարող, միանձնյա, համակատարող կամ այլ անձի միջոցով,
- որպես հրամայող, հրահրող, դրող,
- որպես օժանդակող, խրախուսող կամ այլ կերպ աջակցող,
- միասնական նպատակին նպաստող:

### 12.1 Կատարող

Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի ա կետը նախատեսում է հանցագործություն կատարողի երեք տեսակ.

- անմիջական կատարող (*individual perpetrator*), որն անձամբ և անմիջականորեն ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով կատարել է հանրորեն վտանգավոր արարք<sup>159</sup>,

- համակատարող (*co-perpetrator, jointly with another*), որը՝ որպես անմիջական կատարող, այլ անձանց հետ համատեղ կատարել է հանցագործությունը: Ժամանակավոր միջազգային դատարանների ստատուտները հստակորեն չէին սահմանում համակատարմամբ իրականացվող հանցագործությունները, որի պատճառով դատական պրակտիկայի շնորհիվ ձևավորվեց նոր հասկացություն՝ *Joint Criminal Enterprise* (JCE)<sup>160</sup>. Ինչպես ազգային պրակտիկայում, այն-

---

<sup>159</sup> Տե՛ս, օրինակ, ICTY, *Prosecutor v. Tadić*, Trial Chamber, Judgment, 7 May 1997, para 666, ICTY, *Prosecutor v. Kordić, Cerkez*, Trial Chamber, Judgment, 26 February 2001, para. 376, ICTY, *Prosecutor v. Kvočka et al*, Trial Chamber, Judgment, 2 November 2001, para. 251, ICTY, *Prosecutor v. Kunarac et al*, Trial Chamber, Judgment, 22 February 2001, para. 390, ICTR, *Prosecutor v. Gacumbitsi*, Trial Chamber, Judgment, 17 June 2004, para. 284, ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Trial Chamber, Judgment, 7 March 2014, para. 1396, նաև՝ *A. Eser*, in: A. Cassese/P. Gaeta/J. R. Jones, *The Rome Statute of the International Criminal Court: A commentary; Volume 1-2*, 2002, էջ 789, C. Damgaard (note 94), էջ 11-15:

<sup>160</sup> Տե՛ս *W. Schabas*, *The International Criminal Court: A commentary on the Rome Statute*. Oxford, 2016, էջ 570, ICTY, *Prosecutor v. Tadić*, Appeals Chamber, Judgment, 15 July 1999, paras. 185-229:

պէս էլ միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում հանցակցության այս տեսակի դէպքում առաջանում են որոշ խնդիրներ և 2-փոթություններ, որոնք վերաբերում են օժանդակությամբ կատարված հանցագործություններին: Թէև ժամանակավոր դատարանները ձևավորել են JCE հասկացությունը որպէս համակատարման ձև<sup>161</sup>, սակայն Միջազգային քրեական դատարանը կտրականապէս մերժում է այս մոտեցումը<sup>162</sup>: Ընդհանուր տեսանկյունից համակատարողներ են նրանք, ովքեր ընդհանուր գաղափարի և նպատակի համար իրենց անձնական ֆիզիկական ներդրման միջոցով կատարում են հանցանքը<sup>163</sup>: Ըստ այդմ՝ համակատարությունը փոխադարձ համագործակցություն է, որի շրջանակներում յուրաքանչյուրի անհատական ներդրումը կամ, այսպէս ասած, աշխատանքը իրենց համատեղ վերահսկողության տակ գտնվող տարածքում (Joint Control) հանգեցնում է հանցանքի կատարմանը: Արդյունքում ձևավորվում է փոխադարձ պատասխանատվություն<sup>164</sup>: Այսպիսով, Միջազգային քրեական դատարանի համակատարությունը հիմնվում է օբյեկտիվորեն միասնական պլանի (*common plan*)<sup>165</sup> և անհատական էական ներդրման (*essential contribution*)<sup>166</sup> վրա, ընդ որում, միասնական ծրագրի առկայությունը չի պահանջում որևէ գրավոր կամ այլ տեսա-

---

<sup>161</sup> Անդամակցությունը հանցավոր խմբավորմանը հանգեցնում է քրեական պատասխանատվության, ավելի մանրամասն տե՛ս հաջորդ հատվածում:

<sup>162</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Decision on the Confirmation of Charges, 30 September 2008, paras. 480-485. ICC, *Prosecutor v. Banda, Jerbo*, Pre-Trial Chamber, Corrigendum of the Decision on the Confirmation of Charges, 7 March 2011, paras. 126-127:

<sup>163</sup> Տե՛ս K. Ambos (note 127), էջ 176:

<sup>164</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Pre-Trial Chamber, Decision on the Confirmation of Charges, 29 January 2007, paras. 318-326:

<sup>165</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Judgment, 14 March 2012, para. 988:

<sup>166</sup> Տե՛ս նույն տեղը, para. 999, նաև *T. Weigend*, Perpetration through an Organization: The Unexpected Career of a German Legal Concept, *Journal of International Criminal Justice* 9 (2011) էջ 110, *L. D. Yanev*, Theories of Co-Perpetration in International Criminal Law. Boston, 2018, էջ 1-20:



կի համաձայնություն համակատարողների միջև, և միննույն ժամանակ պարտադիր չէ, որ ծրագիրն ուղղված լինի կոնկրետ հանցագործություն իրականացնելուն: Ծրագիրը պետք է հանցագործություն կատարելու մաս կազմի (*element of criminality*)<sup>167</sup>: Ինչ վերաբերում է էական ներդրմանը, ապա հանցանքի առկայությունը պետք է կախված լինի համակատարի ներդրումից: Այսինքն, եթե այդ էական գործողությունը կամ ներդրումը համակատարը չի իրականացրել, ապա հանցանքը բացառվում է: Սուբյեկտիվորեն համակատարությունը պայմանավորված է համակատարի սուբյեկտիվ կողմի հատկանիշների բավարարմամբ, համակատարի միասնական ծրագրի առկայության մասին իմացությամբ և իր կողմից այդ ծրագրի իրականացման համար էական ներդրման գիտակցությամբ:

Կատարողի երրորդ տեսակը այն է, երբ կատարողը այլ անձի օգտագործելու միջոցով է կատարել հանցանքը (*indirect perpetration, through another person*): Միջազգային քրեական իրավունքում լայն տարածում ունեցող հանցակցության այս տեսակը ներառում է անմիջական կատարողի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձի քրեական պատասխանատվությունը, որը հանցանքը կատարելու համար օգտագործել է վերջինիս (*Täter hinter dem Täter*)<sup>168</sup>: Այս հանցակցությունն առաջանում է մասնավորապես ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի պայմաններում, ինչպես նաև հրաման կամ կարգադրություն կատարելու պարագայում<sup>169</sup>: Հանցակցության այս տեսակը ձևավորվել է միջազգային քրեական իրավունքում արդեն Նյուրնբերգում մասնավորապես դատավորների և իրավաբան-

---

<sup>167</sup> St' u A. G. Gil/E. Maculan, Current Trends in the Definition of 'Perpetrator' by the International Criminal Court: From the Decision on the Confirmation of Charges in the Lubanga case to the Katanga judgment, *Leiden Journal of International Law* 28 (2015), էջ 360-370:

<sup>168</sup> Հանցագործը հանցագործի հետևում, Perpetrator behind physical perpetrator:

<sup>169</sup> St' u C. Roxin, *Täterschaft und Tatherrschaft*, 10th ed., 2019, էջ 143-148:

ների գործով<sup>170</sup>: Այնուհետև հանցակցության այս տեսակը կիրառվեց նաև Ադոլֆ Այխմանի գործում<sup>171</sup>: Այսօր Միջազգային քրեական դատարանը ակտիվորեն կիրառում է հանցակցության այս տեսակի տարբեր համակցություններով<sup>172</sup> քրեական հետապնդում: Հանցակցության նշյալ տեսակի կարևոր առանձնահատկություններից է այն, որ անմիջական կատարողի դերը հանցանքի կատարման մեջ այնքան կարևոր չէ, որքան իրեն օգտագործողի: Պրակտիկան ցույց է տալիս, որ անմիջական կատարողը իրեն օգտագործողի կողմից ընտրվում է պատահականորեն, և կարևոր չէ կատարողի ինքնությունը կամ շահագրգռվածությունը: Օգտագործողը օգտվում է միևնույն ժամանակ իրեն լիազորված կազմակերպչական և կառավարչական իրավասություններից, որոնք թույլ են տալիս կառավարել իր ենթակայության տակ կամ վերահսկողության տակ գտնվող անձանց<sup>173</sup>:

## 12.2 *Joint Criminal Enterprise*

Ինչպես արդեն նշվեց վերևում, թեև ժամանակավոր միջազգային քրեական դատարանները ստատուտային հստակության բացակայության պատճառով<sup>174</sup> օգտվեցին իրենց տրված հնարավորությունից՝ ստեղծելու և ձևավորելու հանցակցության նոր տեսակ, այն ենթարկվեց քրեագետների և միջազգայնագետների լայն քննադա-

---

<sup>170</sup> Տե՛ս NMT, *U.S. v. Altstoetter et al*, Judgment, 4 December 1947, para. 954:

<sup>171</sup> Տե՛ս Jerusalem District Court, *Israel v. Eichmann*, Judgment, 12 December 1961:

<sup>172</sup> Օրինակ՝ անուղղակի համակատարություն (*indirect co-perpetration*), տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Decision on the Confirmation of Charges, 30 September 2008, paras. 33-40:

<sup>173</sup> Organisationsherrschaftslehre, տե՛ս *C. Roxin*, Organisationsherrschaft und Tatenschlossenheit, *Zeitschrift für Internationale Strafrechtsdogmatik*. 2006, էջ 293-298, ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Jugement rendu en application de l'article 74 du Statut, TC, 7 March 2014, paras. 1393-1395:

<sup>174</sup> Տե՛ս նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ռուսանդայի միջազգային քրեական դատարանի ստատուտի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

տությանը, որի հետևանքով Միջազգային քրեական դատարանը չընդունեց այս դոկտրինալ մոտեցումը: Այն վերաբերում է կոլեկտիվ պատասխանատվությանը, մասնավորապես նրան, որ խմբի անդամները հավասարապես պատասխանատու են իրենց որևէ անդամի կատարած հանցագործության համար, եթե բոլոր անդամներն առանջնորդվել են միասնական նպատակի սկզբունքով (*common plan, common purpose*): Հանցակցության այս տեսակի հիմքը ինստիտուցիոնալ կամ պարբերական մասնակցությունն է հանցագործություններին: Հիշյալ մոտեցումը սկիզբ է առնում անգլոամերիկյան իրավական համակարգից: Այն ընդգրկվել էր Նյուրնբերգի ստատուտում, որով և Դատարանը կարող էր պատժի ենթարկել այն անձանց, որոնք անդամակցում էին քրեական խմբավորումներին<sup>175</sup>:

Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը, զարգացնելով այս դոկտրինը, տարբերակեց JCE-ի երեք տեսակ՝ JCE-1, JCE-2, JCE-3, որոնք ունեն երեք ընդհանուր հատկանիշ՝ մի խումբ անձանց առկայություն, միասնական նպատակ, մասնակցություն միասնական նպատակին<sup>176</sup>:

- JCE-1, համակատարության (*co-perpetration*) հիման վրա ձևավորված անձանց խմբավորում, որոնք համագործակցում են և առաջնորդվում են միասնական ծրագրի շրջանակներում՝ միասնական դիտավորությամբ և նպատակով (*shared intent*)<sup>177</sup>:

---

<sup>175</sup> Տե՛ս *C. Tomuschat*, *The Legacy of Nuremberg*, *Journal of International Criminal Justice* 4 (2006), էջ 840-841:

<sup>176</sup> Տե՛ս *K. Ambos*, *Joint Criminal Enterprise and Command Responsibility*, *Journal of International Criminal Justice* 5 (2005) էջ 160-174, *R. Cryer/H. Friman/D. Robinson/E. Wilmshurst*, *An introduction to international criminal law and procedure*, 2nd ed. Cambridge, 2010, էջ 372-374:

<sup>177</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Sainovic et al*, Trial Chamber, Judgment, 26 February 2009, para. 108, ICTY, *Prosecutor v. Dordevic*, Trial Chamber, Judgment, 23 February 2011, para. 1816, ICTR, *Prosecutor v. Renzaho*, Trial Chamber, Judgment, 14 July 2009, para. 741, տես նաև ICTY, *Prosecutor v. Milosevic*, Trial

- JCE-2, համակենտրոնացման ճամբարների շուրջ ձևավորված համագործակցություն: Այս տիպի համագործակցությունը սահմանափակվում է համակենտրոնացման ճամբարների գործունեությամբ և այնտեղ առկա հիերարխիկ ու ինստիտուցիոնալ համակարգով: Սուբյեկտիվ տեսանկյունից այս համագործակցության շուրջ համախմբված անձինք պետք է գիտակցեն համակենտրոնացման ճամբարի գոյությունը և իրենց անմիջական մասնակցությունը այդ ճամբարի գործունեությանը<sup>178</sup>:
- JCE-3, հանցակցության այս տեսակի ամենաբարդ մոդելն է, որը պարունակում է այնպիսի հանցագործություններ, որոնք դուրս են գալիս միասնական ծրագրի շրջանակներից: Երկար վերլուծություններից հետո Կամբոջայի տրիբունալը մերժեց կիրառել այս դոկտրինը պրակտիկայում<sup>179</sup>:

Թեև Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետը հիշատակում է միասնական նպատակին նպաստելը, այնուամենայնիվ Միջազգային քրեական դատարանը կտրականապես մերժում է JCE-ի դոկտրինի պրակտիկ դատական կիրառումը՝ ելնելով այն սկզբունքից, որ յուրաքանչյուր անձի մեղքը պետք է ստուգվի անհատապես:

### 12.3 Հրամայող, հրահրող, դրող

Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի բ կետը սահմանում է երեք տեսակի հանցագործության կատարման հեռավար մասնակցություն:

Chamber, Decision on Motion for Judgment of Acquittal, Trial Chamber, 16 June 2004, paras. 143-150:

<sup>178</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Kvočka et al*, Appeals Chamber, Judgment, 28 February 2005, para. 117, ICTY, *Prosecutor v. Vasiljevic*, Appeals Chamber, 25 February 2004, paras. 94-100, ICTR, *Prosecutor v. Gacumbitsi*, Appeals Chamber, Judgment, 7 July 2006, paras. 158-165, ECCC, *Case of Kaing Guek Eav*, Trial Chamber, Judgment, 26 July 2010, paras. 507-515:

<sup>179</sup> Տե՛ս ECCC, *Case of Kaing Guek Eav*, Trial Chamber, Decision, 10 May 2010, paras. 51-89:

Հրամայող (*ordering*), որը պետք է գտնվի ինստիտուցիոնալ այնպիսի համակարգում<sup>180</sup>, որտեղ հրամայողը գիտակցի, որ իր հրամանը պետք է կատարվի<sup>181</sup>: Մինչդեռ ժամանակ հրաման տվողի հանցավորությունը պարզելու համար հրամայողը պետք է բավարարի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված դրույթներին: Այսինքն՝ պետք է գիտակցի և ցանկանա իր հրամանի կատարման հետևանքների առաջացումը: Սակայն պրակտիկայում դժվարություններ են ծագում որոշելու սահմանը հրամայողի և այն կատարողի միջև, որը հանցանք է գործել այլ անձի միջոցով: Միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում պարբերաբար շփոթություն են առաջանում Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի բ կետի և նույն ստատուտի 28-րդ հոդվածով նախատեսված վերադասի պատասխանատվության դրույթի միջև: Խնդիրն այն է, որ երկու պարագայում էլ խոսքը վերադասի պատասխանատվության մասին է, սակայն 25-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն վերադասի ակտիվ գործողության, այսինքն՝ հրաման կատարելու համար, մինչդեռ 28-րդ հոդվածը նախատեսում է վերադասի պատասխանատվություն վերջինիս անգործության, այսինքն՝ պասիվ վարքագծի համար, երբ վերջինս չի ձեռնարկել գործողություններ՝ կանխելու կամ պատժելու ենթակաների կողմից կատարված հանցագործությունները:

Հռոմի ստատուտը հեռավար մասնակցության երկրորդ տեսակ է դիտարկում հրահրելը (*soliciting*): Միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում սա հանցակցության լայն տարածում ունեցող տեսակ է, քանի որ սրանով հնարավոր է հոգեբանորեն ազդել անհայտ թվով մարդկանց վրա՝ խրախուսելով և քաջալերելով նրանց

---

<sup>180</sup> St´u ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 483, ICTY, *Prosecutor v. Krstic*, Trial Chamber, Judgment, 2 August 2001, para. 60, ICTY, *Prosecutor v. Stakic*, Trial Chamber, Judgment, 31 July 2003, para. 445:

<sup>181</sup> St´u ICC, *Prosecutor v. Mudacumura*, Pre-Trial Chamber, Decision on the Prosecutor’s Application under Article 58, 13 July 2012, paras. 63-65:

կատարելու հանցագործություններ<sup>182</sup>: Եթե հրահրողը բարձրանա բեմահարթակ կամ բարձրախոսով կոչ անի հավաքվածներին կատարելու հանցագործություններ<sup>183</sup>, ապա կարող է ենթարկվել քրեական հետապնդման Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի հիման վրա: Հռոմի ստատուտը հեռավար մասնակցության հաջորդ տեսակ է դիտարկում դրդելը (*induce*), որը տարբերվում է հրահրելուց այն բանով, որ ուղղված է որևէ անձի կամ հայտնի թվով մարդկանց խմբի, և որով դրդման հասցեատերը հայտնի է<sup>184</sup>:

#### 12.4 Օժանդակող, խրախուսող, այլ կերպ աջակցող

Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ գ կետը քրեական պատասխանատվություն է սահմանում այն անձանց համար, որոնք այս կամ այն կերպ օժանդակել են հանցագործությունների կատարմանը: Այսպիսով, օժանդակողի և խրախուսողի միջև տարբերությունն այն է, որ օժանդակողը ֆիզիկապես և նյութապես օժանդակել է հանցագործությունը կատարելուն, միննույն ժամանակ դա արել է սույն ստատուտի 30-րդ հոդվածի հատկանիշների պահանջները բավարարելով: Խրախուսողի պարագայում անհրաժեշտ է հանցագործության հոգեբանական և բարոյական աջակցությունը<sup>185</sup>: Սակայն այդ աջակցության ազդեցությունը հանցագործության վրա այնքան էական պետք է լինի (*substantial effect*), որ առանց դրա հնարավոր չլինի հանցագործություն կատարել<sup>186</sup>: Հաջորդ կարևոր հատկանիշն

---

<sup>182</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 482:

<sup>183</sup> Բավարարելով Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի պահանջները:

<sup>184</sup> Տե՛ս *K. Bowman*, in: M. Klamberg, *Commentary on the Law of the International Criminal Court*, 2017, հոդված 25:

<sup>185</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Appeals Chamber, Judgment, 15 July 1999, para 229:

<sup>186</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Trial Chamber, Judgment, 7 May 1997, para 688, ICTY, *Prosecutor v. Mucić et al.*, Appeals Chamber, Judgment, 20 February 2001, para. 352:

այն է, որ օժանդակիչ գործոնը պետք է ուղղված լիներ հիմնական հանցագործության կատարմանը (*specific direction*)<sup>187</sup>:

Պրակտիկայում հատկապես մասնավոր հատվածի ներկայացուցիչները պարբերաբեր ուշադրության կենտրոնում են հայտնվում միջազգային հանցագործությունների կատարմանը այս կամ այն կերպ ակտիվորեն օժանդակելու համար: Այն կարող է ներառել ինչպես զենքի, այնպես էլ բնամթերքի, տեխնիկայի, այլ տիպի պարեն մատակարարելը և զինելը, քարոզչական թուուցիկներ բաժանելը, մեղիայով և հեռուստատեսությամբ խրախուսելը և այլն:

### 12.5 Միասնական նպատակին նպաստող

Թեև այս տեսակի մասնակցությունը հանցագործությանը նման է JCE-ին, այնուհանդերձ տարբերվում է այն բանով, որ նպաստողը պետք է որևէ գործողություն կատարած լինի միասնական ծրագրի համար: Այստեղ արդեն նշանակություն չունի, թե ինչպիսի գործողություն է կատարել նպաստողը: Այնպիսի հատկանիշներ, որոնք նախատեսված են 25-րդ հոդվածի բ և գ կետերում (էական ազդեցություն կամ նպատակաուղղվածություն կոնկրետ հանցագործություն կատարելու մեջ), այդ պարագայում անհրաժեշտ չեն: Նպաստողը պետք է որևէ գործողություն կատարի ի նպաստ ծրագրի իրականացման՝ բավարարելով ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված պահանջները: Սակայն Միջազգային քրեական դատարանը եզրահանգեց, որ նման աջակցությունը պետք է պարունակի որոշ չա-

---

<sup>187</sup> See *u K. Ambos*, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016 էջ 1005-1008, *C. Plomp*, Aiding and Abetting: The Responsibility of Business Leaders under the Rome Statute of the International Criminal Court, *Utrecht Journal of International and European Law* 30 (2014), էջ 15-25:

փանիշներ և չի կարող դիտարկվել լայն իմաստով, ուստի սահմանեց, որ նպաստելը պետք է լինի ինչ-որ չափով էական<sup>188</sup>:

### 13. Վերադասի պատասխանատվություն

Ավելի քան ակնհայտ է, որ Միջազգային տրիբունալների հիմնական նպատակն է բարձրաստիճան հանցագործներին հետապնդելը՝ քաղաքական ճնշում գործադրելու և անմիջականորեն ստորին աստիճանի հանցագործների քրեական հետապնդման ճանապարհ բացելու համար: Բարձրաստիճան մեղադրյալները հիմնականում հանցագործությունների ռազմավարությունը ծրագրողներն են և շատ հեռու են հանցագործությունների փաստացի կատարման վայրից, ինչը որոշ դեպքերում դժվարացնում է քրեական հետապնդումը<sup>189</sup>: Եթե նախորդ գլխում հիշատակված անձնական պատասխանատվության տեսակներից ոչ մեկը չի հաստատվել հանցագործության առնչությամբ, կարող է առաջանալ վերադասի պատասխանատվության դոկտրինը: Հետևաբար վերադասի պատասխանատվությունը արդյունավետ միջոց է կազմակերպչական կառույցներում բարձր պաշտոն զբաղեցնող անձանց պատասխանատվությունը պարզելու համար (այսինքն՝ այն անձանց, որոնք առանձնահատուկ հետաքրքրում են միջազգային տրիբունալներին): Միջազգային քրեական իրավունքի տեսության համաձայն՝ վերադասի պատասխանատվությունը սահմանելու համար նախ և առաջ պետք է պարզել մեղադրյալի համակարգի հիերարխիկ վերադասությունը և ենթակայությունը: Ավելին, պետք է պարզվի՝ արդյոք մեղադրյալի պարտականությունն էր կանխել, հայտնել և պատժել ենթակայի կատարած գործողությունները: Միևնույն ժամանակ պետք է հաստատ-

---

<sup>188</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Mbarushimana*, Pre-Trial Chamber, Decision on the Confirmation of Charges, 16 December 2011, para. 284-285:

<sup>189</sup> Schreibtschätter, գրասեղանի հանցագործներ ընդունված է անվանել այն պաշտոնատար անձանց, որոնք հրամաններ և հանձնարարականներ են տալիս հանցագործություններ կատարելու համար:



վեն վերադասի անգործությունը և ենթակաների հանցավոր պահվածքը: Վերջապես անհրաժեշտ է ապացուցել, որ վերադասը ակնհայտորեն տեղյակ էր իր ենթակաների նախատեսած կամ կատարած հանցավոր պահվածքի մասին<sup>190</sup>:

### 13.1 Հիերարխիա

Յուրաքանչյուր համակարգ, անկախ նրանից՝ մասնավոր ընկերություն է, ռազմական կամ ռազմականացված խմբավորում, թե կառավարական և պետական կառույց, ունի կազմակերպված հիերարխիկ համակարգ, որը ենթադրում է վերադաս ղեկավարի, գործադիր մարմինների և ենթակաների առկայություն: Կառույցի ղեկավարն ըստ օրենքի (*de jure*) կամ փաստացիորեն (*de facto*) պարտավոր է վերահսկել իր ենթակաների գործողությունները: Համաձայն Ժնևյան կոնվենցիաների 1977-ի Լրացուցիչ I-ին արձանագրության 43-րդ հոդվածի՝ հակամարտության կողմի զինված ուժերը բաղկացած են բոլոր կազմակերպված խմբավորումներից և ստորաբաժանումներից, որոնք գտնվում են այդ կողմի վերադաս պատասխանատվության ներքո<sup>191</sup>:

Դե ֆակտո հիերարխիկ ենթակայությունը որոշելը շատ ավելի դժվար է, քան այն դեպքերում, երբ կառույցի ենթակայությունն օրինականորեն սահմանված է: Կենտրոնացված կազմակերպչական

---

<sup>190</sup> St' u H. Satzger, Internationales und Europäisches Strafrecht: Strafanwendungsrecht, europäisches Straf- und Strafverfahrensrecht, Völkerstrafrecht, 7th ed. Baden-Baden, 2016, էջ 289:

<sup>191</sup> Այն կամավորական կորպուսները, որոնք չեն կարող բնորոշվել որպես կանոնավոր բանակ կամ բանակի մի մաս, որպեսզի դիտարկվեն Ժնևյան կոնվենցիայով, պարտավոր են ապահովել հետևյալ պայմանները. պետք է գործի վերադաս-ենթակա կառուցվածք, ճանաչելի լինեն հեռավորության վրա իրենց տարբերանշանով և կրեն զենք, բացահայտ իրականացնեն իրենց գործողությունները՝ պատերազմ վարելու սովորույթներին համապատասխան, ավելի մանրամասն տե՛ս Yves Sandoz, Christophe Swinarski, Bruno Zimmermann, Commentary on the Additional Protocols of June 8 1977 to the Geneva Conventions of 12 August 1949. Geneva, 1987, էջ 1008:

շրջանակների բացակայության պատճառով Ռուանդայի գործերով դատախազի գլխավոր խնդիրն էր հանցագործների և հրամանատարների միջև դե յուրե և դե ֆակտո փոխհարաբերություններ հաստատելը: Տրիբունալը Մուչիչի և այլոց գործով որոշել էր<sup>192</sup>, որ դե ֆակտո կառույցը վերադասության իր հատկանիշներով համարժեք է դե յուրե գործող կառույցին: Միևնույն ժամանակ նույնիսկ եթե հիերարխիկ ենթակայությունը իրավաբանորեն հստակ կամ դե ֆակտո որոշված է, այն դեռ բավարար չէ վերադասի պատասխանատվությունը սահմանելու համար<sup>193</sup>: Դե յուրե կամ դե ֆակտո վերադասը կամ հրամանատարը արդյունավետ վերահսկողություն պետք է իրականացնի իր ենթակաների նկատմամբ: Մուչիչի և այլոց գործի դեպքում Դատարանը սահմանեց վերադասի վերահսկողության տակ գտնվող տարածքներում վերահսկողության այնպիսի եղանակներ, ինչպիսիք են գործառական, մարտավարական, վարչական և գործադիր վերահսկողական լիազորությունները<sup>194</sup>: Սույն գործով Դատարանը պարզեց, որ չկա որևէ իրավական ակտ, որը դե յուրե վերադասի կարգավիճակ տար որևէ անձի Čelebići համակենտրոնացման ճամբարում, որտեղ ձերբակալվածները դաժանորեն խոշտանգվում, սպանվում և բռնաբարվում էին: Հետևաբար, բավական դժվար էր գտնել իրական վերադասին, որը պատասխանատու կլիներ Čelebići ճամբարում կատարված վայրագությունների համար: Դելալիչը, որը Կոնցիչի պաշտպանական ուժերի համակարգողն էր,

---

<sup>192</sup> Sté u ICTY, *Prosecutor v Mucić et al*, Appeals Chamber, Judgment, 20 February 2001, para. 188:

<sup>193</sup> Sté u ICTY, *Prosecutor v Hadžihasanović & Kubura*, Appeals Chamber, Judgment, 22 April 2008, paras. 20-22, այլ հատկանիշներ ևս պետք է հաշվի առնվեն:

<sup>194</sup> Հրամանատարության պատասխանատվությունը չի կարող սահմանվել, եթե հանցագործությունը կատարվել է նախքան հրամանատարի կողմից ենթակաների հրամանատարությունը ստանձնելը, տե՛ս u ICTY, *Prosecutor v. Hadžihasanović & Kubura*, Appeals Chamber Decision on Command Responsibility, 16 July 2003, para. 51, ICC, *Prosecutor v Bemba*, Trial Chamber, Judgment, 21 March 2016, paras. 184-188:

մեղադրվում էր Čelebići ճամբարի վերադասի վրա ազդեցություն ունենալու համար, բայց Դատարանը նրան մեղավոր չճանաչեց ճամբարի նկատմամբ բավարար հրամանատարության և վերահսկողության բացակայության պատճառով: Սակայն, մյուս կողմից, ապացուցվեց, որ Մուչիչը, որը բանտային ճամբարի դե ֆակտո հրամանատարն էր, չի կարողացել կանխել միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, հատկապես ճամբարում տեղի ունեցած բռնաբարությունները<sup>195</sup>:

Վերադասի պատասխանատվության դոկտրինի պրակտիկ կիրառումը բարդանում է քաղաքացիական վերադաս-ենթակայության կառուցվածքի պատճառով: Ակնհայտ է, որ օրենքով սահմանված համակարգերը, կառույցները ավելի լավ են կազմակերպված, քան քաղաքացիական ինքնակառավարման նախաձեռնությունները: Ըստ այդմ՝ ռազմական կամ պետական կառավարման վրա հիմնված հիերարխիկ համակարգերում վերադասի նույնականացումը շատ ավելի հեշտ է, քան մասնավոր հատվածում<sup>196</sup>: Նույնիսկ եթե հնարավոր է նույնականացնել ինքնակազմակերպված կամ քաղաքացիական որևէ խմբավորման վերադասին, դեռևս անհրաժեշտ է պարզել, թե որքանով է արդյունավետ նրա վերահսկողությունը, և թե ինչպիսի ազդեցություն է ունեցել և վերահսկողություն իրականացրել նա իր ենթակաների նկատմամբ<sup>197</sup>:

### 13.2 Իմացությունը

Վերադասի պատասխանատվությունը սահմանելու համար անհրաժեշտ է պարզել սուբյեկտիվ կողմը, այն է՝ վերադասի փաստացի իմանալը կամ իմանալու համար հիմքեր ունենալը, կամ այն, որ պետք է իմանար (անփութություն) իր ենթակաների կողմից

---

<sup>195</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Mucić et al*, Trial Chamber, Judgment, 16 November 1998, para. 349:

<sup>196</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Musema*, Trial Chamber, Judgment, 27 January 2000, para. 919:

<sup>197</sup> Տե՛ս G. Petrossian (note 67), էջ 136:

ծրագրված կամ կատարված հանցագործության մասին<sup>198</sup>: Ըստ այդմ՝ վերադասի տեղեկացվածությունը կարող է վերաբերել ժամանակային երեք հատվածների՝ հանցագործությունը կատարվելուց առաջ, հանցագործությունը կատարվելու ընթացքում և հանցագործությունը կատարվելուց հետո: Յուրաքանչյուր ժամանակահատվածում վերադասը պարտավոր է գործել այն պահից, երբ իրազեկվում է կամ իրապես տեղեկություն ունի նախատեսված կամ կատարված հանցագործությունների մասին: Փաստացի տեղեկացված լինելը չի պարտադրում, որ ձեռք բերվեն այդ հանցագործությունների վերաբերյալ ապացույցներ. հարկավոր է պարզապես իմանալ դրանց կատարման մասին<sup>199</sup>: Այնուամենայնիվ, նույնիսկ այն ժամանակ, երբ հանցագործությունները դեռևս չեն կատարվել, բայց վերադասին հայտնի են այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են կատարողների հանցավոր անցյալը, սեռական վարքը կամ հետագա փաստական կարևոր հանգամանքները<sup>200</sup>, հնարավոր է խոսել վերադասի պատասխանատվության մասին նրա անփութության առումով<sup>201</sup>: Բազիլիշենայի գործով Վերաքննիչ պալատը գտավ, որ «պատճառ ուներ իմանալու» չափանիշը չի պահանջում մեղադրյալի իրական գիտելիքներ այն հանցագործությունների մասին, որոնք կատարվել կամ կատարվում են կամ կատարվելու են, այլ պահանջում է, որ մեղադրյալը ընդհա-

---

<sup>198</sup> Տե՛ս *C. Meloni*, in: Triestino Mariniello, International criminal court in search of its purpose and identity, 2016, էջ 4:

<sup>199</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Judgment, 21 March 2016, para. 191:

<sup>200</sup> Օրինակ, եթե ենթակաները զինուցած են:

<sup>201</sup> Տե՛ս *B. J. Moloto*, Command Responsibility in International Criminal Tribunals, BJIL 3 (2009), էջ 18, ICTY, *Prosecutor v. Strugar*, Appeals Chamber, Judgment, 17 July 2008, paras. 303-304:

նուր տեղեկություններ ունենա իր ենթակաների ապօրինի վարքագծի և ակնհայտ ապօրինի գործողությունների մասին<sup>202</sup>:

### 13.3 Պարտականությունները

Յուրաքանչյուր վերադաս պարտավոր է հնարավոր բոլոր ողջամիտ և անհրաժեշտ միջոցները ձեռնարկել իր ենթակաների վարքագիծը վերահսկելու համար: Ժնևյան կոնվենցիաների հավելյալ արձանագրության 87-րդ հոդվածի համապատասխան՝ վերադասի հիմնական պարտականություններն են իր հրամանատարության ներքո կատարված հանցագործությունը կանխարգելելը, ճնշելը և այդ մասին հայտնելը: Նման վերահսկողությունը պարտադրում է ենթականերին տեղեկացված լինել ընդհարման ընթացքում Ժնևյան կոնվենցիայում նշված իրենց պարտականությունների վերաբերյալ:

Հակաօրինական վարքագծի մասին որևէ տեղեկություն ստանալուն կամ հիմնավոր կասկած ունենալուն պես վերադասը պարտավոր է ակտիվ գործողություններ իրականացնել հանցագործությունը կանխելու ուղղությամբ: Սակայն մինչ հնարավոր կլինի արձանագրել վերադասի բացթողումը, անհրաժեշտ է պարզել՝ արդյոք հանցագործությունների վերաբերյալ նյութերը ժամանակին հայտնի են եղել նրան, թե ոչ: Միևնույն ժամանակ վերադասը պետք է հաշվի առնի իր տրամադրության տակ գտնվողների յուրաքանչյուր հնարավոր քայլ:

Ինչպես որոշվել էր Բեմբայի գործով, հրամանատարներին թույլատրվում է կատարել վերլուծություն այն մասին, թե որ միջոցները պետք է ձեռնարկվեն ենթակաների արարքները ճնշելու համար: Միայն այն փաստը կամ գործողությունների ցանկը, որ հրամանատարը կարող էր կամ ի վիճակի էր գործադրել ենթակաների հանցագործությունները կանխելու համար, դեռ միանշանակ չի արձանագ-

---

<sup>202</sup> See *ICTR, Prosecutor v Bagilishema, Appeals Chamber, Judgment, 3 July 2002, paras. 28, 42, B. Goy/M. Jarvis/G. Pinzauti*, in: S. Brammertz/M. J. Jarvis, *Prosecuting conflict-related sexual violence at the ICTY*, 2016, էջ 244:

րում, որ հրամանատարը ողջամիտ չի գործել<sup>203</sup>։ Վերադասը պարտավոր է ըստ ժամանակագրական պահի թելադրման կատարել իր պարտականությունները՝ ենթակաների հանցագործությունները կանխելու համար։ Այդ պարտականությունները երեքն են՝ կանխարգելում՝ հանցագործությունից առաջ, ճնշում՝ հանցագործության պահին, պատժում՝ հանցագործությունից հետո։

*Կանխարգելում*։ Վերադասի պարտականությունն է վերահսկել ենթականերին և նրանց գործողությունները՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելով՝ հանցագործությունների կատարումից խուսափելու համար, որոնք ծրագրվել, կազմակերպվել և ձեռնարկվել են իր ենթակաների կողմից։ Վերադասը պետք է միջամտի այն ժամանակ, երբ տեղեկացվի հանցագործության նախապատրաստման մասին և շարունակի միջամտել այնքան ժամանակ, քանի դեռ ունի արդյունավետ ունակություն և վերահսկողություն՝ թույլ չտալու, որ հանցագործությունները տեղի ունենան կամ շարունակվեն<sup>204</sup>։ Աքայեսուի գործով նշվեց, որ Ռուանդայում քաղաքում տեղի ունեցող զանգվածային բռնաբարությունների ժամանակ քաղաքապետ Աքայեսուի ներկայությունը խրախուսում էր ենթականերին շարունակելու իրենց գործողությունները։ Ավելին, նա ոչինչ չէր ձեռնարկել հանցագործությունների ծավալումը դադարեցնելու համար<sup>205</sup>։ Վերադասը պատասխանատվություն է կրում իր ենթակաների կողմից կատարված արարքների համար առանց վերադասի հանցավոր մտադրությունը ապացուցելու անհրաժեշտության<sup>206</sup>։ Այս մոտեցումը հաստատվեց Տոկիոյի դատավարության փորձի հիման վրա։ Ճապոնիայի նախկին արտաքին գործերի նախարար Հիրոտա Կոկիյի դատա-

---

<sup>203</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Appals Chamber, Judgment, 8 June 2018, paras. 169-170:

<sup>204</sup> Տե՛ս SCSL, *Prosecutor v. Brima et al*, Trial Chamber, Judgment, 20 June 2007, para. 798:

<sup>205</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 488:

<sup>206</sup> Տե՛ս G. Petrossian (note 67), էջ 138:

պարտվել էր Նանկին քաղաքում զանգվածային բռնաբարությունները չկանխելու համար<sup>207</sup>:

*Ճնշում:* Եթե հանցագործությունը տեղի է ունենում, ապա վերադասը պարտավոր է ճնշել իր ենթակաների կողմից հանցանք կատարելը: Ավելին, վերադասը պետք է միջոցներ ձեռնարկի հանցագործին կարգապահական տույժի ենթարկելու համար: Եթե դրա համար արդյունավետ միջոցներ չկան, վերադասը պետք է պատկան մարմիններին տեղեկացնի իր ենթակաների կողմից կատարված հանցագործությունների մասին:

*Պատժում:* Վերը նշվածը վերադասի երրորդ պարտականությունն է՝ գործը ներկայացնել իրավասու մարմիններին կամ քայլեր ձեռնարկել, որպեսզի մեղավորները ենթարկվեն պատասխանատվության:

#### 13.4 Պատճառահետևանքային կապ

Վերաքննիչ պալատը Բլաշկիչի գործով նշել է, որ վերադասի կողմից բացթողման և հանցագործության միջև պատճառահետևանքային կապը վերադասի պատասխանատվության համար հիմնական տարր չէ<sup>208</sup>: Ժամանակավոր դատարանների կանոնադրությունները չեն ամրագրում վերադասի պատասխանատվության դոկտրինում պատճառահետևանքային կապի անհրաժեշտ լինելը: Ի տարբերություն դրանց՝ Միջազգային քրեական դատարանի դատական պրակտիկան վկայակոչում է պատճառահետևանքային կապի էական նշանակությունն այն իմաստով, որ վերադասի կողմից անհապաղ միջոցներ ձեռնարկվելու պարագայում ենթակաները հանցա-

---

<sup>207</sup> Տե՛ս *S. Darcy*, Collective responsibility and accountability under international law. Ardsley, N.Y., 2007 էջ 313:

<sup>208</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Blaškić*, Appeals Chamber, Judgment, 29 July 2005, para 76, տե՛ս նաև *R. Cryer/D. Robinson/S. Vasiliev*, An introduction to international criminal law and procedure. Cambridge, United Kingdom, 2019, էջ 376-377:

գործություններ չէին կատարի<sup>209</sup>: Մակայն այս հարցի առնչությամբ ևս Միջազգային քրեական դատարանի դատավորները վերաքննիչատյանում չկարողացան հստակ պատասխանել՝ պատճառահետևանքային կապն արդո՞ք անհրաժեշտ տարր է վերադասի պատասխանատվությունը հաստատելու համար, թե՞ ոչ<sup>210</sup>:

#### **14. Հանցափորձ և կամովին հրաժարում**

Թեև միջազգային քրեական իրավունքում այս երկու հասկացությունները պրակտիկ առումով բավականաչափ ուշադրության չեն արժանանում, սակայն Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի գ կետը առանձնացնում է դրանք:

##### *14.1 Հանցափորձ*

Ինչպես ազգային օրենքում, հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն էական գործողությունը (essential step), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով<sup>211</sup>:

##### *14.2 Կամովին հրաժարում*

Նույն դրույթի երկրորդ նախադասությունը փաստում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

---

<sup>209</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Judgment 21 March 2016, para. 213:

<sup>210</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Appeals Chamber, Judgment, 8 June 2018, separate opinions:

<sup>211</sup> Տե՛ս K. Ambos (note 127), էջ 211, C. Safferling (note 2), էջ 147:



### ԲԱԺԻՆ III

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

### ԳԼՈՒԽ 6

### ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*For the purpose of this Statute, "genocide" means any of the following acts committed with intent to destroy, in whole or in part, a national, ethnical, racial or religious group, as such:*

- (a) Killing members of the group;*
- (b) Causing serious bodily or mental harm to members of the group;*
- (c) Deliberately inflicting on the group conditions of life calculated to bring about its physical destruction in whole or in part;*
- (d) Imposing measures intended to prevent births within the group;*
- (e) Forcibly transferring children of the group to another group.*

### 15. Ընդհանուր դրույթներ

Ցեղասպանության հանցագործությունը համեմատաբար նոր հասկացություն է միջազգային և միջազգային քրեական օրենսդրության մեջ: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Միացյալ Թագավորության վարչապետ Ուինսթոն Չերչիլը մատնանշեց նացիստական Գերմանիայի գործողությունները և հատկապես SS Einsatzgruppen-ի անդամների գործողությունները Խորհրդային Միության գրավյալ տարածքներում որպես «*հանցագործություն անանց անվանման*»<sup>212</sup>: Այսպես ասած՝ նոր ոճրագործության հասկացությունը մշակել է փաստաբան Ռաֆայել Լեմկինը իր հեղինակած

---

<sup>212</sup> Տե՛ս *L. Kuper, Genocide: Its political use in the twentieth century*. New Haven, 1982, էջ 12:

աշխատությունում (1944 թ.)<sup>213</sup>: Թեև նա բազմիցս փորձ է արել Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալում օգտագործելու նոր սահմանումը որպես մեղադրանք նացիստական Գերմանիայի նախկին առաջնորդներին (1945-1946), սակայն այդ մոտեցմանը և նոր սահմանման կիրառմանը այդ ժամանակվա պահպանողական փաստաբանները բավականին թերահավատ էին վերաբերվում: Այնուամենայնիվ, «ցեղասպանություն» բառն առաջին անգամ կիրառվեց *SS-Einsatzgruppen-ի* (1947-1948) անդամների նկատմամբ Նյուրնբերգի դատավարությունների դատավճռում՝ առանց որևէ իրավական հիմնավորման: Սակայն նույն դատավճռում առանձնացվել էր այն փաստը, որ հնարավոր չէ ցեղասպանությունը հայրենիքի պաշտպանությամբ արդարացնել<sup>214</sup>: Այնուհետև Լեմկինին հաջողվեց Լատինական Ամերիկայի պետությունների օգնությամբ կրկին ուշադրություն գրավել միջազգային հարթակում: Արդեն 1946 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց 96 (I) բանաձևը, որում շեշտադրվում էր, որ շատ դեպքերում ցեղասպանության հանցագործությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ռասայական, կրոնական, քաղաքական և այլ խմբերը ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացվում էին<sup>215</sup>: Բանաձևը նախատեսում էր ստեղծել նախապատրաստական հանձնաժողով՝ ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիա մշակելու համար: «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի քսան անդամ պետությունների կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ի 260 (III) բանաձևով<sup>216</sup>: Ցեղասպանության կոնվենցիան ուժի մեջ է մտել 1951 թ. հունվարի 12-ին՝

<sup>213</sup> Տե՛ս R. Lemkin (note 40), էջ 79:

<sup>214</sup> Տե՛ս *The United States of America v. Otto Ohlendorf et al.* (Judgment) Trials of War Criminals Before the Nuremberg Military Tribunals under Control Council Law N. 10 (Einsatzgruppen Case), Vol. IV/1, 10 April 1948, paras. 449-469:

<sup>215</sup> Տե՛ս UNGA Res 96(I) (11 December 1946):

<sup>216</sup> Հետագայում 41 անդամ պետություններ, UNGA Res 260 (III) (9 December 1948):

վերոնշյալ կոնվենցիայի XIII հոդվածի համաձայն: Մինչև 2019 թ. դեկտեմբերը 151 պետություն վավերացրել է կոնվենցիան<sup>217</sup>: Քանի որ կոնվենցիայի նորմերը դարձել են միջազգայնորեն ճանաչված, ցեղասպանության արգելումը դարձել է պարտադիր նորմերի մաս (*jus cogens* նորմ)<sup>218</sup>: Հռոմի ստատուտում ներառվելուց առաջ ցեղասպանության հանցագործությունը կոդիֆիկացվել է նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանի և Ռուանդայի միջազգային քրեական դատարանի կանոնադրություններում: Ժամանակավոր դատարանները առաջին գործիքներն էին, որոնք գործի դրեցին ցեղասպանության կոնվենցիայի դրույթները: 1998 թ. հուլիսի 17-ից ցեղասպանության հանցագործությունը Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի մաս է և լիովին կրկնում է նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանի կանոնադրության 4-րդ հոդվածի 2-րդ մասը և Ռուանդայի միջազգային քրեական դատարանի կանոնադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի II հոդվածը: Կարևոր է նշել, որ ցեղասպանության հանցագործությունը, բացի նրանից, որ հաճախ է օգտագործվում քաղաքական երկխոսություններում, իրավական տեսանկյունից ենթադրում է ոչ միայն անհատական քրեական պատասխանատվություն, այլև պետական պատասխանատվություն:

«Գենոցիդ» հասկացությունը հունարեն և լատիներեն բառերի լեզվական խառնուրդ է՝ բաղկացած «ցեղ» և «սպանություն» արմատներից: Թեև «գենոցիդ» բառը միջազգային եզրույթ է, այն թարգմանվել է ոչ բոլոր լեզուներով: Այսպես, գերմաներեն այն հնչում է «*Völkermord*», թուրքերեն՝ «*soykirim*», հայերեն՝ «ցեղասպանություն»,

---

<sup>217</sup> Նոր անդամ պետություններ են Թուրքմենստանը՝ 2018 թ. դեկտեմբերի 26-ից, և Դոմինիկյան Հանրապետությունը՝ 2019 թ. մայիսից:

<sup>218</sup> Տե՛ս ICJ, *Barcelona Traction Case*, Judgment, 5 February 1970, para. 34, *C. J. Tams*, *Enforcing obligations erga omnes in international law*. Cambridge, 2005, էջ 74:

լեհերեն՝ «*Ludobójstwo*», եբրայերեն՝ «*מזרח*», *rettsach am*) և այլն: Կարևոր է հիշատակել, որ զանգվածային ոչնչացում վերապրած ժողովուրդներն իրենց անվանումներն են մշակել այդ իրադարձությունները նկարագրելու համար: Օրինակ՝ հայ ժողովուրդը Հայոց ցեղասպանությունն անվանում է Եղեռն, արամեական, ասորական ժողովուրդը Օսմանյան կայսրությունում վերապրած կոտորածները հիշում է որպես «Զայֆո», թարգմանաբար՝ սրի տարեթիվ, Պոնտոսի հույները՝ «Հերիսիմոս», թարգմանաբար՝ «արմատախիլ անել», հրեաները՝ «Շոա», թարգմանաբար՝ «աղետ», գնչուները՝ «Պոռյամոս»: Այս անվանումները թույլ են տալիս հասկանալ, որ ներյուլեզվաբանության մեջ կործանարար բնույթի իրադարձությունների անվանումները հայտնի էին նույնիսկ նախքան «գենոցիդի» միջազգային ճանաչումը:

Ինչպես արդեն նշվել է, միջազգային հանցագործությունները, այդ թվում՝ ցեղասպանությունը, ինքնաբուխ և հանկարծակի, անփութության կամ անգործության հետևանքով տեղի չեն ունենում: Ցեղասպանությունը տարատեսակ գործողությունների համալիր է, որում ներգրավված է ոչ թե մեկ անձ կամ մարդկանց խումբ, այլ հասարակության մեծ մասը: Ռաֆայել Լեմկին իր աշխատությունում նկարագրել է ցեղասպանության երկու փուլերը, երբ սկզբում ոչնչացվում է ճնշված խմբի ազգային պատկերը, այնուհետև նախկինի փոխարեն պարտադրվում է սեփական ազգային տեսլականը<sup>219</sup>:

### 15.1 Ցեղասպանության կոնվենցիա

1921թ. Բեռլինում Սոդոմոն Թեհլերյանի գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության ամենաերևելի քաղաքական գործիչներից մեկը՝ Թալեաթ Մեհմեթը, որը *in absentia* Ստամբուլյան դատավճռով

---

<sup>219</sup> Տե՛ս R. Lemkin (note 40), էջ 79:

դատապարտվել էր մահվան<sup>220</sup>։ Բեռլինում հայ երիտասարդի դատավարությունն առաջացրեց Լվովի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանող, հրեա Ռաֆայել Լեմկինի հետաքրքրությունը, որը կարծում էր, որ վրիժառուի փոխարեն Թալեաթ Մեհմեթը պետք է ենթարկվի պատասխանատվության՝ Օսմանյան կայսրությունում հազարավոր մարդկանց սպանությունը կազմակերպելու համար։ Լվովի համալսարանի պրոֆեսոր Ստանիսլավ Ստարժինսկու հետ ունեցած զրույցում Ռաֆայել Լեմկինը հարցրեց, թե ինչու Թալեաթը չի դատապարտվել իր ոճրագործությունների համար։ Պրոֆեսորը նրան պատասխանեց պետական ինքնիշխանության օրինակով. «Պատկերացրեք, որ Դուք ունեք հավաքուն և մի օր որոշում եք սպանել Ձեր բոլոր հավերհին, Ձեր հարևանը չպետք է մտածի, թե ինչ եք անում Ձեր հավերհի հետ, եթե նա միջամտի, դա կդիտվի որպես իրավախախտում»<sup>221</sup>։ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունները քաղաքական գործիչներին դրդեցին 1919 թ. Փարիզի խաղաղության համաժողովի ընթացքում անդրադառնալու պետական ինքնիշխանության խնդրին՝ նպատակ ունենալով խթանելու համաշխարհային խաղաղությունը և դրանով իսկ իրենց պետության համար ստեղծելու ավելի կայուն անվտանգության քաղաքականություն։ Այնուամենայնիվ, բանակցությունների ընթացքում, երբ խոսվում էր ազգային փոքրամասնությունների մասին, մասնակիցների կարծիքները տարբերվում էին։ Վերջապես որոշվեց, որ նորաստեղծ Ազգերի լիգայում պետք է ստեղծվեն պաշտպանական հատուկ մեխանիզմներ<sup>222</sup>։ Միջազգային փոքրամասնությունների պաշտպա-

<sup>220</sup> Sté u S. Jacobs, The Complicated Cases of Soghomon Tehlirian and Sholem Schwartzbard and Their Influences on Raphaël Lemkin's Thinking About Genocide, *Genocide Studies and Prevention* 13 (2019), էջ 39:

<sup>221</sup> V. Vardanyan, in: A. Bieńczyk-Missala, *Civilians in contemporary armed conflict: Rafał Lemkin's heritage*, 2017, p. 249, J. Cooper, *Raphael Lemkin and the struggle for the Genocide Convention*. Basingstoke, Hampshire, 2008, p. 15.

<sup>222</sup> Sté u R. Banken, *Die Verträge von Sèvres 1920 und Lausanne 1923: Eine völkerrechtliche Untersuchung zur Beendigung des Ersten Weltkrieges und zur*

նության կողմնակիցներն էին բրիտանացի դիվանագետ Լորդ Ռոբերտ Սեսիլը և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը: Երկուսն էլ այն կարծիքին էին, որ փոքրամասնությունների պաշտպանության ամրապնդումը կարող է նպաստել ապագա կրոնական և ազգային հետապնդումների ու պատերազմի կանխմանը: Այնուամենայնիվ, նմանօրինակ պաշտպանական մեխանիզմների ծրագիր ստեղծելու փորձն անհաջող ավարտ ունեցավ Առաջին աշխարհամարտից հետո պետական ինքնիշխանության դոկտրինի ուժեղ ազդեցության պատճառով<sup>223</sup>: Հետպատերազմյան իրավիճակը ստիպեց Ռաֆայել Լեմկինին եզրակացնել, որ ժամանակակից միջազգային իրավունքը արմատական բարեփոխումների կարիք ունի: Զուգահեռաբար Ռաֆայել Լեմկինը սկսեց ջանքեր ներդնել՝ բացահայտելու անդրազգային հանցագործությունները, ինչպիսիք են՝ բարբարոսությունը, վանդալիզմը, ծովահենությունը, մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը, ահաբեկչությունը, թմրանյութերի և պոռնոգրական նյութերի ապօրինի առևտուրը: Եթե բարբարոսության հանցագործությունը Լեմկինը դիտարկում էր որպես էթնիկական, սոցիալական ու կրոնական խմբերի ոչնչացում և *delicta iuris gentium*<sup>224</sup>, ապա վանդալիզմ ասելով՝ նա նկատի ուներ մշակույթի ոչնչացումը: Այսպիսի հանցագործությունները, ըստ Լեմկինի, պետք է լինեին ունիվերսալ իրավասության ներքո, որին հնարավոր էր հասնել միայն բազմակողմանի միջազգային պայմանագրի ստորագրմամբ: Միևնույն ժամանակ միջազգային պայմանագրերը պետք է ոչ միայն ձևավորեին փոքրամասնությունների իրավունքները, այլև պաշտպանելով վերջիններիս՝ ամրապնդեին անհատի և պետության շահերը, որով էլ հնարավոր կլիներ նվազագույնի հասցնել կոլեկտիվ

---

Auflösung der sogenannten "Orientalischen Frage" durch die Friedensverträge zwischen den alliierten Mächten und der Türkei. Berlin, 2014, էջ 63:

<sup>223</sup> Տե՛ս *M. D. Evans*, Religious liberty and international law in Europe. Cambridge, 1997, էջ 93:

<sup>224</sup> Տե՛ս *R. Lemkin*, Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations, 1933:

վտանգները (*danger commun*): Որոշ ժամանակ անց, սակայն, հակասեմականության տարածումը հանգեցրեց Ռաֆայել Լեմկինի գաղափարների քննադատությանը: Նրան մեղադրում էին սեփական ազգը «փրկելու» մեջ: Արդյունքում բարբարոսության՝ որպես հանցավոր արարքի մասին վերջինիս մոտեցումը չստացավ լայն աջակցություն: Երկրորդ աշխարհամարտի սկիզբը ստիպեց Լեմկինին տեղափոխվել Միացյալ Նահանգներ, որտեղից նա վերլուծեց Երկրորդ աշխարհամարտի իրադարձությունները և աշխատեց իր գաղափարի համար նոր փաստարկներ մշակել: Ինքը՝ Լեմկինը, անձամբ համոզված չէր բարբարոսության հայեցակարգում, քանի որ այս եզրույթն արդեն գործածվում էր այլ ենթատեքստով: Այդ պատճառով նա փնտրում էր մեկ այլ բառ, որը կարող էր դառնալ հայերի և հրեաների դեմ կատարված հրեշագործության իրավական սահմանում: 1944 թ. ստեղծվեց «գենոցիդ» բառը՝ որպես հին հունարեն և լատիներեն բառերի խառնուրդ: Ըստ Լեմկինի նոր մոտեցման՝ ցեղասպանությունը մարդկանց խմբի անհապաղ ոչնչացումը չէ, այլ համակարգված ծրագիր է, որի վերջնական նպատակը մարդկանց խումբը ամբողջովին կամ մասամբ ոչնչացնելն է<sup>225</sup>: Լոնդոնի կանոնադրության նախապատրաստման և նացիստական Գերմանիայի նախկին առաջնորդների՝ Միջազգային ռազմական դատարանի շուրջ կայացած բանակցությունների ընթացքում բրիտանական պատվիրակությունը մերժեց Լեմկինի գաղափարը ցեղասպանության մասին՝ առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ «ցեղասպանություն» բառը Օքսֆորդի բառարանում գոյություն չունի<sup>226</sup>: Նյուրնբերգում Լեմկինը աշխատում էր Ռոբերտ Ջեքսոնի ղեկավարած ԱՄՆ դատախազական պատվիրակության իրավախորհրդատու, և սա ևս մեկ առիթ էր՝

---

<sup>225</sup> R. Lemkin (note 40), էջ 79:

<sup>226</sup> St' u D. Segesser/M. Gessler, in: D. J. Schaller/J. Zimmerer, The origins of genocide: Raphael Lemkin as a historian of mass violence, 2013, էջ 453-460:

գործնականում կիրառելու «գենոցիդ» հասկացությունը<sup>227</sup>: Սակայն այդ հասկացությունը չգրավեց դատարանի ուշադրությունը<sup>228</sup>: Պատճառներից մեկն այն էր, որ հրեաների նկատմամբ կատարված հրեշազորությունը դեռևս հայտնի չէր Նյուրնբերգի դատավարության ժամանակ: Պոտոսդամ քաղաքում գտնված՝ հրեաների վերջնական ոչնչացման ծրագրի արձանագրությունները, որոնք ավելի հայտնի էին որպես *Wannseeprotokolle*, հայտնաբերվեցին Նյուրնբերգի դատավճռից շատ ավելի ուշ<sup>229</sup>: Նյուրնբերգից հիասթափությունը Լեմկինին հանգեցրեց նոր գաղափարի, որի համաձայն՝ փոքրամասնությունների իրավունքների համընդհանուր պաշտպանությունը հնարավոր կլիներ ամրագրել յուրաքանչյուր ազգային օրենքի դրույթներում, որով բոլոր պետությունները պարտավորված կլինեին պաշտպանել փոքրամասնություններին: Դա կարող էր իրականություն դառնալ միայն միջազգային պայմանագրի հիման վրա: Նա այն կարծիքին էր, որ 1899 և 1907 թթ. Հաագայի կոնվենցիաները, մասնավորապես 1907 թ. Հաագայի կոնվենցիայի 46-րդ հոդվածը, քաղաքացիական անձանց անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու համար բավարար չէր: Վերջապես, 1946 թ. Լեմկինի ջանքերով հաջողվեց համոզել Լատինական Ամերիկայի երկրներից Կուբայի և Պանամայի<sup>230</sup> պատվիրակություններին՝ ստեղծելու ցեղասպանության կոնվենցիայի հանձնաժողով: Նյուրնբերգյան սկզբունքների՝ որ-

---

<sup>227</sup> Տե՛ս մեղադրական որոշումը, [...] They conducted deliberate and systematic genocide, viz., the extermination of racial and national groups, against the civilian populations of certain occupied territories in order to destroy particular races And classes of people and national, racial, or religious groups, particularly Jews, Poles, and Gypsies and others, IMT, IMT (ed), Trial of the Major War Criminals before the International Military Tribunal. Nuremberg, 1947 Indictment, էջ 43:

<sup>228</sup> Տե՛ս *J. Barrett*, in: C. Safferling/E. Conze, *The Genocide Convention sixty years after its adoption*, 2010, էջ 52:

<sup>229</sup> 1950-ականներին այդ փաստաթուղթը հայտնվեց հանրության ուշադրության ներքո, չնայած փաստաթուղթը արդեն հայտնաբերվել էր 1946 թ.:

<sup>230</sup> Տե՛ս *A. Weiss-Wendt*, *The Soviet Union and the Gutting of the UN Genocide Convention*, *The American Historical Review* 124 (2019), էջ 50:



պէս միջազգային քրեական իրավունքի սկզբնաղբյուր ամրագրվելուն<sup>231</sup> հետևեց ցեղասպանության վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևը<sup>232</sup>, որով ցեղասպանությունը ճանաչվեց մարդկանց խմբի գոյության իրավունքի ժխտում, իսկ մարդասպանությունը՝ մարդու կյանքի իրավունքի մերժում: Դրան հաջորդեց կոնվենցիայի մշակման նախապատրաստական հանձնաժողովի ստեղծումը:

Կոնվենցիայի առաջին նախագիծը ցեղասպանությունը սահմանում էր որպէս ոչ միայն ռասայական, ազգային, կրոնական, այլև լեզվական և քաղաքական խմբերի ոչնչացում (հոդված I(1), առաջին կոնվենցիայի նախագիծ)<sup>233</sup>: Ըստ առաջին նախագծի՝ հեղինակները հաշվի էին առել ցեղասպանության երեք տեսակներ՝ ոչ միայն ֆիզիկական (նախագծի հոդված II (1)), կենսաբանական (նախագծի հոդված II (2)), այլև մշակութային (նախագծի II (3) հոդված): Եթե խմբի ֆիզիկական ոչնչացումը նշանակում էր փաստացի ոչնչացում, խմբին պատկանող անձանց սպանելը, ներառյալ մեթոդները, որոնք հանգեցնում են մահվան, օրինակ՝ սովի մատնելը, հիգիենայի և բժշկական օգնության անբավարարությունը, ապա կենսաբանական ոչնչացումը նշանակում էր մարդկանց խմբի ներսում երեխաներ ծննդաբերը կանխելը, ներառյալ հարկադիր աբորտը, ստերիլացումը, սեռերի տարանջատումը և ամուսնության արգելքը: Մշակութային ցեղասպանությունը ներառում էր համապատասխան խմբի արտաքսումը, հասարակական վայրերում մայրենի լեզվի օգտագործման արգելքը, գրքերի, հուշարձանների և մշակութային այլ գույքի համակարգված ոչնչացումը: Կոնվենցիայի երկրորդ նախագծում հեղինակները համատեղեցին ֆիզիկական և կենսաբանական ցեղաս-

---

<sup>231</sup> UN Res 95(I), 11 December 1946.

<sup>232</sup> UN Res 260A (III), 9 December 1948.

<sup>233</sup> Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide - the Secretariat and Ad Hoc Committee Drafts, Secretariat Draft First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, May 1947, UN Doc. E/447, տե՛ս <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>.

պանությունը: Մշակութային ցեղասպանությունը, այնուամենայնիվ, ընդունվեց, բայց քաղաքական և մշակութային խմբերի նկատմամբ կոշտ քննադատության պատճառով ՄԱԿ-ի անդամ 7 պետությունների ներկայացուցիչներից բաղկացած հատուկ հանձնաժողովը պատրաստեց փոխզիջումային առաջարկ և որոշեց նախագծից բացառել քաղաքական և մշակութային ցեղասպանությունը՝ պարզաբանելով մնացած հանցակազմի դեղիկները<sup>234</sup>: «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի վերանայված տարբերակը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է 1948 թ. դեկտեմբերի 9-ին և, համաձայն կոնվենցիայի XIII հոդվածի՝ ուժի մեջ է մտել 1951 թ. հունվարի 12-ին:

### *15.2 Ցեղասպանության եզրույթը Հռոմի ստատուտում*

Եթե կոնվենցիան նախատեսում է անդամ պետությունների կողմից ցեղասպանության քրեականացումը, ապա Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածը ուղղակիորեն գործում է անդամ պետությունների համար: Այնուամենայնիվ, նախքան ցեղասպանության հանցագործության՝ Հռոմի ստատուտի առանձին մաս դառնալն ու միջազգային ճանաչում ձեռք բերելը կոնվենցիայի դրույթները և ցեղասպանության հանցագործության քրեականացումը հեշտ ուղի չեն անցել: Թեև ազգային օրենքում ցեղասպանությունը կողիֆիկացվեց, այնուամենայնիվ միայն Հարավսլավիայի հակամարտությունից հետո «ցեղասպանություն» եզրույթը լայնորեն կիրառվեց ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակում<sup>235</sup>: Դրան զուգահեռ՝ մշտական միջազգային քրեական դատարան ստեղծելու գաղափարը միջազգային ասպարեզում ավելի ամրապնդվեց, թեև այդ գաղափարը նոր չէր: Նույնիսկ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մշտական

---

<sup>234</sup> Տե՛ս *H. Abtahi/P. Webb*, *The Genocide Convention: The travaux preparatoires*. Boston, 2008, էջ 405, նաև՝ *E. Staub*, *The roots of evil: The origins of genocide and other group violence*, 17th ed. Cambridge, 2006, էջ 8, M. Boot (note 94), էջ 462:

<sup>235</sup> Տե՛ս C. Safferling and G. Petrossian (note 77), էջ 402:

դատարան ստեղծելու մի շարք առաջարկներ ու փորձեր եղել էին<sup>236</sup>։ Մշտական դատարանի ստեղծումն էլ ավելի արդիական դարձավ Հարավսլավիայի և Ռուանդայի հակամարտություններից հետո, ու թեև ժամանակավոր դատարանները նույն կերպ օգտագործում էին ցեղասպանության կոնվենցիայի դրույթները իրենց կանոնադրություններում, սակայն Հռոմի ստատուտի պարագայում ցեղասպանության հանցագործությունն ընդգրկելու գործընթացն ավելի բարդ եղավ։ 1993 թ. ՄԱԿ-ի 4 լիավոր ասամբլեան, Միջազգային իրավունքի հանձնաժողովը միջազգային քրեական դատարանի ստատուտի նախագիծը պատրաստելու նպատակով ստեղծեցին աշխատանքային խումբ<sup>237</sup>։ Նախապատրաստական աշխատանքների ընթացքում շատ բան դեռևս չէր ուսումնասիրվել ցեղասպանության հանցագործության խնդրի վերաբերյալ, և միայն մի քանի տարի անց Աքայեսուի գործով Ռուանդայի միջազգային քրեական դատարանը հստակեցրեց ցեղասպանության հանցագործության կարևոր տարրերը<sup>238</sup>։ Միջազգային իրավունքի հանձնաժողովի 1994 թ. նախագծում ցեղասպանության հանցագործությունը, ինչպես նշվեց, դեռևս չէր մեկնաբանվել և հղում է արվել միայն կոնվենցիային, մասնավորապես նախագծի վերաբերյալ մեկնաբանություններում նշվում էր, որ ցեղասպանության հանցագործությունը հստակ սահմանված է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու

---

<sup>236</sup> Տե՛ս R. Cryer et al. (note 208), էջ 117, նաև՝ *S. Babaian*, *The International Criminal Court - An International Criminal World Court?: Jurisdiction and Cooperation Mechanisms of the Rome Statute and its Practical Implementation*. Cham, 2018, էջ 8:

<sup>237</sup> UN General Assembly, Report of the International Law Commission on the work of its forty-fifth session, A/RES/48/31 (9 December 1993).

<sup>238</sup> ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, հաշվի առնելով, որ Միջազգային արդարադատության դատարանը ուսումնասիրում էր ցեղասպանության հարցը Բոսնիա և Հերցեգովինայի ու Հարավսլավիայի գործով, տե՛ս ICJ, Application on the Convention of the Prevention and Punishment of the Crime of Genocide, *Bosnia and Herzegovina v. Yugoslavia (Serbia and Montenegro)*, 20 March 1993:

մասին» կոնվենցիայում, որը լայնորեն ընդունված միջազգային պայմանագիր է<sup>239</sup>: Առաջին պատվիրակությունները, որոնք մեկնաբանեցին նախագիծը, կողմ արտահայտվեցին ցեղասպանության հանցագործությունը դատարանի իրավասության մեջ ներառելուն, սակայն միաժամանակ իրենց մտավախությունն էին հայտնում, որ ցեղասպանության կոնվենցիան ինքնին պետք է դառնա դատարանի իրավասության հիմք, և դատարանը պետք է հիմնվի իր ստատուտի վրա<sup>240</sup>: Թեպետ մինչև 1996 թվականը ընդհանուր համաձայնություն էր ձեռք բերվել ցեղասպանության հանցագործության վերաբերյալ, բայց պատվիրակները շեշտում էին որոշակի տարրեր հստակեցնելու անհրաժեշտությունը: Միննույն ժամանակ բարձրացվեց ցեղասպանության սահմանումն ընդլայնելու, մասնավորապես հասարակական և քաղաքական խմբերին ընդգրկելու հարցը<sup>241</sup>: Հաջորդ տարի նախապատրաստական հանձնաժողովը եզրակացրեց, որ չկա անհրաժեշտություն ընդլայնելու ցեղասպանության հանցագործությունը և հեռանալու կոնվենցիայի տեքստից («Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի II և III հոդվածներ)<sup>242</sup>: Կոնվենցիայի III հոդվածը առանց առարկությունների հանվեց դիվանագիտական խորհրդաժողովի ընթացքում<sup>243</sup>: Դա արդարացվեց այն փաստով, որ Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված էին պատասխանատվության տեսակները: Այնուամենայնիվ, բանակցությունների ընթացքում հարցեր են ծագել ցեղասպանությունը կատարելու դավադ-

---

<sup>239</sup> UN, ILC, Draft Statute for an International Criminal Court with commentaries 1994, 38 (5).

<sup>240</sup> UN GA A/AC.244/1 (20 March 1995), 4 (10), 10 (8).

<sup>241</sup> UNGA A/AC.249/1 (7 May 1996), 11 (19-21).

<sup>242</sup> Տե՛ս UNGA A/AC.249/1997/L.5 (12 March 1997), *C. Kreß*, The Crime of Genocide under International Law, *International Criminal Law Review* 6 (2006), էջ 499:

<sup>243</sup> Տե՛ս W. Schabas (note 160), էջ 122, նաև՝ *G. Boas/J. L. Bischoff/N. L. Reid*, Elements of crimes under international law. Cambridge, 2008, էջ 199:

րության՝ որպես պատասխանատվության ձևի վերաբերյալ: Արդեն Նյուրնբերգի Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությունը կազմելիս (6-րդ հոդված) և դրա կիրառման ժամանակ դժվարություններ էին առաջացել դավադրություն կատարելու պատասխանատվության տեսակի հարցում: Անգլոամերիկյան իրավական համակարգում հանցավոր դավադրությունը ապագայում ապօրինի հանցավոր գործողություն կատարելու՝ երկու կամ ավելի անձանց համաձայնությունն է<sup>244</sup>, ինչը չի ճանաչվել եվրոպական իրավական համակարգերում: Դավադրության նպատակն արդարացվեց նացիստական առաջնորդներին ոչ միայն պատերազմական օրենքները խախտելու մեջ մեղադրելու անհրաժեշտությամբ, այլև պատերազմից առաջ նման գործողություններ կատարելու դավադրություն կատարելու համար<sup>245</sup>: Այնուամենայնիվ, Հռոմի ստատուտը դավադրությունը չի կոդիֆիկացրել այնպես, ինչպես դա արվեց Նյուրնբերգի Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության մեջ: Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի ե կետով հանցավոր դավադրությունը դիտարկվում է որպես ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվության ձև:

## 16. Հանցակազմի կառուցվածքը

Թե՛ գրականության մեջ, թե՛ մասամբ գործնականում ցեղասպանությունը պատկանում է մի կատեգորիայի, որը գերադասվում է միջազգային այլ հանցագործություններից՝ պատերազմական կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններից: Ասվածի վկայությունն է նաև այն, որ ցեղասպանության հանցագործությունը համարակալված է Հռոմի ստատուտում որպես առաջինը: Չնայած այն

---

<sup>244</sup> Տե՛ս *P. Gillies*, *The law of criminal conspiracy*, 2nd ed. Sydney, 1990, էջ 19, նաև՝ *J. R. A. Okoth*, *The Crime of Conspiracy in International Criminal Law*. The Hague, s.l., 2014, էջ 19, 121:

<sup>245</sup> Տե՛ս *T. Taylor*, *The anatomy of the Nuremberg trials: A personal memoir*. New York, 2013, էջ 32:

հանգամանքին, որ գրականության մեջ և գործնականում ցեղասպանությունը համարվել է «հանցագործությունների հանցագործություն»<sup>246</sup>, ժամանակավոր դատարանների վերաքննիչ պալատները պարզեցին, որ ժամանակավոր դատարանների կանոնադրություններում միջազգային հանցագործությունները չեն կարող տարբերվել իրարից ըստ իրենց ծանրության<sup>247</sup>: Բոլոր հանցագործությունները, որոնք ներկայումս նախատեսված են Հռոմի ստատուտով, ունեն տարբեր նպատակներ, և հետևաբար դրանք չեն կարող ավելի ծանր կամ ավելի թեթև բնորոշվել<sup>248</sup>:

Միջազգային գրականության մեջ ցեղասպանության հանցագործության առարկայի (*Rechtsgut* կամ *protected interests*) վերաբերյալ կարծիքները հակասական են: Տարածայնության պատճառն այն է, որ շատ միջազգայնագետներ կարծում են, որ ցեղասպանության հանցագործության առարկան պաշտպանված այն շահերն են, որոնք ոչ թե անհատական, այլ միջազգային, հավաքական բնույթի են: Ըստ այդմ՝ հնարավոր է դիտարկել ցեղասպանության առարկայի վերաբերյալ ձևավորված և հակասական երկու մոտեցում՝ անհատական ու խմբակային: Անհատական մոտեցման կողմնակիցները կարծում են, որ հանցագործը չի ցանկանա ոչնչացնել մարդկանց խմբին իր անհատական գործողություններով, հետևաբար հանցագործի ցանկությունը պետք է կապված լինի այն հավաքական արդյունքների

---

<sup>246</sup> Տե՛ս *W. Schabas*, *Genocide in international law: The crimes of crimes*. Cambridge, 2009, էջ 227, նաև՝ ICTR, *Prosecutor v. Kambanda*, Trial Chamber, Judgment, 4 September 1998, para. 16, ICTR, *Prosecutor v. Niyitegeka*, Trial Chamber, Judgment, 9 July 2004, para. 53, ICTY, *Prosecutor v. Krstić*, Appeal Chamber, Judgment, 19 April 2004, para. 95, ICTY, *Prosecutor v. Stakić*, Trial Chamber, Judgment, 21 July 2003, para. 502:

<sup>247</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Appeal Chamber, Judgment, 26 January 2000, para. 69, ICTY, *Prosecutor v. Kunarac et al*, Appeals Chamber, Judgment, 12 June 2002, para. 171, ICTY, *Prosecutor v. Stakić*, Appeals Chamber, Judgment, 22 March 2006, para. 375, ICTY, *Prosecutor v Trbić*, Trial Chamber, Decision, 27 April 2007, para. 19:

<sup>248</sup> Տե՛ս G. Petrossian (note 48), էջ 136:

հետ, որոնք ձևավորվում են կոլեկտիվ գործունեությամբ, և որին դրանք նպաստում են: Այս տեսակետից ցեղասպանության հանցագործության պաշտպանվող առարկան պաշտպանված խմբի անդամի անհատական իրավունքներն են<sup>249</sup>: Հակառակ դոկտրինի կողմնակիցները կարծում են, որ պաշտպանվող արժեքը ոչ թե անհատն է, այլ պաշտպանվող խումբը, քանի որ հանցագործությունը դրդված է պաշտպանվող խմբին ոչնչացնելու հատուկ մտադրությամբ<sup>250</sup>: Մա էր 1946 թ. քանաձևի հիմքը, երբ ցեղասպանությունը ճանաչվեց որպես միջազգային հանցագործություն: Եթե սպանությունը համարվում է անհատի իրավունքի ժխտում, ապա ցեղասպանությունը խմբի գոյության իրավունքի մերժումն է: Այսուհանդերձ, գոյություն ունի երկակիության տեսություն՝ կապված ցեղասպանության հանցագործության առարկայի հետ: Դուալիզմի տեսությունը ներկայացնում է պաշտպանություն ինչպես խմբի անդամների, այնպես էլ ողջ խմբի համար: Սակայն միջազգային իրավունքի տեսանկյունից անհատական կյանքը քիչ նշանակություն ունի միջազգային հանրային ասպարեզում, քանի որ այն ընկնում է ազգային իրավունքի ազդեցության տակ<sup>251</sup>:

Միջազգային իրավունքի բուն նպատակը ոչ թե անհատական շահերի պաշտպանությունն է, այլ միջկառավարական շահերի վրա կենտրոնանալը, ինչը ենթադրում է պետությունների խաղաղ գոյակցություն: Եվ նույնիսկ եթե գործողությունները ցեղասպանության ենթատեքստում կատարվել են խմբի անդամների նկատմամբ, սա ենթադրում է միայն ամբողջական արարքի և բոլոր զուգահեռ գործո-

---

<sup>249</sup> Տե՛ս *S. Kirsch*, in: C. Safferling/E. Conze, *The Genocide Convention sixty years after its adoption*, 2010, էջ 149:

<sup>250</sup> Տե՛ս *C. Safferling*, in: C. Safferling/E. Conze, *The Genocide Convention sixty years after its adoption*, 2010 էջ 167, նաև՝ H. Satzger (note 190), էջ 16:

<sup>251</sup> Տե՛ս ECHR, *Streletz, Kessler And Krenz v. Germany*, Judgment, 22 March 2001, para. 86:

դությունների ամբողջություն<sup>252</sup>: Հանցագործության նպատակը ոչ միայն խմբի անդամների սպանությունն է, այլև նման սպանությունների միջոցով ողջ խմբի սոցիալական և ֆիզիկական ոչնչացումը: Ցեղասպանության հանցագործության կառուցվածքը, ինչպես և բոլոր մյուս միջազգային հանցագործությունները, բաղկացած է երկու մակարդակից՝ այսպես կոչված՝ գլխավոր կամ կոնտեքստուալ (*chapeau*) հատկանիշներից և առանձին գործողությունների հատկանիշներից: Բոլոր հատկանիշների առկայության դեպքում միայն հնարավոր է արձանագրել ցեղասպանության հանցագործությունը:

### 16.1 Կոնտեքստուալ հատկանիշներ

Ցեղասպանության հանցագործության կոնտեքստուալ հատկանիշները բաղկացած են երեք կարևոր բաղադրիչներից՝ պաշտպանվող խումբ, ֆիզիկական ոչնչացում և հատուկ մտադրություն: Հռոմի ստատուտի 9-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշները (Elements of Crimes EoC) քննարկելիս<sup>253</sup> հարց է բարձրացվել ցեղասպանության ժամանակ եղած կոնտեքստուալ հանգամանքների մասին, որոնք մարդկության դեմ հանցագործությունների պարագայում ունեն որոշակի նմանություն: Թեպետ այն քննադատվեց որպես ընդհանուր սահմանման անտեղի լրացում, հեղինակները պայմանավորվեցին ավելացնել նոր հատկանիշ, որում կատարված արարքը պետք է տեղի ունենա կոնկրետ խմբի դեմ ուղղված նմանատիպ բացահայտ վարքի համատեքստում, կամ դա այնպիսի պահվածքն է, որն ինքնին կարող է հանգեցնել խմբի ոչնչացմանը<sup>254</sup>:

---

<sup>252</sup> Sté u W. Schabas, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, G. Werle and F. Jeßberger (note 127), էջ 665:

<sup>253</sup> Sté u Բաժին II միջազգային քրեական իրավունքի աղբյուրները:

<sup>254</sup> Sté u W. Schabas (note 252), տե՛ս հանցագործությունների հատկանիշներ (Elements of Crimes), Article 6 Introduction a:



«The conduct took place in the context of a manifest pattern of similar conduct directed against that group or was conduct that could itself effect such destruction»: Յեղասպանության հանցագործության կոնտեքստուալ հատկանիշը, այնուամենայնիվ, ամրագրված չէ ժամանակավոր դատարանների կանոնադրություններում: Հանցագործությունների հատկանիշները (EoC) Դատարանի համար որպես օժանդակ գործիքներ ընդունվելուց մի քանի ամիս առաջ նախկին Հարավսլավիայի դատարանը եզրահանգեց, որ ցեղասպանության հանցագործությունը տեսականորեն հնարավոր է նույնիսկ մեկ անձի պարագայում՝ «*lone genocidal maniac*»<sup>255</sup>, առանց որևէ նախապատրաստման, կազմակերպման և ծրագրի<sup>256</sup>: Սակայն գրականության մեջ այս մոտեցումը ենթարկվեց խիստ քննադատության: Յեղասպանության ծրագրի առկայությունը հաստատել են նաև Միջազգային արադարադատության<sup>257</sup> և Միջազգային քրեական դատարանները<sup>258</sup>: Դատավոր Անիտա Ուշացկյան իր առանձին կարծիքում հանգեց այն եզրակացության, որ անկախ այն բանից՝ պետք է կիրառվի համատեքստային հատկանիշը, թե ոչ, համատեքստային հատկանիշների առկայությունն արդեն վկայում է, որ պաշտպանվող թիրախավորված խմբի գոյությանը վտանգ է պատճառում<sup>259</sup>:

---

<sup>255</sup> Տե՛ս *W. Schabas*, *War crimes and human rights: Essays on the death penalty, justice and accountability*. London, 2008, էջ 755:

<sup>256</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v Jelisić*, Trial Chamber, Judgment, 14 May 1999, para. 100, ICTY, *Prosecutor v Jelisić*, Appeals Chamber, Judgment, 5 July 2001, A. Cassese (note 128), էջ 123:

<sup>257</sup> Տե՛ս ICJ, Application for Revision of the Judgment of 26 February 2007, *Bosnia and Herzegovina v. Yugoslavia (Serbia and Montenegro)*, para. 376:

<sup>258</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bashir*, Decision on the Prosecution's Application for a Warrant of Arrest against Omar Hassan Ahmad Al Bashir, 4 March 2009, paras. 125-133:

<sup>259</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bashir*, Decision on the Prosecution's Application for a Warrant of Arrest against Omar Hassan Ahmad Al Bashir, 4 March 2009, para. 124, Separate and Partly Dissenting Opinion of Judge Anita Ušacka, 4 March 2009,

### 16.1.1 Պաշտպանվող խումբ

Սոցիոլոգիայի ու մարդաբանության մեջ խումբը սուբյեկտիվ ու օբյեկտիվ բնութագրերով և նույնանման հատկանիշներով մարդկանց խմբավորումն է: Ցեղասպանության հանցագործության հիմնական թիրախը մարդկանց խումբն է, որը, ըստ միջազգային դատական պրակտիկայի, պետք է գոյություն ունենա որպես մարդկանց կայուն (*ejusdem generis*), մշտական խումբ<sup>260</sup>: Բանակցությունների ընթացքում բացառվել են քաղաքական, սոցիալական և տնտեսական խմբերը, քանի որ դրանք համարվում են «փոփոխվող» *mobile* խմբեր<sup>261</sup>: Այսպիսով, ստատուտով և կոնվենցիայով պաշտպանված է չորս տիպի խումբ՝ ազգային, ռասայական, էթնիկական և կրոնական, որոնց պարագայում անդամակցությունը չի պայմանավորվում իրավական որևէ պահանջով, այլ առաջանում է ինքնաբերաբար՝ ծննդյան պահից և մշտական հիմունքներով<sup>262</sup>:

Ցեղասպանության և ազգային հանցագործության միջև հիմնական տարբերությունը գոհի ընկալումն է: Ինչպես արդեն նշվեց, ցեղասպանությունը ուղղված չէ անհատի դեմ. թիրախը մարդկանց խումբն է: Անհատի պատկանելությունը և ըստ այդմ՝ նրան թիրախավորելու նպատակն է վերացնել այդ խմբին և ոչ անհատին՝ իր անհատական սուբյեկտիվ այլ հատկանիշների համար: Մակայն այստեղ առաջանում են այլ դժվարություններ, մասնավորապես պաշտպանվող խմբին պատկանող գոհի նույնականացման ու ըն-

---

para. 20, *H.-P. Kaul*, in: C. Safferling/E. Conze, *The Genocide Convention sixty years after its adoption*, 2010, էջ 206-207:

<sup>260</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment 2 September 1998, para. 511, ICTR, *Prosecutor v Musema*, Trial Chamber, Judgment, 27 January 2000, para. 162:

<sup>261</sup> Տե՛ս M. Boot (note 94), էջ 426, նաև՝ *D. L. Nersessian*, *Genocide and political groups*. Oxford, 2010, էջ 107:

<sup>262</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 512:

կալման մեջ<sup>263</sup>: Օրինակ, երբ հանցագործը, իր սուբյեկտիվ ընկալման համաձայն, նույնացնում է զոհին որպես պաշտպանված խմբի անդամի, կամ զոհն ինքը կարող է զգալ, որ պատկանում է պաշտպանվող խմբին: Պատկանելության որոշումը կարող է հաստատվել՝ հաշվի առնելով օբյեկտիվ, սուբյեկտիվ չափանիշները<sup>264</sup> և քաղաքական, սոցիալական, պատմական, մշակութային ենթատեքստերը<sup>265</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի լիգայի որոշմամբ Ռուանդան դարձավ Բելգիայի գաղութ և բաղկացած էր արհեստականորեն ստեղծված երկու սոցիալական-հասարակական խմբից՝ հութուններից և թութսիներից, բայց վերջիններս Ռուանդայում ընկալվում էին որպես տարբեր էթնիկ խմբեր<sup>266</sup>: Ռուանդայի միջազգային քրեական դատարանը առաջին իսկ գործով անդրադարձավ սոցիալական պատկանելության խնդրին, քանի որ ցեղասպանությունից պաշտպանվող խմբի բացակայության դեպքում խոսք լինել չի կարող ցեղասպանության մասին: Դատարանը վկայակոչեց այն փաստը, որ այդ ժամանակ թութսիների ինքնությունը ներկայացնում էր կայուն և մշտական խումբ, որն ընկալվում էր հենց այդպիսին<sup>267</sup>:

Բացահայտելու համար՝ պատկանում է արդյոք անձը պաշտպանվող խմբին, նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է անձը նույնականացնում իրեն և իր պատկանելությունը որևէ խմբի (ինք-

---

<sup>263</sup> Տե՛ս *C. J. Tams/L. C. Berster/B. Schiffbauer*, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide: A commentary. München, 2014, էջ 38-46:

<sup>264</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v Brdanin*, Trial Chamber, Judgment, 1 September 2004, paras. 683-684, ICTR, *Prosecutor v Semanza*, Trial Chamber, Judgment, 15 May 2003, para. 317:

<sup>265</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Kajelijeli*, Trial Chamber, Judgment, 1 December 2003, para. 811:

<sup>266</sup> Տե՛ս G. Prunier (note 75), էջ 28, L. Melvern (note 75), էջ 8:

<sup>267</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 702:

նորոշում, *self-determination*)<sup>268</sup>, կամ ինչպես է հանցագործը նույնացնում տուժողին (*determination by others*): Միևնույն ժամանակ հանցագործի տեսանկյունից գոհի պատկանելության որոշումը կարելի է դիտարկել երկու մոտեցմամբ՝ դրական և բացասական:

Դրական մոտեցման պարագայում խումբն առանձնանում է ըստ այն բանի, թե ինչպես է հանցագործը դիտարկում ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի հատկանիշները: Այս մոտեցմամբ, օրինակ, նույնիսկ եթե տուժողը իրեն չի համարում խմբին պատկանող և օբյեկտիվորեն չի պատկանում խմբին, նա դեռևս կշարունակի լինել հետապնդումների գոհ: 1935 թ. նացիստական Գերմանիայի Նյուրնբերգյան ռասայական օրենքները խիստ տարբերակում էին հրեաներին և գերմանացիներին, ինչի պատճառով հասարակությունը տրոհվեց: Այս բաժանման պատճառով գերմանացիները, որոնք իրենց հրեա չէին համարում, բայց ունեին հրեա հեռավոր ազգականներ, դասակարգվում էին որպես խառնուրդներ (*Mischlinge*): Հրեաները, որոնք օրենքով դասակարգվում էին որպես «կես հրեաներ – *Halbjuden*» կամ «քառորդ հրեաներ – *Vierteljuden*», շուտով վերադասակարգվեցին որպես հրեաներ (*Volljuden*) և Ադոլֆ Այխմանի որոշմամբ տեղափոխվեցին համակենտրոնացման ճամբարներ՝ ոչնչացվելու<sup>269</sup>:

Ըստ բացասական մոտեցման՝ գոհը ճանաչվում է որպես ոչ այն խմբի անդամ, որին պատկանում է հանցագործը: Դատարանի համար կարևոր է, սակայն, որոշել բոլոր, այսպես կոչված, «ոչ մերոնցից» գոհերի անդամակցությունը այլ խմբի<sup>270</sup>:

---

<sup>268</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Kayishema et al.*, Trial Chamber, Judgment, 21 May 1999, para. 98:

<sup>269</sup> Տե՛ս *J. F. Tent*, *Im Schatten des Holocaust: Schicksale deutsch-jüdischer "Mischlinge" im 3. Reich*. Köln, 2007, էջ 81-88:

<sup>270</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v Jelisić*, Trial Chamber, Judgment, 14 December 1999, paras. 70-72, ICTY, *Prosecutor v Stakić*, Trial Chamber, Judgment, 31 July 2003, para. 512:

Ազգային խումբ

Անձի քաղաքացիությունը ձևավորվել է դեռևս ինդուստրիալացման և հետինդուստրիալացման ժամանակաշրջաններում. այն, այսպես կոչված, պայմանագիր է անձի և պետության միջև, ինչը ցույց է տալիս, որ անհատը իրավաբանորեն պատկանում է պետությանը: Այնուամենայնիվ, ազգությունը հաճախ շփոթվում է ռասայական և էթնիկ պատկանելության հետ<sup>271</sup>:

Էթնիկությունը նշանակում է մարդկանց միջև կենսաբանական տարբերություն, ինչը պայմանավորված է նաև ընդհանուր լեզվով, պատմությամբ, կրոնով և մշակույթով, նմանատիպ արտաքինով և ընդհանուր ինքնորոշմամբ<sup>272</sup>:

Թեև ռասայական և էթնիկական հատկանիշներն ընդհանուր առմամբ նման են, սակայն ռասայականությունը առանձնանում է արտաքին ֆիզիկական բնութագրերով, ինչպիսիք են մարմնի կառուցվածքը, մաշկի գույնը և դեմքի ձևակազմությունը: Այս դասակարգումը, որը լայնորեն օգտագործվում էր հատկապես գաղութատիրական ժամանակաշրջանում, հանգեցրեց ռասայական խմբերի ձևավորմանը: Ներկայումս «ռասայականություն» եզրույթը հնացած է և ունի բացասական նշանակություն<sup>273</sup>: Ռասայական սահմանումը այսօր համարժեք է ազգային, էթնիկական և կրոնական խմբերին: Այս հասկացությունը բազմիցս կիրառվել է Միջազգային ռազմական տրիբունալում հրեաների դեմ կատարված ոճրագործությունների շարժառիթի հիմնավորումը հստակեցնելու համար:

Մարդկության պատմության ընթացքում զարգացել են բազմաթիվ կրոններ: Դավանանքի ազատության զարգացումը ամրագրված է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարբեր միջազ-

---

<sup>271</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 511:

<sup>272</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 512:

<sup>273</sup> Տե՛ս *B. Lüders*, *Die Strafbarkeit von Völkermord nach dem Römischen Statut für den Internationalen Strafgerichtshof*. Berlin, 2004, էջ 78-79:

գային համաձայնագրերում: Յուրաքանչյուր անհատ ունի եկեղեցիներ և կրոնական համայնքներ ստեղծելու և պահպանելու հավաքական իրավունք: Կրոնը աշխարհայացքի սուբյեկտիվ ընկալումն է, որը սահմանում է առօրյա կյանքի սկզբունքները և մարդու վարքի կանոնները:

### *16.1.2 Հատուկ դիտավորությունը*

Միասնական արարքի, փաստերի միացությունից և ընդհանուր մտադրությունից զատ՝ ցեղասպանական մտադրությունը (*Völkermordabsicht, dolus specialis*) կարևոր դեր է խաղում որոշելու՝ գոյություն ունի արդյոք ցեղասպանություն, թե ոչ: Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածը նախատեսում է միջազգային հանցագործության սուբյեկտիվ կողմը, սակայն ցեղասպանության պարագայում նշյալ հոդվածով նախատեսված դիտավորությունը բավարար չէ ցեղասպանության հանցագործության համար: Ռուանդայի միջազգային քրեական դատարանի առաջին դատավարության ընթացքում տրիբունալը հանգել է այն եզրակացության, որ անհրաժեշտ է հատուկ մտադրություն՝ որպես հանցագործության բաղկացուցիչ մաս, ըստ որի՝ հանցագործն իր գործողություններով ձգտել է ոչնչացնել պաշտպանվող խմբին<sup>274</sup>: Այնուամենայնիվ, հատուկ մտադրությունն ապացուցելու գործընթացը բավականին բարդ է: Այդ նպատակով նախկին Հարավսլավիայի դատարանը կարևոր համարեց էմպիրիկ մեթոդաբանությամբ գնահատելու բոլոր իրադարձությունները և գործի բոլոր ապացույցները, ինչպիսիք են՝ կատարված գործողությունների համատարած բնույթը, կատարված գործողությունները հիմնավորող քաղաքական դոկտրինը, փաստացի ոչնչացման կամ ոչնչացման փորձի մասշտաբները, սպանությունները պլանավորելն ու իրականացնելը, սպանության համակարգվածությունը, խտրա-

---

<sup>274</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 498:

կան գործողությունները և այլն<sup>275</sup>: Միննույն ժամանակ դատարանը կարևոր համարեց նշել, որ երկարատև պլանավորումը կարևոր չէ ցեղասպանության հանցագործության համար, քանի որ մի ամբողջ խմբի ոչնչացնելու մասին որոշումը կարող է կայացվել նաև զինված գործողությունների ժամանակ<sup>276</sup>:

Հատուկ մտադրության վերաբերյալ կարծիքները տարբերվում են գրականության մեջ և ժամանակավոր դատարանների որոշումներում: Ընդհանուր առմամբ հնարավոր է առանձնացնել ցեղասպանական մտադրության վերաբերյալ երկու կարծիք: Դրանք միմյանցից տարբերվում են ցեղասպանություն իրականացնողի մոտեցումներով: Առաջին մոտեցումը ավելի անհատական է և սուբյեկտիվ, այսպես կոչված՝ նպատակի վրա հիմնված (*purpose-based approach*), որին ավելի հակված են ժամանակավոր դատարանները<sup>277</sup>: Այս մոտեցման ներքո քննարկվում են հանցագործի մտադրությունը, շարժառիթը, ինչն ուղեկցվում է իր գործողությունների հույզերով, ոգևորությամբ և եռանդով: Նույնիսկ անձնական՝ տնտեսական և քաղաքական դրդապատճառների առկայությունը չի կարող բացառել հանցագործի հատուկ մտադրությունները: Բլագոևիչի և Յոկիչի գործով դատարանը եզրակացրեց, որ բավարար չէ այն, որ հանցագործը պարզապես իմանա գլխավոր հանցագործության անխուսափելիության կամ խմբի ոչնչացմանը հանգեցնելու հավանականության մասին: Ամբողջությամբ կամ մասնակիորեն պաշտպանվող խմբի ոչնչացումը պետք է ընկած լինի գործողությունների հիմքում: Ցեղասպանական մտադրության այս մոտեցումը կարող են ցուցաբերել

---

<sup>275</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Sikirica et al.*, Trial Chamber, Judgment, 3 September 2001, para. 59, ICTY, *Prosecutor v. Jelisić*, Appeal Chamber, Judgment, 5 July 2001, para. 47:

<sup>276</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Krstić*, Trial Chamber, Judgment, 2 August 2001, para. 572:

<sup>277</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Blagojevic, Jokic*, Trial Chamber, Judgment, 17 January 2005, para. 656, ICTY, *Prosecutor v. Brđanin*, Trial Chamber, Judgment, 1 September 2004, para. 695:

այն հանցագործները, որոնք ցեղասպանության կազմակերպիչներն են, կամ որոնք կարևոր դեր են խաղում ցեղասպանության գործընթացում, քանի որ վերջիններիս վարքագիծը կարող է նշանակալի ազդեցություն գործել հասարակության վրա:

Երկրորդ մոտեցումը, որն ընդունված է գրականության մեջ, հավաքական կամ իմացության վրա հիմնված մոտեցումն է (*knowledge-based approach*): Սրանով ենթադրվում է պաշտպանվող խմբի իրական ոչնչացումը կամ նրա ոչնչացման իրական ծրագրի առկայությունը: Հանցագործը պետք է իմանա այդ ծրագրի մասին և նպաստի ծրագրի իրականացմանը<sup>278</sup>: Հավաքական մոտեցմամբ միասնական ծրագրի պարզապես առկայությունը բավարար չէ, եթե հանցագործը տեղյակ է միայն ծրագրի մանրամասներին: Վերջինս պետք է գործի ուղղակիորեն և հիմնականում իր գործողություններով նպաստի խմբի ոչնչացմանը, հակառակ դեպքում հանցագործը գործում է միայն ոչնչացման քաղաքականության իմացությամբ և հանդես է գալիս որպես հանցակից: Այս մոտեցումը վերաբերում է հանցագործներին, որոնք գործում են, այսպես ասած՝ «տեղում»:

Իրենց գործունեության առաջին տարիներին ժամանակավոր դատարանները չկենտրոնացան կանոնադրության մեջ «*որպես այդպիսին*» արտահայտության վրա, որն ունի իր օժանդակ ազդեցությունը՝ պարզելու ցեղասպանության հանցագործության հատուկ ցեղասպանական մտադրությունը<sup>279</sup>: «*Որպես այդպիսին*»-ը մեկնաբանվում է իբրև օգտակար միջոց՝ զանգվածային սպանությունն ու ցեղասպանության հանցագործությունները տարբերակելու համար, քանի որ ցեղասպանության դեպքում ոչնչացման թիրախը ոչ թե անձը կամ խմբի անդամն է, այլ «որպես այդպիսին» խումբը<sup>280</sup>: Դա շու-

---

<sup>278</sup> Sté u G. Boas et al. (note 243), էջ 162:

<sup>279</sup> Sté u ICJ, Application for Revision of the Judgment of 26 February 2007 *Bosnia and Herzegovina v. Yugoslavia (Serbia and Montenegro)*, para. 187:

<sup>280</sup> Sté u *W. Schabas/H. Fliessbach*, *Genozid im Völkerrecht*, 1st ed. Hamburg, 2003, էջ 340:



տով հաստատեց Ռուանդայի միջազգային քրեական դատարանի վերաքննիչ պալատը, որտեղ դատարանը պարզաբանեց, որ «որպես այդպիսին» ձևակերպումը նշանակում է, որ գործողությունները կատարվել են գոհերի դեմ պաշտպանվող խմբին իրենց անդամակցության պատճառով, բայց ոչ միայն դրա համար<sup>281</sup>:

### *16.1.3 Լրիվ կամ մասնակի ոչնչացումը*

Ցեղասպանական մտադրության խնդրից բացի՝ ցեղասպանության կոնտեքստում հատկանիշներից է նաև լրիվ կամ մասնակի ոչնչացումը, որն իր հերթին այլ դժվարություններ է ստեղծում հանցագործության վերլուծության համար: Ոչնչացումն ինքնին նշանակում է ֆիզիկական կամ կենսաբանական բնաջնջում: Ֆիզիկական ոչնչացումը նախատեսված է Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածի ա-գ ենթակետերով, իսկ կենսաբանական ոչնչացումը՝ դ-ե կետերով: Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածի համաձայն՝ ոչնչացումը սահմանվում է որպես առանձին ֆիզիկական գործողություն, որը հանգեցնում է պաշտպանվող խմբի ոչնչացմանը, կամ որը կարող է վտանգել պաշտպանվող խմբի գոյությունը: Կարևոր է նշել, որ ոչնչացման մեթոդները կարող են տարբեր լինել: Ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացումը խմբի ոչնչացման միակ միջոցը չէ: Ինչպես արդեն նշվեց, կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքների ժամանակ նախատեսվում էր սահմանել երրորդ տեսակը՝ մշակութային ոչնչացումը: Շուտով, սակայն, մշակութային ոչնչացումը, ինչպես, օրինակ, գրքեր ոչնչացնելը, լեզվի գործածումն արգելելը և այլն, հանվեց կոնվենցիայի նախագծից: Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը եզրակացրեց, որ խումբը բաղկացած է տարբեր բաղադրիչներից՝ միասնական պատմությունից, ավանդույթներից, իր անդամների միջև հարաբերություններից: Այս

---

<sup>281</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Niyitegeka*, Appeals Chamber, Judgment, 9 July 2004, para. 53:

բաղադրիչների նկատմամբ ոտնձգությունը կարող է ինքնին հանգեցնել խմբի ոչնչացմանը<sup>282</sup>:

«Լրիվ կամ մասնակի» ձևակերպումը մեկնաբանելիս միջազգային փորձագետները հանգում էին տարբեր մոտեցումների: Լրիվ կամ մասնակի հասկացությունները սկզբնապես ձևակերպվել են, որպեսզի ցեղասպանության նպատակը լինի ոչ միայն լրիվ վերացումը, այլև պաշտպանվող խմբի մասնակի վերացումը<sup>283</sup>: Վերլուծելով ժամանակավոր դատարանների դատական պրակտիկան և Հռոմի ստատուտի նախապատրաստական փաստաթղթերը՝ կարելի է հաստատել այն ընդունված մոտեցումը, որ ցեղասպանության հանցագործություն կատարելիս պետք է թիրախավորված լինի պաշտպանվող խմբի էական<sup>284</sup> կամ նշանակալից<sup>285</sup> մասը: Դատարանը նաև վկայակոչել է, որ զոհերի էական թվի առկայությունը ցեղասպանության բնորոշիչ է<sup>286</sup>: Միևնույն ժամանակ դատարանը զոհերի թվի առումով փորձել է բնութագրել հանցագործությունների մասշտաբայնությունը: Չոհերի զգալի թվի էական լինելը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են խմբի թիրախային մասի թվաքանակը՝ կապված ամբողջ խմբի ընդհանուր թվի, պաշտպանվող խմբի աշխարհագրական դիրքի, ինչպես նաև հանցագործության գործունեության և հսկողության տարածքի բաղադրիչների հետ<sup>287</sup>: Խոսելով խմբի ստվարաթիվ լինելու

---

<sup>282</sup> Sté u ICTY, *Prosecutor v. Blagojević & Jokić*, Trial Chamber, Judgment, 17 January 2005, para. 666:

<sup>283</sup> Sté u UNSC, UN Doc. S/1994/674 27 May 1994, 93:

<sup>284</sup> Sté u ICTR, *Prosecutor v. Baglishema*, Appeals Chamber, Judgment, 7 June 2001, para. 64:

<sup>285</sup> Sté u ICTR, *Prosecutor v Kayishema et al.* Trial Chamber, Judgment, 21 May 1999, para. 97:

<sup>286</sup> Sté u ICTY, *Prosecutor v. Krstić*, Appeals Chamber, Judgment, 19 April 2004, para. 8:

<sup>287</sup> Sté u ICTY, *Prosecutor v Brdanin*, Trial Chamber. Judgment, 1 September 2004, para. 702:

մասին՝ դատական պրակտիկայում հաստատվել է երեք մոտեցում՝ թվային, գործառական և աշխարհագրական:

Թվային մոտեցման պայմաններում էական լինելը կախված էր զոհերի թվից<sup>288</sup>, ինչը հետագայում մասամբ մերժվեց այն պատճառով, որ չնայած զոհերի թվի կարևորությանը, այն միակ կարևոր և վերջնական բաղադրիչն ու ցուցանիշը չէ<sup>289</sup>:

Գործառական մոտեցմամբ ենթադրվում է պաշտպանվող խմբի ղեկավարների նպատակային հետապնդումն ու թիրախավորումը, որով, այսպես ասած, պաշտպանվող խումբը գլխատվում է: Քաղաքական, կրոնական առաջնորդների, գիտնականների և մտավորականների, գործարարների և այլոց հետապնդումները կարող են ինքնին ցեղասպանությունների հստակ նշան լինել՝ անկախ սպանվածների իրական թվից: Մինևույն ժամանակ պետք է հաստատել, որ առաջնորդների վրա հարձակման ժամանակ խմբի մեծ թվով անդամներ սպանվում կամ ենթարկվում են այլ գործողությունների, օրինակ՝ լայնածավալ տեղահանությունների<sup>290</sup>: Ըստ այդմ՝ բոլոր գործողությունները պետք է դիտարկվեն ամբողջության մեջ:

Աշխարհագրական մոտեցմամբ ժամանակավոր դատարանները որոշել են, որ նույնիսկ սահմանափակ աշխարհագրական տարածաշրջանում պաշտպանվող խմբի մասնակի ոչնչացումը կարող է բավարարել ցեղասպանության հանցագործության պահանջները<sup>291</sup>: Այնուամենայնիվ, սա պահանջում է խմբի մի մասի էական ոչնչա-

---

<sup>288</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Kayishema et al.*, Trial Chamber, Judgment, 21 May 1999, para. 97:

<sup>289</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Krstić*, Appeals Chamber, Judgment, 19 April 2004, para. 8:

<sup>290</sup> Տե՛ս ICTY, *Prosecution v. Tolmir*, Appeals Chamber, Judgment, 8 April 2015, paras. 261-264:

<sup>291</sup> Տե՛ս *I. Bantekas/S. Nash*, International criminal law, 2nd ed. London, 2003, էջ 141:

ցումը<sup>292</sup>: Այսպիսով, կարևոր նշանակություն ունեն սահմանափակ աշխարհագրական տարածքում գտնվող խմբի անդամների ընդհանուր թվի նկատմամբ զոհերի որակը և քանակը: Հաջորդ տարրը խմբի վերարտադրման ունակությունն է<sup>293</sup>:

## 16.2 Առանձին գործողություններ

### 16.2.1 Խմբի անդամների սպանությունը

Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածի ա կետով ֆիզիկական ցեղասպանության տեսակ է խմբի անդամներին դիտավորյալ մահ պատճառելը: «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան զոհերի նվազագույն կամ առավելագույն թիվ չի պահանջում, ինչը գրականության մեջ հանգեցրել է հակասական կարծիքների: Ի տարբերություն Հռոմի ստատուտի, որն իր հանցագործությունների հատկանիշներով պահանջում է անգամ մեկ զոհի առկայությունը<sup>294</sup>՝ նշված կոնվենցիայի դրույթը մեկնաբանվում է այնպես, որ ցեղասպանության հանցակազմը կարող է բավարարվել խմբի առնվազն երկու անդամին մահ պատճառելու դեպքում: Բացի հանցագործության զոհի առկայությունից՝ ցեղասպանության հանցակազմի հատկանիշները պահանջում են (1) *խմբի անդամներին* (2) *մահ պատճառելը* (3)՝ *կատարողի ակտիվ կամ պասիվ գործողությամբ* (4):

Անզգուշությամբ սպանությունը չի ներառվել ցեղասպանության հանցակազմի հատկանիշների մեջ միայն այն պատճառով, որ վեր-

---

<sup>292</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Krstić*, Appeals Chamber, Judgment, 19 April 2004, paras. 17, 60:

<sup>293</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Sikirica et al.*, Trial Chamber, Judgment, 3 September 2001, para. 80:

<sup>294</sup> Տե՛ս Article 6 (a)(1) Elements of Crime:

չինս էությամբ գիտակցված, դիտավորյալ, կամային գործողություն է, որը չի կարող կատարվել անզգուշությամբ<sup>295</sup>:

*16.2.2 Խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը*

Ֆիզիկական ցեղասպանության մեկ այլ տեսակ է խմբի անդամներին լուրջ վնասվածքներ պատճառելը: Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածի բ կետով դա խմբի անդամների առողջությունը վտանգող գործողություններով լուրջ մարմնական և հոգեկան վնաս կամ հոգեկան խանգարում առաջացնելն է: Ֆիզիկական վնասվածքը մարդու վերջույթների և ներքին օրգանների գործունեությունը խախտելն է<sup>296</sup>: Մտավոր կամ հոգեբանական վնաս կրելու պարագայում տուժողը կարող է ձեռք բերել ֆիզիկական հնարավորությունների ու մտավոր վիճակի սահմանափակում կամ վատթարացում<sup>297</sup>: Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը, պարզաբանելով «վնասվածքի» սահմանումը, պնդեց, որ ֆիզիկական կամ հոգեկան վնասվածքը չպետք է լինի, այսպես ասած, ժամանակավոր դժբախտություն, որի պարագայում մարդու առողջական վիճակը կարճ ժամանակով կարող է վատթարանալ: Թե՛ հոգեբանական և թե՛ ֆիզիկական վնասվածքը պետք է հանգեցնի մարդու՝ նորմալ և կառուցողական կյանք վարելու կարողության լուրջ և երկարաժամկետ սահմանափակմանը<sup>298</sup>: Թեև քրեական դատարանների կանոնադրությունները չեն սահմանում վնասվածքների տեսակները, այնուամենայնիվ միջազգային դատական պրակտիկան հաստատել է, որ

---

<sup>295</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, paras. 500-501, ICTR. *Prosecutor v. Baglishema*, Appeal Chamber, Judgment, 7 June 2001, para. 58:

<sup>296</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Kayishema et al.*, Trial Chamber, 21 May 1999, para. 109:

<sup>297</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Gacumbtsi*, Trial Chamber, Judgment, 17 June 2004, para. 291:

<sup>298</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Krstić*, Trial Chamber, Judgment, 2 August 2001, para. 513:

բռնաբարությունը, սեռական հարկադրանքը, ինչպես ցանկացած այլ ձևի սեռական բռնությունը և խոշտանգումները կամ հարկադիր տեղահանումը կարող են լուրջ ֆիզիկական և հոգեկան վնաս պատճառել<sup>299</sup>: Եթե մարմնական վնասվածքն ակնհայտ է, ապա հոգեկան վնասը որոշելը բավականին դժվար է, հետևաբար յուրաքանչյուր առանձին դեպքից է կախված հոգեկան լուրջ վնասի առկայությունը: Նման հանգամանքներում քրեական հետապնդումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե արարքի ընթացքում մեղադրյալը մտադրվել է լուրջ հոգեկան վնաս պատճառել՝ ունենալով խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման հատուկ մտադրություն:

*16.2.3 Որևէ խմբի համար միտումնավոր կյանքի այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը*

Ո՛չ Հռոմի ստատուտը, ո՛չ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան չունեն այն գործողության հատուկ բնորոշումը, ինչը հանգեցնում է խմբի ֆիզիկական վերացմանը: Թեև ժամանակակից դատական պրակտիկայում բացակայում են այս հարցի վերաբերյալ օրինակները, սակայն պատմության մեջ դրանք բազմաթիվ են: Օսմանյան կայսրությունից հայերի բռնի տեղահանություններն ու արտաքսումը սիրիական անապատներ, այսպես կոչված, դանդաղ մահվան պայմաններ ստեղծելը հանգեցրել են ֆիզիկական ոչնչացման: Այդ շարքում կարելի է նշել նաև հարկադիր աշխատանքը, անբավարար սնունդը կամ բժշկական օգնության բացակայությունը, որոնցով կյանքի է կոչվում խմբի անդամներին հյուժվածությունից մահ պատճառելու և այդպիսով խումբը ոչնչացնելու մտադրությունը: Նախկին Հարավսլավիայի

---

<sup>299</sup> Sté u ICTY, *Prosecutor v. Blagojevic, Jokic*, Trial Chamber, Judgement, 17 January 2005, para. 671, *A.-M. d. Brouwer*, Supranational criminal prosecution of sexual violence: The ICC and the practice of the ICTY and the ICTR. Antwerpen, 2005, էջ 80, G. Petrossian (note 67), էջ 140, ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, paras. 701-702:

միջազգային քրեական դատարանը անհրաժեշտ համարեց հաշվի առնել այն փաստը, որ ուղղակի սպանությունը ինքնին չի կարող լինել այնպիսի պայմաններ ստեղծելու մեթոդ, որոնք նախատեսված են խուսմբը ոչնչացնելու համար<sup>300</sup>: Այնուամենայնիվ, հանցակազմի գոյության համար կարևոր է ոչ թե ինքնին խուսմբը, այլ պայմանները ոչնչացնելը, որոնք ուղղված են խմբի մեկ կամ մի քանի անդամների դեմ, և որոնք կարող են հանգեցնել պաշտպանվող խմբի ոչնչացմանը<sup>301</sup>:

#### *16.2.4 Խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցներ գործադրելը*

Օնելիության նկատմամբ վերահսկողությունը կարող է էական դեր խաղալ ցեղասպանության հանցագործության պարագայում: Պատմական օրինակները վկայում են, որ խուսմբը լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ հաճախ ծնելիությունը կանխելու միջոցներ են ձեռնարկվում, ինչը հանգեցնում է խմբի դանդաղ ոչնչացմանը: Ստերիլացումը, ամուսնության և ծննդյան արգելքը, ըստ ժամանակավոր դատարանների դատական պրակտիկայի, հանգեցնում են ցեղասպանության հանցագործության<sup>302</sup>: Նորածինների, պտղի կամ հղի կանանց սպանությունը սովորաբար պաշտպանվող խմբի անդամների թիվը նվազագույնի հասցնելու մտադրություն է: Այս գործողությունները առանձնահատուկ նշանակություն ունեն հայրիրավական հասարակություններում, որտեղ երեխայի ինքնությունը նույնականացվում է հոր հետ: Ըստ այդմ՝ մեկ այլ խմբի անդամի կող-

---

<sup>300</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Kayishema et al.*, Trial Chamber, Judgment, 21 May 1999, para. 115, ICTY, *Prosecutor v Brđanin*, Trial Chamber, Judgment, 1 September 2004, para. 691, ICTY, *Prosecutor v. Tolimir*, Appeals Chamber, Judgment, 8 April 2015, para. 228:

<sup>301</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Stakic*, Trial Chamber, Judgment, 21 July 2003, para. 517:

<sup>302</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, paras. 698-734:

մից կնոջ հղիացումը նշանակում է, որ երեխան չի պատկանելու մոր ցեղին: Մեկ այլ՝ կենսաբանական ցեղասպանական գործողություն է պաշտպանվող խմբի կանանց նկատմամբ սեռական բռնությունը, ինչը վկայում է պաշտպանվող խմբի տղամարդկանց անօգնականության մասին, որոնք չեն կարող հարձակումից պաշտպանել իրենց ընտանիքը՝ այդպիսով երաշխավորելով իրենց ցեղի գոյությունը: Բռնաբարության և սեռական բռնության այլ ձևերի զոհ դարձած կանայք արտաքսվում են իրենց համայնքներից, հաճախ ինքնասպանություն գործում, ինչը ևս նվազեցնում է խմբի վերարտադրողականությունը:

*16.2.5 Երեխաներին բռնի փոխանցելը մարդկային մեկ խմբից մյուսին*

Մինչ օրս վերոհիշյալ առանձին գործողության վերաբերյալ դատական պրակտիկա գոյություն չունի: Կարելի է ենթադրել, որ անհատական գործողության այս տարրերը բնորոշ են մշակութային ցեղասպանությանը, քանի որ ազդում են խմբի ինքնության պահպանման վրա: Իրենց ընտանիքներից երեխաների բռնի տարանջատումը նպատակ ունի առաջացնելու հարկադիր կրթության և սեփական հասարակության մեջ ինտեգրման, որոշակի պաշտպանվող խմբի պատկանելու զգացողության կորուստ: Այս գործողությունների օրինակ կարող են ծառայել 1365-1826 թթ. Օսմանյան կայսրության ենիջերական զորքերը, այսպես կոչված, «*դեվշիրմեն*», որոնք բաղկացած էին քրիստոնյա փոքրամասնություններից բռնի մահմեդականացված երիտասարդներից: Մեկ այլ օրինակ է Երկրորդ աշխարհամարտի տարիներին SS Einsatzgruppen-ի ռասայի և կարգավորման հարցերով զլխավոր տնօրինության գործունեությունը, որով դեռահաս-



ները, որոնք գտարյուն չէին՝ «*nichtblutfremde*», դասակարգվում էին որպես «*wiedereindeutschungsfähig*»՝ գերմանացի դառնալու ունակ<sup>303</sup>:

## 17. Ցեղասպանության հրահրում

Ճիշտ այնպես, ինչպես «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի II հոդվածը ներառվեց Հռոմի ստատուտի մեջ, այդպես էլ կոնվենցիայի III հոդվածը ընդգրկվեց ստատուտի շրջանակներում: Սակայն այստեղ այն ենթարկվեց որոշ փոփոխությունների: Հռոմի ստատուտի մշակման ընթացքում կոդները, հաշվի առնելով ցեղասպանության համար անհատական պատասխանատվության առանձնահատկությունը, համաձայնեցին ցեղասպանության մասին վերոնշյալ կոնվենցիայի III հոդվածի դրույթները նույն կերպ ընդգրկել Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածում՝ համարելով, որ դրա դիտարկումը առանձին հոդվածով անտեղի է<sup>304</sup>: Բացի այդ՝ քրեական պատասխանատվություն է նախատեսվում ինչպես ցեղասպանության անմիջական կատարման, այնպես էլ հանցանքը մեկ այլ անձի միջոցով կատարելու, օժանդակելու, փորձ կատարելու, հրահրելու համար: «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան պատասխանատվություն է նախատեսում ցեղասպանություն կատարելու դավադրության համար: Դավադրության խնդրի վերաբերյալ իրավաբանական համակարգերի տարբեր մոտեցումների պատճառով որոշվեց բացառել հոդվածում նախատեսված՝ դավադրության համար պատասխանատվության ձևը: Մինևնույն ժամանակ առաջարկվեց որպես այլընտրանք ներառել նաև ցեղասպանության իրականացմանը նպաստելու համար միասնական նպատակի առ-

---

<sup>303</sup> Տե՛ս *I. Heinemann*, Rasse, Siedlung, deutsches Blut: Das Rasse- und Siedlungshauptamt der SS und die rassenpolitische Neuordnung Europas, 2nd ed. Göttingen, 2013, էջ 351:

<sup>304</sup> Տե՛ս *W. Schabas* (note 160), էջ 141:

կայությունը (Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածի 3-րդ մասի ե կետ): Հռոմի ստատուտի 25-րդ հոդվածով քրեական պատասխանատվության գրեթե բոլոր ձևերը նախատեսված են միջազգային քրեական դատարանի ենթակայության տակ գտնվող բոլոր հանցագործությունների համար, և միայն ցեղասպանություն իրականացնելու պարագայում ուղղակի ու հանրային հրահրումը համարվում է ցեղասպանության հանցագործություն: Ուղղակի ու հասարակական հրահրումը հատուկ երևույթ է ցեղասպանության հանցագործության մեջ, քանի որ դա ինքնին կախված չէ ցեղասպանությունից և ինքնուրույն գործողություն է: Այս արարքի առանձնահատուկ վտանգն այն է, որ այն կարող է հանգեցնել անկանխատեսելի և անվերահսկելի խմբային դինամիկ գործընթացների: Ըստ այդմ՝ Հռոմի ստատուտը սահմանում է երկու տեսակի հրահրում՝ ուղղակի (դրդում) (*Anstiften*) և հանրային (*Auffordern*): Հանրային հրահրմամբ հասցեատեր չի սահմանվում, և հրահրումը կարող է ուղղված լինել անորոշ թվով անձանց, որի ժամանակ համեմատաբար մեծանում է արարքի վտանգավորությունը:

Ուղղակի հրահրումը հասցեագրված է անմիջականորեն տվյալ անձին: Հանրային հրահրումը պաշտպանվող խմբի դեմ ուղղված քրեական գործողություններ կատարելու հասարակական կոչ է, որն արվում է հասարակական վայրում կամ տեխնոլոգիական լրատվամիջոցների՝ ռադիոյի, հեռուստատեսության և ինտերնետի օգտագործմամբ<sup>305</sup>:

Ազգայնական գաղափարախոսությունը, հրեաների հանդեպ հակակրանքը, Երկրորդ աշխարհամարտից առաջ լայնորեն տարածվեցին ժամանակակից տեխնոլոգիաների, այդ թվում՝ գրքերի, մամուլի, պաստառների, ռադիոյի և կինոնկարների միջոցով, որոնք կոչ էին անում գործողություններ իրականացնել ոչ արիականների նկատմամբ և բոլկոտել նրանց: Դա վերահսկում էր Գերմանական կայսրության կրթության և քարոզչության նախարարությունը, որը

---

<sup>305</sup> See K. Ambos (note 187), էջ 1017:

հիմնադրվել էր 1933 թ.: Մասնավորապես, Յուլիոս Շտոայխերի հիմնադրած թերթը՝ «*Der Stürmer*»-ը, մեծ դեր էր խաղացել հիտլերյան Գերմանիայի քարոզչական մեքենայի գործունեության մեջ: Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանը Շտոայխերի գործողությունները բնութագրել է որպես գերմանական հասարակության մտքում ներարկված թույն, ինչը նպաստել է հակասեմական տրամադրությունների տարածմանը<sup>306</sup>:

Ռուանդայի ցեղասպանության ժամանակ քարոզչական մեքենան՝ ռադիոն, կատարել է երկու գործառույթ. մի կողմից՝ թուրօսիներին բնութագրել որպես ոչ մարդիկ, այլ խավարասերներ, դրանով ատելության խոսք տարածել, մյուս կողմից՝ համակարգել հուրոնների կողմից թուրօսիների վրա հարձակումները: Քանի որ Ռուանդայի բնակչության մեծամասնությունը տառաճանաչ չէր, ռադիոն հսկայական դեր խաղաց քարոզչության տարածման գործում: RTLM-ի հեռարձակումը (*Radio-Télévision Libre des Mille Collines*), որը նաև հայտնի էր որպես *Radio Machete*, հատուկ դեր խաղաց ցեղասպանության իրականացման, հանցագործության մեջ: Երկու գործառույթները՝ ատելության խոսքի տարածումը և համակարգումը, հանգեցրին հազարավոր թուրօսիների մահվան<sup>307</sup>:

*Ցեղասպանության հանցագործության ստուգման մեթոդաբանությունը.*

1. Հանցակազմ:

2. Actus reus՝

ա. պաշտպանվող խմբի ատկայություն,

բ. առանձին գործողություն,

գ. նմանատիպ այլ գործողությունների համատեքստում:

---

<sup>306</sup> Տե՛ս IMT, Office of Chief of Counsel for the Prosecution of Axis Criminality, Nazi Conspiracy and Aggression, Opinion and Judgment, 1947 56, IMT (Hrsg.), Trial of the Major War Criminals before the International Military Tribunal, 1947, 34:

<sup>307</sup> Տե՛ս *L. Kirschke*, Broadcasting genocide: Censorship, propaganda and state-sponsored violence in Rwanda 1990-1994. London, 1996, էջ 17-18:

3. Mens rea`

ա. դիտավորությունը` ըստ Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի,  
բ. պաշտպանվող խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման ցեղաս-  
պանական մտադրությունը (*dolus specialis*):

4. Հանցանքը բացառող հանգամանքներ:

## ԳԼՈՒԽ 7

### ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

*For the purpose of this Statute, "crime against humanity" means any of the following acts when committed as part of a widespread or systematic attack directed against any civilian population, with knowledge of the attack:*

- (a) Murder;*
- (b) Extermination;*
- (c) Enslavement;*
- (d) Deportation or forcible transfer of population;*
- (e) Imprisonment or other severe deprivation of physical liberty in violation of fundamental rules of international law;*
- (f) Torture;*
- (g) Rape, sexual slavery, enforced prostitution, forced pregnancy, enforced sterilization, or any other form of sexual violence of comparable gravity;*
- (h) Persecution against any identifiable group or collectivity on political, racial, national, ethnic, cultural, religious, gender as defined in paragraph 3, or other grounds that are universally recognized as impermissible under international law, in connection with any act referred to in this paragraph or any crime within the jurisdiction of the Court;*
- (i) Enforced disappearance of persons;*
- (j) The crime of apartheid;*
- (k) Other inhumane acts of a similar character intentionally causing great suffering, or serious injury to body or to mental or physical health.*

## 18. Ընդհանուր դրույթներ

Ի տարբերություն ցեղասպանության հանցագործության՝ «մարդկության դեմ հանցագործություն» կամ «մարդկայնության դեմ հանցագործություն» հասկացությունը ավելի վաղ ծագումնաբանություն ունի: Դեռևս 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի անդամները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով դատապարտեցին Օսմանյան կայսրության կառավարության անդամներին հայ ժողովրդի նկատմամբ կատարված ոճրագործության համար: Այն ի սկզբանե կրում էր «քրիստոնեության դեմ հանցագործություն» անվանումը, այնուհետև փոխարինվեց «մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություն» հասկացությամբ<sup>308</sup>: Թեև դաշնակիցները հայտարարեցին, որ Բարձր դռան անդամներն անձամբ են կրում կատարվածի համար պատասխանատվությունը, սակայն հետամուտ չեղան պատերազմի ավարտին կառավարության անդամների նկատմամբ վճիռներն ի կատար ածելուն: «Մարդկության դեմ հանցագործություն» եզրույթն առաջին անգամ գործնականում կիրառվեց այն բանից հետո, երբ Երկրորդ աշխարհամարտի ավարտին ընդգրկվեց Լոնդոնի խարտիայի մեջ՝ դառնալով հանցակազմ<sup>309</sup>: Այն իր կառուցվածքով, սակայն, տարբերվում է Հռոմի ստատուտով նախատեսված՝ «մարդկության դեմ հանցագործություն» եզրույթից: Ակնհայտ է, որ Հռոմի ստատուտում այս հանցակազմը, թե՛ Միջազգային ռազմական տրիբունալի և թե՛ ժամանակավոր Միջազգային քրեական դատարանների փորձի հիման վրա ավելի ընդլայնվել ու զարգացել է:

---

<sup>308</sup> St´u France, Great Britain and Russia Joint Declaration, 1915:

<sup>309</sup> St´u Article 6 (c) crimes against humanity: namely, murder, extermination, enslavement, deportation, and other inhumane acts committed against any civilian population, before or during the war; or persecutions on political, racial or religious grounds in execution of or in connection with any crime within the jurisdiction of the Tribunal, whether or not in violation of the domestic law of the country where perpetrated:

Գեռնա Երկրորդ աշխարհամարտից հետո իրավական բանավեճ սկսվեց ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործության եզրույթների շուրջ, թե որքանով է այս հանցագործությունների միաժամանակյա կիրառությունը ճիշտ, քանի որ երկուսն էլ մասամբ պաշտպանում են նույն առարկան՝ որոշակի տարբերվող կամ առանձնացվող հատկանիշներով: Այնուամենայնիվ, Հերշ Լաուֆեր-պախտին, որը «մարդկության դեմ հանցագործություն» եզրույթի ջատագովն էր, չհաջողվեց ստեղծել միջազգային կոնսենսուս՝ այդ հանցակազմը միջազգային հանրությանը որպես կոնվենցիա ներկայացնելու համար: Ի դեմս նրա՝ Ռաֆայել Լեմկինը կարողացավ ՄԱԿ-ում համոզել որոշ պատվիրակների՝ հանդես գալու ցեղասպանության հանցագործության վերաբերյալ առանձին կոնվենցիա ստեղծելու նախաձեռնությամբ<sup>310</sup>: Սակայն թեև «մարդկության դեմ հանցագործություն» եզրույթը միջազգայնորեն չարժանացավ այն չափով քաղաքական ուշադրություն, որքան ցեղասպանության հանցագործությունը, այնուամենայնիվ այս եզրույթը պրակտիկ տեսանկյունից ավելի շատ կիրառվեց նացիստական Գերմանիայի գլխավոր մեղադրյալներին պատժելու համար: Միջազգային ռազմական տրիբունալի վճռին հաջորդեց ԱՄՆ վերահսկիչ խորհրդի կողմից ընդունված օրենքի հիման վրա (Control Council Law N. 10) մարդկության դեմ հանցագործությունների դատապարտումը արդեն Նյուրնբերգի ռազմական տրիբունալում<sup>311</sup>:

Կիրառելիության տեսանկյունից մարդկության դեմ հանցագործությունը Միջազգային ռազմական տրիբունալում չէր գործում որպես առանձին հանցագործություն, այլ ազդեսիայի հանցագործությո-

---

<sup>310</sup> Մանրամասն տե՛ս *P. Sands, East West street: On the origins of "genocide" and "crimes against humanity"*, 2016:

<sup>311</sup> Crimes against Humanity. Atrocities and offenses, including but not limited to murder, extermination, enslavement, deportation, imprisonment, torture, rape, or other inhumane acts committed against any civilian population, or persecutions on political, racial or religious grounds whether or not in violation of the domestic laws of the country where perpetrated.

յան և պատերազմական հանցագործությունների մաս էր: Այսինքն՝ մարդկության դեմ հանցագործությունը կարող էր օգտագործվել միայն ռազմական համատեքստում (*before or during war*)<sup>312</sup>: Ընդհանուր առմամբ Միջազգային ռազմական տրիբունալում միայն երկու մեղադրյալ դատապարտվեց մարդկության դեմ հանցագործության համար՝ Յուլիոս Շտայխերը և Բալդուր վոն Շիրախը<sup>313</sup>: Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական տրիբունալով ոչ ոք չդատապարտվեց մարդկության դեմ հանցագործության համար: Այլ պատկեր ձևավորվեց ԱՄՆ վերահսկիչ խորհրդի կողմից ընդունված օրենքի պարագայում, որտեղ ռազմական համատեքստը այլևս նշանակություն չուներ, չնայած նրան, որ դատավորները հղում էին անում Միջազգային ռազմական տրիբունալի դատական փորձին:

Ռազմական նշանակությունը մարդկության դեմ հանցագործությունների առումով դեռևս երկար ժամանակ մնաց քննարկման առարկա. սա պայմանավորված էր նրանով, որ քաղաքական հարթակում պետությունները չէին ցանկանում իրենց գործողությունները որևէ ձևով սահմանափակել: Մարդկության դեմ հանցագործությունը միջազգային առանձին պայմանագրով արձանագրելու բոլոր փորձերը, այնուամենայնիվ, ձախողվում էին, թեև նախագծերով նախատեսվում էր ռազմական իրավիճակի առկայությունը, առանց որի մարդկության դեմ հանցագործություն հնարավոր չէր լինի իրականացնել<sup>314</sup>: Եվ միայն 1991 թ. նախագծով ռազմական համատեքստը փոխարինվեց «պարբերական և լայնածավալ գործողությունների առկայություն» ձևակերպմամբ, ըստ որի՝ մարդու իրավունքների ոտնահարումները պետք է տեղի ունենան պարբերական և լայնա-

---

<sup>312</sup> Sté u *M. M. DeGuzman*, in: W. A. Schabas, *Routledge handbook of international criminal law*, 2013, էջ 123, *P. Akhavan*, *Reconciling Crimes Against Humanity with the Laws of War: Human Rights, Armed Conflict, and the Limits of Progressive Jurisprudence*, *Journal of International Criminal Justice* 6 (2008), էջ 23-27:

<sup>313</sup> Sté u C. Safferling (note 2), էջ 180:

<sup>314</sup> Sté u *Draft Code of Offences against the Peace and Security of Mankind 1954*:



ծավալ գործողությունների պարագայում<sup>315</sup>: 1996 թ. նախագծով երկու հատկանիշների առկայությունը նվազեցվեց մեկով, այսինքն՝ կա՛մ պարբերական, կա՛մ լայնածավալ գործողությունների առկայություն<sup>316</sup>: Քանի դեռ քննարկումներն այս հատկանիշների շուրջ շարունակվում էին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի միջոցով ձևավորվեցին ժամանակավոր միջազգային քրեական դատարանները, որոնք իրենց կանոնադրություններում ներառեցին մարդկության դեմ հանցագործության հասկացությունը այնպիսի տեսքով, ինչպիսի զարգացման մակարդակի հասել էր այս եզրույթը այդ ժամանակահատվածում: Այսպիսով, նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը ուղիղ իմաստով կապեց մարդկության դեմ հանցագործությունը միջազգային կամ ոչ միջազգային զինված ընդհարման հետ<sup>317</sup>: Իսկ Ռուանդայի միջազգային քրեական դատարանը իր կանոնադրությամբ սահմանեց, որ մարդկության դեմ հանցագործությունը կարող է լինել միայն քաղաքացիական բնակչության նկատմամբ լայնածավալ կամ պարբերական հարձակման պարագայում, այն էլ՝ ելնելով որևէ խտրականությանից<sup>318</sup>: Այս երկու տարբեր բնութագրերը ամեն դեպքում չխանգարեցին ժամանակավոր դատարաններին միասնական մոտեցում ձևավորելու հանցակազմե-

---

<sup>315</sup> Տե՛ս Draft Code of Crimes against the Peace and Security of Mankind 1991:

<sup>316</sup> Տե՛ս Draft Code of Crimes against the Peace and Security of Mankind with commentaries 1996:

<sup>317</sup> Տե՛ս հոդված 5, ICTY-Statute, «The International Tribunal shall have the power to prosecute persons responsible for the following crimes when committed in armed conflict, whether international or internal in character, and directed against any civilian population», C. Damgaard (note 94), էջ 33-36:

<sup>318</sup> Տե՛ս հոդված 3, ICTR-Statute «The International Tribunal for Rwanda shall have the power to prosecute persons responsible for the following crimes when committed as part of a widespread or systematic attack against any civilian population on national, political, ethnic, racial or religious grounds», 3, նաև՝ *L. J. van den Herik*, The contribution of the Rwanda Tribunal to the development of international law. Leiden, Boston, 2010, էջ 157-160, R. Dubler SC and M. Kalyk (note 103), էջ 172, M. C. Bassiouni (note 38), էջ 183-190:

րի վերաբերյալ, ինչն էլ հանգեցրեց նրան, որ Հռոմի ստատուտում արդեն ձևավորվեց մարդկության դեմ ինքնուրույն և ընդլայնված հանցագործության հանցակազմ:

## 19. Հանցակազմի կառուցվածքը

Ինչպես ցեղասպանության հանցագործության, այնպես էլ մարդկության դեմ հանցագործության պարագայում գրականության մեջ և դատական պրակտիկայում առաջանում է իրավական բանավեճ խմբակային ու անհատական պաշտպանվող առարկայի շուրջ: Ըստ այդմ՝ դժվար է հստակ պատասխանել՝ մարդկության դեմ հանցագործության առարկան քաղաքացիական բնակչությունն է՝ որպես կոլեկտիվ մարմին, որով էլ պաշտպանվում են գլոբալ մարդկային շահերը<sup>319</sup>, թե նեղ անձնային և անհատական շահերն են<sup>320</sup>: Այնուամենայնիվ, այս տարանջատումը ավելի հստակ պատկերացնելու համար պետք է առաջնորդվել այն հանգամանքով, որ մարդկության դեմ հանցագործությունը ինքնին միջազգային հանցագործություն է, որով անհատական շահերը առաջին պլան չեն մղվում: Անհատական շահերի պաշտպանությունը կարելի է իրականացնել ազգային ատյաններում՝ ազգային հանցակազմերի ներքո: Այսպիսով, մարդկության դեմ հանցագործությունը համայն մարդկության պաշտպանության և պահպանության դեմ ուղղված միջազգայնորեն վտանգավոր արարք է:

Մարդկության դեմ հանցագործության հանցակազմը, ցեղասպանության հանցագործությանը զուգահեռ, բաղկացած է երկու մասից՝ գլխավոր կամ կոնտեքստուալ հատկանիշներից և առանձին գործողություններից:

---

<sup>319</sup> Այդ թվում՝ խաղաղություն, պաշտպանվածություն, զարգացում և այլն:

<sup>320</sup> Կյանքի, առողջության, սեփականության և այլ իրավունքներ:

### 19.1 Կոնտեքստուալ հատկանիշներ

Մարդկության դեմ հանցագործության կոնտեքստուալ հատկանիշներն են՝ օբյեկտիվ տեսանկյունից՝ քաղաքացիական բնակչության վրա պարբերական կամ լայնածավալ հարձակումը, սուբյեկտիվ տեսանկյունից՝ այդ հարձակման վերաբերյալ իմացությունը:

#### 19.1.1 Հարձակում

Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ա կետը տալիս է հարձակման բնորոշումը, ըստ որի՝ քաղաքացիական բնակչությանն ուղղված հարձակումը պետք է բաղկացած լինի բազմաթիվ գործողություններից և կազմի պետական քաղաքականության կամ որևէ կազմակերպության ծրագրի մաս:

Բազմաթիվ գործողություններ ասելով՝ հասկացվում է ոչ միայն այն, որ նույն գործողությունը կատարվում է բազմիցս, այլև որ քաղաքացիական բնակչության նկատմամբ տարբեր գործողություններ կատարվում են բազում անգամներ<sup>321</sup>: Ակնհայտ է, որ ցանկացած գործողություն, որը կատարվում է պարբերաբար կամ լայնածավալ բնույթ ունի, ինչ-որ առումով վկայում է կազմակերպվածության, այսինքն՝ ծրագրի առկայության մասին: Ծրագրի առկայությունը, իհարկե, միակ բաղադրիչը չէ: Ծրագիրը իրականացնելու համար հարկավոր է ունենալ վերհսկողություն կամ ուժ, որը թույլ կտա կյանքի կոչել թե՛ ծրագիրը, թե՛ քաղաքականությունը: Ըստ այդմ՝ հարկավոր է, որ ծրագիր իրականացնողն ունենա համապատաս-

---

<sup>321</sup> St' u ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 581, ICTR, *Prosecutor v. Musema*, Trial Chamber, Judgment, 27 January 2000, para. 205, ICC, *Prosecutor v. Bemba*, Pre-Trial, Confirmation of Charges, 15 June 2009, para. 81, նաև՝ *G. Werle/F. Jeßberger*, Principles of international criminal law, 3rd ed. Oxford, 2014, էջ 337-338:

խան հնարավորություններ և ռեսուրսներ՝ այն իրականացնելու համար<sup>322</sup>:

Մինևույն ժամանակ քաղաքականության կամ ծրագրի առկայությունը կարող է բխել մի շարք գործոններից, օրինակ, եթե հարձակումը պլանավորված կամ ուղղորդված է, կամ, եթե կրկնվող բռնությունը պարբերաբար է, այսինքն՝ առկա են կրկնվող գործողություններ, որոնք տեղի են ունենում նույն հաջորդականությամբ: Այլ գործոն է ծրագրի իրականացման գործընթացում պետական կամ մասնավոր հատվածի ակտիվ մասնակցությունը, պետությանը կամ կազմակերպությանը վերագրվող հայտարարությունների, հրահանգների կամ փաստաթղթերի առկայությունը, որոնք դատապարտում կամ խրախուսում են հանցագործությունների կատարումը, պետության կամ կազմակերպության կողմից համակարգված նախապատրաստական կամ հավաքական մոբիլիզացիայի կամ պետական այլ շարժառիթի առկայությունը<sup>323</sup>:

Առանձին գործողությունը պետք է կազմի այդ ծրագրի կամ քաղաքականության որևէ մասը կամ փոխկապակցված լինի, այլ ոչ թե ուղիղ իմաստով լինի ծրագրի իրականացումը<sup>324</sup>:

### *19.1.2 Պարբերական և լայնածավալ*

Հարձակումը պետք է կրի պարբերական կամ լայնածավալ բնույթ: Այս մոտեցումը տարբերվում է մարդկության դեմ հանցագործությունների նախկին բնորոշումներից, որտեղ մասնավորապես

---

<sup>322</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 580, ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 30 September 2008, para. 396:

<sup>323</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Ntaganda*, Trial Chamber, Judgment, 8 July 2019, para. 674, ICC, *Prosecutor v. Katanaga*, Trial Chamber, Judgment, 7 March 2014, para. 1109, մեկնաբանման այլ մոտեցում՝ ICC, *Situation in Kenya*, Pre-Trial Chamber, Authorisation Decision, 31 March 2010, Dissenting Opinion Judge Kaul, para. 51:

<sup>324</sup> Տե՛ս *I. Marchuk*, *The Fundamental Concept of Crime in International Criminal Law: A Comparative Law Analysis*. Berlin, Heidelberg, s.l., 2014, էջ 103:

պահանջվում էր գործողությունների և՛ պարբերական, և՛ լայնածավալ հատկանիշների առկայությունը:

Գործողությունների պարբերական բնույթը արտացոլում է բռնության գործողությունների որակական կազմակերպվածությունը և դրանց պատահականության անհնարիությունը<sup>325</sup>: Գործողությունների պարբերական բնույթը ստուգելու համար դատական պրակտիկան սահմանել է երեք չափորոշիչ՝ գործողությունների նույնականացումը, գործողությունների նույնատիպ իրականացումը, տուժածների նկատմամբ նույնատիպ վերաբերմունքը<sup>326</sup>:

Գործողությունների լայնածավալ բնույթը ներկայացնում է տուժողների քանակը: Դժվար է սահմանել հստակ չափորոշիչ՝ լայնածավալությունը հաստատելու համար: Այն հաստատվում է մասնավորապես առանձին հանգամանքների համատեքստում<sup>327</sup>:

### *19.1.3 Քաղաքացիական բնակչություն*

Թեև այս հասկացությունը սկիզբ է առնում մարդասիրական իրավունքից, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նախկինում այս հանցակազմը ուղղակիորեն առնչվում էր ռազմական իրադարձություններին, ռազմական օբյեկտները կամ կոմբատանտները չէին կարող գտնվել այս հանցակազմի պաշտպանության ներքո<sup>328</sup>: Մակայն քաղաքացիական բնակչության լայն մեկնաբանությունը թույլ է տալիս անգամ զինյալներին դիտարկել որպես քաղաքացիական բնակ-

---

<sup>325</sup> *Stéu ICC, Prosecutor v. Harun and Abd-Al-Rahman*, Pre-Trial Chamber, Decision on the Prosecution Application under Article 58(7) of the Statute, 27 April 2007, para. 62, *ICC, Prosecutor v. Katanaga*, Trial Chamber, Judgment, 7 March 2014, para. 1123:

<sup>326</sup> *Stéu ICC, Prosecutor v. Ntaganda*, Trial Chamber, Judgment, 8 July 2019, para. 693:

<sup>327</sup> *Stéu ICC, Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Judgment, 21 March 2016, para. 163:

<sup>328</sup> Customary International Humanitarian Law, Rule 5, Definition of Civilians.

չության մաս<sup>329</sup>: Նույն կերպ, եթե այս պարագայում բացառվում է ցեղասպանությունից պաշտպանվող խմբի բնութագիրը, քաղաքացիական բնակչությունը հնարավոր չէ մեկնաբանել որպես լոկ պատահականորեն ընտրված անձանց միավորում: Ի տարբերություն ցեղասպանության հանցագործության, որը միայն չորս խմբի պաշտպանության համար է գործում, մարդկության դեմ հանցագործությունը ներառում է անձանց ցանկացած տեսակի միավորումներ և խմբավորումներ, որոնք օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն միմյանց հետ առնչություն ունեն<sup>330</sup>: Դա կարող է լինել ինչպես քաղաքական հայացքներով պայմանավորված մարդկանց խումբ, սոցիալական հատկանիշներով, գաղափարական կամ փիլիսոփայական մոտեցումներով առանձին խմբավորում, այնպես էլ անձանց խմբավորում՝ ըստ իրենց մասնագիտության, երեխաներ, կանայք, ծերեր, հիվանդներ, տղամարդիկ և այլն: Միննույն ժամանակ խտրականությունը, ըստ այդ խմբի պատկանելության, առաջնային չէ մարդկության դեմ հանցագործության պարագայում<sup>331</sup>: Հաշվի առնելով մարդկության դեմ հանցագործության նեղ առնչությունը ռազմական իրադարձություններին՝ մարդկության դեմ հանցագործության սահմանումը փոխառել է քաղաքացիական բնակչություն հասկացությունն իր հատկա-

---

<sup>329</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Kayishema and Ruzindana*, Trial Chamber, Judgment, 21 May 2001, para. 123. ICTR, *Prosecutor v. Rutaganda*, Trial Chamber, Judgment, 6 December 1999, para. 71: Դատարանը եզրակացրեց, որ քաղաքացիական բնակչությանը դասվում են բոլորը՝ բացի հանցագործություն կատարողներից:

<sup>330</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Ruto and Sang*, Pre-Trial Chamber, Confirmation Decision, 23 January 2012, para. 164, ICC, *Prosecutor v. Ntaganda*, Trial Chamber, Judgment, 8 July 2019, paras. 667-670:

<sup>331</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Appeals Chamber, Judgment, 15 July 1999, para. 249, *R. A. A. Fernández/J. S. Estepà*, Towards a Single and Comprehensive Notion of 'Civilian Population' in Crimes against Humanity, *International Criminal Law Review* 17 (2017), էջ 50-77, *D. Robinson*, Defining "Crimes Against Humanity" at the Rome Conference, *The American Journal of International Law* 93 (1999), էջ 46:

նիշների մեջ և ժամանակավոր միջազգային քրեական դատարանների յուրովի մոտեցումը հանգեցրել է նրան, որ մինչ օրս չկա հստակ սահմանում, թե քաղաքացիական բնակչությունը ինչպես պետք է մեկնաբանվի մարդկության դեմ հանցագործության պարագայում<sup>332</sup>:

Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկում է միայն երկու՝ իգական և արական սեռերի առկայությունը:

#### *19.1.4 Սուբյեկտիվ կողմը*

Կատարողի գործողության՝ մարդկության դեմ հանցագործության մաս դիտարկման համար վերջինս պետք է գիտակցի, որ նմանատիպ գործողություններ տեղի են ունենում պարբերաբար կամ լայնածավալ աշխարհագրությամբ (Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 3-րդ մաս): Կատարողը պարտավոր չէ իմանալ ծրագրի կամ պետական քաղաքականության գոյության մասին, բայց պետք է գիտակցի, որ իր գործողություններով գլոբալ հանցագործության մաս է կազմելու<sup>333</sup>:

#### *19.2 Առանձին հանցագործություններ*

Առանձին գործողությունների տեսանկյունից Հռոմի ստատուտը, ի տարբերություն ժամանակավոր միջազգային քրեական դատարանների, ընդլայնել է մարդկության դեմ առանձին հանցագործությունների ցանկը՝ ելնելով վերջիններիս մեկնաբանություններից, փորձից և քաղաքացիական հասարակության պահանջներից: Այդ գործողությունների շարքից են՝ ստրկացումը, բնաջնջումը, տեղահանությունը, անօրինական ազատագրկումը, խոշտանգումը, բռնաբարությունը և սեռական բնույթի այլ հանցագործություններ, առանձին խումբ մարդկանց հետապնդումը, բռնի անհետացումը, ապար-

---

<sup>332</sup> Մանրամասն տե՛ս *L. Sadat*, Putting Peacetime First: Crimes Against Humanity and the Civilian Population Requirement, *Emory International Law Review*. 2017, էջ 224-240:

<sup>333</sup> Տե՛ս *C. Hall/K. Ambos*, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, էջ 117:

տեխնիկ հանցագործությունը և անմարդկային այլ հանցագործություններ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ցանկացած առանձին հանցագործության ներառումը մարդկության դեմ հանցագործության ցանկ պայմանավորված է եղել պատմական և ժամանակաշրջանային հանգամանքներով: Օրինակ՝ սպանությունը կամ բռնի տեղահանությունը՝ որպես մարդկության դեմ միջազգային հանցագործություն, դիտարկվել է դեռևս Առաջին աշխարհամարտի ընթացքում: Մեռական հանցագործությունների ներառումը պայմանավորված էր Ռուանդայում և նախկին Հարավսլավիայում սեռական գործողությունների զանգվածային ու դաժան կիրառմամբ և քաղաքացիական հասարակության պահանջով: Բռնի անհետացումը, որը Մառը պատերազմի տարիներին լայն կիրառում ուներ Լատինական Ամերիկայում, նույնպես ընդգրկվեց մարդկության դեմ հանցագործությունների շարքում՝ քաղաքացիական պահանջով:

### *19.2.1 Սպանություն*

Օբյեկտիվ կողմից սպանության դրսևորումը մեկ ուրիշին կյանքից զրկելն է<sup>334</sup>: Թեև օբյեկտիվ տեսանկյունից սպանությունը գրեթե բոլոր իրավական համակարգերում բնութագրվում է նույն ձևով<sup>335</sup>, դժվարություններ են առաջանում այս հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները որոշարկելու հարցում: Եթե ըստ ՀՀ քրեական օրենսգրքի սպանությունը լինում է երեք տեսակ՝ հասարակ սպանություն, ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն և սպանություն մեղմացուցիչ հանգամանքներում, ապա եվրոպական քրեական իրավունքը այլ ձևով է դիտարկում սպանության տեսակները: Մասնավորապես, գերմանական քրեական համակարգը ճանաչում է սպանության երկու տեսակ՝ *Mord*<sup>336</sup> (պայմանականորեն՝

---

<sup>334</sup> Տե՛ս ազգային օրենքը:

<sup>335</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 15 June 2009, para. 132:

<sup>336</sup> Տե՛ս § 211 StGB:



սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում), *Totschlag*<sup>337</sup> (հասարակ սպանություն): Գերմանական երկու սպանությունների միջև տարբերությունը շարժառիթներն ու դրդապատճառներն են: Ըստ այդմ, որպեսզի սպանությունը որակվի որպես *Mord*, կատարողը պետք է առաջնորդվի հետևյալ շարժառիթներից որևէ մեկով, օրինակ՝ սեռական բավարարվածության, սպանության անհազ ցանկության, ազահության կամ ցածրակարգ, նենգ կամ դաժան այլ շարժառիթներով, այլ հանցագործություն կոծկելու կամ հնարավոր դարձնելու շարժառիթով, հանրության համար վտանգավոր այլ միջոցներով: Ըստ այդմ՝ հասարակ են բոլոր այն սպանությունները, որոնք չեն պարունակում վերոհիշյալ շարժառիթներից որևէ մեկը: Նմանատիպ տարբերակում գոյություն ունի անգլիական քրեական իրավունքում, որով սպանությունը (*homicide*) լինում է երկու տեսակ՝ *murder* (պայմանականորեն՝ սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում) և *manslaughter* (հասարակ սպանություն): Եվ ինչպես գերմանական քրեական իրավունքում, այնպես էլ այստեղ, *murder*-ը տարբերվում է հասարակ սպանությունից իր առանձնակի շարժառիթներով, օրինակ՝ առանձնակի մարդասպանական մտադրությամբ կամ նենգ շարժառիթով և այլն: Հռոմի ստատուտը չի տարբերակում սպանության տեսակները և ներառել է նույն մոտեցումը, ինչ ցեղասպանության սպանության պարագայում (Հռոմի ստատուտի 6-րդ հոդվածի ա կետ): Հանցագործության հատկանիշները կրում են սպանության միայն մի քանի առանձնահատկություններ<sup>338</sup>: Այսպիսով, օբյեկտիվ տեսանկյունից կատարողը պետք է կյանքից զրկի տուժողին կամ տուժողներին, այդ գործողությունը կամ անգործությունը<sup>339</sup> պետք է մաս կազմի քաղաքացիական բնակչության նկատ-

---

<sup>337</sup> StG u § 212 StGB:

<sup>338</sup> StG u Article 7(1)(a) Elements of Crimes:

<sup>339</sup> StG u ICC, *Prosecutor v. Bemba*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 15 June 2009, para. 132, ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 30 September 2008, para. 428:

մամբ պարբերական կամ լայնածավալ հարձակմանը, կատարողը պետք է գիտակցի, որ իր գործողությունը ընդհանուր գործողությունների մի մասն է: Սուբյեկտիվ կողմից կատարողը պետք է բավարարի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի՝ դիտավորության և իմացության պահանջները<sup>340</sup>:

### 19.2.2 Բնաջնջում

Բնաջնջման հանցակազմը, ունենալով նմանություններ սպանության հանցակազմի և ցեղասպանության հանցագործության հետ, տարբերվում է վերջիններից որոշակի ժամանակահատվածում զանգվածային սպանությունների իրականացմամբ: Ըստ այդմ՝ բնաջնջումը մեկ կամ մի քանի անձանց սպանությունն է, որը տեղի է ունենում քաղաքացիական բնակչության զանգվածային սպանություններին զուգահեռ<sup>341</sup>: Այսինքն՝ կատարողը կարող է պատասխանատվության ենթարկվել, անգամ եթե զրկել է կյանքից միայն մեկ անձի: Բնաջնջումը ցեղասպանության հանցագործությունից տարբերվում է նրանով, որ չունի սահմանափակում պաշտպանվող խմբի առումով: Բնաջնջման կարող են ենթարկվել առանց որևէ պատկանելության անհրաժեշտության<sup>342</sup>: Սուբյեկտիվ կողմը նույնն է, ինչ սպանության պարագայում:

### 19.2.3 Ստրկատիրություն

Ստրկատիրությունը դասվում է միջազգային ամենահին հանցագործությունների շարքին: Դեռևս 1926 թ. ընդունվեց «Ստրկուր-

---

<sup>340</sup> Տե՛ս M. C. Bassiouni (note 38) էջ 372. *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 30 September 2008, para 423:

<sup>341</sup> Տե՛ս Article 7(1)(b) Elements of Crimes:

<sup>342</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Kayishema and Ruzindana*, Trial Chamber, Judgment, 21 May 1999, para. 144 ICTY, *Prosecutor v. Kristic*, Trial Chamber, Judgement, 2 August 2001, para. 498-503, ICTY, *Prosecutor v. Jokic*, , Trial Chamber, Judgement. 17 January 2005, paras. 571- 573, ICC, *Prosecutor v. Al Bashir*, Pre-Trial Chamber, Decision on the Prosecution's Application for a Warrant of Arrest against Omar Hassan Ahmad Al Bashir, 4 March 2009, para. 96:

յան մասին» կոնվենցիան, որով արգելվեցին ստրկության «ավանդական» մոտեցումները<sup>343</sup>: Այս կոնվենցիայի հիման վրա ստրկատիրության արգելքը դասվեց *jus cogens* նորմերի շարքին: Սակայն թեև այն պաշտոնապես արգելվեց, ստրկատիրությունը շարունակեց կիրառվել այլ տեսակներով, օրինակ՝ մարդկանց թրաֆիքինգի տեսքով, բռնի աշխատանքի, բռնի ամուսնության և այլ մեթոդներով:

Ըստ Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի՝ ստրկություն է համարվում այն անձի կարգավիճակը կամ պայմանը, որի նկատմամբ իրականացվում է սեփականության իրավունքը: Այս բնութագիրը առաջին անգամ շրջանառվել է նախկին Հարավսլավիայի Ժամանակավոր միջազգային քրեական դատարանի դատական պրակտիկայում, որով հաստատվել է, որ օբյեկտիվ կողմից անհրաժեշտ է անձի նկատմամբ սեփականության իրավունքի ցանկացած ձևով կիրառումը, իսկ սուբյեկտիվ կողմից՝ ստրկատիրական մտադրությունը<sup>344</sup>: Անձի նկատմամբ սեփականության իրավունքի կիրառումը կարող է արտահայտվել անձի ազատ տեղաշարժի, նրա նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական վերահսկողությամբ, փախուստը կանխելու կամ կանխելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների կիրառմամբ, փաստացի կամ սպառնալիքի ուժի կամ հարկադրանքի կիրառմամբ, սեռականության նկատմամբ վերահսկողությամբ, ինչպես նաև անձին վաճառելով կամ շահագործելով<sup>345</sup>: Միննույն ժամանակ կարող են ստեղծվել այնպիսի միջավայր և պայմաններ, որոնք կհանգեցնեն «ստրկատիրոջ» նկատմամբ անձի կախվածության: Այս պարագայում կախվածությունը ևս կարող է որակվել որպես ստրկատիրություն: Այդ շարքին են դասվում, օրինակ՝ բռնի ա-

---

<sup>343</sup> Տե՛ս նաև Supplementary Convention on the Abolition of Slavery, the Slave Trade, and Institutions and Practices Similar to Slavery 1956:

<sup>344</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Kunarac et al.*, Trial Chamber, Judgment, 22 February 2001, para. 540, ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Judgment, 7 March 2014, para. 972:

<sup>345</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Kunarac et al.*, Trial Chamber, Judgment, 22 February 2001, para. 542:

մուսնությունները<sup>346</sup>, հարկադիր աշխատանքը, մարմնավաճառությունը և այլն<sup>347</sup>:

Ելնելով ժամանակավոր միջազգային քրեական դատարանների փորձից՝ Հռոմի ստատուտով ամրագրվեց, որ հանցակազմի օրյելտիվ կողմի հատկանիշները պետք է արտահայտվեն սեփականության իրավունքի հետևյալ եղանակների իրացումով՝ անձին ձեռք բերելով, վաճառելով, պարտքով տրամադրելով, փոխանակելով կամ ազատությունից զրկելով<sup>348</sup>:

#### 19.2.4 Տեղահանություն

Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասի դ կետը որպես մարդկության դեմ հանցագործության տեսակ է դիտարկում արտաքսումը կամ բռնի տեղահանությունը: Թեև պատմության ընթացքում այս հանցակազմը բազմիցս կիրառվել է տարբեր ազգերի նկատմամբ, սակայն դատական կիրառման մեջ այդքան ուշադրության չի արժանացել: Ժամանակավոր դատարանների կանոնադրությունները, ի տարբերություն արտաքսման հանցակազմի, չեն ճանաչել բռնի տեղահանության հանցակազմը որպես մարդկության դեմ հանցագործություն: Բռնի տեղահանությունը Հռոմի ստատուտում նորամուծություն էր: Արտաքսումը և բռնի տեղահանությունը իրարից տարբերվում են տուժողների անհատականությամբ: Բռնի արտաքսումը ենթադրում է առանձին անհատների վտարումը պետության սահմաններից դուրս կամ այլ տարածք<sup>349</sup>: Մինչդեռ բռնի տեղահա-

---

<sup>346</sup> Տե՛ս SCSL, *Prosecutor v. Brima et al.*, Trial Chamber, Judgment, 20 June 2007, para. 798:

<sup>347</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Judgment, 7 March 2014, paras. 809, 820-821, տե՛ս G. Petrossian (note 67):

<sup>348</sup> Տե՛ս Article 7(1)(c) Elements of Crime:

<sup>349</sup> Մանրամասն տե՛ս C. Hall and K. Ambos (note 333), էջ 193-195, նաև՝ *W. T. Worster*, *Deporting Dreamers as a Crime Against Humanity*, *Emory International Law Review*, 2019, *V. Chantail*, *Is There any Blood on my Hands? : Deportation as a Crime of International Law*, *Leiden Journal of International Law*, 2016, էջ 925:

նությունը անհայտ թվով անձանց բռնի տեղաշարժն է պետության սահմաններում կամ պետության սահմաններից դուրս: Թեպետ տարբեր հանգամանքների բերումով ժողովուրդների տեղաշարժ պարբերաբար տեղի է ունեցել, սակայն Հռոմի ստատուտը ուղղակիորեն մատնանշում է, որ այդպիսի տեղաշարժը կամ արտաքսումը պետք է արդարացված լինի միջազգային իրավունքով: 2015 թվականից փախստականների աճը հանգեցրեց նրան, որ մեծ թվով ապաստան հայցողներ Եվրոպայից արտաքսվեցին այլ պետություններ կամ հետ ուղարկվեցին իրենց նախկին բնակության վայրը: Արտաքսման կամ բռնի տեղահանության՝ մարդկության դեմ հանցագործություն ղիտարկման համարարտաքսվողը կամ բռնի տեղահանվողը պետք է տվյալ պահին օրինական կերպով գտնվի այն վայրում<sup>350</sup>, որտեղից նրան պետք է վտարեն: Միևնույն ժամանակ արտաքսողը կամ բռնի տեղահանողը պետք է գիտակցի, որ արտաքսվողը կամ տեղահանվողը նախքան տեղահանվելը օրինական է գտնվել այդ վայրում:

Բռնի տեղահանությունը պարտադիր չէ, որ ուղեկցվի ֆիզիկական ներգործությամբ: «Բռնի» հասկացությունը վերաբերում է նաև այն պայմաններին, որոնք հարկադրում են կատարել պահանջվող գործողությունը<sup>351</sup>:

Տեղահանության հանցակազմը կարող է ղիտարկվել որպես շարունակական հանցագործություն, այսինքն՝ այն տևում է այնքան

---

<sup>350</sup> St´u ICC, *Situation in Bangladesh/Myanmar*, Pre-Trial Chamber, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the People’s Republic of Bangladesh/Republic of the Union of Myanmar, 14 November 2019, para. 98:

<sup>351</sup> St´u ICTY, *Prosecutor v. D. Milosevic*, Trial Chamber, Judgement, 12 December 2007, para. 75, ICTY, *Prosecutor v. Naletilic’ and Martinovic*, Trial Chamber, Judgment, 31 March 2003, para. 519, ICTY, *Prosecutor v. Prlic*, Trial Chamber, Judgement, 29 May 2013, para. 50:

Ժամանակ, քանի դեռ տեղահանվածը չի վերադարձել իր օրինական գտնվելու վայր<sup>352</sup>:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս հանցակազմի պարագայում, պետք է բավարարվեն մարդկության դեմ պարբերական և լայնածավալ հանցագործության հատկանիշները, ինչպես նաև կատարողը պետք է սուբյեկտիվ կողմից բավարարի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները:

#### *19.2.5 Անօրինական ազատագրկում*

Անօրինական ազատագրկման հանցակազմը ևս, որպես մարդկության դեմ հանցագործություն, սկիզբ է առնում նացիստական Գերմանիայում լայն տարածում գտած փորձից: Մասնավորապես, երբ անձինք ազատագրկվում էին համակենտրոնացման ճամբարներում կամ ուղարկվում հարկադիր աշխատանքի տարբեր կազմակերպություններ: Ժամանակավոր միջազգային քրեական դատարանների կանոնադրություններում առանձնացվում էր միայն անօրինական ազատագրկման, այսպես ասած, ավանդական հասկացությունը, որը վերջիններիս կողմից ավելի լայն մեկնաբանվեց: Այսպիսով, անօրինական ազատագրկումը մեկ կամ ավելի անձանց կամայականորեն ազատ տեղաշարժելու ցանկացած սահմանափակումն է<sup>353</sup>, ինչպես, օրինակ, գետտներում կամ համակենտրոնացման ճամբարներում<sup>354</sup>: Սակայն զուտ ազատությունից զրկելը չի կարող որակվել միջազգային հանցագործություն, քանի դեռ այն իր ծանրությամբ<sup>355</sup> չի խախտել միջազգային հիմնարար նորմերը: Սա վկա-

---

<sup>352</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Ruto, Sang, Kongsey*, Pre-Trial Chamber, Decision on the Confirmation of Charges Pursuant to Article 61(7)(a) and (b) of the Rome Statute, 4 February 2012, para. 245:

<sup>353</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Krnojelac*, Trial Chamber, Judgment, 15 March 2002, para. 112:

<sup>354</sup> Տե՛ս G. Werle and F. Jeßberger (note 321), էջ 361:

<sup>355</sup> Ազատագրկման տևողությամբ կամ ազատագրկման անմարդկային պայմաններում, տե՛ս C. Safferling (note 2), էջ 199:

յում է այն մասին, որ ազատագրվումը անօրինական է (օրինակ՝ ոտնահարում է «Մարդու իրավունքների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը)<sup>356</sup> :

Մուրյեկտիվ կողմից, բացի Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ հոդվածի հատկանիշները բավարարելուց, ազատագրվողը պետք է գիտակցի բոլոր այն փաստական հանգամանքները, որոնք հանգեցնում են անօրինական ազատագրվման ծանրությանը<sup>357</sup>:

### 19.2.6 Խոշտանգում

Ինչպես ցեղասպանության և ստրկատիրության արգելքները, այդպես էլ խոշտանգումը ընդգրկվում են *jus cogens* նորմերի շարքերը: Դեռևս 1863 թ. ամերիկյան բանակի համար նախատեսված կանոններում արգելվում էր խոշտանգել թշնամիներին<sup>358</sup>: Հետագայում այս նորմը տեղ գտավ նաև Հաագայի կոնվենցիաներում և մարդու իրավունքներին վերաբերող միջազգային մի շարք փաստաթղթերում: Վերջիվերջո, 1987 թվականից ուժի մեջ մտավ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ» կոնվենցիան, որի հիմնական դրույթն ամրագրվեց նաև ժամանակավոր միջազգային քրեական դատարանների կանոնադրություններում: Եվ չնայած միջազգայնորեն սահմանված հասկացությանը<sup>359</sup> թե՛ դա-

---

<sup>356</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Harun, -Al-Rahman*, Pre-Trial Chamber, Decision on the Prosecution Application under Article 58(7) of the Statute, 17 April 2007, para. 70:

<sup>357</sup> Տե՛ս Article 7(1)(e)(3) Elements of Crime:

<sup>358</sup> Տե՛ս Instructions for the Government of Armies of the United States in the Field, US War Department, Adjutant General's Office, General Orders No. 100 (24 April 1863) (Lieber Code):

<sup>359</sup> Սույն Կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանու-

տարանների դատական պրակտիկայով և թե՛ Հռոմի ստատուտով խոշտանգման եզրույթն ավելի ընդլայնվեց՝ ներառելով այն հանգամանքը, որ խոշտանգում իրականացնողի պետական գործառույթը կարևոր չէ, ինչպես նաև, ելնելով միջազգային ժամանակավոր դատարանների փորձից՝ պարտադիր չէ, որ խոշտանգման միջոցով որևէ նպատակ հետապնդվի:<sup>360</sup> Այսպիսով, խոշտանգման հանցակազմի օբյեկտիվ կողմը պարունակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի կամ անձանց, որոնք խոշտանգման պահին գտնվել են խոշտանգողի վերահսկողության ներքո կամ կալանքում, դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք<sup>361</sup>: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է բավարարել խոշտանգման և խոշտանգման արդյունքում առաջացած ցավի կամ տառապանքի պատճառահետևանքային կապը: Այսինքն՝ ցավը կամ

---

թյուն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը կամ նրան, կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձանց կողմից կամ նրանց դրոմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց («Խոշտանգումների արգելքի մասին» կոնվենցիայի 1-ին հոդված):

<sup>360</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Kvočka et al.*, Trial Chamber, Judgment, 2 November 2001, para. 139; ICTY, *Prosecutor v. Kunarac*, Appeals Chamber, Judgment, 12 June 2002, para. 148, խոշտանգումը՝ որպես պատերազմական հանցագործություն, պարունակում է խոշտանգման նպատակի հասկացությունը, տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Pre-Trial Chamber, Confirmation of Charges, 15 June 2009, para. 199:

<sup>361</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Mucić et al.*, Trial Chamber Judgment, 16 November 1998, para. 495, ICTY, *Prosecutor v. Češić*, Trial Chamber, Judgment, 11 March 2004, para. 53-54, ICTY, *Prosecutor v. Kvočka, et al.*, Appeals Chamber, Judgment, 28 February 2005, para. 320, ICTY, *Prosecutor v. Vasiljević*, Appeals Chamber Judgment, 25 February 2004, para. 113, ICTY, *Prosecutor v. Krnojelac*, Trial Chamber, Judgment, 17 September 2003, paras. 185-186:



տառապանքը պետք է անմիջականորեն հետևի խոշտանգմանը, այսինքն՝ չլինի պատահականության հետևանք<sup>362</sup>:

Միաժամանակ, ինչպես այլ հանցակազմերի պարագայում, այնպես էլ խոշտանգման՝ Հռոմի ստատուտով նախատեսված՝ մարդկության դեմ հանցագործության այլ հատկանիշներ ևս պետք է բավարարվեն:

### *19.2.7 Բռնաբարություն և սեռական բնույթի այլ գործողություններ*

Սեռական բնույթի հանցագործությունները պատմության ընթացքում գրեթե մշտապես օգտագործվել են որպես հակառակորդին նվաստացնելու և հոգեպես բարոյագրկելու գործիք: Թեև Երկրորդ աշխարհամարտի ընթացքում սեռական հանցագործությունները զանգվածային էին, սակայն այս տիպի հանցագործությունների համար պատիժ, որպես այդպիսին, Նյուրնբերգյան դատավարությունների ընթացքում չէր սահմանվել: Ռուսնդայում և նախկին Հարավսլավիայում սեռական հանցագործությունների զանգվածայնությունը ստիպեց քաղաքացիական հասարակությանը բարձրաձայնել այս գործողությունների մասին և ստիպել դատական մարմիններին՝ առանձնակի ուշադրությամբ քննելու այս տեսակի գործերը: Ժամանակավոր միջազգային քրեական դատարանների կանոնադրությունները ընդգրկեցին, այնուամենայնիվ, միայն բռնաբարության հանցակազմը, որով մյուս սեռական հանցագործությունները կանոնադրությունից դուրս մնացին, իսկ ժամանակավոր դատարանների ուսերին մնացին բռնաբարության մեկնաբանության ծանր խնդիրը և բռնաբարության հանցակազմի ընդլայնման պահանջը:

Առաջին դատական գործերով սահմանվեց բռնաբարության բավական լայն բնորոշում, ըստ որի՝ պարտադրող պայմաններում

---

<sup>362</sup> Տե՛ս նաև Article 7(1)(f)(3) Elements of Crime, C. Hall and K. Ambos (note 333), էջ 205, C. Safferling (note 2), էջ 201:

ցանկացած սեռական բնույթի ֆիզիկական ներխուժում<sup>363</sup> կարող էր որակվել որպես բռնաբարություն: Մակայն այս մոտեցումը այլ դատարանի կողմից դիտարկվեց ոչ բավարար, որից ելնելով՝ բռնաբարության բնութագրությունն ավելի ընդլայնվեց՝ հավելելով ոչ միայն սեռական օրգանների ֆիզիկական ներթափանցումը, այլև տարբեր առարկաների օգտագործումը սեռական նպատակով՝ առանց տուժողի համաձայնության կամ այնպիսի պայմաններում<sup>364</sup>, որոնք տուժողին հարկադրում են ենթարկվել հանցագործի գործողություններին<sup>365</sup>:

Ժամանակավոր դատարանների փորձի հիման վրա Հռոմի ստատուտը ընդգրկեց նաև այլ տեսակի սեռական բնույթի հանցագործություններ, ինչպես սեռական բնույթի ստրկատիրությունը<sup>366</sup>, պարտադրված մարմնավաճառությունը, պարտադրված հղիությունը, պարտադրված ստերիլացումը<sup>367</sup> և սեռական բնույթի այլ հանցագործություններ:

---

<sup>363</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Akayesu*, Chamber, Judgment, 2 September 1998, para. 688:

<sup>364</sup> Տե՛ս սկզբից ICTY, *Prosecutor v. Furundzija*, Trial Chamber, Judgment, 10 December 1998, para. 174, այնուհետև ICTR, *Prosecutor v. Musema*, Trial Chamber, Judgment, 27 January 2000, para. 228; ICTR, *Prosecutor v. Semanza*, Trial Chamber, Judgment, 15 May 2003, para. 345, ICTY; *Prosecutor v. Stakić*, Trial Chamber, Judgment, 31 July 2003, paras. 757-803, ICTR; *Prosecutor v. Muhimana*, Trial Chamber, Judgment, 28 April 2005, paras. 550-551:

<sup>365</sup> Այս մոտեցումը օգտագործվում է մինչ օր Միջազգային քրեական դատարանի պրակտիկայում, ICTY, *Prosecutor v. Kunarac et al.*, Appeals Chamber, Judgment, 12 June 2002, para. 460, ICC, *Prosecutor v. Bemba*, Trial Chamber, Judgment, 21 March 2016, para. 105, ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, 7 March 2014, para. 965, G. Petrossian (note 67), էջ 138, Article 7 (1) (g) – 1 Elements of Crime:

<sup>366</sup> SCSL, *Prosecutor v. Brima et al.*, Trial Chamber, Judgment, para. 697, պարտադրված ամուսնությունը հավասարազոր է սեռական ստրկատիրության:

<sup>367</sup> Տե՛ս T4 Aktion, որով Ադոլֆ Հիտլերի գաղտնի հրահանգով ստերիլացման (ռասայական հիգիենայի նպատակով) ենթարկվեցին նացիստական Գերմանիայի ավելի քան 400.000, էֆթանազիայի ենթարկվեցին ավելին քան 70.000 քաղաքացիներ:

Սուբյեկտիվ կողմից Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները պետք է բավարարվեն:

*19.2.8 Առանձին խումբ մարդկանց նկատմամբ հետապնդում*

Այս հանցակազմը մարդկության դեմ այն միակ հանցագործությունն է, որը պահանջում է պատկանելության որևէ խտրականության առկայություն: Հավաժանքը կամ առանձին խումբ մարդկանց նկատմամբ հետապնդումը սահմանափակում է միջազգային իրավունքով նախատեսված հիմնարար իրավունքները, որոնցից են, մասնավորապես, կյանքի իրավունքը, խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանվածության իրավունքը և այլն<sup>368</sup>: Ընդ որում՝ հավաժանքը պետք է ուղղված լինի կոնկրետ խումբ մարդկանց նկատմամբ: Դա կարող է պայմանավորված լինել էթնիկական, ռասայական, սոցիալական, քաղաքական կամ այլ խմբային պատկանելությամբ: Սուբյեկտիվ կողմից, բացի նրանից, որ Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները պետք է բավարարվեն, հանցագործն իր գործողությունները կատարելիս պետք է առաջնորդվի այն մտադրությամբ (*dolus specialis*), որ դրանք ուղղված են այդ խմբի անդամների դեմ, այնպես, ինչպես ցեղասպանության հանցագործության պարագայում<sup>369</sup>:

Հավաժանքի առկայությունը լիովին վկայում է, որ Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածով նախատեսված այլ հանցագործություններ էլ

---

<sup>368</sup> Տե՛ս ICC, *Situation in Burundi*, Pre-Trial Chamber, Public Redacted Version of “Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorization of an Investigation into the Situation in the Republic of Burundi”, 25 October 2017, para. 132, կրթություն ստանալու իրավունք, ICC, *Situation in Bangladesh/Myanmar*, Pre-Trial Chamber, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the People’s Republic of Bangladesh/Republic of the Union of Myanmar, 14 November 2019, para 101:

<sup>369</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Simic*, Trial Chamber, Judgment, 17 October 2002, para. 51, ICTY, *Prosecutor v. Tolimir*, Trial Chamber, Judgment, 12 December 2012, para. 850:

են տեղի ունեցել<sup>370</sup>: Այդ իսկ պատճառով միջազգային քրեական գրականության մեջ հալածանքը կամ հետապնդումը կոչվում են նաև «*Umbrella Crime*»<sup>371</sup>:

### 19.2.9 Բռնի անհետացում

Բռնի անհետացման հանցագործությունը, որը լայնորեն տարածված էր Լատինական Ամերիկայում<sup>372</sup>, սկիզբ է առել Ադոլֆ Հիտլերի 1941 թ. «*Nacht und Nebel*»<sup>373</sup> հրահանգից, որով 7000-ից ավելի ապստամբներ և նացիստական Գերմանիայի դեմ պայքարողներ գրավյալ տարածքներից գաղտնի բերվեցին Գերմանիա և անհայտ ձևով դատապարտվեցին մահապատժի կամ տարբեր ազատագրկումների: Նրանց գտնվելու վայրը կամ ճակատագիրը շարունակում էր մնալ անհայտ: Բացի նրանից, որ այս հանցագործությունը մեղադրանքի առարկա դարձավ Միջազգային ռազմական դատարանում, դրա համար մեղադրվեցին ինչպես դատավորները և իրավաբանները, որոնք դատապարտում էին ապստամբներին<sup>374</sup>, այնպես էլ ռազմական ներկայացուցիչները,<sup>375</sup> որոնք իրականացնում էին գաղտնի գործողությունը:

Վերոհիշյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը բաղկացած է երկու գործողությունից, որոնցից միայն երկրորդի առկայությունն է առարկայական դեր խաղում հանցագործության շարունակական լինելու համար: Առաջին գործողությունը տուժողին առևանգելն է, ձերբա-

---

<sup>370</sup> Տե՛ս Article 7 (1) (h) – 3 Elements of Crime:

<sup>371</sup> Տե՛ս K. Ambos (note 127) էջ 283, ICTY, *Prosecutor v. Kupreskic et al*, Appeals Chamber, Judgment, 23 October 2001, para. 98:

<sup>372</sup> Տե՛ս IACHR, *Velasquez Rodriguez v. Honduras*, Judgment, 29 July 1988, տե՛ս U.N., General Assembly, Declaration on the Protection of all Persons from Enforced, 18 December 1992, Inter-American Convention on The Forced Disappearance of Persons, 28 March 1996, International Convention for the Protection of All Persons from Enforced Disappearance, 23 December 2010:

<sup>373</sup> Գերմ.՝ «գիշեր և մառախուղ»:

<sup>374</sup> Տե՛ս NMT, *US. v. Altstötter et al.*, Judgment, 14 December 1947:

<sup>375</sup> Տե՛ս NMT, *US. v. Blaskowitz et al.*, Judgment, 14 April 1949:

կալելը կամ կալանավորելը: Երկրորդ հանցակազմի առարկայական գործողությունն այն է, որ հանցագործը մերժում է առևանգվածի, ձերբակալվածի կամ կալանավորվածի մասին որևէ տեղեկություն հայտնել, ինչպես նաև բացառում է ինքնին առևանգումը, ձերբակալումը և կալանավորումը:

Միննույն ժամանակ առևանգումը, ձերբակալումը և կալանավորումը, ինչպես նաև վերոհիշյալի վերաբերյալ որևէ տեղեկություն չտրամադրելը թույլատրված էին պետության կամ որևէ քաղաքական թիմի կողմից կամ վայելում էին վերջիններիս ակտիվ աջակցությունը:

Մութեկտիվ կողմից, բացի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի հատկանիշներից, հանցագործն իր գործողություններով պետք է նպատակ հետապնդի որոշակի ժամանակով զրկելու տուժողին օրենքի պաշտպանությունից<sup>376</sup>:

#### *19.2.10 Ապարտեիդի հանցագործություն*

Ապարտեիդի հանցագործությունը<sup>377</sup>, որը լայն տարածում ուներ Հարավաֆրիկյան Հանրապետությունում, իր տեղը գտավ մարդկության դեմ հանցագործությունների ցանկում հենց հարավաֆրիկյան քաղաքական ներկայացուցիչների ակտիվ մասնակցության շնորհիվ, որոնք մասնակցում էին Հռոմի կոնֆերանսին:

Ինչպես հալածանքի, հետապնդման պարագայում, այնպես էլ այստեղ ապարտեիդի հանցագործությունը պահանջում է Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածով նախատեսված այլ հանցագործությունների առկայություն: Օբյեկտիվ կողմից հանցագործը պետք է ռասայական մի խմբի կողմից ռասայական այլ խմբի նկատմամբ կատարի անմարդկային գործողություն համակարգված ճնշումների և ինստիտուցիոնալացված ռեժիմի համատեքստում: Այսինքն՝ պետական

---

<sup>376</sup> St' u Article 7 (1) (i) – 6 Elements of Crime:

<sup>377</sup> St' u International Convention on the Suppression and Punishment of the Crime of Apartheid, 18 July 1976:

համակարգը պետք է թույլ տա կամ աջակցի ռասայական խտրականությանը, որի պայմաններում հանցագործը, առաջնորդվելով ռասայական խտրականությամբ, կատարի անմարդկային գործողություն:

Ըստ այդմ, բացի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտիվ կողմի հատկանիշներից, հանցագործը պետք է ունենա ռասայական խտրականության հիման վրա ձևավորված դիտավորություն:

#### *19.2.11 Նմանատիպ անմարդկային այլ գործողություններ*

Նմանատիպ անմարդկային այլ գործողությունները պարբերաբար դառնում էին ժամանակավոր դատարանների քննարկման առարկա առ այն, որ պաշտպանության կողմից բարձրաձայնվում էր *nullum crimen sine lege* սկզբունքը<sup>378</sup>: Անմարդկային գործողությունը մեկնաբանելով՝ նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը հանգեց այն եզրակացության, որ անմարդկային գործողությունը լուրջ վնաս պետք է հասցնի տուժողին<sup>379</sup>: Հետագայում այս մոտեցմանը ավելացավ այն դրույթը, որ տուժողին վերոնշյալ գործողությամբ լուրջ վնաս հասցվելուց բացի՝ այդ գործողության ծանրությունը պետք է համահունչ լինի կանոնադրությամբ նախատեսված այլ հանցագործությունների ծանրությանը<sup>380</sup>: Այդ անմարդկային գործողությունների շարքին կարող են դասվել, օրինակ, հանրային տարածքում հարկադրաբար մերկացնելը<sup>381</sup>, բանտարկյալին մեկ այլ

---

<sup>378</sup> Տե՛ս *T. Jyrkkio*, 'Other Inhumane Acts' as Crimes against Humanity, Helsinki Law Review. 2011, էջ 187-203:

<sup>379</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Trial Chamber, Judgment, 11 November 1999, para. 728:

<sup>380</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Kayishema et al.*, Trial Chamber, Judgment, 21 May 1999, paras. 151-153:

<sup>381</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Akayesu*, Trial Chamber, Judgment, 2 September 1998, para. 697:

բանտարկյալի սեռական օրգանը կտրել ստիպելը<sup>382</sup>, բանտարկյալին այլ բանտարկյալի հետ սեռական գործողություններ կատարել ստիպելը<sup>383</sup> և այլն:

Սուբյեկտիվ կողմից հանցագործը պետք է բավարարի Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները:

*Մարդկության դեմ հանցագործության ստուգման մեթոդաբանությունը*

1. Հանցակազմ՝

ա. actus reus՝

i) հարձակում,

ii) պարբերական կամ լայնածավալ,

iii) քաղաքացիական բնակչություն,

iv) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի ենթակետերով նախատեսված առանձին հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշներ:

բ. mens rea՝

i) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կոնտեքստուալ հատկանիշների վերաբերյալ իմացություն՝ համաձայն Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 3-րդ մասի,

ii) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասի ա ենթակետի վերաբերյալ իմացություն և դիտավորություն՝ համաձայն Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 2-րդ մասի ա և բ ենթակետերի:

2. Հանցանքը բացառող հանգամանքներ:

---

<sup>382</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Trial Chamber, Judgment, 11 November 1999, para. 198:

<sup>383</sup> Տե՛ս ICTR, *Prosecutor v. Kajelijeli*, Appeals Chamber, Judgment, 1 December 2003, paras. 678, 936:

## ԳԼՈՒԽ 8

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*1. The Court shall have jurisdiction in respect of war crimes in particular when committed as part of a plan or policy or as part of a large-scale commission of such crimes.*

*2. For the purpose of this Statute, "war crimes" means:*

- a) Grave breaches of the Geneva Conventions of 12 August 1949, namely, any of the following acts against persons or property protected under the provisions of the relevant Geneva Convention*
- b) Other serious violations of the laws and customs applicable in international armed conflict, within the established framework of international law, namely, any of the following acts:*
- c) In the case of an armed conflict not of an international character, serious violations of article 3 common to the four Geneva Conventions of 12 August 1949, namely, any of the following acts committed against persons taking no active part in the hostilities, including members of armed forces who have laid down their arms and those placed hors de combat by sickness, wounds, detention or any other cause:*
- d) Paragraph 2 (c) applies to armed conflicts not of an international character and thus does not apply to situations of internal disturbances and tensions, such as riots, isolated and sporadic acts of violence or other acts of a similar nature.*
- e) Other serious violations of the laws and customs applicable in armed conflicts not of an international character, within the established framework of international law, namely, any of the following acts.*
- f) Paragraph 2 (e) applies to armed conflicts not of an international character and thus does not apply to situations of internal disturbances and tensions, such as riots, isolated and sporadic acts of violence or other acts of a similar nature. It applies to armed conflicts that take place in the territory of a State when there is*



*protracted armed conflict between governmental authorities and organized armed groups or between such groups.*

*3. Nothing in paragraph 2 (c) and (e) shall affect the responsibility of a Government to maintain or re-establish law and order in the State or to defend the unity and territorial integrity of the State, by all legitimate means.*

## **20. Ընդհանուր դրույթներ**

Թեև Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածում բառացի թարգմանությամբ է գործածվում «պատերազմ» հասկացությունը (*war crimes*), սակայն այսօր այն հնացած իրավական եզրույթ է: Սա պայմանավորված է նրանով, որ պատերազմ հասկացությունը XX և XXI դարերի իրավական հասկացությունների շրջանակներում այլևս չի գործում այն պատճառով, որ պատերազմ վարելը (*jus ad bellum*) հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասին, և միայն Կանոնադրության 39-րդ և 51-րդ հոդվածների համաձայն կարելի է դիմել պատերազմի: Այնուամենայնիվ, այդ տերմինաբանությունն ից խույս տալու նպատակով միջազգային ասպարեզում «պատերազմը» փոխարինվել է «զինված ընդհարում» արտահայտությամբ: Թեպետ պատերազմ վարելը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, այն նաև միջազգային հանցագործություն է, սակայն ոչ պատերազմական հանցագործություն (*jus in bello*): Պատերազմական հանցագործությունը, ըստ այդմ, զինված ընդհարման ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումն է<sup>384</sup>: Միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի միջև նմանությունն այն է, որ միջազգային քրեական իրավունքում առանձին և կոպիտ ոտնահարումների համար նախատեսված է անձնական քրեական պատասխանատվություն: Սակայն միջազգային մարդասիրական իրավունքի ոչ բոլոր նորմերի ոտնա-

---

<sup>384</sup> Տե՛ս C. Safferling (note 2), էջ 210:

հարումներն են հանգեցնում քրեական պատասխանատվության: Ստացվում է, որ բացի նրանից, որ միջազգային մարդասիրական նորմերի կոպիտ խախտումների համար կարող է առաջանալ քրեական պատասխանատվություն, միևնույն ժամանակ ստանձնած միջազգային պարտավորության խախտման համար ևս կարող է առաջանալ պետական պատասխանատվություն: Սակայն ինչպես արդեն նշվել էր վերևում, պետական պատասխանատվությունը միջազգային քրեական իրավունքի մաս չէ: Ուստի, պարզելու համար՝ կա արդյոք քրեական անձնական պատասխանատվություն միջազգային մարդասիրական նորմի խախտման համար, թե ոչ, անհրաժեշտ է նախ հստակեցնել՝ հնարավոր է արդյոք անհատական մարդասիրական իրավանորմի խախտումը, և արդյոք դա կոպիտ խախտում է, որն անդառնալի հետևանքներ է առաջացրել տուժողի համար<sup>385</sup>: Այս մոտեցումը պայմանավորված էր նրանով, որ նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի միջազգային քրեական դատարանների կանոնադրությունները լայն մեկնաբանման հնարավորություն էին տալիս դատարանին կիրառելու տարատեսակ մարդասիրական իրավանորմերի խախտումների քրեական հետապնդում<sup>386</sup>: Այս սովորույթը վերացվեց Հռոմի ստատուտում պատերազմական հանցագործությունների ցուցակի կողիֆիկացիայով:

Պատերազմական հանցագործությունները ճիշտ տարբերակելու համար անհրաժեշտ է դրանք ներկայացնել երկու տեսքով՝ Ժնևյան իրավունքի և Հաագայի իրավունքի, որոնք պատմականորեն ու զուգահեռաբար ձևավորվել են և դարձել միջազգային մարդասիրական իրավունքի մաս: Տարբերությունը երկուսի միջև այն է, որ

---

<sup>385</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadic*, Appeals Chamber, Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, 2 October 1995, para. 94, նաև՝ *A. Zahar/G. Sluiter*, *International criminal law: A critical introduction*. Oxford, 2008 էջ 110, մանրամասն տե՛ս *P. Gaeta*, in: A. Clapham/T. Haeck/P. Gaeta, *The Oxford handbook of international law in armed conflict*, 2014, էջ 747-750:

<sup>386</sup> Տե՛ս Article 3 ICTY Statute, Article 4 ICTR Statute, K. Ambos (note 127), էջ 290:

Ժնկյան իրավունքով պաշտպանության տակ են առնված առանձին սուբյեկտներ և օբյեկտներ, իսկ Հաագայի իրավունքով որոշ տեսակի ռազմական գործողություններ իրականացնելն արգելված է (*method of warfare*)<sup>387</sup>:

### 20.1 Ժնկյան օրենքներ

Ի տարբերություն մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանության հանցագործության՝ պատերազմական հանցագործությունները՝ որպես հանցակազմ և հասկացություն, ավելի հին ծագումնաբանություն ունեն և ուղղակիորեն առնչվում են միջազգային մարդասիրական իրավունքին, որն էլ իր հերթին կապվում է շվեյցարացի գործարար Հենրի Դյունանտի հետ: Վերջինս 1859 թ. հունիսի 24-ին ակամա վկա է դարձել ավստրիական և ֆրանսասարդինական բանակների միջև Սոլֆերինոյի ճակատամարտին: Գործարարը, ազդվելով ճակատամարտի դաժան հետևանքներից, որոշել է մոբիլիզացնել Սոլֆերինո քաղաքում գտնվող տեղի բնակչությանը՝ ընկածներին օգնություն ցուցաբերելու համար<sup>388</sup>: Նա գիտակցում էր, որ եթե նման աջակցություն շուտ ցուցաբերվեր, հնարավոր կլիներ ավելի շատ մարդու կյանք փրկել: 1862 թ. հրապարակելով իր մենագրությունը՝ «Հիշողություն Սոլֆերինոյից»<sup>389</sup>, Դյունանտը կյանքի կոչեց միջազգային մարդասիրական կազմակերպություն ստեղծելու գաղափարը: Արդյունքում ձևավորվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, իսկ 1865 թ. օգոստոսի 22-ին ընդունվեց Ժնկյան առաջին կոնվենցիան՝ զինված ուժերի կազմից վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին (հայտնի է որպես Ժնկյան I կոնվենցիա): Այս կոնվենցիան լայնորեն տարածվեց նաև Եվրոպայի սահ-

---

<sup>387</sup> Sté u I. Peterson, Die Strafbarkeit des Einsatzes von biologischen, chemischen und nuklearen Waffen als Kriegsverbrechen nach dem IStGH-Statut. Berlin, 2009, էջ 5-6:

<sup>388</sup> Sté u E. Greppi, in: F. Pocar/M. Pedrazzi/M. Frulli, War Crimes and the Conduct of Hostilities: Challenges to Adjudication and Investigation, 2013, էջ 38-40:

<sup>389</sup> Sté u Henry Dunant, A Memory of Solferino. 1862:

մաններից դուրս: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ զուգահեռաբար Ամերիկայի քաղաքացիական պատերազմի տարիներին ձևավորվում է ամերիկյան բանակի վարքականոնը (Lieber Code 1863թ.)<sup>390</sup>, որը նույնպես, ժնկյան կոնվենցիային զուգահեռ, պարունակում էր մարդասիրական կանոններ: Ժնկյան I կոնվենցիան ենթարկվել է թարմացումների 1906 թ. հուլիսի 6-ին և 1929թ. հուլիսի 27-ին: Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1949 թ. օգոստոսի 12-ին, այն հաջորդող երեք այլ կոնվենցիաների հետ թարմացվել և լրացվել է: Այսպիսով՝

- Ժնկյան I կոնվենցիայի պաշտպանության տակ են գտնվում զինված ուժերի անձնակազմի վիրավորները կամ հիվանդները<sup>391</sup>,
- Ժնկյան II կոնվենցիայի պաշտպանության տակ են գտնվում ծովում զինված ուժերի կազմից վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները<sup>392</sup>,
- Ժնկյան III կոնվենցիայի պաշտպանության տակ են գտնվում ռազմագերիները<sup>393</sup>,
- Ժնկյան IV կոնվենցիայի պաշտպանության տակ է գտնվում խաղաղ բնակչությունը<sup>394</sup>:

Ժնկյան կոնվենցիաները հետագայում լրացվեցին 1977 թ. հունիսի 8-ին լրացուցիչ երկու արձանագրությամբ և 2005 թ. դեկտեմբերի 8-ին երրորդ արձանագրությամբ:

---

<sup>390</sup> Տե՛ս *G. D. Solis*, *The law of armed conflict: International humanitarian law in war*, 2nd ed. New York, NY, 2016, էջ 46:

<sup>391</sup> Տե՛ս «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» Ժնկի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիա:

<sup>392</sup> Տե՛ս «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» Ժնկի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիա:

<sup>393</sup> Տե՛ս «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնկի 1949թ. օգոստոսի 12-ի կոնվենցիա:

<sup>394</sup> Տե՛ս «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնկի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիա:

- Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ արձանագրություն (հայտնի է որպես Additional Protocol I),
- Ոչ միջազգային բնույթի կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ արձանագրություն (հայտնի է որպես Additional Protocol II),
- Տարբերակիչ խորհրդանշանի մասին արձանագրություն (հայտնի է որպես Additional Protocol III):

Եթե կոնվենցիաների պաշտպանությունը վերաբերում է մասնավորապես միջազգային ընդհարումներին, ապա յուրաքանչյուր կոնվենցիայի 3-րդ հոդվածը (հայտնի է որպես ընդհանուր 3-րդ հոդված) պարունակում է առանձին դրույթ ոչ միջազգային ընդհարումների վերաբերյալ, հատկապես քաղաքացիական պատերազմների պայմաններում:

## 20.2 Հաագայի օրենքներ

Եթե Ժնևյան իրավունքը ձևավորվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի անկողմնակալ, չեզոք և հասարակական նախաձեռնությամբ, ապա Հաագայի իրավունքը ձևավորվել է առանձին պետությունների նախաձեռնությամբ<sup>395</sup>: Այսպես, ցարական Ռուսաստանի նախաձեռնությամբ Հաագայի խաղաղության առաջին (1899թ.)<sup>396</sup> և երկրորդ (1907թ.) կոնֆերանսների ընթացքում ընդունվեցին պատերազմի օրենքների և սովորույթների մասին միջազգա-

<sup>395</sup> Մանրամասն տե՛ս *G. H. Aldrich, The Laws of War on Land, The American Journal of International Law* 94 (2000), էջ 49-56:

<sup>396</sup> Միջազգային ընդհարումների խաղաղ կարգավորման, ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների, 1864 թ. օգոստոսի 10-ի Ժնևյան կոնվենցիայի սկզբունքները ծովային պատերազմում կիրառելու մասին կոնվենցիաներ, օդապարիկներից կամ նման այլ նոր միջոցներից արկերի և պայթուցիկ նյութերի նետումը 5 տարի ժամկետով արգելելու, խեղդող կամ վնասակար գազեր պարունակող արկեր չկիրառելու, մարդու օրգանիզմում հեշտությամբ շրջվող ու տափակող գնդակներ չկիրառելու մասին հռչակագրեր:

յին մի շարք կոնվենցիաներ<sup>397</sup>: Չնայած այս կոնվենցիաների դրույթների մեծածավալ խախտումներին՝ Երկրորդ աշխարհամարտից հետո նույնպես զարկ տրվեց Հաագայի իրավունքի զարգացմանը: Մասնավորապես նշելի են զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիան, «Բակտերիոլոգիական (կենսաբանական) և թունավոր զենքերի պաշարների արգելման, մշակման, արտադրության, կուտակման և դրանց ոչնչացման մասին» 1972 թ. կոնվենցիան, «Քիմիական զենքի մշակումը, արտադրումը, կուտակումը և կիրառումը արգելելու և այն վերացնելու մասին» 1993 թ. կոնվենցիան և այլն:

Ու թեև Հաագայի իրավունքը գործում է պետությունների միջև և, որպես այդպիսին, ազդեցություն չունի ոչ միջազգային ընդհարումների վրա, նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը վերջ դրեց այս սովորույթին՝ հաստատելով, որ պատերազմ վարելու սովորույթները ընդհանուր առմամբ պետք է կիրառվեն երկարակյաց պետական կառույցների և կազմակերպված ռազմական խմբավորումների միջև ոչ միջազգային ընդհարումների ընթացքում<sup>398</sup>: Այնուամենայնիվ, հնարավոր չէ հստակ նշել՝ Հաագայի իրավունքով նախատեսված գործողությունները միջազգային սովորույթային իրավունքի մաս են, թե ոչ: Այդ իսկ պատճառով տարբեր կոնվենցիաներ պետք է դիտարկել իրենց միջազգային ընկալման և կիրառելիության սահմաններում: Նույն մտտեցումը, սակայն, չի գոր-

---

<sup>397</sup> Միջազգային ընդհարումները խաղաղ կարգավորելու, ռազմական գործողություններ սկսելու, ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների, ցամաքային պատերազմի դեպքում չեզոք տերությունների ու անձանց իրավունքների ու պարտավորությունների, պատերազմական գործողությունների սկզբում հակառակորդի առևտրական նավերի դրության, առևտրական նավերը ռազմական նավերի վերածելու մասին:

<sup>398</sup> *See* ICTY, *Prosecutor v. Tadic*, Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, 2 October 1995, para. 70:

ծում 1899 և 1907 թթ. Հաագայի կոնվենցիաների համար, քանի որ վերջիններս արդեն ունիվերսալ ճանաչում են վայելում<sup>399</sup>:

## 21. Հանցակազմի կառուցվածքը

Պատերազմական հանցագործությունը Նյուրնբերգում, ելնելով Հաագայի և Ժնևի կոնվենցիաներից, ամենից քիչ վիճելի հասկացություն էր, սակայն ժամանակի ընթացքում դրա հատկանիշների մեկնաբանման հարցում դժվարություններ առաջացան պրոքսի պատերազմների առկայության պատճառով:

### 21.1 *Կոնտեքստուալ հատկանիշներ*

Ռազմական իրադարձությունների ժամանակ առանձին անձինք կարիք ունեն առանձնահատուկ պաշտպանության, քանզի պատերազմական իրադարձություններում վերջիններիս իրավունքները ավելի քան վտանգված են: Ինչպես մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանության, այնպես էլ պատերազմական հանցագործությունների պարագայում առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել այս հանցակազմի կոնտեքստուալ հատկանիշները:

#### 21.1.1 *Զինված ընդհարում*

Պատերազմական հանցագործությունները կարող են տեղի ունենալ միայն այն պարագայում, երբ դրանք կատարվել են զինված ընդհարման ընթացքում: Սակայն միջազգային քրեական իրավունքի պրակտիկայում ստատուտային բնութագիր չի տրվում, թե ինչն է հասկացվում զինված ընդհարմամբ: Իր առաջին գործում Հարավ-սլավիայի տրիբունալը զինված ընդհարումը բնութագրեց որպես մեկ պետության սահմանների ներսում կամ դրսում գտնվող հակամար-

---

<sup>399</sup> Տե՛ս *T. Darge*, *Kriegsverbrechen im nationalen und internationalen Recht: Unter besonderer Berücksichtigung des Bestimmtheitsgrundsatzes*. Berlin, 2010, էջ 306, G. Werle and F. Jeßberger (note 127), էջ 383:

տող կողմերի զենքի և ուժի գործադրում<sup>400</sup>: Ըստ այս ձևակերպման՝ հնարավոր է տարբերակել զինված ընդհարումը ոչ միայն երկու կամ ավելի պետությունների, այլև մեկ պետության սահմաններում գործող առանձին զինված խմբավորումների, ինչպես նաև պետության և առանձին զինված խմբավորման միջև<sup>401</sup>: Զինված ընդհարումը սահմանելու համար կարևոր է նաև ուշադրություն դարձնել ռազմական ընդհարման ժամանակային զարգացումներին, մասնավորապես՝ երբ է զինված ընդհարումը սկսվում և երբ՝ դադարում: Պարտադիր չէ, որ զինված ընդհարումը սկսվի պատերազմի մասին հայտարարությամբ, նույն պարագայում զինված ընդհարման սպառնալիքների առկայությունը նշանակություն չունի ընդհարման սկիզբը սահմանելու համար: Անհրաժեշտ է, որ զինված գործողությունները փաստացի սկսվեն և տեղի ունենան<sup>402</sup>: Եթե զինված գործողությունների սկիզբը հեշտ է սահմանել, ապա դժվարություններ են առաջանում զինված ընդհարման ավարտի հարցում: Թեև փաստացի զինված ընդհարումը այլևս զարգացում չունի, սակայն դա չի կարող միանշանակ վկայել, որ զինված ընդհարումը այլևս դադարել է: Ընդհարման վերջնական դադարը, այնուամենայնիվ, խաղաղության մասին պայմանավորվածությունը կամ հաշտեցումն է: Զինադադարի մա-

---

<sup>400</sup> See ICTY, *Prosecutor v. Tadic*, Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, 2 October 1995, para. 70, տես նաև Venice Commission, opinion on the international legal obligations of Council of Europe Member States in respect of secret detention facilities and inter-state transport of prisoners, Venice, 17-18. März 2006, para. 78, Գերմանիայի դաշնային գերագույն դատարան, 20 December 2018, Az. 3 StR 236/17, Rn. 92-93:

<sup>401</sup> See ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Decision on Sentence pursuant to article 76 of the Statute, 23 May 2014, para. 1178:

<sup>402</sup> Օրինակ՝ առաջին զինված մարտական գործողություններով: 2016 թ. ապրիլյան ընդհարումը սկսվել է ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, երբ ադրբեջանական կողմը Արցախի Հանրապետության նկատմամբ սկսել է լայնամասշտաբ հարձակողական գործողություններ, տե՛ս նաև *M. Stuke*, *Der Rechtsstatus des Kriegsgefangenen im bewaffneten Konflikt: Historische Entwicklung und geltendes Recht*, 1st ed. Tübingen, 2017, էջ 26:



սին ցանկացած պայմանավորվածության խախտումը հանգեցնում է զինված ընդհարման շարունակելիությանը:

### *21.1.2 Միջազգային և ոչ միջազգային զինված ընդհարում*

Հռոմի ստատուտը տարանջատում է զինված ընդհարման երեք տեսակ՝ միջազգային, ներպետական կամ ոչ միջազգային և այլ ոչ միջազգային: Դրանց միջև կարևոր տարբերությունն այն է, որ ոչ միջազգային զինված ընդհարման ընթացքում ավելի նեղ զանգված է ընդգրկված պաշտպանության մեջ: Այս մոտեցումը պայմանավորված է, իհարկե, թե՛ քաղաքական շարժառիթներով, թե՛ միջազգային հանրային իրավունքի պատմական զարգացմամբ: Ներպետական ընդհարումների ընթացքում պետությունները, առաջնորդվելով ինքնավարության սկզբունքով, ազգային օրենքի համաձայն սահմանում են կազմավորված և զինված խմբավորումների դեմ իրենց պայքարը, որով էլ փորձում են խույս տալ միջազգային իրավունքի ներգործությունից և դրա պաշտպանությունից: Շատ դժվար է տարանջատել պետությունը պայքարում է կազմակերպված հանցագործության, թե առանձին զինված խմբավորման դեմ:

Հարավսլավիայի տրիբունալը այս առիթով սահմանել է, որ զինված ընդհարման միջազգայնությունը (տե՛ս Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (a) և (b) կետերը) ուղղակիորեն կապված է հակամարտող կողմերի իրավասուբյեկտության հետ: Ըստ այդմ, եթե հակամարտող կողմերը պետություններ են՝ միջազգային իրավունքի կրողներ, ապա զինված ընդհարումը միջազգային է: Սա չի բացառում նաև այն, որ զինված գործողությունները փաստացի տեղի են ունենում մեկ պետության սահմաններում և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների կամ սուբյեկտի պասիվ մասնակցությամբ: Այն ներառում է ոչ պետական զինված խմբավորմանը ցանկացած տեսակի աջակցություն՝ զենքի մատակարարում, ֆինանսավորում և այլն, սակայն միննույն ժամանակ անհրաժեշտ է, որ ոչ պետական զինված խմբավորումը միջազգային սուբյեկտի կողմից կառավարելի լինի

(*overall controll*)<sup>403</sup>: Սա իր հերթին նշանակում է, որ ոչ պետական զինված խմբավորման և միջազգային սուբյեկտի միջև գոյությունի ունի անմիջական կապ:

Ոչ միջազգային զինված ընդհարման պարագայում (տե՛ս Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (e) և (f) կետերը) միջազգային իրավունքի երկու սուբյեկտների մասնակցությունը բացառված է, սակայն միայն սա բավարար չէ, որ ոչ միջազգային զինված ընդհարման հատկանիշը լինի բավարարված: Ոչ միջազգային զինված ընդհարումը պետք է լինի մեկ պետության սահմաններում և կրի շարունակական բնույթ: Դա իր հերթին նշանակում է, որ զինված գործողությունները պետք է տեղի ունենան ոչ միայն ժամանակի և տարածության մեջ, այլև իրենց ուժգնությամբ չտարբերվեն միջազգային զինված ընդհարումից<sup>404</sup>: Սրանից բխում է, որ հակամարտող կողմը անգամ իր կառուցվածքով և արտաքին հատկանիշներով չպետք է տարբերվի միջազգային զինված ընդհարման կողմից<sup>405</sup>: Այս ամենի մեջ չեն կարող ընդգրկվել իշխանության դեմ ուղղված կարճաժամկետ բողոքի գործողությունները (տե՛ս Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (d) և (f) կետերը), եթե դրանք չեն ստանում զանգվածային բնույթ և դրանց ընթացքում չեն ձևավորվում զինված

---

<sup>403</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadić*, Appeals Chamber, Judgment, 15 July 1999, para. 104, 137 ICTY, *Prosecutor v. Prlić*, Trial Chamber, Judgment 29 May 2013, para. 96, ICJ, *Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America)*, Judgment, 26 November 1984, para. 115 ff, *M. Milanovic*, Extraterritorial application of human rights treaties: Law, principles, and policy. Oxford, New York, 2011, էջ 43, *I. Bogdan*, in: T. D. Gill, Yearbook of International Humanitarian Law Volume 18, 2015, 2016, էջ 44:

<sup>404</sup> Տե՛ս C. Safferling (note 2), էջ 231, H. Satzger (note 190), էջ 299, Գերմանիայի դաշնային գերագույն դատարան, 20 December 2018, Az. 3 StR 236/17, (OLG Stuttgart), 79, Գերմանիայի դաշնային գերագույն դատարան, November 2016, AK 54/16 (OLG Düsseldorf) 16:

<sup>405</sup> Պետք է ունենա կանոնավոր բանակ, համապատասխան վերադասի և ստորադասի աստիճանակարգ, ինչպես նաև՝ ղեկավար մարմին:

խմբավորումներ, ինչը կարող է հանգեցնել քաղաքացիական պատերազմի<sup>406</sup>:

Երբ ոչ միջազգային զինված ընդհարման հատկանիշները բավարարված չեն, այսինքն՝ չկա միջազգային ընդհարման ուժգնության համահունչ գործողություն, ապա կիրառվում է Ժնևյան կոնվենցիաներով նախատեսված (կոնվենցիա կոնվենցիայի մեջ) 3-րդ ընդհանուր հոդվածով սահմանված անձանց շրջանակի նվազագույն պաշտպանությունը<sup>407</sup>, մասնավորապես այն անձանց, որոնք ակտիվ ռազմական գործողությունների մաս չեն կազմում (տե՛ս Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (c) և (d) կետերը)<sup>408</sup>:

### *21.1.3 Պաշտպանվող օբյեկտ*

Եթե մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանության պարագայում որպես այդպիսին պաշտպանվող օբյեկտ են խումբ անձինք, ապա պատերազմական հանցագործությունների պարագայում խոսք կարող է լինել միայն պայմանագրերով նախատեսված առանձին կարգավիճակով անձանց պաշտպանության մասին: Մակայն, ինչպես նշվեց վերևում, պատերազմական հանցագործություններից պաշտպանությունը կախված է զինված ընդհարման տեսակից:

Միջազգային զինված ընդհարման պարագայում առանձին պաշտպանության տակ են առնված՝

- զինված ուժերի անձնակազմի վիրավորները և հիվանդները,

---

<sup>406</sup> Տե՛ս զինված ընդհարումը Սիրիայի Արաբական Հանրապետությունում, *D. Sorenson*, Syria in Ruins: The Dynamics of the Syrian Civil War. Westport, 2016, էջ 9-32:

<sup>407</sup> Տե՛ս *T. Marauhn/Ntoubandi Zacharie*, in: R. Wolfrum/F. Lachenmann, The law of armed conflict and the use of force, 2017, էջ 61-64:

<sup>408</sup> Տե՛ս *N. Melzer*, in: A. Clapham/T. Haeck, The Oxford handbook of international law in armed conflict, 2014, էջ 305-307, նաև՝ *Y. Dinstein*, Non-International Armed Conflicts in International Law, էջ 24:

- ծովում զինված ուժերի կազմից վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները,
- ռազմագերիները<sup>409</sup>,
- խաղաղ բնակչությունը,
- վիրավորները, բուժանձնակազմը և կրոնավորները:

Ոչ միջազգային զինված ընդհարման պարագայում՝

- Ժնևյան կոնվենցիաներով նախատեսված ընդահանուր 3-րդ հոդվածով պաշտպանվող անձինք, որոնք չեն մասնակցում ռազմական գործողություններին,
- Ժնևյան կոնվենցիաների 2-րդ արձանագրությամբ պաշտպանվող սուբյեկտները՝ քաղաքացիները, վիրավորները, բուժանձնակազմը, կրոնավորները և hors de combat:

Միևնույն ժամանակ հարկ է առանձնացնել նաև, որ, ըստ Հաագայի իրավունքի, պաշտպանության տակ են առնված այնպիսի օբյեկտներ, որոնք բխում են համընդհանուր մարդասիրական իրավունքից և այդպիսով պաշտպանում են համընդհանուր մարդկային շահերը: Այդ շարքից են, օրինակ, այնպիսի փամփուշտների օգտագործումը, որոնք առավելագույն ֆիզիկական վնաս են հասցնում անձին (տե՛ս նաև Զոմբի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետի (xix)), սակայն ոչ բոլոր սահմանափակումներն են գործում ոչ միջազգային զինված ընդհարումների ժամանակ<sup>410</sup>:

---

<sup>409</sup> Ռազմագերիները կարող են դիտարկվել միայն միջազգային զինված ընդհարման շրջանակներում՝ ելնելով դրա բնույթից, ինչպես նաև քաղաքական դրդապատճառներից: Տե՛ս G. D. Solis (note 390), էջ 99:

<sup>410</sup> Տե՛ս նաև մինչև 15 տարեկան երեխաների անդամագրում ռազմական միավորների մեջ միջազգային և ոչ միջազգային զինված ընդհարումների տարբերությունը, *M. Klamberg*, in: M. Klamberg, *Commentary on the Law of the International Criminal Court*, 2017, էջ 108, ICC, *Prosecutor v. Lubanga*, Pre-Trial Chamber, *Confirmation of Charges*, 29 January 2007, paras. 246-247, ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, *Judgment*, 14 March 2012, paras. 618-625:

#### *21.1.4 Հանցագործության և ընդհարման փոխադարձ կապը*

Հռոմի ստատուտի հանցակազմերի հատկանիշների (EoC) համաձայն՝ զինված ընդհարման պայմաններում կատարված հանցագործությունը պետք է բավարարի հետևյալ պայմանները<sup>411</sup>.

- հանցագործություն կատարողը զինյալ է (միջազգային մարտասիրական իրավունքի համատեքստում՝ combatant),
- տուժողը ոչ զինյալ է (non-combatant),
- տուժողը հակառակորդ կողմի ներկայացուցիչ է,
- Հանցագործությունը ի կատար է ածվել զինված ընդհարման համատեքստում:

Հարկ է նշել, որ այն գործողությունները, որոնք կատարվել են ոչ զինված ընդհարման սահմաններում, չեն կարող դիտարկվել պատերազմական հանցագործությունների լույսի ներքո:

#### *21.2 Սուբյեկտիվ կողմը*

Կատարողի գործողության՝ պատերազմական հանցագործություն դիտարկման համար վերջինս պետք է գիտակցի, որ նմանատիպ գործողությունը կատարվում է ռազմական իրադրության պայմաններում և դրա համատեքստում (Հռոմի ստատուտի 30-րդ հոդվածի 3-րդ մաս):

## **22. Առանձին գործողություններ**

Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածը բավական խրթին է ներկայացնում այն պատերազմական հանցագործությունները, որոնք պատժելի են Միջազգային քրեական դատարանի կողմից: Սա պայմանավորված է, ինչպես արդեն նշվեց, պատերազմական հանցագործությունների կողիֆիկացման պատմական ու քաղաքական արգասիքներով: Ոչ բոլոր պետություններն են պատրաստ իրենց ներ-

---

<sup>411</sup> See ICTY, *Prosecutor v. Kunarac et al*, Trial Chamber, Judgment, 22 February 2001, para. 401, *M. C. Bassiouni*, in: *M. C. Bassiouni, International criminal law: Volume III: International enforcement*, 2008, էջ 81:

քին խռովությունները բարձրաձայնելու միջազգային հարթակում, այսինքն՝ միջազգային պաշտպանություն շնորհելու իրենց ինքնիշխանության տակ գտնվող առանձին խնդիրների: Մա ուղիղ համեմատական է, օրինակ, Մեքսիկայում և Ֆիլիպիններում թմրանյութերի վաճառքով զբաղվող բանդաների դեմ պետական խիստ միջոցների գործադրման հետ: Դժվար է պատկերացնել, որ այդ բանդաները հակամարտող կողմ են, սակայն դրանց երկարատև առկայությունը հանգեցրել է նրան, որ թմրանյութերի վաճառքով զբաղվող կազմակերպված հանցավոր խմբավորումները (քարթելները) ձևավորել են համապատասխան, այսպես կոչված, կառույցներ, որոնք պայքար են մղում պետական համակարգի դեմ<sup>412</sup>:

Բացի պատերազմական հանցագործությունների կողմֆիկացման քաղաքական դժվարություններից՝ հարկ է նաև ավելացնել, որ թե՛ նախկին Հարավսլավիայի տրիբունալը, թե՛ Ռուանդայի տրիբունալը իրենց ստատուսներով ավելի վերացական են ներկայացրել պատերազմական հանցագործությունները՝ հղում կատարելով Ժնևյան և Հաագայի կոնվենցիաների վրա: Սակայն այդ պայմանագրերի ոչ բոլոր խախտումները կարող են դիտվել միջազգային քրեական իրավունքի լույսի ներքո: Միայն այն *ծանր խախտումները* (grave breaches) կարող են դիտարկվել Ժնևյան կոնվենցիաների շրջանակներում, որոնք նույն այդ կոնվենցիաներում սանկցիավորված են և հանգեցնում են ոչ թե պետական, այլ քրեական պատասխանատվության<sup>413</sup>, նույնը վերաբերելի է միայն Հաագայի կոնվեն-

---

<sup>412</sup> Stéu Jakub Basista, in: A. Mikaberidze, *Atrocities, massacres, and war crimes: An encyclopedia*, 2013, էջ 103, *C. Comer/D. Mburu*, in: T. D. Gill, *Yearbook of International Humanitarian Law Volume 18*, 2015, 2016, էջ 73-77:

<sup>413</sup> Stéu *P. Gaeta*, in: A. Clapham/P. Gaeta/M. Sassóli, *The 1949 Geneva Conventions: A commentary*, 2015, էջ 632, Ժնևյան I կոնվենցիայի 50-րդ հոդվածը, Ժնևյան II կոնվենցիայի 51-րդ հոդվածը, Ժնևյան III կոնվենցիայի 130-րդ հոդվածը, Ժնևյան IV կոնվենցիայի 147-րդ հոդվածը, Լրացուցիչ I արձանագրության 11-րդ և 85-րդ հոդվածները:

ցիաների կոպիտ ոտնահարումներին<sup>414</sup>։ Նախկին Հարավսլավիայի տրիբունալը այս առիթով սահմանեց, որ կոպիտ ոտնահարում (serious violations) կարող են դիտվել այն գործողությունները, երբ խախտվում է միջազգային մարդասիրական իրավունքը.

- կանոնը իր հերթին պետք է բխի սովորության իրավունքից կամ հանդիսանա պայմանագրային դրույթ,
- ոտնահարումը պետք է լինի կոպիտ և լուրջ,
- ոտնահարումը թե՛ սովորության, թե՛ պայմանագրային իրավունքով պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության:

Այս հատկանիշների բավարարման պարագայում հնարավոր է բարձրաձայնել Հաագայի իրավունքի շրջանակներում պատերազմական հանցագործության մասին:

Թեև Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածը ունի խրթին բովանդակություն, սակայն դրանում կա համապատասխան տրամաբանություն, որը հիմնվում է Հաագայի և Ժնևյան իրավունքի վրա: Միաժամանակ հարկավոր է նշել, որ անդամ պետություններն իրենց ներդաշնակեցման գործընթացում կարող են առաջնորդվել սեփական պատերազմական հանցագործությունների կողիֆիկացմամբ<sup>415</sup>:

### *22.1 Միջազգային զինված ընդհարում*

Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (a) կետով նախատեսված են այն հանցագործությունները, որոնք բխում են Ժնևյան ի-

---

<sup>414</sup> Տե՛ս ICTY, *Prosecutor v. Tadic*, Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, 2 October 1995, para. 94:

<sup>415</sup> Տե՛ս, օրինակ, գերմանական միջազգային քրեական օրենսգրքը, *Völkerstrafgesetzbuch (VStGB)*, որում պատերազմական հանցագործությունների տարանջատումը չի տարբերվում միջազգային և ոչ միջազգային զինված ընդհարումների տարանջատումից, *C. Safferling/G. Petrossian*, in: E. Hilgendorf/H. Kudlich/B. Valerius, *Handbuch des Strafrechts: Gesamtausgabe*, 2020:

րավունքից: Դրանք ներառում են սահմանափակ գործողություններ, ինչպիսիք են<sup>416</sup>

- սպանությունը,
- խռչտանգումը,
- մարմնական վնաս հասցնելը,
- գույքի ոչնչացումը,
- ռազմագերիների ծառայությունը,
- ռազմագերիներին արդար դատաքննությունից զրկելը,
- ապօրինի տեղահանությունը,
- պատանդ վերցնելը:

Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետով նախատեսված են այն ծավալուն հանցագործությունները, որոնք բխում են Հաագայի իրավունքից, մասնավորապես<sup>417</sup>

- քաղաքացիական բնակչության նկատմամբ հարձակումները,
- քաղաքացիական օբյեկտների նկատմամբ միտումնավոր հարձակումները,
- մարդասիրական օգնության կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի նկատմամբ ուղղորդված հարձակումները,
- քաղաքացիական օբյեկտների նկատմամբ կանխամտածված հարձակումները,
- բնակավայրերը ուժեղացնելը,
- զենքը վայր դրած մարտիկի կամ վիրավորված մարտիկի սպանությունը,
- հրադադարի դրոշը, համազգեստը կամ այլ նշաններ ոչ նպատակային օգտագործելը,
- տեղահանությունը,

---

<sup>416</sup> Կրճատված:

<sup>417</sup> Կրճատված:



- կրոնական, մշակութային շենքերի նկատմամբ միտումնավոր ոտնձգությունները,
- մարմինը խեղելը կամ արատավորելը,
- բժշկական փորձարկումները,
- դավադիր սպանությունը կամ վնաս պատճառելը,
- գրասրտությունը բացառելը,
- թշնամու գույքը ոչնչացնելը,
- հակառակորդի քաղաքացիներին իրավունքներից զրկելը,
- հակառակորդի քաղաքացիներին ռազմական գործողություններին մասնակցել պարտադրելը,
- բնակավայր թալանելը,
- թունավոր զենք գործածելը,
- արգելված գազեր, հեղուկներ կիրառելը,
- արգելված փամփուշտներ կիրառելը,
- ավելորդ վնասվածք պատճառող զենքեր կիրառելը,
- անձի արժանապատվությունը ոտնահարելը, նվաստացուցիչ վերաբերմունքը,
- սեռական բռնի ուժ կիրառելը,
- քաղաքացիներին որպես վահան օգտագործելը,
- Ժնևյան կոնվենցիայով առանձին պաշտպանված անձանց նկատմամբ ոտնձգությունը,
- քաղաքացիներին սովի մատնելը,
- մինչև տասնհինգ տարեկան երեխաների գորակոչը ազգային զինված ուժերում:

### *22.2 Ոչ միջազգային զինված ընդհարում*

Ի տարբերություն միջազգային զինված ընդհարման՝ ոչ միջազգային զինված ընդհարման պայմաններում թե՛ Ժնևյան իրավունքի, թե՛ Հաագայի իրավունքի պաշտպանություններն ավելի նեղ են: Այսպես, Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (c) կետով նախատեսված են այն գործողությունները, որոնք Ժնևյան կոնվենցիաների

ընդհանուր 3-րդ հոդվածով պաշտպանվող օբյեկտների նկատմամբ ոտնձգություններ են.

- սպանություն,
- մարմնի խեղում կամ արատավորում,
- դաժան վերաբերմունք,
- խոշտանգում,
- անձի արժանապատվությունը ոտնահարելը, նվաստացուցիչ վերաբերմունքը,
- պատանդ վերցնելը,
- առանց դատ և դատաստանի մահապատիժ իրականացնելը:

Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (e) կետով նախատեսված են այն գործողությունները, որոնք բխում են Հաագայի իրավունքից.

- քաղաքացիական բնակչության նկատմամբ հարձակումները,
- քաղաքացիական օբյեկտների նկատմամբ միտումնավոր հարձակումները,
- մարդասիրական օգնության կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի նկատմամբ ուղղորդված հարձակումները,
- կրոնական, մշակութային շենքերի նկատմամբ միտումնավոր ոտնձգությունները,
- թալանը,
- սեռական բռնի ուժ կիրառելը,
- մինչև տասնհինգ տարեկան երեխաների գորակոչը ռազմական խմբավորման մեջ,
- տեղահանումը,
- դավադիր սպանությունը կամ վնաս պատճառելը,
- գրթասրտությունը բացառելը,
- մարմինը խեղելը և արատավորելը,

- բժշկական փորձարկումները,
- թշնամու գույքը ոչնչացնելը,
- թունավոր զենք գործածելը,
- արգելված գազեր, հեղուկներ կիրառելը,
- արգելված փամփուշտներ կիրառելը:

*Պատերազմական հանցագործության ստուգման մեթոդաբանությունը*

1. Հանցակազմ`

ա. Actus reu`s

i. զինված ընդհարման առկայությունը:

ii. Միջազգային բնույթ`

- Ժնևյան իրավունքով պաշտպանվող սուբյեկտ/օբյեկտ,
- առանձին գործողություն,
- Հաագայի իրավունքի շրջանակներում կատարված առանձին գործողություն,
- համատեքստային կապը:

iii. Ոչ միջազգային բնույթ`

- ընդհարման տևականությունը և առանձնացված գործողությունների բացառումը,
- Ժնևյան իրավունքով պաշտպանվող սուբյեկտ/օբյեկտ,
- առանձին գործողություն,
- Հաագայի իրավունքի շրջանակներում կատարված առանձին գործողություն,
- համատեքստային կապը:

բ. Mens rea

i. զինված ընդհարման մասին իմացությունը,

ii. առանձին գործողության դիտավորությունը,

iii. համատեքստային կապի վերաբերյալ իմացությունը:

2. Բացառող հանգամանքները:

## ԳԼՈՒԽ 9

### ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

*1. For the purpose of this Statute, “crime of aggression” means the planning, preparation, initiation or execution, by a person in a position effectively to exercise control over or to direct the political or military action of a State, of an act of aggression which, by its character, gravity and scale, constitutes a manifest violation of the Charter of the United Nations.*

*2. For the purpose of paragraph 1, “act of aggression” means the use of armed force by a State against the sovereignty, territorial integrity or political independence of another State, or in any other manner inconsistent with the Charter of the United Nations. Any of the following acts, regardless of a declaration of war, shall, in accordance with United Nations General Assembly resolution 3314 (XXIX) of 14 December 1974, qualify as an act of aggression:*

*(a) The invasion or attack by the armed forces of a State of the territory of another State, or any military occupation, however temporary, resulting from such invasion or attack, or any annexation by the use of force of the territory of another State or part thereof;*

*(b) Bombardment by the armed forces of a State against the territory of another State or the use of any weapons by a State against the territory of another State;*

*(c) The blockade of the ports or coasts of a State by the armed forces of another State;*

*(d) An attack by the armed forces of a State on the land, sea or air forces, or marine and air fleets of another State*

*(e) The use of armed forces of one State which are within the territory of another State with the agreement of the receiving State, in contravention*

*of the conditions provided for in the agreement or any extension of their presence in such territory beyond the termination of the agreement;*

*(f) The action of a State in allowing its territory, which it has placed at the disposal of another State, to be used by that other State for perpetrating an act of aggression against a third State;*

*(g) The sending by or on behalf of a State of armed bands, groups, irregulars or mercenaries, which carry out acts of armed force against another State of such gravity as to amount to the acts listed above, or its substantial involvement therein.*

### 23. Ընդհանուր դրույթներ

Եթե այլ միջազգային հանցագործությունների պարագայում թե՛ պրակտիկայում և թե՛ տեսության մեջ կա որոշակի համաձայնություն, ապա ագրեսիայի հանցագործության վերաբերյալ դեռևս գոյություն չունի համընդհանուր համաձայնություն: Հավելենք նաև, որ այս հանցագործությունը որպես լրացում մեծ դժվարությամբ ընդունվեց Հռոմի ստատուտում:

Ագրեսիայի հանցագործությունը պատմականորեն ձևավորել է դեռևս Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ դաշնակիցները մեղադրեցին գերմանական կայսերը միջազգային *բարոյականության* ոտնահարման մեջ<sup>418</sup>: Սակայն կայսրին չարտահանձնելու պատրվակով Վերսալի պայմանագրի 227-րդ հոդվածը այդպես էլ մնաց անկատար<sup>419</sup>, իսկ ստեղծվելիք դատարանը չմեկնաբանեց, թե ինչ է հասկացվում միջազգային բարոյականություն ասելով: Առաջին աշխարհամարտը նաև մտորելու տեղիք տվեց քաղաքական գործիչներիին այն մասին, որ պատերազմ վարելը չի կարող դիտվել որպես

---

<sup>418</sup> Տե՛ս Վերսալի պայմանագրի 227-րդ հոդված, the Allied and Associated Powers publicly arraign William II formerly German Emperor, for a supremeoffence against international morality and the sanctityof treaties:

<sup>419</sup> Տե՛ս *M. Politi/G. Nesi*, The International Criminal Court and the Crime of Aggression, 1st ed. Milton, 2017, էջ 21:

լեզիտիմ նպատակ: Դրան հաջորդեցին բանակցությունները՝ հասնելու այն բանի համաձայնությանը, որ պետությունները հրաժարվեն պատերազմ վարելուց: Արդյունքում 1928 թ. ֆրանսիացի և ամերիկացի արտաքին գործերի նախարարներին հաջողվեց հասնել համաձայնության, որով նախատեսվում էր, որ պետությունները պետք է հրաժարվեն պատերազմ վարելուց, և բոլոր վեճերը պետք է ստանան խաղաղ լուծում<sup>420</sup>: Այդ համաձայնությունը կոչվեց հենց հեղինակների անունով՝ Բրայան-Կելոգ դաշնագիր, սակայն, չունեցավ լայն ճանաչում: Մոտավորապես Երկրորդ աշխարհամարտը թույլ չտվեց, որ համաձայնությունը լայն տարածում ստանա:

Պատերազմի ավարտին դաշնակիցները դարձյալ առաջ քաշեցին պատերազմ վարելու մեղադրանքը: Այս անգամ, սակայն, վերջիններիս հաջողվեց 1928 թ. համաձայնության հիման վրա ստեղծել խաղաղության դեմ հանցագործության հանցակազմը: Այս հանցակազմը Նյուրնբերգյան դատավարության հիմնական մեղադրանքն էր: Մեղադրող կողմը հայտարարում էր, որ խաղաղության դեմ հանցագործությունը ոչ միայն միջազգային հանցագործություն է, այլև միջազգային գերագույն հանցագործություն, որը պարունակում է մնացած միջազգային հանցագործությունները, այդ թվում՝ պատերազմական հանցագործությունները<sup>421</sup>:

---

<sup>420</sup> Այդ դաշնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ ստորագրող պետությունները դատապարտում էին պատերազմ վարելու գործողությունները, իսկ 2-րդ հոդվածում՝ մատնանշում վեճերի խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, The High Contracting Parties solemnly declare in the names of their respective peoples that they condemn recourse to war for the solution of international controversies, and renounce it, as an instrument of national policy in their relations with one another. The High Contracting Parties agree that the settlement or solution of all disputes or conflicts of whatever nature or of whatever origin they may be, which may arise among them, shall never be sought except by pacific means:

<sup>421</sup> St' u M. Boot (note 94), էջ 192, R. Cryer et al. (note 3), էջ 267, այս բնութագիրը հաստատվեց նաև հետագայում Նյուրնբերգյան դատավճռով:

Նյութներգի դատավարությունից հետո խաղաղության դեմ հանցագործությունը մասամբ մոռացության ենթարկվեց: Դա պայմանավորված էր աշխարհաքաղաքական վերադասավորություններով և աշխարհի տարբեր հատվածներում զինված ընդհարման առկայությամբ: Միայն 1974 թ. վերսկսեցին ագրեսիայի հանցագործության շուրջ քննարկումները: Արդյունքում ընդունվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի N 3314 բանաձևը, որով ագրեսիայի հանցագործությանը տրվեց իրավական սահմանում<sup>422</sup>:

Այս բանաձևում տեղ գտած սահմանումը, այնուամենայնիվ, մինչև Հռոմի ստատուտի շուրջ բանակցությունները կրկին մոռացության ենթարկվեց: Անգամ Հռոմի ստատուտի առանձին հանցակազմերի շուրջ բանակցության ժամանակ չկար համընդհանուր համաձայնություն ագրեսիայի հանցագործության վերաբերյալ<sup>423</sup>: Այդ իսկ պատճառով ագրեսիայի հանցակազմի շուրջ բանակցությունները հետաձգվեցին: 2010 թ. անդամ պետությունները ևս մեկ անգամ հանդիպեցին՝ քննարկելու Հռոմի ստատուտում լրացում կատարելու հարցը: Քննարկումների արդյունքում Ուգանդայի մայրաքաղաք Կամպալայում ընդունվեց Հռոմի ստատուտի 8 բիս հոդվածը, որն արտացոլում է 1974 թ. բանաձևը: Բացի 8 բիս հոդվածից՝ Հռոմի ստատուտի այլ հատվածներում լրացումներ կատարվեցին ագրեսիայի հանցագործության պատժելիության վերաբերյալ<sup>424</sup>: Թեև կար ընդհանուր համաձայնություն, սակայն սահմանվեց, որ Կամպալայի լրացումը կարող է իրավական ուժ ստանալ միայն, եթե մինչև 2017 թ. 30 անդամ պետություններ վավերացնեն այդ լրացումները<sup>425</sup>: Լիխտենշտայնի ջանքերի շնորհիվ հաջողվեց մինչև 2017 թվականը 30 պետությունների համոզել վավերացնելու այս լրացումները: Հռոմի

---

<sup>422</sup> Տե՛ս UN, GA RES 3314 (XXIX). Definition der Aggression, 14 December 1974:

<sup>423</sup> Տե՛ս *G. Dive/B. Goes/D. Vandermeersch*, From Rome to Kampala. Cork, 2013, էջ 15-20, *M. Wong*, in: M. Bergsmo, Historical origins of international criminal law, 2015, էջ 578:

<sup>424</sup> Հռոմի ստատուտի հոդվածներ 15bis և 15ter, 25 3bis.

<sup>425</sup> Տե՛ս վավերացրած պետությունների ցանկը [www.crimeofaggression.info](http://www.crimeofaggression.info):

ստատուտի անդամ պետությունների ասամբլեայում 2017 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվեց որոշում ազրեսիայի հանցագործությունը «ակտիվացնել»՝ 2018թ. հուլիսի 17-ից սկսած<sup>426</sup>:

Թեպետ ազրեսիայի հանցագործությունն այսօր Հռոմի ստատուտի անբաժան մասն է, սակայն մինչ օրս այնքան լայնորեն ճանաչված չէ, որքան մնացյալ երեք միջազգային հանցագործությունները:

## 24. Հանցակազմի կառուցվածքը

Եթե պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործության և ցեղասպանության պարագայում պաշտպանության տակ են առնված որոշակի խումբ անձինք, ապա ազրեսիայի հանցագործության պարագայում խոսքը միայն պետությունների մասին է: Իհարկե, հնարավոր է որպես պաշտպանության վերջնական կամ անուղղակի առարկա դիտարկել պետության ամբողջ բնակչությունը, բայց հիմնական պաշտպանություն կրողը պետությունն է, ուստի մասնավորապես այս հանցակազմով պաշտպանվում են պետության անկախությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

Թեև ազրեսիայի հանցագործության քրեական պատասխանատվությունը սահմանվել է Հռոմի ստատուտի լրացմամբ, սակայն ազրեսիվ պատերազմ վարելը (*ius ad bellum*) ի սկզբանե հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված նպատակներին: Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անդամ պետությունները պարտավոր են ձեռնպահ լինել ցանկացած ձևով ուժի գործադրումից: Մակայն միևնույն ժամանակ ՄԱԿ-ի կանոնադրությունը նախատեսում է պատերազմ վարելու երկու բացառություն, առաջին՝ երբ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից պատերազմ վարելը թույլատրված է (տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրության 39-րդ, 41-րդ, 42-րդ

---

<sup>426</sup> Տե՛ս ICC, ASP, Resolution 5 ICC-ASP/16/Res.5:



հողվածներ), և երբ պատերազմական գործողությունները բխում են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսված անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանությունից<sup>427</sup>: Վերոնշյալում ազդեցիկ հանցագործությունը բացառված է<sup>428</sup>:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ազդեցիկ հանցագործությունը այն սահմանմամբ, որն այսօր գործում է միջազգային քրեական իրավունքում, դեռևս պրակտիկ տեսանկյունից չի գործածվել, այսինքն՝ դատարանը, որպես այդպիսին, չի մեկնաբանել հանցագործության հատկանիշները:

#### *24.1 Կոնտեքստուալ հատկանիշներ*

Ինչպես միջազգային այլ հանցագործությունների պարագայում, այստեղ էլ մինչև առանձին ազդեցիկ հանցագործությունների սահմանումը տալն անհրաժեշտ է, որպեսզի բավարարվեն կոնտեքստուալ հատկանիշները: Ազդեցիկ հանցագործության համատեքստային հատկանիշներն են՝ պետության կողմից ուժի գործադրումը այլ պետության ինքնիշխանության նկատմամբ, ՄԱԿ-ի կանոնադրության բացահայտ ոտնահարումը, հանցագործի ղեկավար դիրքը:

##### *24.1.1 Պետության կողմից ուժի գործադրումը*

Ազդեցիկ հանցագործության պարագայում անհրաժեշտ է, որ այլ պետության նկատմամբ տեղի ունենա ուժի գործադրում կանոնավոր բանակի կամ այլ ստորաբաժանումների կողմից, որոնք գտնվում են պետական վերահսկողության ներքո: Դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ ոչ պետական ռազմական միավորումները կատարեն ազդեցիկ հանցագործություն: Միայն պետա-

---

<sup>427</sup> Sté u S. Sayapin (note 39), էջ 111, *T. Ruys*, "Armed attack" and Article 51 of the UN Charter: Evolutions in customary law and practice. Cambridge, 2010, էջ 557:

<sup>428</sup> Sté u *C. McDougall*, The crime of aggression under the Rome Statute of the International Criminal Court. Cambridge, 2013, էջ 59, *D. Akande/A. Tzanakopoulos*, The Crime of Aggression before the International Criminal Court: Introduction to the Symposium, *European Journal of International Law* 29 (2018), էջ 831:

կան ստորաբաժանումների կամ պետության կողմից վերահսկվող զինվորական, մարտական ստորաբաժանումների ակտիվ գործողությունն է հնարավոր որակել որպես ագրեսիվ հանցագործություն: Սրանից բխում է, որ գործողություն իրականացնող ստորաբաժանման և պետության միջև պետք է լինի փոխադարձ կապ: Ուժի կիրառումը չի կարող լինել բացառապես զենքի փաստացի գործադրմամբ, հաքերային հարձակումները նույնպես կարող են մեկնաբանվել այս համատեքստում<sup>429</sup>:

#### *24.1.2 Այլ պետության ինքնիշխանությունը*

Ինչպես արդեն նշվեց վերևում, ագրեսիայի հանցագործության պաշտպանության առարկան այլ պետության ինքնուրույնությունն է, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը: Ցանկացած ոտնձգություն պետության այս հատկանիշների վրա հակասում է միջազգային իրավունքի սովորույթային նորմերին և պետությունների խաղաղ գոյակցությանը<sup>430</sup>:

#### *24.1.3 ՄՄԿ-ի կանոնադրության բացահայտ ոտնահարումը*

Մեկ պետության կողմից կատարված գործողությունները այլ պետության նկատմամբ որպես բացահայտ ոտնահարում որակելու համար հարկավոր է ստուգել դրանք Հռոմի ստատուտի 8 բիս հոդվածով նախատեսված երեք չափանիշների համակցության մեջ, երբ Կանոնադրության ոտնահարումն իր բնույթով, ծանրությամբ և մասշտաբով ակնհայտ է: Ոտնահարման բնույթը կախված է նրանից, թե ինչ տիպի գործողություններ են կատարվել՝ օկուպացիա, ուժակոծություն կամ նավահանգստի արգելափակում: Ծանրություն ասելով՝ հասկացվում է, թե ինչ ուժգնությամբ է կատարվել ոտնահարումը:

---

<sup>429</sup> Տե՛ս *Y. Radziwill*, *Cyber-Attacks and the Exploitable Imperfections of International Law*. Leiden, 2015, էջ 167, C. McDougall (note 428), էջ 111:

<sup>430</sup> Մանրամասն տե՛ս *E. K. Bankas*, *The State Immunity Controversy in International Law: Private Suits Against Sovereign States in Domestic Courts*, 1st ed. s.l., 2005, էջ 10-15:

մը, որքան ժամանակ են գտնվել այլ պետության զինվորական ստորաբաժանումները օկուպացված տարածքում<sup>431</sup>, կամ քանի անգամ է այլ պետության տարածքը ուժակոծվել: Մասշտաբը տարածքային չափանիշն է, թե որքան տարածք է ենթարկվել ազդեցության, որքան տուժող է եղել, թեև տուժողների թիվը ազդեցիկ հանցագործության պարագայում փոքր նշանակություն ունի: Միայն այս չափանիշների համակցության բավարարման դեպքում հնարավոր է խոսել բացահայտ ոտնահարման մասին:

#### *24.1.4 Ղեկավար դերակատարությունը*

Ազդեցիկ հանցագործության այլ կարևոր հատկանիշ է այն, երբ անձը, որը տվյալ հանցագործության համար ենթակա է քրեական պատասխանատվության, ունեցել է համապատասխան ղեկավար դիրք և ունակ է եղել կառավարելու պետական ստորաբաժանումները: Դա կարող է ներառել ինչպես ի պաշտոնե ղեկավար անձանց, այնպես էլ դե ֆակտո ղեկավարներին, որոնք, իրենց անձով պայմանավորված, հնարավորություն են ունեցել ազդելու պետական ստորաբաժանումների վրա:

#### *24.2 Առանձին գործողությունները*

Ղեկավար անձը, որը մշակել, նախապատրաստել, նախաձեռնել և իրականացրել է առանձին գործողությունները, որոնք սահմանված են Հռոմի ստատուտի 8 բիս հոդվածի 2-րդ մասով, ենթակա է քրեական պատասխանատվության: Մրանից բխում է, որ անկախ այն հանգամանքից, թե որ ժամանակային հատվածում է գտնվում ազդեցիկ առանձին գործողությունը, այն կարող է պատժվել:

Ազդեցիկ գործողություններ են՝

- մեկ այլ պետության տարածք զինված ուժերի ներխուժումը կամ հարձակումը կամ ցանկացած ռազմական օկուպացիա,

---

<sup>431</sup> See *ICJ, Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo v. Uganda)*, Judgment of 19 December 2005:

- պետության զինված ուժերի կողմից այլ պետության տարածքը ռաբակոծելը,
- պետության նավահանգիստները կամ ափերը շրջափակելը,
- այլ պետության ցամաքային, ծովային կամ օդային ուժերի վրա հարձակվելը,
- միջազգային պայմանագրերի խախտմամբ այլ պետության զինված ուժերն օգտագործելը,
- ագրեսիվ գործողության համար տարածք տրամադրելը,
- վարձկանների կամ այլ խմբավորումների ագրեսիվ գործողություններն ուղղորդելը:

### *24.3 Սուբյեկտիվ կողմը*

Ղեկավարի սուբյեկտիվ կողմի բավարարված լինելու համար վերջինս պետք է գործի դիտավորությամբ և իմանա, որ այդ գործողությունները ՄԱԿ-ի կանոնադրության ակնհայտ ոտնահարում են (Հռոմի ստատուտի 30-րդ հոդված):

*Ագրեսիայի հանցագործության ստուգման մեթոդաբանությունը*

- 1) Հանցակազմ՝
  - ա) actus reus՝
    - i) ագրեսիվ գործողություն,
    - ii) պետության զինված ուժերի ուժի գործադրում,
      - (1) այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ,
      - (2) ըստ բնույթի, ծանրության և մասշտաբի՝ ՄԱԿ-ի կանոնադրության բացահայտ ոտնահարում,
    - iii) մշակում, նախապատրաստում, նախաձեռնում, իրականացում,
    - iv) ղեկավար դիրք,
  - բ) mens rea՝
    - i) կոնտեքստուալ հատկանիշների իմացություն,
    - ii) կոնտեքստուալ հատկանիշների նկատմամբ դիտավորություն,

- iii) առանձին գործողությունների նկատմամբ դիտավորություն,
  - iv) ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների մասին իմացություն:
- 2) Հանցագործությունը բացառող հանգամանքներ:

## ԲԱԺԻՆ IV

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

#### ԳԼՈՒԽ 10

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

#### 25. Միջազգային քրեական իրավագործություն

Միջազգային քրեական ատյանի ստեղծումը պայմանավորված է այդ կառույցի ստեղծման նպատակի իրականացմամբ: Միջազգային քրեական ատյանը չի փոխարինում ազգային քրեական դատական համակարգին, այլ տարբեր պատճառներով լրացնում է ազգայինը<sup>432</sup>: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր միջազգային ատյանի իրավագործությունը սահմանափակ է: Այն հիմնվում է իրավաստեղծողների կամահայտնության ու փոխադարձ համաձայնության վրա և սահմանափակվում է տարածքային, ժամանակային, անձնական ու նյութական առումներով<sup>433</sup>:

Տարածքային իրավագործությունը (*ratione loci*) ընդգրկում է այն աշխարհագրական տեղանքը, տարածաշրջանը, երկրամասը, պետությունը, որի սահմաններում կատարված հանցագործությունների քննությունը գտնվում է միջազգային կառույցի իրավական ակտի իրավասության ներքո:

Ժամանակային իրավագործությունը (*ratione temporis*) այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կատարված հանցագործությունները գտնվում են միջազգային կառույցի իրավական ակտի իրավասության ներքո:

---

<sup>432</sup> Տե՛ս *V. Tsilonis*, *The Jurisdiction of the International Criminal Court*. Cham, 2020, էջ 12-18:

<sup>433</sup> Տե՛ս *C. Hall*, in: M. Bergsmo, *Complementarity and the exercise of universal jurisdiction for core international crimes*, 2010, էջ 211:

Անձնական իրավագործությունը վերաբերում է ֆիզիկական այն անձանց (*ratione personae*), որոնց կատարած հանցագործությունների քննությունը ենթակա է միջազգային կառույցի իրավասությանը:

Նյութական իրավագործությունը (*ratione materiae*) վերաբերում է այն հանցագործություններին, որոնք կարող են քննվել միջազգային կառույցի կողմից:

<b>Միջազգային քրեական առյան</b>	<b>Իրավասություն</b>
International Military Tribunal (IMT)	London Charter <sup>434</sup> for the trial of German war criminals whose offences have no particular geographical location whether they be accused individually or in their capacity as members of organizations or groups or in both capacities.
International Military Tribunal for the Far East (IMTFE)	Tokyo Charter <sup>435</sup> for the just and prompt trial and punishment of the major war criminals in the Far East.
International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY) (ad hoc)	UN SC Res. 827, Statute of ICTY <sup>436</sup> for the sole purpose of prosecuting persons responsible for serious violations of international humanitarian law committed in the territory of the former Yugoslavia between 1 January 1991 and a date to be determined by the Security Council upon the restoration of peace.
International Criminal Tribunal for Rwanda (ICTR)	UN SC Res. 955, Statute of ICTR <sup>437</sup> for the sole purpose of prosecuting persons responsible for genocide and other serious violations of international

<sup>434</sup> Տե՛ս [https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/-Doc.2\\_Charter%20of%20IMT % 201945.pdf](https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/-Doc.2_Charter%20of%20IMT%201945.pdf):

<sup>435</sup> Տե՛ս [https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/-Doc.3\\_1946%20Tokyo%20 Charter.pdf](https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/-Doc.3_1946%20Tokyo%20Charter.pdf):

<sup>436</sup>Տե՛ս <https://www.icty.org/>:

<sup>437</sup> Տե՛ս <https://unictr.irmct.org/>:

(ad hoc)	humanitarian law committed in the territory of Rwanda and Rwandan citizens responsible for genocide and other such violations committed in the territory of neighboring States, between 1 January 1994 and 31 December 1994.
International Criminal Court (ICC)	Rome Statute <sup>438</sup> for the prosecution of most serious crimes of international concern.
Special Court for Sierra Leone (SCSL) (hybrid)	Statute of the Special Court for Sierra Leone <sup>439</sup> to prosecute persons who bear the greatest responsibility for serious violations of international humanitarian law and Sierra Leonean law committed in the territory of Sierra Leone since 30 November 1996, including those leaders who, in committing such crimes, have threatened the establishment of and implementation of the peace process in Sierra Leone.
Extraordinary Chambers in the Courts of Cambodia (ECCC) (hybrid)	The Law on the Establishment of the Extraordinary Chambers <sup>440</sup> The purpose of this law is to bring to trial senior leaders of Democratic Kampuchea and those who were most responsible for the crimes and serious violations of Cambodian penal law, international humanitarian law and custom, and international conventions recognized by Cambodia, that were committed during the period from 17 April 1975 to 6 January 1979.
Special Tribunal for Lebanon (STL) (hybrid)	UN SC Res. 1757, Statute of the STL <sup>441</sup> to prosecute persons responsible for the attack of 14 February 2005 resulting in the death of former Lebanese Prime Minister Rafiq Hariri and in the death or injury of other persons. If the tribunal finds that other attacks that occurred in Lebanon between 1 October 2004 and 12

<sup>438</sup> See <https://www.icc-cpi.int/>:

<sup>439</sup> See <http://www.rscsl.org/>:

<sup>440</sup> See [www.eccc.gov.kh/en](http://www.eccc.gov.kh/en):

<sup>441</sup> See <http://www.stl-tsl.org/>:



	December 2005.
Kosovo Specialist Chambers (KSC) (hybrid)	Law on Kosovo Specialist Chambers <sup>442</sup> to ensure secure, independent, impartial, fair and efficient criminal proceedings in relation to allegations of grave trans-boundary and international crimes committed during and in the aftermath of the conflict in Kosovo, which relate to those reported in the Council of Europe Parliamentary Assembly Report Doc 12462 of 7 January 2011.

Ի տարբերություն Միջազգային քրեական դատարանի՝ միջազգային քրեական այլ կառույցների իրավասությունը շատ ավելի հստակորեն է ձևավորված և ունի հստակ նպատակ, օրինակ՝ Լիբանանի հատուկ տրիբունալի իրավասության տակ է գտնվում ահաբեկչական այն գործողությունը, որն առնչվում է Լիբանանի վարչապետի սպանությանը, կամ Սիերա Լեոնեի հատուկ դատարանի իրավասության տակ են գտնվում այն հանցագործությունները, որոնք կատարվել են քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Սա նշանակում է, որ թե՛ ժամանակի մեջ, թե՛ աշխարհագրորեն դատարանը սահմանափակված է: Այլ է Միջազգային քրեական դատարանի իրավասության հարցը: Այստեղ հնարավոր է վկայակոչել, որ Դատարանը մասամբ ունի վերստի իրավասություն ունի միջազգային հանցագործությունների նկատմամբ: Ինչո՞ւ մասամբ, քանի որ ՄՔԴ-ի իրավասությունը Հռոմի ստատուտում բավականին ճկուն է արձանագրված, սակայն մինչ բուն քրեադատավարական գործընթացին անցնելը ՄՔԴ-ի ենթակայության տակ գտնվող գործն անցնում է մի քանի փուլերով, սա է նաև պատճառներից մեկը, որ ՄՔԴ ենթակայության տակ գտնվող գործերի քննութ-

<sup>442</sup> Տե՛ս <https://www.scp-ks.org>:

յունը շատ ավելի երկար է տևում, քան ազգային ատյաններում<sup>443</sup>։ Ըստ այդմ՝ ոչ բոլոր միջազգային հանցագործությունները կարող են քննվել ՄՔԴ-ի կողմից։ Միայն Հռոմի ստատուտով նախատեսված պահանջների բավարարման դեպքում է հնարավոր, որ քրեական գործը քննվի ՄՔԴ-ի կողմից։

## 26. Միջազգային քրեական դատարանի իրավասություն

ՄՔԴ-ն իրավասություն ունի քննելու միայն Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով նախատեսված միջազգային չորս հանցագործություն՝ ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություն, պատերազմական հանցագործություններ և, 2018 թվականից սկսած՝ ագրեսիայի հանցագործություն<sup>444</sup>։ ՄՔԴ-ում գործը վարույթ ընդունելու համար պետք է բավարարվեն Հռոմի ստատուտի 11-րդ և 12-րդ հոդվածների, 13-րդ հոդվածի գործարկման մեխանիզմների (trigger mechanism) ու 17-րդ հոդվածի փոխլրացման պահանջները։

1. Իրավասություն՝
  - ա. Ratione materiae – Հռոմի ստատուտի 5-րդ հոդված,
  - բ. Ratione temporis – Հռոմի ստատուտի 11-րդ հոդված
  - գ. Ratione loci – Հռոմի ստատուտի 12-րդ հոդված<sup>445</sup>։
2. Գործարկման մեխանիզմներ՝

---

<sup>443</sup> Տե՛ս *B. Gumpert/Y. Nuzban*, What can be done about the length of proceedings at the ICC?, EJIL:Talk! 2019:

<sup>444</sup> Ի տարբերություն միջազգային այլ հանցագործությունների՝ ագրեսիայի վերաբերյալ քրեական գործերը վարույթ կարող են ընդունվել առանձին պայմանների բավարարման դեպքում։

<sup>445</sup> Պետք է հաշվի առնել նաև Հռոմի ստատուտի 124-րդ հոդվածը պատերազմական հանցագործությունների պարագայում, երբ անդամ պետությունը հայտարարում է, որ ՄՔԴ-ն 7 տարի շարունակ իրավասություն չի ունենա այն պատերազմական հանցագործությունների վրա, որոնք կատարվել են «նոր» անդամ պետության տարածքում։

- ա. անդամ պետության պահանջով – Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (ա) կետ և 14-րդ հոդված<sup>446</sup>,
  - բ. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ – Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (բ) կետ<sup>447</sup>,
  - գ. ՄՔԴ դատախազի անձնական նախաձեռնությամբ (*proprio motu*) – Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (գ) կետ և 15-րդ հոդված:
3. Փոխլրացման պայմաններ՝
- ա. պետությունը չի ցանկանում կամ ի վիճակի չէ քննելու գործը – Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի (ա) և (բ) կետեր,
  - բ. գործի բավականաչափ լրջությունը բավարարված է – Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի (դ) կետ,
  - գ. անձը դատապարտված չի եղել նույն հանցանքի համար – Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի (զ) կետ:

### 26.1 Իրավասություն

ՄՔԴ իրավասության հարցը ունի հիմնաքարային նշանակություն: Հռոմի ստատուտի բանակցությունների ժամանակ տեսակետների երկու տարբեր բևեռներ առաջացան, թե ինչպիսին պետք է լինի ՄՔԴ իրավասությունը միջազգային հանցագործությունների համար: Դատարանի «կողմնակից» (*like-minded states*) պետությունները վկայակոչում էին, որ իրավասությունը գործում է ինքնաբերաբար, երբ պետությունը անդամագրվում է Հռոմի ստատուտին և, ըստ այդմ, կողմնակից էին ունիվերսալ իրավասությանը (*Weltrechtsprinzip*)<sup>448</sup>: Հակառակ այս մոտեցման՝ բանակցող որոշ պետություններ կողմ չէին միջազգային ունիվերսալությանը և ցանկանում էին խոչընդոտ-

<sup>446</sup> Այս պարագայում փոխլրացման պահանջները այլևս կարող են չդիտարկվել:

<sup>447</sup> Այս պարագայում ևս փոխլրացման պահանջները կարող են չդիտարկվել:

<sup>448</sup> See Universal jurisdiction, *N. Gillhoff*, in: H. Roggemann, National security and international criminal justice, 2002, էջ 100-101, նաև՝ *M. Glasius*, The International Criminal Court, 2006, էջ 69:

ներ ստեղծել միջազգային արդարադատության համար, մասնավորապես, երբ խոսքը միայն պետությունների բացառիկ համաձայնության դեպքում դատարանի իրավասության կիրառելի լինելու, ինչպես նաև հանցագործությունների միջև իրավասության կիրառելիության տարանջատում դնելու մասին էր<sup>449</sup>: Արդյունքում բուռն քննարկումներից հետո պետությունները հանգեցին ճկուն իրավասության շուրջ համաձայնության, ըստ որի՝ ՄՔԴ-ն կարող է ունենալ երեք տեսակի տարածքային իրավասություն, որը միևնույն ժամանակ թույլ է տալիս իրավասության տակ առնել նաև ոչ անդամ պետություններում կատարված հանցագործությունները:

1. Անդամակցող պետությունը, համաձայն Հռոմի ստատուտի 12-րդ հոդվածի 1-ին մասի, մեխանիկորեն ընդունում է ՄՔԴ իրավասությունը Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ: Ըստ այդմ՝ անդամակցող պետությունն իր համաձայնությունն է հայտնում առ այն, որ ՄՔԴ-ն քննի այն գործերը, որոնք վերաբերում են անդամակցող պետության տարածքում կատարված միջազգային հանցագործություններին<sup>450</sup>: Նույնը վերաբերում է ագրեսիայի հանցագործությանը՝ ըստ Հռոմի ստատուտի 15 բիս հոդվածի 4-րդ մասի:
2. ՄՔԴ-ն կարող է իրավասություն ունենալ նաև այն պարագայում, երբ միջազգային հանցագործությունը կատարվել է անդամ պետության տարածքում (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի

---

<sup>449</sup> Մասնավորապես, ցեղասպանության և պատերազմական հանցագործությունների պարագայում տարբեր իրավասություններ կիրառելի կլինեն, տե՛ս *B. S. Brown*, in: S. B. Sewall/C. Kaysen/G. J. Bass/B. S. Brown/A. Chayes/R. O. Everett/R. J. Goldstone/M. Morris/W. L. Nash/S. Power/L. N. Sadat/M. P. Scharf/D. J. Scheffer/A.-M. Slaughter/R. Wedgwood/L. Weschler, *The United States and the International Criminal Court: National Security and International Law*, 2000, էջ 64-65, K. Ambos (note 127), էջ 330:

<sup>450</sup> Տե՛ս *D. Zimmermann*, in: M. Klamberg, *Commentary on the Law of the International Criminal Court*, 2017, էջ 170:

2-րդ մասի (ա) կետ), կամ հանցագործություն կատարողը անդամ պետության քաղաքացի է (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի 2-րդ մասի (բ) կետ): Ըստ այդմ՝ իրավասությունը առաջանում է հանցագործության վայրով<sup>451</sup> և հանցագործի պատկանելությամբ<sup>452</sup>:

3. ՄՔԴ-ն կարող է նաև իրավասություն ունենալ այն պայմաններում, երբ ոչ անդամ պետությունը հայտարարում է, որ մասամբ ճանաչում է ՄՔԴ իրավասությունը կոնկրետ գործի շրջանակներում (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի 3-րդ մաս): Սա ևս մեկ ճկուն հնարավորություն է ճանաչելու ՄՔԴ-ի իրավասությունը: Այս եղանակը հաշվի էր առնվում մասնավորապես Սիրիայի քաղաքացիական պատերազմի շրջանում՝ Իսլամական պետության զինյալների քրեական հետապնդման հարցում: Սա ի հայտ եկավ այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամները Սիրիայի և Իրաքի ապստամբների և պետական ներկայացուցիչների քրեական հետապնդման հարցի շուրջ չհասան ընդհանուր համաձայնության<sup>453</sup>: Սահմանափակ

---

<sup>451</sup> Տե՛ս ICC, *Situation in the Afghanistan*, Pre-Trial Chamber, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the Islamic Republic of Afghanistan, 12 April 2019, paras. 45-60, ICC, *Situation in the Afghanistan*, Appeals Chamber, Judgment on the appeal against the decision on the authorisation of an investigation into the situation in the Islamic Republic of Afghanistan, 5 March 2020, para. 71, ICC, Pre-Trial Chamber, *Situation in the Bangladesh/Myanmar*, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the People's Republic of Bangladesh/Republic of the Union of Myanmar, 14 November 2019, paras. 42-62:

<sup>452</sup> Տե՛ս ICC, *Situation in Iraq/UK*, ICC, *Prosecutor v. Lubanga*, Appeals Chamber, Judgment on Appeal against Decision on Defence Challenge to Jurisdiction of the Court pursuant to Article 19(2)(a) of the Statute, 3 October 2006, para. 24, մանրամասն տե՛ս *M. Vagias/J. Dugard*, The territorial jurisdiction of the International Criminal Court. Cambridge, 2014, էջ 12-31:

<sup>453</sup> Տե՛ս *C. Kenny*, Prosecuting Crimes of International Concern: Islamic State at the ICC?, *Utrecht Journal of International and European Law* 33 (2017), էջ 125,

իրավասության ճանաչումը թույլ է տալիս ՄՔԴ-ին անդրադառնալ ոչ անդամ պետության տարածքում առկա խնդիրներին:

Ժամանակային իրավասության առումով ՄՔԴ-ն նույնպես սահմանափակված է: Այստեղ հարկավոր է անդրադառնալ երկու կարևոր հանգամանքի:

1. Առաջին՝ ՄՔԴ-ն, ըստ էության, իրավասություն ունի միայն այն միջազգային հանցագործությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել Հռոմի ստատուտի ուժի մեջ մտնելուց ի վեր, այսինքն՝ 2002թ. հուլիսի 1-ից սկսած (Հռոմի ստատուտի 11-րդ հոդվածի 1-ին մաս): Սա էր նաև պատճառը, որ Կամբոջայի ցեղասպանության հարցով ստեղծվեց հիբրիդային դատարան, քանի որ ցեղասպանական գործողությունները, ինչպես նաև մարդկության դեմ կատարված հանցագործությունը տեղի էին ունեցել 1970-ական թթ.<sup>454</sup>: Նույն խնդիրն առաջացավ Չադի Հանրապետության նախկին նախագահի ձերբակալման պարագայում: ՄՔԴ-ն իրավասու չէր քննելու վեջինիս կողմից 1980-ական թթ. կատարված հանցագործությունները: Այս առումով Սենեգալի իշխանությունները հանձն առան սեփական դատական համակարգով քրեական հետապնդման ենթարկելու Հիսիյեն Հաբրեին<sup>455</sup>:
2. Երկրորդ ժամանակային իրավասության սահմանափակումը վերաբերում է այն հանգամանքին, թե անդամ պետությունը երբ է վավերացրել Հռոմի ստատուտը (Հռոմի ստատուտի 11-րդ հոդվածի 2-րդ մաս): Ըստ այդմ՝ այն հանցագործությունները, որոնք

---

UN Security Council, Draft Resolution 348, 22 May 2014, UN Doc S/2014/348, նաև՝ ՄՔԴ-ի իրավասության ճանաչումը Ուկրաինայի կողմից 2014թ. ապրիլի 9-ին, <https://www.icc-cpi.int/itemsDocuments/997/declarationRecognitionJurisdiction09-04-2014.pdf>, դիտված 2020 թ. մայիսի 10-ին:

<sup>454</sup> Տե՛ս *T. van der Berg/A. Smeulers/B. Hola*, in: D. L. Rothe/J. D. Meernik/T. Ingadóttir, *The Realities of International Criminal Justice*, 2013, էջ 10, M. C. Bassiouni (note 1), էջ 239:

<sup>455</sup> Տե՛ս *S. Weill/K. T. Seelinger/K. B. Carlson*, *The president on trial: Prosecuting Hissène Habré*. Oxford, United Kingdom, New York, NY, 2020, էջ 69-77:

տեղի են ունեցել մինչև Հռոմի ստատուտի վավերացումը, չեն կարող հայտնվել ՄՔԴ իրավասության ներքո, եթե անդամ պետությունը առանձին չի ճանաչել ՄՔԴ-ի իրավասությունը՝ ըստ Հռոմի ստատուտի 12-րդ հոդվածի 3-րդ մասի<sup>456</sup>:

## 26.2 *Գործարկման մեխանիզմ*

ՄՔԴ իրավասությունը մի հարց է, իրավասության կիրառությունը՝ մեկ այլ: Նույնիսկ եթե Միջազգային քրեական դատարանն ունի իրավասություն, դա բավարար չէ, որ քրեական գործը ՄՔԴ վարույթ ընդունվի: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ են գործարկման կամ իրավասության ակտիվացման համապատասխան մեխանիզմներ (հայտնի որպես trigger mechanism): Հռոմի ստատուտով նախատեսված գործարկման մեխանիզմները երեքն են՝

1. ՄՔԴ իրավասությունը կարող է գործարկվել, երբ անդամ պետությունը քրեական գործը քննելու ակնկալիքով դիմում է ՄՔԴ (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (ա) կետ): Անդամ պետությունը ներկայացնում է գրավոր դիմում՝ հայցելով ՄՔԴ-ի դատախազին ուսումնասիրել և քննել հստակ տարածքային և ժամանակային սահմաններում կատարված հանցագործությունները<sup>457</sup>: Այս պարագայում հնարավոր է ելնել այն բանից, որ պետությունը, դիմում ներկայացնելով, հրաժարվում է փոխլրացման պահանջներից, ուստի այլևս անհրաժեշտություն չկա այդ պահանջները ստուգելու<sup>458</sup>:
2. Հաշվի առնելով, որ միջազգային ժամանակավոր տրիբունալները ստեղծվել են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի համաձայնությամբ, Հռոմի ստատուտի բանակցությունների ընթացքում կողմերը հասան համաձայնության՝ ՄԱԿ-ի անվտան-

---

<sup>456</sup> Տե՛ս M. Klamberg (note 410), էջ 169:

<sup>457</sup> Տե՛ս Դատախազի գրասենյակի կանոնակարգի 25-րդ կանոնի 1-ին մասի (բ) կետը, *O. Ba, States of Justice: The Politics of the International Criminal Court*, 2020, էջ 37-38, cry R. Cryer et al. (note 208), էջ 151:

<sup>458</sup> Տե՛ս K. Ambos (note 127), էջ 334:

գության խորհրդին օժտելու ՄՔԴ իրավասությունը գործարկելու հնարավորությամբ (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (բ) կետ)<sup>459</sup>: Այս պարագայում ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը կարող է նաև ՄՔԴ իրավասությունը գործարկել ոչ անդամ պետության տարածքում կատարված հանցագործությունների նկատմամբ: Հատկանշական է, որ Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամները չեն անդամակցում Հռոմի ստատուտին, սակայն մշտական անդամների բացարձակ համաձայնության դեպքում օժտված են ՄՔԴ իրավասությունը գործարկելու իրավունքով ոչ անդամ պետության տարածքում կատարված հանցագործությունների նկատմամբ,<sup>460</sup> ինչպես արվեց Լիբիայի<sup>461</sup> և Սուդանի<sup>462</sup> դեպքերում<sup>463</sup>:

3. ՄՔԴ իրավասությունը կարող է գործարկվել նաև այն դեպքում, երբ ՄՔԴ գլխավոր դատախազը անձնական նախաձեռնությամբ է սկսում գործի քննությունը (Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի (գ) կետ)՝ հիմք ընդունելով տուժող կողմի հայտարարությունները<sup>464</sup>, հասարակական կազմակերպությունների զեկույցները, ինչպես նաև անձնական հետազոտությունները: Թեև գլխավոր դատախազը կարող է գործը սկսել սեփական նախաձեռնությամբ, այնուամենայնիվ անհրաժեշտ է ստանալ

---

<sup>459</sup> Տե՛ս *A. S. Galand*, UN Security Council referrals to the International Criminal Court: Legal nature, effects and limits. Leiden, Boston, 2019, էջ 20-25:

<sup>460</sup> Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրության 27-րդ հոդվածի 3-րդ մաս:

<sup>461</sup> Տե՛ս UN Security Council Resolution 1970, 26 February 2011:

<sup>462</sup> Տե՛ս UN Security Council Resolution 1593, 31 March 2005:

<sup>463</sup> Մանրամասն տե՛ս *E. de Wet*, Referrals to the International Criminal Court Under Chapter VII of the United Nations Charter and the Immunity of Foreign State Officials, *AJIL Unbound* 112 (2018), էջ 35:

<sup>464</sup> Տե՛ս *G. Petrossian*, in: M. Abraham/C. Bublitz/J. Geneuss/P. Krell, *Verletzte im Strafrecht*, 2020, էջ 129:



դատարանի համաձայնությունը՝ ըստ Հռոմի ստատուտի 15-րդ հոդվածի 3-րդ մասի<sup>465</sup>:


### 26.3 Փոխլրացման պայմաններ

Երբ Հռոմի ստատուտի 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածների պայմանները բավարարված են, ՄՔԴ-ն սկսում է ուսումնասիրել ստեղծված իրավիճակը (situation): Քանի որ Միջազգային քրեական դատարանի ուսումնասիրության ծիրում կարող են հայտնվել ոչ թե պետությունները, այլ պետության տարածքում կատարված հանցագործությունները, ՄՔԴ-ն օգտագործում է «իրավիճակ» եզրույթը՝ մատնանշելու կոնկրետ պետության սահմաններում կատարված հանցագործությունների ուսումնասիրությունը, օրինակ՝ «իրավիճակը Լիբիայում», «իրավիճակը Քենիայում» և այլն<sup>466</sup>: Ըստ այդմ, եթե հստակեցվում են կատարված միջազգային հանցագործությունների տարածքային և ժամանակային սահմանները, ապա գործ ունենք իրավիճակի հետ: Եթե նշյալ իրավիճակի շրջանակներում առաջադրվում է հստակ կասկածյալ, հետագայում՝ մեղադրյալ, ապա խոսքը արդեն «գործի» (case) մասին է, օրինակ՝ «Situation in the Republic of Uganda» և «Case of Dominic Ongwen»:

---

<sup>465</sup> Տե՛ս *H. Olásolo*, The triggering procedure of the International Criminal Court. Leiden, 2005, էջ 55-56, ICC, *Situation in the Republic of Kenya*, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorization of an Investigation into the Situation in the Republic of Kenya, 31 March 2010:

<sup>466</sup> Տե՛ս *R. Rastan*, in: C. Stahn/M. M. El Zeidy, The International Criminal Court and Complementarity, 2011, էջ 422-230:



Իրավիճակում կասկածյալի առաջ գալը պահանջում է պարզել, թե որքանով է այդ գործը համապատասխանում փոխլրացման պայմաններին, և արդյոք գործը ընդդատյա է ՄՔԴ-ին, թե ոչ<sup>467</sup>: Հաշվի առնելով, որ ՄՔԴ-ն չի փոխարինում ազգային դատական համակարգին, այլ միայն լրացնում է և ոգեշնչում անդամ պետություններին՝ Հռոմի ստատուտի տառին և ոգուն համապատասխան ինքնուրույն քննելու սեփական սահմաններում կատարված միջազգային հանցագործությունները, իրավիճակում առաջ եկած գործը, ըստ Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի, կարող է ընդդատյա լինել ՄՔԴ-ին, եթե պետությունը չի ցանկանում կամ ի վիճակի չէ գործը քննելու (Հռոմի ստատուտի 17-րդ հոդված), եթե նույն մեղադրանքով կասկածյալը չի դատապարտվել կամ եթե ապահովված չէ գործի բավականաչափ լրջությունը:

---

<sup>467</sup> See ICC, *Situation in the Republic of Kenya*, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorization of an Investigation into the Situation in the Republic of Kenya, 31 March 2010, paras. 47-48, *H. Olásolo*, *Essays on international criminal justice*. Oxford, Portland, Or, 2012, էջ 45:

### 26.3.1 Պետության դերակատարությունը

ՄՔԴ ներգրավվածությունը իրավիճակի և մասնավորապես գործի շրջանակներում կարող է առաջանալ բացառապես այն պայմաններում, երբ պետությունը ակնհայտորեն ցանկություն չունի կամ ի վիճակի չէ ինքնուրույն ուսումնասիրելու և քննելու այն միջազգային հանցագործությունը, որը տեղի է ունեցել իր տարածքում (Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետ), ինչպես նաև այն պարագայում, երբ պետությունը կայացրել է չհետապնդելու որոշում՝ ելնելով նրանից, որ չի ցանկանում կամ ի վիճակի չէ այն քննելու (Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետ)<sup>468</sup>: Կարևոր է տարբերակել պետության կատարյալ և ակնհայտ անգործությունը պետության ցանկությունից և ի վիճակի լինելուց: Պետության ակնհայտ անգործությունը հանգեցնում է նրան, որ գործն ի սկզբանե ընդդատյա է դատարանին: Փաստ է, որ եթե անդամ պետությունը ոչ մի գործողություն չի ձեռնարկում գործը ուսումնասիրելու և քննելու ուղղությամբ, ապա Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա կետը *per se* բավարարված է<sup>469</sup>: Այլ իրավիճակ է ստեղծվում այն դեպքում, երբ պետությունը ցույց է տալիս, թե իբր ուսումնասիրում և քննում է գործը: Այսպիսով, պետության ցանկությունը կամ ի վիճակի լինելը առաջ է գալիս միայն այն դեպքում, երբ գործը արդեն ազգային համակարգում հարուցվել է<sup>470</sup>: Այստեղ

---

<sup>468</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Appeals Chamber, Judgment on the Appeal of Mr. Germain Katanga against the Oral Decision of Trial Chamber II of 12 June 2009 on the Admissibility of the Case, 25 September 2009, paras. 2, 85:

<sup>469</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Pre-Trial Chamber, Decision on Application for Warrants of Arrest, Article 58, 10 February 2006, para. 29, ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Appeals Chamber, Judgment on the Appeal of Mr. Germain Katanga against the Oral Decision of Trial Chamber II of 12 June 2009 on the Admissibility of the Case, 25 September 2009, para. 78:

<sup>470</sup> Տե՛ս *M. Abdou*, in: M. Klamberg, Commentary on the Law of the International Criminal Court, 2017, էջ 206-207, *W. Schabas/M. M. El Zeidy*, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, էջ 798-799:

կարևոր է նաև այն, որ գործը, որ ենթադրաբար քննվում է ազգային համակարգում, իր բովանդակությամբ չի տարբերվի այն գործից, որով հետաքրքրված է ՄՔԴ-ն: Այսինքն, եթե մեղադրանքը վերաբերում է կոռուպցիային, և գործը քննվում է ազգային համակարգում կոռուպցիայի շրջանակներում, ապա այստեղ ևս Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի պահանջը բավարարված չէ այնքանով, որ կոռուպցիան չի դիտվում ՄՔԴ-ի կողմից քննության օբյեկտ: Այսպես, թեև 2019 թ. ապրիլին ձերբակալված Մուդանի նախագահ Ալ Բաշիրը ՄՔԴ-ում մեղադրվում է ցեղասպանության համար, սակայն Մուդանի նոր իշխանությունները նրան մեղադրանք առաջադրեցին և դատապարտեցին կոռուպցիայի համար, հետևաբար, թեև վերջինս դատապարտվել է ազգային ատյանի կողմից, սակայն ոչ այն մեղադրանքով, որն առաջադրվել է նրան ՄՔԴ դատախազի կողմից<sup>471</sup>: Այսպիսով, որպեսզի գործը մնա ազգային դատական համակարգում, այն պետք է լինի «նույն գործը»<sup>472</sup>: Այլ հարց է, երբ գործի քննությունը սկսվել է, սակայն պետությունը չի ձգտում այն հանգուցալուծման հասցնելու կա՛մ ցանկության բացակայության, կա՛մ ի վիճակի լինելու պատճառով: Այստեղ առաջ է գալիս պետության կողմից ձեռնարկված բոլոր միջոցների լրջությունը ստուգելու անհրաժեշտություն, որոնք ուղղված են գործի հետաքննությանը և դատական քննությանը: Ապացուցողական պարտականությունը այստեղ, այնուամենայնիվ, ընկած է պաշտպանվող կողմի վրա, որը պետք է ներկայացնի այն բոլոր հանգամանքները, որոնք ուղղված են

---

<sup>471</sup> St´u Aljazeera, Sudan’s Omar al-Bashir sentenced to two years for corruption, 14 December 2019, <https://www.aljazeera.com/news/2019/12/sudan-omar-al-bashir-court-corruption-trial-verdict-191214080827973.html>, դիտված 2020թ. մայիս 25:

<sup>472</sup> St´u Same case, ICC, *Prosecutor v. Gaddafi, Al-Senussi*, Appeals Chamber, Judgment on the appeal of Mr Abdullah Al-Senussi against the decision of Pre-Trial Chamber I of 11 October 2013 entitled “Decision on the admissibility of the case against Abdullah Al-Senussi”, 24 July 2014, para. 101, *J. Dorsey/F. van Oijen*, in: T. D. Gill/R. Geiß/H. Krieger/T. McCormack/C. Paulussen/J. Dorsey, *Yearbook of International Humanitarian Law* Volume 17, 2014, 2016, էջ 254:

եղել գործի հանգուցալուծմանը<sup>473</sup>։ Դրանք կարող են ներառել տու-  
ժողների վկայությունները, ձեռնարկված հետաքննչական գործո-  
ղությունները, գործը նախաքննական վարույթ ընդունելը, փաս-  
տարկները, թե ինչու են գործողությունները ձգձգվում և այլն։

Ըստ Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախատես-  
ված են այն հանգամանքները, որոնց պարագայում ՄՔԴ-ն կարող է  
դիտարկել պետության՝ գործը քննելու ակնհայտ չկամությունը.

- երբ դատական գործընթացը տեղի է ունեցել կասկածյալին  
ՄՔԴ մեղադրանքից պաշտպանելու նպատակով (Հռոմի  
ստատուտի 17-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետ),
- երբ չարդարացված դատական ձգձգումներ են տեղի ունե-  
նում, որոնք այլ հանգամանքներում չէին կարող առաջանալ  
(Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 2-րդ մասի (բ) կետ),
- երբ դատավարությունը անկախ կամ անաչառ չի ընթացել  
(Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) կետ)։

Ըստ Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ներկայաց-  
ված են այն պայմանները, որոնց պարագայում հնարավոր է դիտար-  
կել պետության՝ գործը քննելու անկարողությունը<sup>474</sup>։ Մասնավորա-  
պես, պետության անկարողությունը հաստատելու նպատակով  
ՄՔԴ-ն պետք է համոզվի, որ ազգային դատական համակարգը ամ-  
բողջական կամ էական կողապսի է ենթարկված, հետևաբար հնարա-  
վոր չէ իրականացնել քրեադատավարական գործողություններ<sup>475</sup>։

---

<sup>473</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Ruto, Kosgey Sang*, Pre-Trial Chamber, Decision on the Application by the Government of Kenya Challenging the Admissibility of the Case Pursuant to Article 19(2)(b) of the Statute, Pre-Trial Chamber II, 30 May 2011, paras. 60, 69:

<sup>474</sup> Հռոմի ստատուտի 19-րդ հոդվածի 2-րդ մասի բ կետի և 4-րդ մասի ընդհատությունը կամ դատարանի իրավասությունը կարող է քննվել նաև պետության հայցի հիման վրա, տե՛ս, օրինակ, ICC, *Prosecutor v. Ruto, Sang, Kosgey*, Decision on the Application by the Government of Kenya Challenging the Admissibility of the Case Pursuant to Article 19(2)(b) of the Statute, 30 May 2011:

<sup>475</sup> Տե՛ս, օրինակ, failed state Սոմալիի օրինակը։

Ամփոփելով վերոհիշյալը՝ հարկավոր է նշել, որ պետության ցանկությունը և անկարողությունը ստուգելու նպատակով անհրաժեշտ է ազգային համակարգի կողմից ձեռնարկված գործողությունները բաժանել երեք փուլի.

- 1-ին փուլ – մինչև քրեատավարական գործողություններ իրականացնելը,
- 2-րդ փուլ – քրեադատավարական գործողությունների ժամանակահատվածում,
- 3-րդ փուլ – քրեական դատավարության արդյունքում չհետապնդելու որոշումը:

### 26.3.2 *Ne bis in idem*

Ինչպես արդեն նշվեց վերևում, կրկնակի դատվածության բացառումը միջազգային քրեական իրավունքի կարևորագույն այն սկզբունքներից է, որը միտված է պաշտպանելու նույն արարքի համար հետապնդումից: Սակայն այստեղ կարող են որակման խնդիրներ առաջանալ՝ արդյոք հետապնդումը վերաբերում է նույն արարքին կամ նույն անձին, թե ոչ: Գործը չի կարող լինել Միջազգային քրեական դատարանին ընդդատյա, եթե կասկածյալը ազգային դատական համակարգում նույն արարքի համար արդեն քրեորեն հետապնդվում է<sup>476</sup>: Ավելին, եթե անձը արդեն դատապարտվել է նույն արարքի համար, որը մեղսագրվում է ՄՔԴ դատախազի կողմից, ապա այս գործը այլևս չի կարող ընդդատյա լինել ՄՔԴ-ում: ՄՔԴ-ն իր դատական պրակտիկայով մասնավորապես ձևակերպել է այն պահանջը, որ հետապնդումը հնարավոր է միայն նույն արարքի դեպ-

---

<sup>476</sup> Հմմտ. ICC, *Prosecutor v. Muthuara, Kenyatta, Hussein Ali*, Decision on the Application by the Government of Kenya challenging the admissibility of the case pursuant to Article 19(2)(b) of the Statute, 30 May 2011, para. 50:

քում, նոր մոտեցմամբ այն պետք է վերաբերի էապես նույն արար-  
քին<sup>477</sup>:

### 26.3.3 Գործի լրջությունը

Գործի բավականաչափ ծանրությունը ընդդատության հաս-  
տատման կարևորագույն օղակներից է, սակայն Հռոմի ստատուտով  
հստակեցված չէ. այն թողնվել է դատարանի ինքնուրույն որոշմանը,  
թե ինչպես պետք է գնահատել այս եզրույթը: Միևնույն ժամանակ  
հարկավոր է նշել, որ բավականաչափ լրջությունը անհրաժեշտ է  
ինչպես իրավիճակի, այնպես էլ գործի ընդդատությունը որոշելու  
համար<sup>478</sup>: Ակնհայտ է, որ ՄՔԴ-ն չի կարող զբաղվել բոլոր քրեական  
գործերով, այդ իսկ պատճառով գործի բավականաչափ լրջությունն  
անհրաժեշտ է՝ տարբերակելու համար այն քրեական գործերը,  
որոնք առավել մեծ նշանակություն ունեն: Այսպիսով, ի սկզբանե  
դատարանը եզրահանգեց, որ միայն ղեկավար դեր ունեցող անձինք  
կարող են ներգրավվել որպես կասկածյալ, սակայն հետագայում այս  
մոտեցումը բեկանվեց<sup>479</sup>: Իր առաջին գործով ՄՔԴ-ն սահմանեց, որ  
բավականաչափ լրջությունը գնահատելու համար հարկավոր է դի-  
տարկել՝

1. արդյո՞ք գործի հիմքում հետապնդվող արարքը մասշտաբա-  
յին և պարբերական բնույթ է ունեցել: Սա նշանակում է, որ  
այդ գործողությունը մեկուսացված արարք չէ, այլ փոխկա-  
պակցված է ուրիշ արարքների հետ,

---

<sup>477</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Muthuara, Kenyatta, Hussein Ali*, Decision on the Application by the Government of Kenya challenging the admissibility of the case pursuant to Article 19(2)(b) of the Statute, 30 May 2011, para. 38:

<sup>478</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Pre-Trial Chamber, Decision concerning Pre-Trial Chamber I's decision of February 2006 and the incorporation of the documents into record of the case against Lubanga, 24 February 2006, Annex I, para. 46:

<sup>479</sup> Տե՛ս W. Schabas and M. M. El Zeidy (note 470), էջ 812:

2. արարքը միջազգային հանրությունում հասարակական ա-  
հազանգ է առաջացրել<sup>480</sup>:

Հետագայում վերաքննիչ դատարանը առանց որևէ այլընտրանք ներկայացնելու մերժեց այս մտտեցումը<sup>481</sup>: Ավելի ուշ Քենիայի իրա-  
վիճակում դատարանը օգտագործեց դատախազի քանակական և ո-  
րակական մտտեցումը<sup>482</sup> լրջության աստիճանը գնահատելու հար-  
ցում, մասնավորապես այն հստակեցրեց, որ հարկավոր է գնահա-  
տել՝

1. ենթադրյալ հանցագործությունների մասշտաբները (ներառ-  
յալ աշխարհագրական և ժամանակային ինտենսիվություն-  
ներ),
2. ենթադրյալ հանցավոր արարքի բնույթը,
3. ենթադրյալ հանցավոր արարքի համար գործադրված մի-  
ջոցները,
4. զոհերի և նրանց հարազատների վրա ենթադրյալ հանցավոր  
արարքի ազդեցությունը<sup>483</sup>:

---

<sup>480</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Pre-Trial Chamber, Decision concerning Pre-Trial Chamber I's decision of February 2006 and the incorporation of the documents into record of the case against Lubanga, 24 February 2006, Annex I, para. 46, *M. Bergsmo*, Thematic prosecution of international sex crimes. Beijing, 2018, էջ 352:

<sup>481</sup> Տե՛ս ICC, *Situation in the Democratic Republic of the Congo*, Appeals Chamber, Judgment on the Prosecutor's appeal against the decision of Pre-Trial Chamber I entitled 'Decision on the Prosecutor's Application for Warrants of Arrest, Article 58', Appeals Chamber, 13 July 2006, paras 68-82, *W. Schabas*, An introduction to the International Criminal Court. Cambridge, United Kingdom, New York, NY, 2020, էջ 197:

<sup>482</sup> Տե՛ս ICC, Policy paper on case selection and prioritization, 2016, էջ 13:

<sup>483</sup> Տե՛ս ICC, *Situation in the Republic of Kenya*, Pre-Trial Chamber Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorization of an Investigation into the Situation in the Republic of Kenya, 31 March 2010, para. 62, ICC, *Situation in Co'te D'Ivoire*, Pre-Trial Chamber, Corrigendum to 'Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the Republic of Co'te d'Ivoire', 15 November 2011, para. 204:



Այնուամենայնիվ, ՄՔԴ դատախազությունը կարող է այլ դեպքերում ավելի նեղ գնահատել լրջության բավականաչափությունը՝ հիմնվելով՝

- մասշտաբի առումով ուղղակի և անուղղակի տուժողների առկայության վրա, հանցագործությունների հետևանքով պատճառված վնասի չափի, մասնավորապես տուժածներին և նրանց ընտանիքներին հասցված մարմնական կամ հոգեբանական վնասի առկայության վրա,
- հանցագործության բնույթի առումով զգայուն պաշտպանվող արարքների առկայության վրա, ինչպիսիք են սեռական բնույթի հանցագործությունները կամ երեխաների նկատմամբ հանցագործությունները և այլն,
- գործադրված միջոցների առումով ծրագրի առկայության, պաշտոնական դիրքի չարաշահման կամ առանձնակի դատանության վրա և այլն,
- ազդեցության առումով տուժողներին հասցրած սոցիալական, հոգեբանական, տնտեսական վնասի վրա և այլն<sup>484</sup>:

Այս մեթոդաբանության վրա էլ հիմնվեց դատախազությունը Կոմորոսի իրավիճակում՝ հաշվի առնելով, որ Իսրայելի պաշտպանության բանակի գործողությունների արդյունքում տուժածների թիվը չի բավարարում այն ծանրությունը, որն անհրաժեշտ է գործը ՄՔԴ-ի կողմից քննելու համար, մինևույն ժամանակ դատախազը նշեց, որ նավերի վրա իրականացված գործողությունը չունի այն բնույթը, որն անհրաժեշտ է ՄՔԴ-ում դիտարկելու համար<sup>485</sup>:

---

<sup>484</sup> St' u ICC, Policy paper on case selection and prioritization, 2016, էջ 14:

<sup>485</sup> St' u ICC, *Situation on Registered Vessels of Comoros, Greece and Cambodia*. Article 53(1) Report, 6 November 2014, para. 138, ICC, *Situation on Registered Vessels of Comoros, Greece and Cambodia*. Pte-Trial Chamber, Decision on the request of the Union of the Comoros to review the Prosecutor's decision not to initiate an investigation ICC, 16 July 2015, paras. 16-32, ICC, *Situation on Registered Vessels of Comoros, Greece and Cambodia*, Judgment on the appeal of

## 27. Միջազգային քրեական վարույթ

Միջազգային քրեական գործերը հեշտությամբ չեն հայտնվում Միջազգային քրեական դատարանի քննության ներքո: Նախքան քրեական գործը Միջազգային քրեական դատարանում ըստ էության քննվելը ՄՔԴ դատախազությունը ձեռնարկում է բազում գործողություններ, որոնց դրական հանգուցալուծման պարագայում միայն դատախազին հնարավորություն է ընձեռվում մեղադրանք ներկայացնելու ՄՔԴ: Ընդհանուր առմամբ հնարավոր է դիտարկել դատավարական հինգ փուլ՝ 1. նախնական ուսումնասիրությունների (preliminary examination) և հետաքննության (investigation)<sup>486</sup>, 2. նախաքննության (pre-trial stage), 3. դատավարության (trial stage), 4. վերաքննիչ (appeal stage) և 5. փոխհատուցման (reparation stage): Մեկ փուլից մյուսին անցնելու նպատակով անձի կարգավիճակի փոփոխության համար պետք է բավարարվեն հետևյալ պահանջները.

- Հռոմի ստատուտի 58-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան մեղադրանք առաջադրելու համար անհրաժեշտ է *ողջամիտ* հիմք,
- Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 7-րդ մասով առաջադրված մեղադրանքը հաստատելու համար անհրաժեշտ է *էական* հիմք,

---

the Prosecutor against Pre-Trial Chamber I's 'Decision on the "Application for Judicial Review by the Government of the Union of the Comoros", 2 September 2019, paras. 93-95:

<sup>486</sup> Դժվար է դիտարկել հետաքննության փուլը որպես դատավարական փուլ, քանի որ այն տեղի է ունենում դատավարական գործընթացներից դուրս, և միայն հետաքննության արդյունքներն են դառնում դատավարական գործընթացների օբյեկտ, տե՛ս մասնավորապես ICC, *Situation in the DRC*, Appeals Chamber, Judgment on victims' participation in the Investigation Stage of the Proceedings in the Appeal of the OPCD and the Prosecutor against the Decision of Pre-Trial Chamber I of 24 December 2007, 19 December 2008, para. 45, C. Safferling and G. Petrossian (note 140), էջ 172, *L. Moffett*, Justice for Victims before the International Criminal Court. Hoboken, 2014, էջ 117:

- Հռոմի ստատուտի 66-րդ հոդվածի 3-րդ մասով դատապարտումը հնարավոր է միայն *ողջամիտ կասկածից վեր* սկզբունքի դեպքում:

Կարևոր է առանձնացնել այն հանգամանքը, որ Հռոմի ստատուտով տեղ գտած դատավարական նորմերը անգլոամերիկյան (մրցակցային)<sup>487</sup> և մայրցամաքային (ինկվիզիցիոն) իրավահամակարգերի համակցություն են, որը ներառում է երկու իրավահամակարգերից իրավական սովորույթներ: Այս ամենի հիմքում սակայն գտնվում է անգլոամերիկյան դատավարական համակարգը: Ի տարբերություն մրցակցային դատավարության՝ մայրցամաքային ինկվիզիցիոն դատավարության մեջ դատարանը հանդես է գալիս ակտիվ դատավարական նախաձեռնությամբ<sup>488</sup>:

### *27.1 Նախնական ուսումնասիրություններ և հետաքննություն*

Դատախազությունը բարդությունների է առնչվում ոչ միայն ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարելիս, այլև այն պահից, երբ սկսում է իրականացնել իր պարտականությունները: Հռոմի ստատուտը տարանջատում է հետաքննության երկու փուլ. առաջինը վերաբերում է դատախազի կողմից նախնական ուսումնա-

---

<sup>487</sup> Դատարանի պասիվ դերակատարության պայմաններում կողմերն են ձեռնամուխ լինում ապացույցների և վկաների ներգրավմանը, մինչդեռ ինկվիզիցիոն դատավարական համակարգում հակառակ պատկերն է. դատարանն է ներկայացնում դատավարական կանոնները և նախաձեռնում դատավարական գործողությունները:

<sup>488</sup> Կարևոր է նաև տարանջատել դատավարական նպատակը մրցակցային և ինկվիզիցիոն դատավարական համակարգերում: Մրցակցային դատավարության ժամանակ գլխավոր նպատակը դատավարական ճշմարտությունը բացահայտելն է, մինչդեռ ինկվիզիցիոն դատավարության ընթացքում նպատակը ի սկզբանե նյութական ճշմարտությունը բայցահայտելն է, մանրամասն տե՛ս R. Cryer et al. (note 208), էջ 406, *M. Wasek-Wiaderek*, The principle of "equality of arms" in criminal procedure under article 6 of the European Convention on Human Rights and its functions in criminal justice of selected European countries. Leuven, 2000, էջ 43:

սիրություններին (preliminary examination), այնուհետև իր որոշման հիման վրա, կամ դատարանի թույլտվությամբ այն կարող է սկսել հիմնական հետաքննությունը (investigation): Նախնական ուսումնասիրությունը վերաբերում է այն բոլոր նյութերին, վկայություններին, ծանոթություններին, տուժողների դիմումներին, որոնք կարող են հիմք ստեղծել հիմնական հետաքննությունը սկսելու համար:

Մինչ հիմնական հետաքննության անցնելը անհրաժեշտ է հաշվի առնել, թե ով է գործարկել դատախազության պարտականությունների իրականացումը (trigger mechanism): Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի ա և բ կետերով, մասնավորապես, եթե պետությունը կամ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն են դիմում ներկայացրել քննելու իրավիճակը, ապա դատախազի գործունեությունը համեմատաբար ավելի հեշտացված է (Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մաս)<sup>489</sup>, քան այն դեպքում, երբ դատախազն ինքն է նախաձեռնում իրավիճակի քննությունը: Վերջին դեպքում դատախազը պարտավոր է հետաքննությունը սկսելու համար (Հռոմի ստատուտի 15-րդ հոդվածի 3-րդ մաս) հայցել Միջազգային քրեական դատարանի թույլտվությունը:

Մեփական նախաձեռնության դեպքում դատախազը պարտավոր է դատարանին ներկայացնել այն բոլոր հիմքերը, որոնք նախատեսված են Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մասով, և որոնց հիման վրա հնարավոր է սկսել հետաքննությունը: Այդ հիմքերն են՝ բոլոր տվյալները, տուժողների վկայությունները, հասարակական կազմակերպությունների զեկույցները<sup>490</sup>, որոնք վկայում են դատարանի իրավասության տակ գտնվող հանցագործությունների մասին (Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետ)<sup>491</sup>: Հաջորդիվ

---

<sup>489</sup> Այս պարագայում դատախազը հետաքննությունը սկսելու վերաբերյալ որոշում է կայացնում:

<sup>490</sup> Տե՛ս *C. Safferling*, *International criminal procedure*. Oxford, 2012, էջ 235-239:

<sup>491</sup> Եթե դատախազը կայացնում է բացասական որոշում, ապա պարտավորված է Հռոմի ստատուտի 15-րդ հոդվածի 6-րդ մասով տեղեկացնել բոլոր նրանց, ովքեր ենթադրյալ հանցագործություններին տուժող են եղել և դիմել

դատախազի պարտականությունն է ստուգել Հռոմի ստատուտի 17-րդ հոդվածով հնարավոր քրեական գործի ընդդատությունը (Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետ), ինչպես նաև հաշվի առնել հանցագործության լրջությունը, տուժողների շահերը և այն, որ հետաքննությունը չի հակասելու արդարադատության շահերին (*interests of justice*) (Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետ): «Արդարատության շահեր» եզրույթը մեկնաբանման լայն հնարավորություն է տալիս: Այնուամենայնիվ, պետք է առանձնացնել, որ արդարադատության շահերը կարող են հաշվի առնվել միայն այն դեպքում, երբ իրավասության և ընդդատության պայմանները բավարարված են, որից հետո միայն, հիմնվելով արդարադատության շահերի վրա, հնարավոր է կայացնել բացասական եզրակացություն՝ հետաքննությունը սկսելու համար<sup>492</sup>: Դրա տակ հասկացվում են այն բոլոր ազգային նախադրյալները, որոնք ուղղված են հանցագործությունների քննության կամ իրավիճակի հանգուցալուծմանը, մասնավորապես՝ անցումային արդարատության մեխանիզմների ներդրումը, համաներումը կամ կողմերի միջև քաղաքական համաձայնության առկայությունը, որոնց պարագայում ՄՔԴ ներգրավումը կարող է դիտվել անարդյունավետ<sup>493</sup>: Եթե Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարված են դատարանի առջև, դա-

---

են դատախազին, վերջիններս էլ իրավունք ունեն պահանջելու, բայց ոչ բողոքարկելու վերադիտարկել դատախազի որոշումը Հռոմի ստատուտի 53-րդ հոդվածի 2-րդ մասով:

<sup>492</sup> Տե՛ս ICC, OTP Policy Paper on Preliminary Examination, 2007, ICC, OTP Policy Paper on Preliminary Examination 2013, paras. 67-71:

<sup>493</sup> Տե՛ս u, օրինակ, Աֆղանստանի վերաբերյալ 2019թ. որոշումը, ICC, *Situation in the Islamic Republic of Afghanistan*, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the Islamic Republic of Afghanistan, 12 April 2019, paras. 91-96, ICC, *Situation in the Islamic Republic of Afghanistan*, Decision Pursuant to Article 15 of the Rome Statute on the Authorisation of an Investigation into the Situation in the Islamic Republic of Afghanistan, 5 March 2020, paras. 43-46.

տախազը ստանում է հիմնական հետաքննությունը սկսելու թույլտվություն:

Հետաքննությունը քրեադատավարական, հետախուզական բարդ աշխատանք է, որը հիմնականում բխում է ազգային մարմինների հետ սերտ փոխհամագործակցությունից: Դրա բացակայության դեպքում դժվար է պատկերացնել արդյունավետ հետաքննություն: Այն սկսելուն պես դատախազը Հռոմի ստատուտի 54-րդ և 56-րդ հոդվածներով նախատեսված պայմաններում հետախուզական աշխատանքներից և ապացույցների ուսումնասիրությունից և դրանք գնահատելուց հետո կարող է Հռոմի ստատուտի 58-րդ հոդվածի 1-ին մասով *ողջամիտ* հիմքի<sup>494</sup> դեպքում դիմել կալանավորելու կամ լուծման կանչելու որոշման համար:

ՄՔԴ <sup>495</sup>	Նախնական ուսումնասիրությունների փուլ	Հետաքննության փուլ
Դատախազի անձնական նախաձեռնություն. Հռոմի ստատուտի 15-րդ հոդված	Situation in Colombia Situation in Guinea Situation in Iraq/UK Situation in Nigeria Situation in the Philippines	Situation in Afghanistan Situation in Burundi Situation in Cote D'Ivoire Situation in Georgia Situation in Kenya Situation in Bangladesh/Myanmar

<sup>494</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Al Bashir*, Appeals Chamber, Judgment on the Appeal of the Prosecutor against the Decision on the Prosecution's Application for a Warrant of Arrest against Omas Hassan Ahmad Al Bashir, 3 February 2010, para. 30, տե՛ս նաև ECtHR, *Fox, Campbell and Hartley v. U.K.*, Judgment, 30 August 1990, para. 32.

<sup>495</sup> 2020 թ. հունիսի դրությամբ:

Պետության դիմում. Հռոմի ստատուտի 14-րդ հոդված	Situation in Comoros Situation in Gabon	Situation in Central African Republic I Situation in Central African Republic II Situation in Democratic Republic of Congo Situation in Mali
Իրավասության ճանաչում. Հռոմի ստատուտի 12-րդ հոդվածի 3-րդ մաս	Situation in Palestine Situation in Ukraine	Situation in Cote D'Ivoire
ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի դիմում. Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի գ կետ		Situation in Libya Situation in Sudan

## 27.2 Նախաքննություն

Այն պահից, երբ դատախազի դիմումը բավարարվում է ՄՔԴ-ի կողմից, քրեական գործը մտնում է նախաքննական փուլ, որտեղ անձի ձերբակալումից կամ ինքնական հանձնվելուց հետո դատախազի պարտականությունն է մեղադրանքը հաստատելու համար Հռոմի ստատուտի 61-րդ հոդվածի 7-րդ մասով բերել ապացույցներ առ այն, որ *էական* հիմք (substantial ground) կա կասկածելու, որ կասկածյալը կատարել է մեղսագրվող հանցագործությունը: Անձը այնքան ժամանակ է մնում կասկածյալ, քանի դեռ իրեն մեղսագրվող մեղադրանքը չի հաստատվել դատարանի նախաքննական պալատի կողմից<sup>496</sup>: Միայն այն բանից հետո, երբ հաստատվում է, որ էական հիմք կա կասկածելու, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող հանցագործությունները, նա ձեռք է բերում մեղադրյալի կարգավիճակ:

<sup>496</sup> St' u H. Kuczyńska, The accusation model before the International Criminal Court: Study of convergence of criminal justice systems. Cham, 2015, էջ 149:

Սակայն մինչ մեղադրանքը հաստատվելը Հռոմի ստատուտով ձերբակալվածը, 60-րդ հոդվածին համապատասխան, ներկայանում է դատարան՝ առաջին տեսության, որտեղ Դատարանը վստահեցվում է, որ կասկածյալը տիրապետում է իր իրավունքներին և հասկանում է իրեն մեղսագրվող հանցագործությունների բնույթը, ինչպես նաև տեղեկացվում է, որ կարող է դիմել Հռոմի ստատուտի 60-րդ հոդվածի 1-ին մասով կալանքից միջանկյալ ազատման համար: Նախաքննության ընթացքում դատախազությունը կարող է շարունակել հետաքննությունը և լրացնել կամ հետ վերցնել մեղադրանքը՝ նախաքննության լսումներից 15 օր առաջ տեղեկացնելով կասկածյալին (Հռոմի ստատուտի 61-րդ հոդվածի 4-րդ մաս): Եթե դատախազին հաջողվում է համոզել դատարանին, որ էական հիմք կա կասկածելու, որ մեղսագրվող հանցագործությունները կատարվել են կասկածյալի կողմից, դատարանը հաստատում է մեղադրանքը, որից հետո քրեական գործը տեղափոխվում է դատավարական փուլ:

### *27.3 Դատավարություն*

Այն պահից, երբ նախաքննական պալատը հաստատում է մեղադրանքը, քրեական գործը, Հռոմի ստատուտի 61-րդ հոդվածի 11-րդ մասին համապատասխան, մտնում է դատավարության փուլ: Սակայն մինչ բուն դատավարությանն անցնելը մեղադրանքը հաստատելով սկսվում են դատավարության նախապատրաստման աշխատանքները (trial preparation): Սա նպատակ է հետապնդում համակարգելու դատավարական գործողությունները, որպեսզի դրանք անցնեն առանց ձգձգումների և առանց մեղադրյալի իրավունքների ոտնահարման (տե՛ս Հռոմի ստատուտի 64-րդ հոդվածի 2-րդ մաս, Ընթացակարգի և ապացույցների կանոնների կանոն 132 բիս): Մտնելով դատավարության փուլ՝ դատախազությունը սահմանափակված է այն որոշմամբ, որն ընդունել է նախաքննական պալատը մեղադրանքի վերաբերյալ:



ՄՔԴ դատավարությունը ինքնին մրցակցային է. այստեղ կողմի ցանկացած գործողություն հանգեցնում է մյուս կողմի պատասխանին, որից հետո միայն դատարանը կայացնում է ընդունելու կամ մերժելու որոշում<sup>497</sup>: Ի տարբերություն մայրցամաքային իրավական համակարգի, որտեղ դատավարությունը ներառում է մեղքի և պատժի սահմանումը, անգլոամերիկյան իրավական համակարգը առանձնացնում է մեղքի և պատժի սահմանումները առանձին դատավարական պրոցեսներով: Սա մասնավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ երդվյալ ատենակալների մասնակցությունը դատավարությանը նպատակ է հետապնդում՝ պարզելու՝ մեղադրյալը մեղավոր է, թե ոչ, իսկ պատժի սահմանումը թողնված է արդեն դատարանին: Թեպետ ՄՔԴ-ն չունի երդվյալ ատենակալների ինստիտուտ, բայց այս երկու դատավարական գործընթացներն ընդգրկվել են միջազգային քրեական դատավարությունում:

Մեղադրյալի կողմից մեղքի ընդունումը (*guilty plea*) դատավարության սկզբում կարող է համեմատաբար փոխել և արագացնել դատավարության ողջ ընթացքը<sup>498</sup>: Միջազգային քրեական դատավարությունը բաղկացած է երեք հիմնական մասից՝

- բացման խոսք,
- ապացույցների ներկայացում<sup>499</sup>,
- փակման խոսք:

---

<sup>497</sup> Տե՛ս C. Safferling (note 490), էջ 427:

<sup>498</sup> Տե՛ս C. Stahn (note 17), էջ 393, ICC, *Prosecutor v. Al Mahdi*, Judgment, 27 September 2016, paras. 27-28:

<sup>499</sup> Ապացույցներ ներկայացնելու ընթացքում մասնավորապես դատախազության կողմից բերված ոչ բավարար ապացույցները կարող են հանգեցնել նրանին, որ պաշտպանության կողմը դիմում ներկայացնի գործը կարճելու նպատակով (*no case to answer*), քանի որ այն ապացուցողական բազան, որ ներկայացվել է դատախազության կողմից, բավարար չէ դատարանի համար մեղադրյալին դատապարտելու, տե՛ս W. Schabas (note 481), էջ 303, *G. Sluiter/H. Friman/S. Vasiliev/S. Zappalà/S. Linton*, *International criminal procedure: Principles and rules*. Oxford, 2013, էջ 450:

Կախված գործի հանգամանքներից՝ բացի դատավարության կողմերից՝ դատախազության, պաշտպանության և դատավարական գործողություններին կարող են մասնակից դառնալ ինչպես տուժող կողմը, այնպես էլ պետությունը և այլ մասնակիցներ (*amicus curiae*):

Դատավարության փակման խոսքին հաջորդում է դատարանի խորհրդակցական սենյակ գնալը, որտեղ արդեն դատարանը, Հռոմի ստատուտի 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, պետք է կայացնի որոշում և ոչ թե վճիռ առ այն, թե դատավարության ընթացքում ներկայացված բոլոր ապացույցների գնահատումը հանգեցնում է մեղադրյալի դատապարտմանը *ողջամիտ կասկածից վեր* (*beyond reasonable doubt*), թե ոչ (Հռոմի ստատուտի 66-րդ հոդվածի 3-րդ մաս): Դատարանը չի կարող, այնուամենայնիվ, դուրս գալ այն փաստական հանգամանքներից, որոնք ներկայացված են եղել նախաքննական պալատի որոշման մեջ: Դատարանը պարտավոր է իր որոշման մեջ անդրադառնալ առանձին մեղադրանքին (*charges*) և բազմակի մեղադրյալների պարագայում՝ առանձին-առանձին յուրաքանչյուրին:

Հռոմի ստատուտի 74-րդ հոդվածին հաջորդում է պատժի սահմանումը (Հռոմի ստատուտի 78-րդ հոդված), որտեղ դատարանը, արդեն հաշվի առնելով հանցագործության ծանրությունը և դատապարտվածի առանձնահատկությունները, սահմանում է պատժի չափը:

#### 27.4 Փոխհատուցում

Անձի դատապարտումով Միջազգային քրեական դատարանի դատավարությունը չի դադարում: Այն շարունակվում է փոխհատուցման տրամաբանության ներքո, որտեղ արդեն գնահատվում է դատապարտյալի կողմից հասցված վնասի չափը (Հռոմի ստատուտի 75-րդ հոդված): Փոխհատուցումը կարող է տեղի ունենալ միայն այն հանցագործությունների առնչությամբ, որոնց համար անձը դատապարտվել է: Այս դատավարության ընթացքում դատախազության դերակատարությունը չնչին է, և հիմնական դատավարական գործողությունները տեղի են ունենում տուժողների և դատապարտ-

յալի միջև<sup>500</sup>: Փաստ է, որ դատապարտյալը ի վիճակի չէ հատուցելու այն վնասը, որը պատճառվել է միջազգային հանցագործությամբ, քանի որ ավերչության մասշտաբները դժվար է նյութականապես հաշվարկել<sup>501</sup>: Վնասի չափը հստակեցնելուն պես դատարանի կողմից սահմանվում է փոխհատուցման գործընթացի ճանապարհային քարտեզը, թե ինչ միջոցներով է փոխհատուցումը արվելու<sup>502</sup>:

Մինչ օրս ՄՔԴ-ն կայացրել է երեք գործերով փոխհատուցման որոշումներ<sup>503</sup>՝ սահմանելով<sup>504</sup>

	Հանցակազմ	Տուժողների թիվը	Վնասը	Փոխհատուցման տեսակը	Պատասխանատվությունը
<b>Լուբանգա</b>	անչափահասների զինվորական հավաքագրումը	425	ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական	կոլեկտիվ փոխհատուցում	3.400.000 USD՝ գրանցված տուժողների համար, 6.600.000 USD՝

<sup>500</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision establishing the principles and procedures to be applied to reparations, 7 August 2012, paras. 187-193:

<sup>501</sup> Մանրամասն տե՛ս C. Safferling and G. Petrossian (note 140), էջ 265-305:

<sup>502</sup> Հմնտ. ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Order instructing the Trust Fund for Victims to supplement the draft implementation plan, 9 February 2016, ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Public redacted document Draft implementation plan relevant to Trial Chamber II's order for reparations of 24 March 2017, 25 July 2017, ICC, *Prosecutor v. Al Mahdi*, Trial Chamber, Public redacted version of «Decision on Trust Fund for Victims' Draft Implementation Plan for Reparations», 12 July 2018:

<sup>503</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga*, Trial Chamber, Order for Reparations pursuant to Article 75 of the Statute, 24 March 2017, ICC, *Prosecutor v. Al Mahdi*, Trial Chamber, Reparation Order, 17 August 2017:

<sup>504</sup> Տե՛ս G. Petrossian/C. Safferling, Wiedergutmachung für Opfer von Makroverbrechen, MenschenRechtsMagazin (2020), էջ 21-27:

					պոտենցիալ տուժողների համար / 8000 USD
<b>Գատանգա</b>	սպանություն՝ որպես մարդկության դեմ հանցագործություն և պատերազմական հանցագործություն, հարձակում խաղաղ բնակչության վրա, սեփականության ոչնչացում	297	ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական	անհատական և կոլեկտիվ փոխհատուցում	1.000.000 USD
<b>Ալ Սահիի</b>	հարձակում պաշտպանվող մշակութային և հոգևոր հուշարձանների վրա	139	հոգեբանական և տնտեսական	կոլեկտիվ փոխհատուցում	2.700.000 EUR

*27.5 Վերաքննություն*

ՄՔԴ Վերաքննիչ պալատը դատարանի վերջին ատյանն է: Վերաքննությունը կարող է դատավարության մաս դառնալ ոչ միայն դատապարտման որոշումից հետո, այլև դատարանի գրեթե ցանկացած որոշման բողոքարկման պարագայում: Հռոմի ստատուտի 81-րդ հոդվածով նախատեսված է դատապարտման կամ ազատ արձակ-

ման բողոքարկման կարգը, մինչդեռ Հռոմի ստատուտի 82-րդ հոդվածը նախատեսում է դատարանի կայացրած որոշումների բողոքարկման կարգը: Վերաքննիչ բողոք կարող են բերել բացառապես դատավարության կողմերը:

Դատապարտման կամ ազատ արձակման որոշման դեմ բողոքարկման պարագայում բողոքարկող կողմը պետք է հաշվի առնի, որ բողոքի հիմքում ընկած է դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա (Հռոմի ստատուտի 81-րդ հոդվածի 1-ին մաս): Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում նոր հանգամանքներ կամ նոր փաստեր չեն ընդունվում:

Հռոմի ստատուտի 82-րդ հոդվածով նախատեսված են դատարանի այն որոշումները, որոնց շրջանակներում կողմերը իրավունք ունեն վերաքննիչ բողոքի: Այնուամենայնիվ, այստեղ գործում են որոշ նրբություններ: Հռոմի ստատուտի 82-րդ հոդվածի 1-ին մասի (ա) (բ) (գ) կետերով կողմերը կարող են չդիմել դատարանին բողոքարկման թույլտվության համար, մասնավորապես, եթե այս որոշումները վերաբերում են իրավասությանը կամ ընդդատությանը, ազատ արձակման վերաբերյալ որոշմանը, Հռոմի ստատուտի 56-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ որոշմանը: Դատարանի որոշումը ստանալուն պես կողմը կարող է վերաքննիչ բողոքը ներկայացնել ՄՔԴ Վերաքննիչ պալատ: Մինչդեռ Հռոմի ստատուտի 82-րդ հոդվածի (դ) կետով կողմերը պարտավոր են ստանալ այն Պալատի բողոքարկման թույլտվությունը, որն ընդունել է բողոքարկվող որոշումը: Որոշումը ենթակա է բողոքարկման, եթե դրա հիմքում ընկած խնդիրը զգալիորեն ազդում է արդար և արագ դատավարության վրա:

## **28. Միջազգային քրեական դատավարության առանձնահատկությունները**

Ինչպես արդեն նշվել էր վերևում, միջազգային քրեական իրավունքը, լինելով երկու բոլորովին տարբեր իրավական համակարգե-

րի համակցություն, ընդհանուր առմամբ ունի ոչ միայն զանազան առանձահատկություններ, այլև դատավարական առանձին գործողություններին առնչվող կանոնների կիրառման և մեկնաբանման պարագայում կարող են առաջանալ բազում դատավարական անհասկացություններ և դժվարություններ: Այստեղ հարկ է ավելացնել, որ ընթացակարգի և ապացույցների մասին (RPE) կանոններից գատ` Հռոմի ստատուտի շրջանակներում քրեական դատավարական օրենք կամ կանոն գոյություն չունի: Տարատեսակ դատավարական ոլորտներ թողնված են դատական հայեցողությանը, որով ավելի է բարդանում դատավարական գործընթացը: Միևնույն ժամանակ պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած դատավոր, ելնելով իր իրավաբանական կրթական բազայից, առաջնորդվում է ազգային օրենքի իրավամտաձողությամբ, որի հետևանքով էլ առաջանում են հակասություններ<sup>505</sup>:

### 28.1 Ապացույց

Հռոմի ստատուտը, ինչպես նաև ընթացակարգի և ապացույցների մասին կանոնները, շատ հպանցիկ են անդրադառնում միջազգային քրեդատավարական ապացույցներին: Որպես այդպիսին` ապացույցները քրեական գործի հիմքն են, որոնց վրա հիմնվում է մեղադրյալին մեղսագրվող ենթադրյալ հանցագործությունը: Ապացույցներ կարող են բերել դատավարության կողմերը և միայն դատարանի թույլտվությամբ` նաև տուժող կողմը<sup>506</sup>: Հռոմի ստատուտի 69-րդ

---

<sup>505</sup> *Sté u ICC, Prosecutor v. Gbagbo and Blé*, Trial Chamber, Opinion of Judge Cuno Tarfusser, 16 July 2019, para. 3: The reasons for this opinion are rooted in the profound differences between my legal background and approach and the ones of my fellow judges, some of which go to the very heart of crucial questions about international criminal justice and its ultimate legitimacy and sustainability. My belief that both accused should be acquitted, based on the assessment of the evidence and of its ‘exceptional weakness’:

<sup>506</sup> Նախաքննության ընթացքում տուժողները չեն կարող ներկայացնել ապացույցներ ի սկզբանե, տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Pre-Trial Chamber, Decision on the Set of Procedural Rights Attached to Procedural Status

հողվածով հնարավոր է ապացույցները դասակարգել երկու տեսակի՝ ցուցմունքներ և այլ իրեղեն ապացույցներ<sup>507</sup>: Մինչ վկայություն տալը վկան պետք է բավարարի Հռոմի ստատուտի 69-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հնթացակարգի և ապացույցների կանոնների 66-րդ կանոնի պահանջները<sup>508</sup>: Ի սկզբանե Հռոմի ստատուտը պահանջում է, որ վկայությունը տրվի անձամբ, սակայն, ելնելով բազում ֆինանսական և կազմակերպչական խնդիրներից՝ վկայությունը նաև իրականացվում է տեսակապի միջոցով՝ ապահովելով անվտանգության բոլոր միջոցները: Իրեղեն ապացույցներ են այն բոլոր փաստաթղթերը կամ նյութական առարկաները, որոնք պարունակում են իրադարձությունների վերաբերյալ փաստական տվյալներ: Դրանք կարող են ներառել գրավոր արձանագրություններ, հայտարարություններ, ձայնագրություններ, զեկույցներ, աշխատություններ, ինչպես նաև նյութական այլ առարկաներ<sup>509</sup>: Միննույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ կողմերը կարող են համաձայնության հասնել տարբեր փաստական հանգամանքների շուրջ՝ համաձայն ընթացակարգի և ապացույցների կանոնների 69-րդ կանոնի: Այս համաձայնությունները կատարվում են մինչև բուն դատավարության փուլը<sup>510</sup>: Հռոմի ստատուտի 69-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ կողմերը պարտավոր չեն կրկին ապացուցել այն փաստերը, որոնք հանրությանը հայտնի են<sup>511</sup>:

---

of Victim at the PTC Stage of the Case, 13 May 2008, paras. 107-114, ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on victims' participation, 18 January 2008, paras. 108-110:

<sup>507</sup> Տե՛ս C. Safferling (note 490), էջ 463:

<sup>508</sup> Սույն կանոնով նախատեսված է նաև բացառություն այն վկաների համար, որոնք իրենց մշակութային կամ լեզվական առումով չեն պատկերացնում երդման կարևորությունը կամ իմաստը, մասնավորապես այն դեպքերում, երբ վկայություն տվողը անչափահաս է:

<sup>509</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Ntaganda*, Trial Chamber, Decision on Prosecution's request for admission of documentary evidence, 28 March 2017:

<sup>510</sup> Տե՛ս u, օրինակ, ICC, *Prosecutor v. Ongwen*, Trial Chamber, Decision on Joint Agreed Facts Submission, 19 July 2016:

<sup>511</sup> ICC, *Prosecutor v. Bemba et al.*, Trial Chamber, Decision on Prosecution Request for Judicial Notice, 9 November 2015.

Դատավարական կարևոր և անհրաժեշտ գործողություն է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության սահմանումը: Սա հիմնարար նշանակություն ունեցող դատավարական գործողություն է, որով հնարավոր է պարզել, թե կարող է արդյոք բերված ապացույցը պիտանի լինել քրեական գործի քննության համար: Հռոմի ստատուտի 64-րդ հոդվածի 9-րդ մասի (ա) կետով սահմանվում է, որ Դատավարության պալատը կարող է որոշել ապացույցների վերաբերելիությունը կամ թույլատրելիությունը: Հռոմի ստատուտի 69-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ վերաբերելիությունը կամ թույլատրելիությունը պարզելու համար դատարանը պարտավոր է հաշվի առնել ապացուցողական արժեքը, ինչպես նաև բացառել մեղադրյալի նկատմամբ ցանկացած կանխակալությունը: Դատարանը իր առաջին գործով սահմանել է, որ նախքան քրեական գործի շրջանակներում ապացույցն ընդունելը դատարանը պետք է ստուգի, թե որքանով է ապացույցը կարևոր և վերաբերելի գործի մեջ առկա հանգամանքներին, այնուհետև պարզի ապացույցի ապացուցողական արժեքը (probative value) և բացառի մեղադրյալի նկատմամբ կանխակալ մտտեցումները<sup>512</sup>: Ապացույցի վերաբերելիությունը պարզելու համար դատարանը առաջնորդվում է նրանով, թե որքանով է ապացույցի հիմքում ընկած հանգամանքը հավանական գործի շրջանակներում<sup>513</sup>: Հաջորդիվ դատարանը պետք է հաշվի առնի ապացույցի արժեքը հուսալիության (խսկության)<sup>514</sup> և նշանակության գնահատման առումով, որոնք էլ հիմնվում են այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են ապացույցի բնույթը, աղբյուրը, ա-

---

<sup>512</sup> Sté u ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on the Admissibility of Four Documents, 13 June 2008, paras. 27-31:

<sup>513</sup> Sté u ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Trial Chamber, Decision on the Prosecutor's Bar Table Motions, 17 December 2010, para 16, *P. Viebig*, *Illicitly Obtained Evidence at the International Criminal Court*, 1st ed. s.l., 2016, էջ 105-106:

<sup>514</sup> Sté u C. Safferling (note 490), էջ 494:



ռանձնահատկությունը, նպատակը<sup>515</sup>: Եթե վերաբերելիության և ապացույցի արժեքի պայմանները բավարարված են, նշանակում է՝ ապացույցը ինքնըստիներքյան կարող է լինել թույլատրելի: Դատարանի հաջորդ գործողությունը կանխակալության բացառումն է, որի պայմաններում այն պետք է ստուգի՝ արդյոք ապացույցը կանխակալ է, և արդյոք մեղադրյալի կամ այլ անձի իրավունքները կարող են խախտվել, եթե ապացույցը ընդգրկվի քրեական գործի շրջանակներում<sup>516</sup>:

Ապացույցների գնահատումը վերաբերելիության և թույլատրելիության շրջանակներում կարող է կատարվել ոչ միայն ապացույց ներկայացնելու պահին, այլև դատավարության ավարտին, երբ դատարանը առկա ապացույցների հիման վրա պետք է որոշի մեղադրյալի մեղքը կամ անմեղությունը (տե՛ս ընթացակարգի և ապացույցների կանոնների 64-րդ կանոնը)<sup>517</sup>:

Հռոմի ստատուտի 69-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ ապացույցները, որոնք ձեռք են բերվել մարդու իրավունքների խախտումներով կամ անօրինական ճանապարհով, նույնպես կարող են համարվել թույլատրելի (*fruits of the poisonous tree*)<sup>518</sup>: Նույն հոդվածով, սակայն, սահմանված է երկու բացառություն, թե որ դեպքում հնարավոր չէ մարդու իրավունքների ոտնահարմամբ կամ այլ անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցները ընդգրկել քրեական գործի մեջ: Ըստ այդմ՝ անօրինական ճանապարհով ձեռք

---

<sup>515</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Trial Chamber, Decision on the Prosecutor's Bar Table Motions, 17 December 2010, para 27:

<sup>516</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Trial Chamber, Decision on the Prosecutor's Bar Table Motions, 17 December 2010, para 38:

<sup>517</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Bemba*, Appeals Chamber, Judgment on the appeals of Mr Jean-Pierre Bemba Gombo and the Prosecutor against the decision of Trial Chamber III entitled "Decision on the admission into evidence of materials contained in the prosecution's list of evidence", 3 May 2011, para. 37, ICC, *Prosecutor v. Ongwen*, Decision on Prosecution Request to Submit Interception Related Evidence, 1 December 2016, paras. 5-6:

<sup>518</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on the Admission of Material from the "Bar Table", para. 38:

բերված ապացույցը չի կարող թույլատրելի լինել այն պարագայում, եթե էական կասկած կա, որ ապացույցի հուսալիությունը, իսկությունը խափանվել է անօրինական գործողության պատճառով<sup>519</sup>: Երկրորդ բացառությունը ավելի լայն մեկնաբանման հնարավորություն է տալիս՝ բացառելու անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցը, մասնավորապես, եթե այդ ապացույցը հակաէթիկական կդիտարկվի կամ կարող է լուրջ բացասական ազդեցություն ունենալ ողջ քրեական գործի վրա<sup>520</sup>:

### 28.2 Ապացույցների բացահայտումը (*Disclosure*)

Ապացույցների բացահայտումը միջազգային քրեական դատավարությունում յուրօրինակ դատավարական գործողություն է, որը ոչ բոլոր ազգային քրեադատավարական համակարգերին է հայտնի: Սա պայմանավորված է նրանով, որ միջազգային քրեական իրավունքում ոչ միայն անձերն են ներգրավված դատաքննությանը, այլև պետություններն ու միջազգային կազմակերպությունները, որոնց փաստաթղթերի գաղտնիությունը առանձին դեպքերում մեծ նշանակություն ունի: Մայրցամաքային իրավական համակարգում մեղադրող կողմը պատրաստում է ապացույցների ողջ փաթեթը (*dossier*), որը տրամադրվում է ինչպես հակառակ կողմին, այդպես էլ դատարանին, որպեսզի բոլոր մասնակիցները տեղեկացված լինեն այն մեղադրանքի մասին, որը մեղսագրվում է մեղադրյալին: Այս մոտեցումը չի գործում Միջազգային քրեական դատարանում:

Ապացույցների գաղտնիությունը շատ դեպքերում կարող է հանգեցնել մեղադրյալի իրավունքների ոտնահարման, մասնավորապես այն դեպքերում, երբ վերջինս իրավունք ունի տեղեկացված լինելու, թե ինչում է մեղադրվում, իրավունք ունի բավարար ժամա-

---

<sup>519</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on the Admission of Material from the “Bar Table”, para. 42, P. Viebig (note 513), էջ 132-133:

<sup>520</sup> Տե՛ս *D. K. Piragoff/P. Clarke*, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, էջ 1721:

նակ ստանալու իր պաշտպանությունը պատրաստելու համար և այլն:

Ապացույցների բացահայտումը հարկավոր է դիտարկել որպես դատախազի և մեղադրյալի՝ ապացույցները բացահայտելու պարտականություն:

Մինչ մեղադրանքը հաստատելը (նախաքննության ընթացքում) Հռոմի ստատուտի 54-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետով դատախազը կարող է ձեռք բերել պայմանավորվածություններ այն մասին, որ դատավարական որևէ փուլում չի բացահայտելու ձեռք բերված ապացույցները, եթե ապացույց տրամադրողը դրան չի տվել իր համաձայնությունը<sup>521</sup>: Այդ ապացույցների նպատակը մասնավորապես նոր ապացույցներ ձեռք բերելն է: Միաժամանակ դատախազը պարտավոր է դատավարության ընթացքում բացահայտել մեղադրող ապացույցները Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 2-րդ մասով<sup>522</sup>: Սակայն, ելնելով վկաների, տուժողների և այլ անձանց պաշտպանության անհրաժեշտությունից՝ դատախազն իրավունք ունի ներկայացնելու ապացույցների խմբագրված տարբերակները (Հռոմի ստատուտի 68-րդ հոդվածի 5-րդ մաս): Ապացույցները չբացահայտելը կարող է առնչվել նաև ազգային անվտանգությանը վերաբերող իրավիճակների (Հռոմի ստատուտի 72-րդ հոդված):

Դատախազի կողմից ապացույցների բացահայտումը ներառում է այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են դատախազության կողմից կանչված վկաների անուններին, նրանց ցուցմունքներին՝ ինչպես թարգմանված, այնպես էլ բնօրինակով (Ընթացակարգի և ապացույցների կանոնների 76-րդ կանոն), ինչպես նաև այլ իրեղեն ապացույցների:

---

<sup>521</sup> St' u C. de Vos, *Somone Who Comes between One Person and Another: Lubanga, Local Cooperation and the Right to a Fair Trial*, Melbourne Journal of International Law 2011, էջ 5:

<sup>522</sup> St' u ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on the Consequences of Non-Disclosure of Exculpatory Materials Covered by Article 54(3)(e) Agreements, 13 June 2008, para. 64:

Ի տարբերություն դատախազի՝ մեղադրյալը մասամբ պարտավոր է ներկայացնել այն ապացույցները, որոնց վրա հիմնվելու է մեղադրյալի պաշտպանությունը: Դա ներառում է մասնավորապես այն հիմքերը, որոնք բացառում են մեղադրյալի մեղքը (Ընթացակարգի և ապացույցների կանոնների 80-րդ կանոն): Սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մեղադրյալը իրավունք ունի լռելու՝ ըստ Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (է) կետի, ուստի և ապացույցների բացահայտումը մեղադրյալի կողմից կարող է կատարվել միայն առանձին դեպքերում<sup>523</sup>:

### 28.3 Վկայի հարցաքննություն

Խաչաձև քննությունը, որը սկիզբ է առնում անգլոամերիկյան դատավարական համակարգից, առաձնահատուկ մաս է ձևավորել միջազգային քրեական դատավարության մեջ: Դեռևս Նյուրնբերգյան դատավարությունների ժամանակ այն դատավարական խնդիրներ էր առաջացնում տարբեր իրավամտաձողություն ունեցող իրավաբանների շրջանում:

Կողմերը իրավունք ունեն հարցեր ուղղելու այն վկային, որը կանչվել է հարցաքննության: Միջազգային քրեադատավարական պրակտիկայում տարբերակվում է հարցաքննության երկու ձև՝ ուղիղ հարցաքննություն (direct examination) և խաչաձև հարցաքննություն (cross examination)<sup>524</sup>: Թեև Հռոմի ստատուտն ու ընթացակարգի և ապացույցների կանոնները միանշանակ չեն հիշատակում հարցաքննության երկու մոդելների առկայությունը, սակայն պրակտի-

---

<sup>523</sup> Տե՛ս U. C. Safferling (note 490), էջ 359, ICC, *Prosecutor v. Lubanga*, Trial Chamber, Decision on disclosure by the defence, 21 March 2008, para. 27, ICC, *Prosecutor v. Ongwen*, Trial Chamber, Decision on Prosecution Request for Disclosure of Material Provided to Defence Expert, 11 February 2019, para. 8:

<sup>524</sup> Տե՛ս N. K. Calvo-Goller, *The trial proceedings of the International Criminal Court: ICTY and ICTR precedents*. Boston, 2006, էջ 273-274, T. M. Funk/P. Massidda, *Victims' rights and advocacy at the International Criminal Court*. Oxford, New York, 2010, էջ 211:

կայում այս մոդելները լայն կիրառություն ունեն ՄՔԴ դատավարությունում:

Ուղիղ հարցաքննությունները վերաբերում են այնպիսի հարցերին, որոնց վկան կարող է պատասխանել՝ ներկայացնելով իր պատմությունը: Այսինքն՝ դրանք բաց հարցեր են, օրինակ՝ որտե՞ղ եք ապրում, ի՞նչ եք տեսել կամ ե՞րբ եք տեսել, մինչդեռ խաչաձև հարցաքննության ընթացքում հարցը ձևավորվում է այնպես, որ պատասխանը կարող է լինել միայն այդ կամ ոչ, օրինակ՝ ճի՞շտ է արդյոք, որ այս օրը եղել եք այստեղ և այլն:

Համաձայն ընթացակարգի և ապացույցների կանոնների 140-րդ կանոնի 2-րդ մասի՝ վկան կարող է հարցաքննվել իր ցուցմունքի խլույթան և այլ խնդիրների վերաբերյալ:

#### *28.4 Համագործակցություն*

Ակնհայտ է, որ Միջազգային քրեական դատարանը կախյալ է իր անդամ պետությունների օժանդակությունից: ՄՔԴ-ն չունի հնարավորություն ինքնուրույն կատարելու ձեռքարկություններ, իրականացնելու ուժային գործողություններ, ինչի պատճառով էլ հիմնվում է պետական օժանդակության վրա: Համաձայն Հռոմի ստատուտի 9-րդ և 10-րդ գլուխների՝ անդամ պետությունները պարտավոր են համագործակցել ՄՔԴ-ի հետ՝ սկսած հետաքննությունից մինչև դատավճիռը իրականացնելը և դրան հաջորդող գործողությունների ժամանակ:

### **29. Միջազգային քրեական դատարան**

Խոսելով Միջազգային քրեական դատարանի մասին՝ առաջին հերթին պատկերացնում են այն շինությունը, որը գտնվում է Նիդերլանդների Թագավորության Դեն Հաագ քաղաքում: Սակայն Միջազգային քրեական դատարանը չի սահմանափակվում միայն «դատարան» հասկացությամբ: Չպետք է մոռանալ, որ Միջազգային քրեական դատարանը միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված

կառույց է, որը, բացի դատարանից, ունի նաև այլ մարմիններ, որոնք պատասխանատու են դատարանի և անդամ պետությունների միջև դյուրին համագործակցության համար: Անդամ պետությունների ասամբլեան (Assembly of State Parties – ASP) պատասխանատու է ոչ միայն ֆինանսական ծրագրերի և դատավորների ընտրության, այլև Հռոմի ստատուտի մեջ լրացումներ անելու համար (Հռոմի ստատուտի 112-րդ հոդված): Ամեն տարվա ավարտին Նյու Յորքում գումարվում է անդամ պետությունների կոնֆերանսը, որտեղ քննարկվում են բոլոր այն գործողությունները, որոնք կատարվել են Միջազգային քրեական դատարանի կողմից նախորդ տարվա ընթացքում<sup>525</sup>: Անդամ պետությունների ասամբլեան ղեկավարվում է Բյուրոյի կողմից, որը բաղկացած է նախագահից և երկու տեղակալներից, որոնք ընտրվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ<sup>526</sup>:

Ասամբլեան իր աշխատանքները կենտրոնացնում է մասնավորապես հետևյալ ուղղությունների վրա.

- ՄՔԴ բյուջեի քննարկումներ,
- անդամ պետությունների համագործակցություն,
- դատավորների առաջադրման և ընտրության կարգ,
- ռազմավարական պլանավորումներ,
- տուժածների համայնքների հատուցումներ,
- կառավարական ուսումնասիրություններ:


Համեմատաբար անկախ մարմին է նաև միջազգային հանցագործություններից տուժածների հատուցումների համար ստեղծված Վստահության ֆոնդը (Trust Fund for Victims, TFV), որն ունի իր ղեկավարը, վերջինս էլ մշակում է Ֆոնդի կողմից նախատեսված՝ տուժողների հատուցումներին և ռեաբիլիտացիային վերաբերող ծրագրերը<sup>527</sup>:

---

<sup>525</sup> Տե՛ս, օրինակ, ICC, 2019/2020, Eighteenth Session – Resolutions, [https://asp.icc-cpi.int/en\\_menus/asp/resolutions/sessions/Pages/2019-18th-session.aspx](https://asp.icc-cpi.int/en_menus/asp/resolutions/sessions/Pages/2019-18th-session.aspx), դիտված հունիսի 24-ին 2020:

<sup>526</sup> Տե՛ս ASP, Resolution 8, ICC-ASP/3/Res.8, 1 December 2004:

<sup>527</sup> Մանրամասն տե՛ս 30.5 տուժողների հատվածում:



### 30. Դատարանի մարմինները և մասնակիցները

Ըստ Հռոմի ստատուտի 34-րդ հոդվածի՝ Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը ճիշտ պատկերացնելու համար պետք է առանձնացնել հետևյալ կարևոր մարմինները՝

- Միջազգային քրեական դատարանի նախագահությունը և առանձին պալատները,
- դատախազությունը,
- ռեզիստրը:

#### *30.1 Նախագահությունը և առանձին պալատները*

Ըստ Հռոմի ստատուտի 36-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանը բաղկացած է 18 դատավորից, որոնք կցված են երեք առանձին պալատի՝ Նախաքննության պալատ (Pre-Trial Chamber), Քննության կամ Դատավարության պալատ (Trial Chamber) և Վերաքննիչ պալատ (Appeals Chamber): Դատավորների թեկնածուներ կարող է ներկայացնել ցանկացած անդամ պետություն, որից հետո, ըստ Հռոմի ստատուտի 36-րդ հոդվածով նախատեսված չափորոշիչների, անդամ պետությունների ասամբլեայի հերթական գագաթնաժողովին անդամ պետությունների ներկայացուցիչները մասամբ գաղտնի քվեարկությամբ ընտրում են ՄՔԴ դատավոր 9 տարի ժամկետով: Յուրաքանչյուր պալատի կցված դատավորների գործառույթները տարբեր են: Պալատի մեջ նախագահության հարցը թողնված է դատավորների հայեցողությանը: Այսպիսով, Նախաքննության պալատը (թվով 3 դատավոր) իր կազմից ընտրում է «միայնակ» դատավոր (single judge), որը միանձնյա պատասխանատու է նախաքննության համար անհրաժեշտ առաջադրանքների և կազմակերպչական հարցերի համար, և նախագահող, որը վարում է նախաքննությունը: Քննության պալատը (3 դատավոր) իր կազմից նույնպես ընտրում է նախագահող, որը կազմակերպում և առաջնորդում է դատավարության ընթացքը: Վերաքննիչ պալատը (5 դատավոր) քննում է ինչպես



ընթացիկ բողոքարկումները, այնպես էլ Հռոմի ստատուտի 82-րդ հոդվածով նախատեսված հիմնական բողոքարկումները:

Դատավորներն իրենց կազմից 3 տարի ժամկետով, ձայների երկու երրորդով ընտրում են Միջազգային քրեական դատարանի նախագահ և երկու փոխնախագահ: Նախագահությունը պատասխանատու է դատարանի արդյունավետ վարչական աշխատանքի և Հռոմի ստատուտի 38-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետով նախատեսված կազմակերպչական այլ աշխատանքների համար, մասնավորապես, մեղադրանքի հաստատումից հետո նախագահությունը ուղղորդում է քրեական գործը համապատասխան Դատավարության պալատ (Հռոմի ստատուտի 61-րդ հոդվածի 11-րդ մաս)<sup>528</sup>: Նախագահությունը միաժամանակ պատասխանատու է արտաքին ներկայացուցչության համար:

### *30.2 Դատախազություն*

ՄՔԴ դատախազությունը անկախ մարմին է դատարանի կազմում, որը, Հռոմի ստատուտի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, մեղադրանքը ներկայացնող մարմին է: Վերջինս ստանալով և հավաքագրելով Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների մասին տեղեկությունները՝ քննում և մեղադրանք է պաշտպանում ՄՔԴ-ի առջև: Գլխավոր դատախազը ընտրվում է նույն ընթացակարգով, ինչ դատավորները՝ 9 տարի ժամկետով:

### *30.3 Ռեզիստր*

Ի տարբերություն Դատախազության և Դատական պալատների՝ ռեզիստրը օժտված է ավելի բազմաբովանդակ լիազորություններով, որոնք մասնավորապես սահմանափակվում են կազմակերպչական աշխատանքներով: Հռոմի ստատուտի 42-րդ հոդվածի և ռեզիստրի կանոնակարգի համապատասխան՝ վերջինս պատասխանատու է դատավարության սահուն և անխոչընդոտ իրականացման

---

<sup>528</sup> Այդ թվում՝ Հռոմի ստատուտի 38-րդ հոդվածի 3-րդ մաս, 48-րդ հոդվածի 5-րդ մաս:

համար: Այն ներառում է այնպիսի գրասենյակներ, որոնք պատասխանատու են մեղադրյալին և տուժողներին առաջին իրավաբանական օգնություն ցուցաբերելու, թարգմանչական աշխատանքները կազմակերպելու, վկաների պաշտպանությունը ապահովելու և կազմակերպչական բազում այլ աշխատանքների համար: Ռեգիստրը ընտրվում է նույն ընթացակարգով, ինչ դատախազը և դատավորները, սակայն 5 տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով (Հռոմի ստատուտի 43-րդ հոդվածի 5-րդ մաս):

### *30.4 Վկաներ*

Վկաները միջազգային քրեական դատավարության առանցքային մասնակիցներ են: Վերջիններիս ցուցմունքները ձևավորում են ապացուցողական այն բազան, որի հիման վրա դատարանը կարող է հանգել մեղքի առկայությանը կամ բացակայությանը: Ինչպես արդեն նշվեց վերևում, վկաները կարող են կանչվել հարցաքննության: Այս պարագայում էլ ռեգիստրը կազմակերպում է վկայի այցելությունը դատարան՝ ձեռնարկելով բոլոր միջոցները, որպեսզի որևէ ներգործություն վկայի նկատմամբ տեղի չունենա:

### *30.5 Տուժողներ*

ՄՔԴ-ն միջազգային առաջին կառույցն է, որտեղ տուժողները և հանցագործության զոհերը իրավունք են ստացել մասնակցելու միջազգային քրեական դատավարության: Ո՛չ Նյուրնբերգյան, ո՛չ հետագայում ժամանակավոր միջազգային դատարաններում տուժողները չեն ունեցել իրավական այն կարգավիճակը, որն այսօր իրենց ընձեռված է Հռոմի ստատուտի 68-րդ հոդվածի 3-րդ մասով: 1985 թ. մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքական շարժումների արդյունքում ստեղծված ՄԱԿ-ի հռչակագիրը՝ հանցագործության և ուժի չարաշահման նկատմամբ տուժողների օրինական վերաբերմունքի հիմնական սկզբունքների վերաբերյալ, իր թան դարձավ ամբողջ աշխարհում տուժողների իրավունքների բարեփոխման հա-

մար<sup>529</sup>: Եվրոպական օրենսդրության մեջ զոհերի իրավունքների ոլորտում իրականացվող բարեփոխումները սկսվել են դեռևս 1983 թ. «Բռնության զոհերին փոխհատուցելու մասին» եվրոպական կոնվենցիայով<sup>530</sup>, բայց միջազգային հանցագործության զոհերը մնացին ստվերում մինչև 1998 թ. Հռոմի ստատուտի ստորագրումը<sup>531</sup>:

Որպես կանոն՝ միջազգային հանցագործությունների զոհերն իրենց անհատական հատկանիշների հիման վրա չեն ընտրվում, այլ տուժում են որոշակի խմբի պատկանելու պատճառով: Հռոմի ստատուտի 68-րդ հոդվածի 3-րդ մասը հիմք է ՄՔԴ-ում միջազգային հանցագործությունների տուժածների մասնակցության համար: Այն, ըստ էության, սահմանում է, որ տուժածները կարող են ներգրավվել դատաքննության տարբեր փուլերում, սակայն վերջիններս դատավարության կողմ չեն, այլ միայն դատավարության մասնակից<sup>532</sup>: Մինչ դատավարական գործողություններին ակտիվորեն մասնակցելու հնարավորություն ունենալը նրանք նախ պետք է ճանաչվեն և հաստատվեն որպես տուժողներ՝ ընթացակարգի և ապացույցների կանոնների 85-րդ կանոնի համաձայն<sup>533</sup>: Հաջորդիվ դատարանը պետք է համոզվի այն բանում, որ կոնկրետ դատավարական փուլի

---

<sup>529</sup> Տե՛ս U Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power, UN General Assembly, Resolution 40/34, 29 November 1985:

<sup>530</sup> Տե՛ս European Convention on the Compensation of Victims of Violent Crimes, Strasbourg, 24.XI.1983:

<sup>531</sup> Տե՛ս U G. Petrossian (note 464), էջ 124:

<sup>532</sup> Տե՛ս ICC, *Prosecutor v. Katanga, Chui*, Trial Chamber, Decision on the Modalities of Victim Participation at Trial, 22. January 2010, para. 75:

<sup>533</sup> Տուժած անձը տուժող կողմ ճանաչվելու համար պետք է ներկայացնի դիմում ՄՔԴ ռեգիստր՝ մատնանշելով այն վնասը (ֆիզիկական, սոստեսական, հոգեբանական), որն առաջացել է մեղադրյալին մեղսագրվող ենթադրյալ հանցագործությունից: Տուժող կարող են ճանաչվել ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձինք՝ ըստ ընթացակարգի և ապացույցների կանոնների 85-րդ կանոնի:

հանգամանքներում տուժողների մասնակցությունը բխում է իրենց անձնական շահերից<sup>534</sup>:

Այն պահից, երբ դատարանը տուժած անձին տալիս է տուժող կողմի կարգավիճակ, քննությունից առաջ սահմանում է այն իրավունքները, որոնք տուժողը կարող է իրականացնել իր մասնակցության ընթացքում<sup>535</sup>: Տուժողներին տրվող մասնակցության իրավունքները կախված են պալատի կազմից, այսինքն՝ այն դատավորներից, որոնք մասնակցում են գործի քննությանը: Այդ իրավունքները կարող են ներառել դատավարության ֆիզիկական մասնակցության իրավունքը, բացման և փակման խոսքերի համար ժամանակ տրամադրելը, վկաներին հարց ներկայացնելը և այլն<sup>536</sup>: Փաստ է, որ դատավարությանը որպես տուժող մասնակցողների թիվը բավական մեծ է<sup>537</sup>, որի պարագայում բոլոր տուժողների ֆիզիկական մասնակցությունը հնարավոր չէ, հետևաբար դատական նիստերին կարող են մասնակցել միայն իրենց իրավական ներկայացուցիչները (legal representative for the victims):

Այն պահից ի վեր, երբ հաստատվում է մեղադրյալի մեղքը, տուժողները և դատապարտյալը շարունակում են դատավարությունը փոխհատուցման շրջանակներում, որտեղ արդեն սահմանվում են պատճառված վնասի չափը և փոխհատուցման ճանապարհային քարտեզը: Հաշվի առնելով, որ դատապարտյալը հիմնականում անվճարունակ է, տուժողների փոխհատուցման նպատակով ձևավորվում է ՄՔԴ անկախ մարմին՝ Տուժողների վստահության ֆոնդը

---

<sup>534</sup> Sté u Donat-Cattin, in: O. Triffterer/K. Ambos, Rome Statute of the International Criminal Court: A commentary, 2016, էջ 1695:

<sup>535</sup> Sté u ICC, *Prosecutor v. Ongwen*, Trial Chamber, Decision on the Legal Representatives for Victims Requests to Present Evidence and Views and Concerns and related requests, 6 March 2018, paras. 17-25:

<sup>536</sup> Sté u ICC, *Prosecutor v. Katanaga*, Trial Chamber, Decision on the Modalities of Victim Participation at Trial, 22 January 2010, paras. 65-125:

<sup>537</sup> Sté u ICC, *Prosecutor v. Bemba*, 5229 տուժող, ICC, *Prosecutor v. Ongwen*, 4100 տուժող, ICC, *Prosecutor v. Ntaganda*, 2142 տուժող և այլն:

(Trust Fund for Victims): Այս մարմինը պատասխանատու է տուժողների փոխհատուցումների համար: Առաջնորդվելով երկու նպատակով՝ օժանդակության և հատուցման մանդատներով, հանգանակություններից և այլ աղբյուրներից<sup>538</sup> ձևավորված գումարը ֆոնդի գործադիր մարմնի որոշմամբ կարող է ուղղվել կոլեկտիվ կամ անհատական փոխհատուցումների իրականացմանը (Հռոմի ստատուտի 75-րդ հոդվածի 2-րդ մաս և 76-րդ հոդված)<sup>539</sup>: Այդ փոխհատուցումները կարող են լինել ոչ միայն նյութական, այլև հեռակա տնտեսական ծրագրերի տեսքով, ինչպես նաև հոգեբանական կամ վերականգնողական ծրագրերի իրականացմամբ:

### *30.6 Պաշտպանյալ*

Հաշվի առնելով, որ ՄՔԴ տարբեր մարմիններ դատարանի մշտական մասն են կազմում ՄՔԴ համակարգում, պաշտպանյալը, ինչպես նաև պաշտպանյալի պաշտպանը տուժողների հետ համընթեր ՄՔԴ համակարգում ոչ կայուն սուբյեկտներ են, որոնք չունեն, այսպես ասած, «ինստիտուցիոնալ հիշողություն»: Այսինքն՝ վերջիններս, այլ մարմինների համեմատ, գտնվում են ավելի անբարենպաստ պայմաններում: Այս բացը լրացնելու համար Դատարանի կողմից ստեղծվել է Հանրային պաշտպանի գրասենյակը (Office of the Public Counsel for the Defence (OPCD) դատարանի կանոնակարգի 77-րդ կանոն)<sup>540</sup>: Այս մշտական մասնակի անկախ մարմինը առաջին օգնության ձեռք է մեկնում ՄՔԴ քրեական գործի շրջանակներում ներգրավված անձանց:

Ինչպես արդեն նշվեց միջազգային քրեական դատավարության բաժնում, պաշտպանյալի կարգավիճակը փոփոխվում է՝ կախված

---

<sup>538</sup> Տե՛ս G. Petrossian and C. Safferling (note 125), էջ 294-299:

<sup>539</sup> Տե՛ս ICC-ASP, Resolution ICC-ASP/1/Res.6, Establishment of a fund for the benefit of victims of crimes within the jurisdiction of the Court, and of the families of such victims Adopted at the 3rd plenary meeting, on 9 September 2002, by consensus, Annex to Resolution, paras. 1-2:

<sup>540</sup> Տե՛ս C. Safferling (note 490), էջ 180:

նրանից, թե դատավարական որ փուլում է վերջինս գտնվում: Կարևոր է առանձնացնել, որ Հռոմի ստատուտին համապատասխան՝ անձը մեղադրյալի կարգավիճակ ձեռք է բերում այն ժամանակ, երբ իր դեմ մեղադրանքը հաստատվում է ՄՔԴ նախաքննական պալատի կողմից, և քրեական գործը մտնում է նախաքննական փուլ: Հռոմի ստատուտը չի օգտագործում կասկածյալ եզրույթը, սակայն առանձին իրավունքներ է նախատեսում այն անձանց համար, որոնց նկատմամբ կա կասկած, որ վերջիններս կատարել են Հռոմի ստատուտի իրավասության տակ գտնվող հանցագործություն (Հռոմի ստատուտի 55-րդ հոդվածի 2-րդ մաս): Նախաքննական փուլում գտնվող բոլոր անձանց իրավունքները կարգավորվում են Հռոմի ստատուտի 55-րդ հոդվածի 1-ին մասով:

Այսպիսով, այն անձը, որը ներգրավված է հետաքննության մեջ կամ առնչվում է նախաքննությանը՝

- իրավունք ունի ցուցմունք չտալու իր դեմ կամ չընդունելու իր մեղքը,
- այդ անձի նկատմամբ չի կարող կիրառվել բռնություն կամ ցանկացած տեսակի խոշտանգում,
- իրավունք ունի օգտվելու թարգմանչի անվճար ծառայությունից,

կասկածյալը՝

- մինչև ցուցմունք տալը իրավունք ունի տեղեկացվելու այն հանցագործության մասին, ինչում նա կասկածվում է,
- իրավունք ունի լռելու,
- օգտվելու իրավաբանական անվճար ծառայությունից, եթե չունի դրա համար համապատասխան միջոցներ,
- իրավունք ունի ցուցմունք տալու իր ներկայացուցչի / պաշտպանի ներկայությամբ:

Ակնհայտ է, որ Հռոմի ստատուտի 55-րդ հոդվածով կասկածյալի համար նախատեսված իրավունքների շրջանակը, ի տարբերություն մեղադրյալի իրավունքների, ավելի նեղ է այն պահից, երբ կասկած-

յալի նկատմամբ մեղադրանքները հաստատվում են Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 7-րդ մասով<sup>541</sup>: Ներգրավվելով դատավարության փուլ՝ մեղադրյալը ստանում է իրավունքների լայն պաշտպանություն Հռոմի ստատուտի 66-րդ և 67-րդ հոդվածներով:

Դատավարության փուլում մեղադրյալի իրավունքները ներառում են՝

- անմեղության կանխավարկածը (Հռոմի ստատուտի 66-րդ հոդված),
- արդար դատաքննությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մաս),
- իրեն մեղսագրվող հանցագործությունների մասին տեղեկացված լինելը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետ),
- գործի պաշտպանությունն իրականացնելու համար համարժեք ժամանակ ունենալու հնարավորությունը և դատավարությունը առանց անհարկի հետաձգումների իրականացնելը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (բ) և (գ) կետեր),
- մեղադրյալի ներկայությունը դատավարության ընթացքում (Հռոմի ստատուտի 63-րդ հոդված),
- պաշտպան ունենալու հնարավորությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (դ) կետ),
- վկաներին հարց ուղղելու և վկաներ ներգրավելու հնարավորությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (ե) կետ),
- թարգմանիչ ունենալու հնարավորությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (զ) կետ),

---

<sup>541</sup> Մանրամասն տե՛ս *R. Boed, M. Bohlander and R. J. Wilson (eds), Defense in international criminal proceedings: Cases, materials and commentary. Ardsley, N.Y, 2006, էջ 518:*

- լռելու կամ ցուցմունք չտալու հնարավորությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (է) և (ը) կետերը),
- ապացուցողական պարտականությունը ընկած է հակառակ կողմի վրա (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 1-ին մասի (թ) կետ):

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ, բացի իրավունքներից, պաշտպանության կողմը օժտված է նաև որոշակի պարտականություններով: Մասնավորապես, պաշտպանությունը պարտավոր է դատախազությանը ներկայացնել այն ապացույցները, որոնց վրա հիմնվում է մեղադրյալի պաշտպանությունը (Հռոմի ստատուտի 67-րդ հոդվածի 2-րդ մաս)<sup>542</sup>: Մեղադրյալի պաշտպանները պարտավոր են իրենց պաշտպանական գործունեությունը իրականացնելու ժամանակ հարգել պաշտպանի էթիկայի կանոնները (Code of Professional Conduct for counsel)<sup>543</sup>:

---

<sup>542</sup> Տե՛ս, օրինակ, ICC, *Prosecutor v. Ongwen*, Trial Chamber, Decision on Defence Request for Disclosure and Remedy for Late Disclosure, 28 September 2018, *M. Federova*, in: M. Hiéramente/P. Schneider, *The Defence in International Criminal Trials: Observations on the role of the defence at the ICTY, ICTR and ICC*, 2016, էջ 129:

<sup>543</sup> Տե՛ս *C. M. Rohan/G. Zyberi*, *Defense perspectives in international criminal justice*. Cambridge, 2017, էջ 49:



## ԲԱԺԻՆ V

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

#### ԳԼՈՒԽ 13

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 31. Ընդհանուր դրույթներ

Ինչպես արդեն նշվել էր առաջին գլխում, երկրորդ տեսանկյունից միջազգային քրեական իրավունքը ներառում է նաև այնպիսի հանցագործությունների շրջանակ, որոնք չեն պարփակվում մեկ պետության սահմաններում, և որոնց դեմ պայքարը համընդհանուր և հավաքական բնույթի է: Անդրազգային (տրանսնացիոնալ) հանցագործությունների (*transnational crimes*), այլ կերպ ասած՝ միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարը ծավալվում է միջազգային համագործակցության հարթակում և բխում է միջազգային պարտավորություններից<sup>544</sup>: «Միջազգային բնույթի հանցագործությունների կամ անդրազգային հանցագործությունների դեմ պայքար» հասկացությունը հարաբերականորեն նոր է: Միջազգային սահմանների մատչելիության և միջազգային տեխնիկական հնարավորությունների զարգացման շնորհիվ ձևավորվել է հանրային պահանջ միջազգային հանցագործությունների դեմ պայքարի սահմանման վերաբերյալ: Առանց պետությունների սերտ համագործակցության այս հանցագործությունների դեմ պայքարը չի կարող գրանցել հաջողություններ: 1995 թ. ՄԱԿ-ը ձևակերպեց «միջազգային բնույթի հանցագործություններ» հասկացությունը, ըստ որի՝ դրանք այն հանցա-

---

<sup>544</sup> Տե՛ս *F. G. Madsen*, *Transnational organized crim.* London, New York, 2009, էջ 25, օրինակ՝ Պալերմոյի կոնվենցիան, UN Convention against Transnational Organized Crime, 2000:

գործություններն են, որոնց սկիզբը, համամասնությունը և (կամ) ուղղակի կամ անուղղակի հետևանքները ներգրավում են մեկից ավելի պետություններ<sup>545</sup>:

Բացի այդ՝ հետազոտությունների արդյունքում 18 տեսակի հանցագործություններ, որոնք ի սկզբանե ամրագրված էին ազգային քրեական օրենսգրքերում և ըստ այդմ միջազգային ճանաչելիություն ունեին, միջազգային բնույթ ձեռք բերեցին: Դրանք են՝

1. փողերի լվացումը,
2. ահաբեկչությունը,
3. մշակութային արժեքների գողությունը,
4. մտավոր սեփականության գողությունը,
5. զենքի անօրինական առևտուրը,
6. ինքնաթիռի առևանգումը,
7. ծովահենությունը,
8. առևանգումը,
9. ապահովագրության խարդախությունը,
10. կիրեռհանցագործությունը,
11. բնության դեմ հանցագործությունը,
12. մարդկանց առևտուրը,
13. մարդկանց մարմնի մասերի առևտուրը,
14. թմրանյութերի առևտուրը,
15. խարդախ սնանկությունը,
16. տնտեսական խարդախությունը,
17. հանրային աշխատողին կաշառք տալը,
18. ընտրական և կուսակցական համակարգում կաշառք տալը:

Մրանց են գումարվում այլ բնույթի հանցագործություններ, որոնք կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի կողմից:

---

<sup>545</sup> Տե՛ս UN, International Cooperation and Practical Technical Assistance for Strengthening the Rule of Law. Promoting the UN Crime Prevention and Criminal Justice Programme, 4 April 1995, էջ 4:

Հանցավորությանը միտված ժամանակակից միջոցների ճկունությունը ստիպում է պետություններին կոլեկտիվ գործողությունների դիմել հանցագործությունների դեմ պայքարում: Մակայն նախքան տարբեր պետությունների միջև միջազգային համագործակցություն ձևավորելը առաջնահերթորեն պետք է հստակեցվի, թե մասնավորապես որ հանցագործությունների դեմ պայքարի նպատակով պետք է այդ համագործակցությունը ձևավորվի: Այստեղ առաջ է գալիս առանձին միջազգային բնույթի հանցագործությունների ձևակերպումների շուրջ միջազգային համաձայնության անհրաժեշտությունը:

2000 թ. ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան, որը միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարի հիմնական իրավական աղբյուրն է, առանձնացնում է այն լուրջ հանցագործությունները, որոնց դեմ պայքարը հավաքական բնույթի է:

### **32. Առանձին հանցագործություններ**

Այսպիսով, միջազգային բնույթի հանցագործությունների սահմանումները ձևավորվում են բազմակողմանի պայմանագրերի արդյունքում, և դրանց դեմ պայքարը հավաքական բնույթի է:

#### *32.1 Ծովահենություն*

Ծովահենությունը պատմականորեն միջազգային այն հանցագործություններից է, որն առավելագույն վնաս էր հասցնում միջազգային առևտրափոխանակությանը: Դա էլ հիմք դարձավ, որպեսզի պետությունները և սուվերենները համատեղեն իրենց ջանքերը ծովահենների դեմ: Ծովահենությունը, ըստ ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի մասին» կոնվենցիայի<sup>546</sup> 101-րդ հոդվածի, մասնավոր նավի կամ մասնավոր օդանավի անձնակազմի կամ ուղևորների կողմից

---

<sup>546</sup> Տե՛ս UN Convention on the Law of the Sea, 1982:

անձնական նպատակներով կատարվող բռնությունն է, գրավման ցանկացած ապօրինի ակտ կամ ցանկացած կողոպուտ, որն ուղղված է բաց ծովում մեկ այլ նավի կամ օդանավի կամ այդտեղ գտնվող անձանց կամ գույքի դեմ կամ որևէ պետության իրավագործությունից դուրս գտնվող տեղում որևէ նավի կամ օդանավի անձանց կամ գույքի դեմ: Այլ կերպ ասած՝ ծովահենությունը մասնավոր նավի զինված ծովահենների կողմից բաց ծովի բեռնանավերի կամ նավերի և դրանց անձնակազմերի կողոպուտն է<sup>547</sup>: Այն ուղղված է պետությունների տնտեսությունների ու առևտրի համակարգերի դեմ և սպառնում է ոչ միայն պետությունների ինքնիշխանությանը, այլև միջազգային հանրության բարեկեցությանը<sup>548</sup>: Հետևաբար, ծովահենության դեմ պայքարը յուրաքանչյուրի խնդիրն է<sup>549</sup>: Դեռևս Ցիցերոնը առանձնացնում էր ծովահենների դեմ միասնական պայքարի անհրաժեշտությունը՝ դիտարկելով ծովահենությունը որպես բոլորի թշնամի<sup>550</sup>: ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի մասին» կոնվենցիայի 105-րդ հոդվածը թույլ է տալիս ցանկացած պետության միջոցներ ձեռնարկել ծովահենների դեմ, իսկ նրանց նավի գրավումն իրականացրած պետության դատարաններին՝ որոշում կայացնել կիրառվելիք պատժամիջոցների վերաբերյալ: ՀՀ քրեական օրենսգրքի 220-րդ հոդվածը

---

<sup>547</sup> Տե՛ս *P. Roth*, Historical overview of transnational crime in P. Reichel, J. Albanese, Handbook of Transnational Crime and Justice, 2014, էջ 8, *B. Elleman*, Historical Piracy and its impacts in G. Bruinsma Histories of Transnational Crime, 2015, էջ 9:

<sup>548</sup> Տե՛ս *J. Kraska*, Contemporary Maritime Piracy. International Law, Strategy, and Diplomacy at Sea, 2011, էջ 1-9, 11:

<sup>549</sup> Տե՛ս *Garrod*, Piracy, the Protection of Vital State Interests and the False Foundations of Universal Jurisdiction in International Law in Diplomacy and Statecraft, Vol. 25, Issue 2, 2014, էջ 197-200, Hecker, Luft-und Seepiraterie (§ 316c StGB) JA 2009, 674, *Cohen*, The Analogy between Piracy and Human Trafficking. A Theoretical Framework for the Application of Universal Jurisdiction, Buffalo Human Rights Law Review, Vol. 16, Article 5, 2010, էջ 214:

<sup>550</sup> «*Nam pirata non est ex perduellium numero definitus, sed communis hostis omnium; cum hoc nec fides debet nec ius iurandum esse commune*»: De Officiis.

սահմանում է ծովահենությունը որպես ուրիշի գույքին տիրանալու նպատակով ծովային կամ գետային նավի վրա հարձակվելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

### *32.2 Ահաբեկչություն*

Ահաբեկչությունը ևս միջազգային բնույթի հանցագործություն է, որի առանձին հատկանիշների վերաբերյալ, սակայն, միջազգային համաձայնությունը բացակայում է: Դա պայմանավորված է նրանով, որ ահաբեկչությունը շատ դեպքերում դիտարկվում է իբրև քաղաքականացված հանցագործություն, ինչն էլ դժվարացնում է դրա միջազգային հստակ սահմանումը ձևակերպելը: Միջազգային իրավունքում եղել են ահաբեկչությունը սահմանելու բազում փորձեր, սակայն մինչ օրս հանցագործության հատկանիշների շուրջ չկա միջազգային համաձայնություն: Դրա փոխարեն առկա են միջազգային բազում գործիքներ, որոնցով պայքար է տարվում ահաբեկչության դեմ<sup>551</sup>: Ի հեճուկս միջազգային բոլոր ջանքերի՝ հստակեցնելու ահա-

---

<sup>551</sup> 1) Convention on the Prevention and Punishment of Crimes against Internationally Protected Persons, including Diplomatic Agents, adopted by the GA of the United Nations on 14 December 1973, 2) International Convention against the Taking of Hostages, adopted by the GA of the United Nations on 17 December 1979, 3) International Convention for the Suppression of Terrorist Bombings, adopted by the GA of the United Nations on 15 December 1997, 4) International Convention for the Suppression of the Financing of Terrorism, adopted by the GA of the United Nations on 9 December 1999, 5) International Convention for the Suppression of Acts of Nuclear Terrorism New York, adopted by the GA of the United Nations on 13 April 2005, 6) Convention on Offences and Certain Other Acts Committed on Board Aircraft, signed at Tokyo on 14 September 1963 (Deposited with the Secretary-General of the International Civil Aviation Organisation), 7) Convention for the Suppression of Unlawful Seizure of Aircraft, signed at the Hague on 16 December 1970 (Deposited with the Governments of the Russian Federation, the United Kingdom and the United States of America), 8) Convention for the Suppression of Unlawful Acts against the Safety of Civil Aviation, signed at Montreal on 23 September 1971 (Deposited with the Governments of the Russian Federation, the United Kingdom and the United

---

States of America), 9) Convention on the Physical Protection of Nuclear Material, signed at Vienna on 3 March 1980 (Deposited with the Director-General of the International Atomic Energy Agency), 10). Protocol on the Suppression of Unlawful Acts of Violence at Airports Serving International Civil Aviation, supplementary to the Convention for the Suppression of Unlawful Acts against the Safety of Civil Aviation, signed at Montreal on 24 February 1988 (Deposited with the Governments of the Russian Federation, the United Kingdom and the United States of America and with the Secretary-General of the International Civil Aviation Organisation), 11) Convention for the Suppression of Unlawful Acts against the Safety of Maritime Navigation, done at Rome on 10 March 1988 (Deposited with the Secretary-General of the International Maritime Organisation), 12) Protocol for the Suppression of Unlawful Acts against the Safety of Fixed Platforms Located on the Continental Shelf, done at Rome on 10 March 1988 (Deposited with the Secretary-General of the International Maritime Organisation), 13) Convention on the Marking of Plastic Explosives for the Purpose of Detection, signed at Montreal on 1 March 1991 (Deposited with the Secretary-General of the International Civil Aviation Organisation), 14) Arab Convention on the Suppression of Terrorism, signed at a meeting held at the General Secretariat of the League of Arab States in Cairo on 22 April 1998: (Deposited with the Secretary-General of the League of Arab States), 15) Convention of the Organisation of the Islamic Conference on Combating International Terrorism, adopted at Ouagadougou on 1 July 1999 (Deposited with the Secretary-General of the Organisation of the Islamic Conference), 16) European Convention on the Suppression of Terrorism, concluded at Strasbourg on 27 January 1977 (Deposited with the Secretary-General of the Council of Europe), 17) OAS Convention to Prevent and Punish Acts of Terrorism Taking the Form of Crimes against Persons and Related Extortion that are of International Significance, concluded at Washington, D.C. on 2 February 1971 (Deposited with the Secretary-General of the Organisation of American States), 18) OAU Convention on the Prevention and Combating of Terrorism, adopted at Algiers on 14 July 1999 (Deposited with the General Secretariat of the Organisation of African Unity), 19) SAARC Regional Convention on Suppression of Terrorism, signed at Kathmandu on 4 November 1987 (Deposited with the Secretary-General of the South Asian Association for Regional Cooperation), 20) Treaty on Cooperation among States Members of the Commonwealth of Independent States in Combating Terrorism, done at Minsk on 4 June 1999 (Deposited with the Secretariat of the Commonwealth of Independent States), 21) Inter-American convention against terrorism from 6 March 2002, 22) Council of Europe Convention on the Prevention of Terrorism from 16 May 2005, 23) International

բեկչության սահմանումը, չլուծված է մնում հենց գործողության սուբյեկտի բնորոշման խնդիրը: Հիմնականում քննադատվում է այն, որ ահաբեկչությունը հստակորեն չի դիտարկվում որպես հանցագործություն, քանի որ ահաբեկիչները հանցագործներ չեն, այլ որոշակի գաղափարախոսությամբ առաջնորդվող՝ անկախության պայքարի մարտիկներ, այսպես ասած՝ «freedom fighters»<sup>552</sup>: Ըստ այդմ՝ մի կողմից նրանց գործողությունները դիտարկվում են որպես հակազաղութային քաղաքականության ներքո ազգային ազատագրական պայքար<sup>553</sup>, մյուս կողմից՝ որպես ազգային հանցագործություն: ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածը սահմանում է, որ ահաբեկչությունը հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանն ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելու կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելու նպատակով իրականացված պայթյունն է, հրկիզումը կամ մարդկային զոհերի, զգալի գույքային վնաս պատճառելը կամ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների առաջացման վտանգ ստեղծող այլ գործողություններ կատարելը կամ կատարելու սպառնալիքը:

Ահաբեկչության նպատակը հասարակության մեջ վախի և խուճապի միջոցով որոշակի խմբի անձանց գաղափարախոսության տարրեր իրականացնելն է: Հետևաբար, ահաբեկչության գործողությունը ազդում է հասարակության վրա, որի հետևանքով վնասված, տուժած կամ մահացած անձինք ահաբեկչության գործողության

---

Convention for the Suppression of Acts of Nuclear Terrorism from 13 April 2005, 24) Beijing Convention on the Suppression of Unlawful Acts Relating to International Civil Aviation from 10 September 2010, 25) Protocol to Amend the Convention on Offences and Certain other Acts Committed on Board Aircraft from 4 April 2014, 26) Additional Protocol to the Council of Europe Convention on the Prevention of Terrorism from 22 October 2015.

<sup>552</sup> Տե՛ս *G. Newman, R. Clarke*, Terrorism in M. Natarajan, International and Transnational Crime and Justice, 2019, էջ 149:

<sup>553</sup> *R. Letschert, I. Staiger*, Introduction and definitions in R. Letschert, I. Staiger, A. Pemberton, Assisting victims of terrorism 2010, էջ 10:

միակ ուղղակի գոհերը չեն: Ըստ այդմ՝ ահաբեկչությունն ուղղված է ոչ թե անձանց շրջանում վախ և խուճապ տարածելուն, այլ պետական ինքնիշխանության դեմ՝ հետապնդելով քաղաքական նպատակներ:

Ահաբեկչության սահմանման միջազգայնացման հարցում տարածաշրջանային հաջողություններ են ձեռք բերվել մասնավորապես ԵՄ և ԵԽ շրջանակներում: 1999 թ. ԵԽ խորհրդարանական վեհաժողովը առաջարկեց ահաբեկչությունը դիտարկել որպես հանցագործություն այն կատարած անձանց կամ խմբերի կողմից, որոնք բռնության են դիմում կամ սպառնում են բռնություն կիրառել երկրի, նրա հաստատությունների, նրա բնակչության կամ ընդհանրապես որոշակի անձանց նկատմամբ, որոնք, ելնելով անջատողական նկրտումներից, ծայրահեղական գաղափարական ընկալումներից, ֆանատիզմից կամ իռացիոնալ և սուբյեկտիվ գործոններից, նպատակ ունեն ստեղծելու ահաբեկչական մթնոլորտ պաշտոնական իշխանությունների, հասարակության կամ հասարակության որոշակի անհատների կամ խմբերի շրջանում<sup>554</sup>:

2002 թ. ահաբեկչության սահմանումը տրվեց ԵՄ խորհրդի շրջանակային որոշման 1-ին հոդվածով<sup>555</sup>, ըստ որի՝ ԵՄ հիմնադրման պայմանագրի, մասնավորապես պայմանագրի 29, 31 (ե) և 34 (2) (բ) հոդվածների շրջանակում ԵՄ անդամ պետությունները, ազգային օրենսդրությունների համաձայն, պետք է որպես ահաբեկչական գործողություն դիտարկեն բնակչության շրջանում վախ տարածելը, հիմնարար քաղաքական, սահմանադրական, տնտեսական կամ սոցիալական կառուցվածքներն ու արժեքներն ապակայունացնելը կամ կառավարությանն այլ կերպ գործել պարտադրելը, որին հաջորդում են անձի վրա հարձակումները, պետական կամ հասարակական օբյեկտների ոչնչացումը, օդանավերի, նավերի կամ հա-

---

<sup>554</sup> St´u CoE, Parliamentary Assembly Recommendation 1426 (1999) from 20 September 1999, European Democracies facing up to terrorism, N 5:

<sup>555</sup> EU Council Framework Decision of 13 June 2002 on combating terrorism.



սարակական կամ բեռնափոխադրումների այլ միջոցների առգրավումը, տարբեր տեսակի զենքերի մատակարարումը կամ օգտագործումը, բնական ռեսուրսների ոչնչացումը:

Թեև ահաբեկչության սահմանման հարցում տարակարծությունները շատ են, սակայն միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ հանցագործություն է ոչ միայն ահաբեկչությունը, այլև ահաբեկչությունը ֆինանսավորելը: ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ<sup>1</sup> հոդվածի համաձայն՝ ահաբեկչության ֆինանսավորումը՝ ուղղակի կամ անուղղակի ֆինանսական միջոցների տրամադրումը կամ հավաքագրումը այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ այնպիսի գիտակցությամբ, որ դրանք կօգտագործվեն ամբողջովին կամ մասամբ ահաբեկչության կատարման համար ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով: Այս դրույթը ներդաշնակեցված է ՄԱԿ-ի «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»<sup>556</sup> և ԵՄ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիաների հետ:

Բացի ահաբեկչությունից, այլ հանցագործություն է նաև ահաբեկչական խմբերին անդամակցելը: Գերմանական օրենսդրությունը թույլ է տալիս պատժել ոչ միայն ԳԴՀ սահմաններում գործող ահաբեկչական խմբավորումների անդամներին դրանց անդամակցելու, այլև արտասահմանյան ահաբեկչական խմբավորումներին անդամակցելու համար: Եթե միջազգային հանցագործությունների դեպքում պետք է որևէ հատուկ գործողություն լինի, ապա, համաձայն Գերմանիայի քրեական օրենսգրքի 129a և b հոդվածների, արտերկրում ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը, դրանց անդա-

---

<sup>556</sup> St' u, օրինակ, UN Convention for the Suppression of the Financing of Terrorism 1999, COE Convention on Laundering, Search, Seizure and Confiscation of the Proceeds from Crime and on the Financing of Terrorism, 2005:

մակցելը կամ աջակցելը բավարար են քրեական հետապնդման համար: Ըստ այդմ՝ մեղադրյալի և կազմակերպության միջև կապի առկայությունը բավարար է պատիժը իրականացնելու համար:

Մինչև 2015 թ. փախստականների ճգնաժամը և հակամարտության գոտիներից գերմանացիների վերադարձը այս հոդվածները գերմանական իրավական պրակտիկայում դերակատարություն չունեին: Ներկայումս Գերմանիայում փախստականների ներհոսքը, ինչպես նաև գերմանացիների օտարերկրյա ահաբեկչական միավորումներին ակտիվ մասնակցելը հանգեցրին նրան, որ այդ երկրի իրավապահ մարմինները ակտիվորեն սկսեցին կիրառել վերոհիշյալ հոդվածները: Այն դեպքերում, երբ մեղադրող կողմը չունի բավարար ապացույցներ՝ միջազգային հանցագործությունների հիման վրավարույթ հարուցելու համար, զգալիորեն ավելի հեշտ է պարզել մեղադրյալի կապը ահաբեկչական խմբավորման կամ կազմակերպության հետ: Գերմանիայի քրեական օրենսգրքի 129b հոդվածի շրջանակներում հարուցված առաջին գործում սահմանվեց, որ «Իսլամական պետությունը» օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություն է, իսկ այդպիսի կազմակերպությունների անդամների նկատմամբ կիրառվում է գերմանական քրեական օրենսդրությունը<sup>557</sup>: Ահաբեկչական կազմակերպության անդամ է համարվում յուրաքանչյուր ոք, ով ինտեգրվում է կազմակերպությանը և դրանով ենթարկվում է դրա կամքին ու ակտիվորեն նպաստում է դրա նպատակներին: Սա իրավական տարածք է, որն ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր անդամակցել են «Իսլամական պետությանը», ինչպես նաև ներառում է այն երիտասարդ աղջիկներին, որոնք ամուսնացել են «Իսլամական պետության» մարտիկների հետ: Հետևաբար, Գերմանիայի ցանկացած քաղաքացի, որը «Իսլամական պետության» զինյալի նախկին կինն է, ինքնաբերաբար քրեական պատասխանատվություն է կրում Գերմանիայի քրեական օրենսգրքի 129 b հոդվածով: Սակայն իրավապահ մարմինների կողմից օտարերկրյա ա-

---

<sup>557</sup> OLG Celle, Urteil v. 07.12.2015, Az. 2 StE 6/15 - 3, 4-1/15 (2 StE 6/15-3).

հաբեկչական կազմակերպությունների անդամների նկատմամբ քրեական հետապնդումներ սկսելու համար անհրաժեշտ է Գերմանիայի դաշնային արդարադատության նախարարության թույլտվությունը, որը հաշվի առնելով, որ տվյալ խմբավորման կամ կազմակերպության նպատակներն ուղղված են մարդկային արժանապատվության, համամարդկային արժեքների և ժողովուրդների խաղաղ համակեցության դեմ, թույլատրում է օտարերկրյա ահաբեկչական խմբավորման անդամների քրեական հետապնդումը: Այստեղ անհրաժեշտ է նաև հաշվի առնել նախարարության քաղաքական հեռատեսությունը: Միրիայի և Իրաքի իրադարձությունների համատեքստում քրեական պատասխանատվության ենթակա են համարվում հետևյալ կազմակերպությունների անդամները կամ կողմնակիցները.

- «Իսլամական պետություն»,
- «Լիվա Ալ-Իզզա Լիլ-լահ» (նախկին «Քաթիբա Շուհադա ալ-Սիվազ»),
- «Ջաբաթ ալ-Նուսրա»,
- «Լիվա Օվայս Ալ Քորանի Ահրար ալ-Շամ»,
- «Ջաեյշ ալ-Մուհաջիբին վա-լ-Անսար»,
- «Ջանուդ ալ-Շամ»<sup>558</sup>:

### *32.3 Մարդու ազատության դեմ ոտնձգող հանցագործություններ*

Մարդու ազատության դեմ ոտնձգող միջազգային բնույթի հանցագործությունների շարքին են դասվում ինչպես բռնի անհետացումը, այնպես էլ ստրկավաճառությունը, ստրկությունը, կանանց և երեխաների առևտուրը, ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներսբերումը:

---

<sup>558</sup> Sté u G. Petrossian/C. Safferling, Universal Jurisdiction and International Crimes in German Courts First steps towards exercising the principle of complementarity after the entry into force of the Rome Statute, 2021:

Բացի նրանից, որ բռնի անհետացումը մարդկության դեմ հանցագործության շրջանակներում առանձին միջազգային հանցագործություն է, այն նաև ՄԱԿ-ի բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին 2006թ. միջազգային կոնվենցիայի<sup>559</sup> շրջանակներում առանձին միջազգային բնույթի հանցատեսակ է: Մանչանակում է, որ, անկախ մարդկության դեմ հանցագործության հատկանիշների բացակայությունից՝ բռնի անհետացումը նաև առանձին հանցագործություն է: Թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի կոնվենցիան, սակայն ՀՀ քրեական օրենսգրքով դա՝ որպես առանձին հանցատեսակ, չի նախատեսվում: Մակայն բռնի անհետացման հատկանիշներ պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմեր, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ, 133-րդ, 308-րդ, 309-րդ, 348-րդ և 392-րդ հոդվածները:

Բռնի անհետացումը ներառում է բազում իրավունքների խախտումներ: Անհետացումը, որն ազատությունից զրկում է, նաև անձի անձնական անձեռնմխելիության և անվտանգության ոսնահարում է, որի պայմաններում մարդն անգոր է իրականացնել իր իրավունքները<sup>560</sup>: 1994 թ. բռնի անհետացման միջամերիկյան կոնվենցիայի երկրորդ հոդվածը բռնի անհետացումը նկարագրում է որպես պետության շահերից բխող՝ պաշտոնյաների կողմից անձի ազատության զրկում, որին հաջորդում է անհետացած անձի մասին տեղե-

---

<sup>559</sup> Տե՛ս UN International Convention for the Protection of All Persons from Enforced Disappearance, 2006:

<sup>560</sup> IACtHR, *Quinteros v. Uruguay, Bámaca Velásquez v. Guatemala*, 25 November 2000, para. 179, UN A/RES/33/179 of 20 December 1978, Disappeared persons, in relation to UN A/RES/43/173, of 9 December 1988, UN Economic and Social Council resolution 1989/65 of 24 May 1989 on Principles on the Effective Prevention and Investigation of Extra-legal, Arbitrary and Summary Executions, UN A/ RES/44/162 of 15 December 1989 on Human rights in the administration of justice.

կությունների բացակայությունը<sup>561</sup>: Ըստ 2006 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ բռնությամբ անհետացում են համարվում պետության թույլտվությամբ, աջակցությամբ կամ լուռ համաձայնությամբ գործող՝ պետական պաշտոնյաների կամ մի խումբ անձանց կողմից իրականացված ձեռքարկումը, կալանավորումը, առևանգումը կամ ազատագրված ցանկացած այլ տեսակ, որոնց հետևում են ազատագրված փաստի ժխտումը կամ անհետացած անձի ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը թաքցնելը, ինչի պատճառով անհետացած անձը հայտնվում է օրենքի պաշտպանությունից դուրս:

Ինչպես բռնի անհետացման, այնպես էլ ստրկության պարագայում խոսքը ոչ միայն մարդկության դեմ հանցագործության շրջանակներում հանցագործության, այլև միջազգային բնույթի հանցագործության մասին է: Ինչպես նախորդ, այնպես էլ այս հանցագործության պարագայում առանձնացված դեպքերը նույնպես ընկալվում են միջազգային հետապնդման տիրույթում, և ամեննին պարտադիր չէ, որ մարդկության դեմ հանցագործության կոնտեքստուալ հատկանիշները բավարարված լինեն<sup>562</sup>: 1926 թ. «Ստրկության մասին» կոնվենցիան ստրկավաճառության առաջին և հիմնական միջազգային համաձայնությունն է, որով պայքար է սկսվում ստրկավաճառության դեմ<sup>563</sup>: Ստրկությունը կարող է հանդես գալ տարբեր ձևերով, օրինակ՝ սեռական ստրկության<sup>564</sup> կամ հարկադիր աշխատանքի<sup>565</sup>: Այդ տեսակի հանցագործության դեմ պայքարի շրջանակ-

---

<sup>561</sup> OAS, Inter-American Convention on Forced Disappearance of Persons, 1994.

<sup>562</sup> Տե՛ս գլուխ 9:

<sup>563</sup> Slavery Convention Signed at Geneva on 25 September 1926, Supplementary Convention on the Abolition of Slavery, the Slave Trade, and Institutions and Practices Similar to Slavery Adopted by a Conference of Plenipotentiaries convened by Economic and Social Council resolution 608(XXI) of 30 April 1956 and done at Geneva on 7 September 1956.

<sup>564</sup> Տե՛ս *G. Petrossian*, Elements of Superior Responsibility for Sexual Violence by Subordinates, *Manitoba Law Journal*, 42/3, էջ 144-146:

<sup>565</sup> Forced Labour Convention, 1930 (No. 29).

ներում ստորագրվել են միջազգային մի շարք պայմանագրեր, որոնցով սահմանվել են մարդկանց առևտրի դեմ պայքարի առաձևահատկությունները: Դրանց թվին են դասվում ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող արձանագրությունը, «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին»<sup>566</sup>, ինչպես նաև «Մարդկանց շահագործման դեմ պայքարի մասին» ԵՄ 2005 թ. կոնվենցիաները<sup>567</sup>: Այս կոնվենցիաների համատեքստում ՀՀ քրեական օրենսգիրքը պարունակում է 132-րդ հոդվածը, որը սահմանում է, որ թրաֆիքինգը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով շահագործման նպատակով մարդուն հավաքագրելն է, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը: ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածի ա կետի ներդաշնակեցումն է:

Մարդու ազատության դեմ ոտնձգող միջազգային բնույթի հանցագործությունների շարքին է դասվում նաև միգրանտների անօրինական ներսբերումը: Թեև շատ դեպքերում այն կատարվում է այդպես ասած «տուժողի» համաձայնությամբ, այնուհանդերձ այս հանցագործությունն ուղղված է ոչ միայն միգրանտի, այլև պետություն-

---

<sup>566</sup> UN Protocol to Prevent, Suppress and Punish Trafficking in Persons Especially Women and Children, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime 2000 (Palermo Protocol).

<sup>567</sup> CoE, Convention on Action against Trafficking in Human Beings 2005.

ների ինքնիշխանության և բարեկեցության դեմ<sup>568</sup>: Այս հանցագործությունը չի քրեականացնում անօրինական եղանակով սահմանն անցած միգրանտներին, այլ վերաբերում է այն անձանց, որոնք անօրինական ճանապարհով ներմուծում են միգրանտներին: Վերջիններին ապօրինի ներսրբերումը նշանակում է (smuggling of migrants) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու համար անձի անօրինական մուտքը պետություն, որի քաղաքացի կամ մշտական բնակիչ չէ<sup>569</sup>:

#### *32.4 Տնտեսական հանցագործություններ*

Միջազգային բնույթի հանցագործությունների շարքին են դասվում տնտեսական այն հանցագործությունները, որոնք վնաս են հասցնում ոչ միայն մեկ պետության հասարակական և տնտեսական շահերին, այլև առհասարակ համամարդկային արժեքներին և պետությունների բնականոն զարգացմանը: Դրանց շարքին են դասվում փողերի լվացումը, կոռուպցիան և դրամի կեղծումը:

Ինչպես ծովահենության դեմ, այնպես էլ միջազգային բնույթի տնտեսական հանցագործությունների դեմ բոլոր պետությունների պայքարն ավելի քան անհրաժեշտ է նրա համար, որ միջազգային տնտեսական զարգացումը չենթարկվի հարձակումների և խեղումների, որովհետև դրանից տուժում է ոչ միայն մեկ տնտեսական և պետական համակարգ, այլև ողջ միջազգային տնտեսությունը: Դա է պատճառներից մեկը, որ այդ գաղափարի շուրջ միջազգային համագործակցությունը և ազգային քրեական հետապնդումը միջազգայնորեն համաձայնեցված են: Թեպետ այս հանցագործությունների դեմ պայքարում ներգրավված են մեծ քանակությամբ պետություններ, այնուամենայնիվ դեռևս կան երկրներ, որոնցում նման հանցագործ-

---

<sup>568</sup> Տե՛ս *P. Campana*, Migrant Smuggling in M. Natarajan, International and Transnational Crime and Justice, 2019, էջ 24:

<sup>569</sup> Protocol against the smuggling of migrants by land, sea and air, supplementing the UN convention against transnational organized crime 2000.

ծությունների դեմ պայքարը ոչ միայն մատնված է անգործության, այլև դրանք ստանում են պետական օժանդակություն:

Թեև կոռուպցիան հնագույն հանցագործություններից է, սակայն կոռուպցիայի դեմ պայքարն այսօր նոր թափ է հավաքում ժամանակակից իրավական գործիքների միջոցով: Դա պայմանավորված է նրանով, որ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում շուկայի ազատականացմամբ ստեղծվեցին ավելի լայն հնարավորություններ անհատական տնտեսությունը և սեփական նախագծերը արագ զարգացնելու համար: Ուստի այդ զարգացմանը զուգահեռ զարգացավ նաև կոռուպցիան՝ որպես «speed-money» արագ գումար և շահույթ սպահովելու միջոց<sup>570</sup>: 1993 թ. ստեղծված «Transparency International» միջազգային հասարակական կազմակերպությունը փորձում էր պետություններին համոզել միջազգային պայքար սկսելու կոռուպցիայի դեմ, և միայն երեք տարի անց ստեղծվեց առաջին տարածաշրջանային միջազգային համագործակցությունը կոռուպցիայի դեմ: Ինտերամերիկյան հակակոռուպցիոն կոնվենցիան (1996 թ.)<sup>571</sup> դարձավ կոռուպցիայի դեմ առաջին իրավական գործիքը՝ իր 6-րդ հոդվածի (ա) և (բ) կետերով սահմանելով, որ կոռուպցիոն գործողություն են համարվում պետական պաշտոնյայի կամ հասարակական գործառույթներ իրականացնող անձի կողմից իր հանրային գործառույթների կատարման կամ անգործության դիմաց ուղղակի կամ անուղղակիորեն դրամական արժեք ունեցող ցանկացած օգուտի, ինչպիսիք են՝ նվեր, խոստում կամ առավելություն, իր կամ այլ անձի, սուբյեկտի համար միջնորդությունը կամ ընդունումը, առաջարկությունը կամ տալը: Ինտերամերիկյան տարածաշրջանային կոնվենցիային հաջորդեց ԵՄ կոռուպցիայի մասին քրեական իրա-

---

<sup>570</sup> Տե՛ս *M. Kubiciel, A.C. Rink, The UN Convention against Corruption and its Criminal Law Provisions in P. Hauck, S. Peterke, International Law and Transnational Organised Crime, 2016, էջ 219-221:*

<sup>571</sup> OAS, Inter-American Convention against Corruption, 1996:



վունքի 1999 թ. կոնվենցիան<sup>572</sup>: ԵՄ կոնվենցիան ոչ միայն սահմանեց կոռուպցիայի տեսակները, այլև ստեղծեց առանձին հանձնաժողով, որն ուսումնասիրություններ է իրականացնում անդամ պետությունների պարտականությունների վերաբերյալ<sup>573</sup>: Տարածաշրջանային հակակոռուպցիոն գործիքները հիմք դրեցին միջազգային ունիվերսալ հակակոռուպցիոն պայմանագրի ստեղծմանը: 2003թ. ընդունվեց ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան<sup>574</sup>: Մինչ 2020 թ. 186 պետություններ միացել են կոնվենցիային և ըստ այդմ՝ պարտավորվել պայքարել կոռուպցիայի դեմ: Կոնվենցիայի 71 հոդվածներով հակակոռուպցիոն կոնվենցիան ոչ միայն սահմանում է կոռուպցիայի տարրերը, այլև անդամ պետությունների կողմից իրականացվելիք կանխարգելիչ քաղաքականության անհրաժեշտությունը: Միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետությունը քրեական օրենսգրքի 200-րդ, 311-րդ, 312-րդ 313-րդ, 350-րդ հոդվածներով սահմանել է կոռուպցիայի դեմ պայքարը:

Միջազգային բնույթի տնտեսական հաջորդ հանցագործությունը փողերի լվացումն է, որը, ինչպես և կոռուպցիան, ժամանակակից թվային գործիքների միջոցով լայն տարածում է ստանում: Շուկայի և սահմանների ազատականացումը հանգեցնում է զուգահեռ քրեական տարրերի տարածմանը: Փողերի լվացումը՝ որպես առանձին տնտեսական հանցագործություն, ուղղակիորեն և անուղղակիորեն կապված է ինչպես ահաբեկչության ֆինանսավորման, այնպես էլ թմրանյութերի և զենքի անօրինական առևտրի, նաև այլ տնտեսական և կիբեռնահանցագործությունների հետ: Միննույն ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ փողերի լվացման դեմ պայքարը չի ա-

---

<sup>572</sup> CoE, Criminal Law Convention on Corruption, 1999, տե՛ս նաև CoE Additional Protocol to the Criminal Law Convention on Corruption, 2003:

<sup>573</sup> GRECO, The Group of States against Corruption.

<sup>574</sup> UN Convention against Corruption, 2003.

ռանձնանում յուրատեսակ իրավական գործիքակազմով<sup>575</sup>, այլ կերպ ասած՝ փողերի լվացման դեմ առանձին կոնվենցիա գոյություն չունի: Միջազգային բնույթի այլ հանցագործությունների վերաբերյալ կոնվենցիաները պարունակում են դրույթներ նաև փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ՝ պարտավորեցնելով անդամ պետություններին առանձին միջազգային բնույթի հանցագործությունների շրջանակում մշակել փողերի լվացման դեմ ազգային ռազմավարություն<sup>576</sup>: Փողերի լվացման դեմ պայքարի միջազգային գործիքներից են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի 7-րդ, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 14-րդ հոդվածները, որոնք պարտավորեցնում են անդամ պետություններին պայքարել այս հանցատեսակի դեմ՝ ստեղծելով բանկերի և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների, իսկ անհրաժեշտության դեպքերում նաև այլ՝ դրամական միջոցների լվացման տեսանկյունից հատկապես խոցելի համարվող մարմինների նկատմամբ կարգավորիչ և վերահսկիչ համընդգրկուն ներքին ռեժիմներ<sup>577</sup>: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի՝ փողերի լվացում է համարվում հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),

---

<sup>575</sup> Տե՛ս «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» կոնվենցիա (1990 թ.), CoE, Convention on Laundering, Search, Seizure and Confiscation of the Proceeds from Crime, 1990:

<sup>576</sup> Տե՛ս *T. Obokata*, *Transnational Organised Crime in International Law*, 2010, էջ 42:

<sup>577</sup> Տե՛ս CoE, Convention on Laundering, Search, Seizure and Confiscation of the Proceeds from Crime and on the Financing of Terrorism 2005, *N. Boister*, *An Introduction to Transnational Criminal Law*, 2012, էջ 105, նաև՝ եվրոպական իրավական գործիքները: Directive 1/308/EEC on prevention of the use of the financial system for the purpose of money laundering, OJ L166/77, Joint Action 98/699/JHA on money laundering, the identification, tracing, freezing, seizing and confiscation of instrumentalities and the proceeds of crime, OJ L333/1:

ինչը նպատակ է ունեցել թաքցնելու կամ խեղաթյուրելու այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակելու որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը, կամ տիրապետելը, կամ օգտագործելը, կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)<sup>578</sup>:

Միջազգային բնույթի տնտեսական հանցագործությունների շարքին են դասվում նաև կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը, ինչը հնագույն հանցատեսակ է: 89 պետություններ միացել են կեղծ փողերի դեմ պայքարի 1929 թ. միջազգային կոնվենցիային: Ժամանակակից իրավական միջազգային այլ գործիքներ գոյություն չունեն: Թեև երկկողմ հարկման միջազգային պայմանագրերը հիմնականում պարունակում են դրույթներ կեղծ փողերի դեմ պայքարի մասին, սակայն պետությունները քրեականացնող պարտավորություններ կրկնակի հարկման մասին երկկողմ պայմանագրերով չեն ստանձնում<sup>579</sup>: ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածով քրեական պատժի է հանգեցնում իրացնելու նպատակով կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը կամ պահելը կամ դրանք իրացնելը:

Մտավոր սեփականությանն ուղղված հանցագործությունների դեմ պայքարը ևս գտնվում է միջազգային ուշադրության կենտրոնում: Զարգացող թվային միջոցներով հարաբերականորեն ավելի հեշտ է ոտնահարել մտավոր սեփականության իրավունքները: Ըստ այդմ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ մտավոր սե-

---

<sup>578</sup> Տե՛ս նաև *N. Boister, An Introduction to Transnational Criminal Law*, 2012, էջ 102:

<sup>579</sup> Տե՛ս *նույն տեղը*, էջ 122:

փականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի 61-րդ հոդվածով նախատեսված են քրեական այն գործողությունները, որոնք պետությունները պարտավոր են կիրառել հեղինակային իրավունքի ոսնահարման պարագայում<sup>580</sup>:

### *32.5 Կիբեռհանցագործություններ*

Ինչպես նշվեց, թվային միջոցների զարգացմանը համընթեք զարգանում են նաև հանցագործությունները, որոնց պարագայում համակարգչային հնարավորությունները օգտագործվում են որպես գործիք: Հայտնի էլեկտրոնային շուկաներին զուգահեռ զարգանում են անօրինական շուկաները, որտեղ հնարավոր է կատարել այնպիսի ապրանքների կամ ծառայությունների պատվերներ կամ աճուրդներ, որոնք անհնար է օրինական ճանապարհով ձեռք բերել: Դարձնելով, որը թաքնված ցանց է անօրինական կամ ընդհատակյա գործարքների համար, օրեցօր վտանգում է պետությունների անվտանգության համակարգը: Թեև տարածաշրջանային մակարդակում գոյություն ունի որոշակի փոխըմբռնում կիբեռհանցագործությունների վերաբերյալ<sup>581</sup>, միջազգային մակարդակում այն բացակայում է: Միջազգային կոնվենցիա կիբեռհանցագործությունների վերաբերյալ

---

<sup>580</sup> Marrakesh Agreement Establishing the World Trade Organization, Annex 1C, 15 April 1994, 1867 UNTS3, in force 1 January 1995.

<sup>581</sup> St u Directive 2011/93/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on combating the sexual abuse and sexual exploitation of children and child pornography, and replacing Council Framework Decision 2004/68/JHA, Directive 2013/40/eu of the European Parliament and of the Council of 12 August 2013 on attacks against information systems and replacing Council Framework Decision 2005/222/JHA, Proposal for a Directive Of The European Parliament And Of The Council laying down harmonised rules on the appointment of legal representatives for the purpose of gathering evidence in criminal proceedings, Directive (EU) 2019/713 of the European Parliament and of the Council of 17 April 2019 on combating fraud and counterfeiting of non-cash means of payment and replacing Council Framework Decision 2001/413/JHA:

մինչ օրս գոյություն չունի<sup>582</sup>: Սա պայմանավորված է բազում խնդիրներով և անհամաձայնություններով, ինչպես նաև պետությունների միջև վստահության պակասով: Այս ամենի հետևանքով պետությունները չեն համաձայնում իրար հետ կարգավորել օրեցօր զարգացող ոլորտը: Կիբեռանցագործությունների շուրջ միջազգային կարգավորումների բացակայության վառ օրինակ են նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտում ոսնձգությունները: Իրավական միակ գործիքը, որը մինչ օրս որոշակիորեն սահմանում է կիբեռանցագործությունների ոլորտը, «ԵՄ կիբեռանցագործությունների մասին» 2001 թ. կոնվենցիան է<sup>583</sup>: Այն իր 48 հոդվածներով մակերեսորեն կարգավորում է այսօր արդեն հարաբերականորեն հնացած ոլորտը՝ մասնավորապես անդրադառնալով տեղեկատվական համակարգ առանց թույլտվության մուտք գործելուն (hacking / access offences), համակարգչային խարդախություններին (use offences), բովանդակությանն առնչվող հանցագործություններին (content offences)<sup>584</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի 251-257-րդ հոդվածները առնչվում են համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին:

### *32.6 Ձենքի և թմրանյութերի անօրինական առևտուրը*

Ձենքի և զինամթերքի, ինչպես նաև թմրանյութերի անօրինական առևտուրը նույնպես դասվում են միջազգային բնույթի հանցագործությունների շարքին, որոնց դեմ պայքարը կարևորագույններից

---

<sup>582</sup> Տե՛ս UNGA Countering the use of information and communications technologies for criminal purposes Report of the Third Committee, նաև՝ *S. Stolton*, UN backing of controversial cybercrime treaty raises suspicions, 23.01.2020, <https://www.euractiv.com/section/digital/news/un-backing-of-controversial-cybercrime-treaty-raises-suspicions/>:

<sup>583</sup> CoE, Convention on Cybercrime, 2001:

<sup>584</sup> Տե՛ս *G. Urbas*, Legal Perspectives on Cybercrime, Research Handbook on Transnational Crime, 2019, էջ 300:

է: Զենքի և թմրանյութերի անօրինական առևտրի դեմ միջազգային համատեղ պայքարն անհրաժեշտ է, որպեսզի չխաթարվի միջազգային բարեկեցությունը:

Հետաստըպատերազմյան ժամանակաշրջանում, մասնավորապես Խորհրդային Միության փլուզումից հետո, ԽՍՀՄ տարածքում սառը պատերազմի տարիներին կուտակված զենքը տարբեր հանցավոր խմբավորումների միջոցով անօրինական ճանապարհներով դարձավ առևտրի օբյեկտ: Տարբեր երկրներում հնչում էին ահազանգեր այն մասին, որ կուտակված զինամթերքը հայտնվում է տարբեր պետությունների ռազմականացված խմբավորումների տիրապետության տակ և դրանով ուղղակի իմաստով սպառնում պետական իշխանությանը: Սրանից ելնելով՝ պետությունները համաձայնության հասան այս ոլորտի միջազգային կարգավորման հարցի շուրջ: Միջազգային իրավական առաջին գործիքը դարձավ Ինտերամերիկյան *զինամթերքի ապօրինի առևտրի* 1997թ. կոնվենցիան<sup>585</sup>: Տարածաշրջանային այս պայմանագիրը նպատակ դրեց կանխելու և պայքարելու հրազենի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և հարակից այլ նյութերի ապօրինի արտադրության ու վաճառքի դեմ: Պայմանագրի հիման վրա ստեղծվեց արդեն ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի շրջանակներում առանձին զենքի ապօրինի առևտրին վերաբերող արձանագրությունը<sup>586</sup>: Այն իր ավելի նեղ կարգավորմամբ<sup>587</sup> թիրախավորում է մաս-

---

<sup>585</sup> OAS, Inter-American convention against the illicit manufacturing of and trafficking in firearms, ammunition, explosives, and other related materials, 1997.

<sup>586</sup> Protocol against the Illicit Manufacturing of and Trafficking in Firearms, Their Parts and Components and Ammunition, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime, 2001.

<sup>587</sup> Արձանագրությունում որոշ զինատեսակներ, ի տարբերություն Ինտերամերիկյան կոնվենցիայի, մասնավորապես պայթուցիկ սարքերը (տնակները) չեն ընդգրկվել միջազգային կարգավորման շրջանակներում:

նավորապես զենքի ապօրինի առևտուրը ոչ պետական (non-state actor) դերակատարների միջև<sup>588</sup>:

Հետսառըպատերազմյան տարիներին միջազգային ուշադրության ծիրում հայտնվեց ինչպես զենքի ապօրինի առևտուրը, այդպես էլ թմրանյութերի ապօրինի վաճառքը: Սակայն, ի տարբերություն զենքի ապօրինի վաճառքի դեմ պայքարի, պետությունները կարողացան ավելի վաղ հասնել միջազգային համաձայնության թմրանյութերի ապօրինի վաճառքին դիմագրավելու հարցում, ինչը պայմանավորված էր հոգեմետ դեղերի և թմրանյութերի լայն տարածմամբ: Թմրամիջոցների մասին 1961 թ. միասնական կոնվենցիայով, փոփոխված «Թմրամիջոցների մասին 1961 թ. միասնական կոնվենցիայի փոփոխությունների մասին» 1972 թ. արձանագրությանը համապատասխան, սահմանվեց բոլոր այն թմրանյութերի ցանկը, որոնք ենթակա են միջազգային հսկողության<sup>589</sup>: 1971 թ. ստորագրվեց նաև «Հոգեմետ նյութերի մասին կոնվենցիան, որով սահմանվեց հսկողություն նաև հոգեմետ նյութերի նկատմամբ<sup>590</sup>: Միջազգային հսկողություն սահմանելուց հետո թմրանյութերի ապօրինի շրջանառությունը քրեականացնելու պարտավորություններ նախատեսելու անհրաժեշտություն առաջացավ<sup>591</sup>: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-276-րդ հոդվածները վերաբերում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարին:

---

<sup>588</sup> Պարամիլիտարիստական կամ հանցավոր խմբավորումների միջև տե՛ս արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետ:

<sup>589</sup> Single Convention on Narcotic Drugs of 1961 as amended by the 1972 Protocol.

<sup>590</sup> Convention on Psychotropic Substances of 1971.

<sup>591</sup> UN Convention against Illicit Traffic in Narcotic Drugs and Psychotropic Substances of 1988.

## ԳԼՈՒԽ 12

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

#### 33. «Միջազգային համագործակցության» հասկացությունն ու տեսակները քրեական գործերի շրջանակներում

Հայտնի է, որ առանց պետությունների միջև սերտ համագործակցության անդրազգային և միջազգային քրեական գործերով հնարավոր չէ հասնել հաջողության: Դրանով է պայմանավորված պետությունների միջև քրեական գործերի շրջանակներում տեղեկություններ փոխանակելու, անհրաժեշտ քրեադատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը: Մակայն պետությունների միջև համագործակցության իրավական համակարգը այդքան դյուրին չէ, որքան առաջին հայացքից է թվում: Նախ անհրաժեշտ է արձանագրել, որ քրեական գործերով համագործակցությունը հիմնվում է միջազգային տարբեր պայմանագրերի դրույթների վրա: Դժվար է պատկերացնել համակարգված միջազգային պայմանագիր, որի շրջանակներում հնարավոր է ցուցակագրել բոլոր այն գործողությունները և համագործակցության եզրերը, որոնք անհրաժեշտ են քրեական գործերի շրջանակներում: Այստեղ պետք է հաշվի առնել համագործակցությունը՝ ըստ տարածքի և ըստ բովանդակության: Ըստ տարածքի՝ համագործակցությունը պայմանավորված է միջազգային այն պայմանագրերի իրավասությամբ, որի անդամն է համագործակցող պետությունը: Ըստ այդմ՝ հնարավոր է քրեական գործերով համագործակցությունը բաժանել երեք տեսակի.

- քրեական գործերով միջազգային համագործակցություն՝ ելնելով ունիվերսալ միջազգային պայմանագրերի դրույթներից,
- ԵՄ և ԵՄ տարածքում քրեական գործերով համագործակցություն՝ ելնելով ԵՄ և ԵՄ պայմանագրերի դրույթներից,



- երկկողմ հարաբերություններում քրեական գործերով համագործակցություն:

Ըստ բովանդակության՝ քրեական գործերով համագործակցությունը պայմանավորված է համագործակության առարկայով, այդ թվում՝

- տեղեկությունների տրամադրումը,
- հանձնումը,
- ձերբակալությունը,
- ապացույցների տրամադրումը կամ հավաքագրումը,
- հանցագործության վկաներին կանչելը և այլն:

### **34. Միջազգային համագործակցություն**

#### *34.1 Միջազգային համագործակցություն պայմանագրի շուրջ*

Ի սկզբանե 13-րդ գլխում մատնանշված անդրազգային կամ միջազգային բնույթի հանցագործությունների միջազգային պայմանագրերը, բացի նրանից, որ սահմանում են անդրազգային հանցագործության հատկանիշները, նաև նախատեսում են այդ հանցագործությունների շուրջ պետությունների սերտ համագործակցություն: Այսպես, «Կոռուպցիայի դեմ» 2003 թ. կոնվենցիայի 44-50-րդ հոդվածներով կոնվենցիայի անդամ պետությունները պարտավոր են համագործակցել քրեաիրավական հարցերով, եթե այդ համագործակցությունը նպատակահարմար է և համապատասխանում է ազգային իրավական համակարգին: Նշյալ համագործակցությունն ընդգրկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հանձնումը, դատապարտված անձանց փոխանցելը, փոխադարձ իրավական օգնությունը, քրեական վարույթի փոխանցումը, համագործակցությունը իրավապահ մարմինների միջև, համատեղ քննությունները և քննության հատուկ մեթոդները: Նույնպիսի սերտ համագործակցության պահանջ է դրված «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 2000 թ. կոնվենցիայի 12-30-րդ հոդվածներով, որոնք մասնավորապես սահմանում են այն ընթացակարգերը, թե ինչպես պետք է տեղի ունենա

պետությունների միջև համագործակցությունը բռնագրավման, հանձնման և փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերելու շուրջ: Օգնությունը ներառում է նաև քննության հատուկ մեթոդներ, համատեղ քննություններ, դատվածության մասին տվյալների փոխանակում, քրեական վարույթի փոխանցում, վկաների պաշտպանվածություն, տուժողների օգնություն և նրանց պաշտպանություն, ինչպես նաև միջոցառումներ, որոնք ուղղված են հանցավորության կանխարգելմանը: Այնուհանդերձ այս ամենը պետք է դիտարկել իբրև զուտ մեկ միջազգային ունիվերսալ պայմանագրի առարկայի շրջանակներում քրեական գործերով համագործակցություն: Ըստ այդմ՝ այս համագործակցությունը չի կարող տեղի ունենալ միջազգային պայմանագրի առարկայից դուրս հարցերի կամ քրեական գործերի շրջանակներում:

Նույնպիսի միջազգային համագործակցություն նախատեսված է Հռոմի ստատուտի շրջանակներում, թեև դա վերաբերում է մասնավորապես Միջազգային քրեական դատարանի և անդամ պետությունների միջև համագործակցությանը: Անդամ պետությունները կարող են համագործակցել նաև միմյանց հետ, բայց Հռոմի ստատուտի 9-րդ բաժինը պարտավորեցնում է նրանց ինչպես հետաքննական, այնպես էլ տեղեկությունների տրամադրման և այլ հարցերի շուրջ համագործակցել դատարանի հետ:

### *34.2 Ինտերպոլ*

Քրեական գործերի շրջանակում միջազգային համագործակցության կենտրոնական դերակատարումը վերապահված է Ինտերպոլին՝ քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությանը: Ինտերպոլը, ի տարբերություն միջազգային այլ կազմակերպությունների, հիմնվում է մասնավորապես ոչ թե պայմանագրի, այլ իր սեփական կանոնադրության վրա: Ձևավորվել է 1923 թ. Վիեննայում՝ միջպետական հանձնաժողովի համաձայնագրի հիման վրա<sup>592</sup>, սա-

---

<sup>592</sup> St' u R. Martha, The legal foundation of Interpol, 2010, էջ 21:

կայն Երկրորդ աշխարհամարտի ընթացքում դադարեցրել է գոյությունը այն պատճառով, որ նացիստական Գերմանիան, անեքսիայի ենթարկելով Ավստրիան, Բեռլին էր տեղափոխել Ինտերպոլի գրասենյակը, ուստի հակահիտլերյան կռալիցիայի անդամները դադարեցրել էին իրենց անդամությունը Ինտերպոլին: Պատերազմից հետո նախաձեռնվեց Ինտերպոլի վերականգնումը: Այսօր Ինտերպոլը 1953 թ. իր կանոնադրությամբ ֆրանսիական մասնավոր իրավունքի շրջանակներում գրանցված հասարակական կազմակերպություն է: Թեև 194 պետություններ Ինտերպոլի շրջանակներում իրականացնում են միջազգային համագործակցություն, այնուամենայնիվ չկա միջազգային որևէ պայմանագիր այս կազմակերպության վերաբերյալ, որը վավերացվեր որևէ պետության կողմից<sup>593</sup>:

Կազմակերպության գործունեության հիմնական նպատակը, ըստ կանոնադրության 2-րդ հոդվածի, անդամ պետությունների համար տեղեկատվական ցանց ապահովելն է՝ հեշտացնելով պետությունների միջև միջազգային համագործակցությունը:

Իր գործառույթների շրջանակում հայտնի է Ինտերպոլի միջազգային ծանուցման համակարգը<sup>594</sup>: Ազգային ոստիկանությունն օգտագործում է ծանուցագրերը՝ այլ երկրներում իրավապահ մարմիններին հնարավոր սպառնալիքների մասին ահազանգելու կամ հանցագործությունների բացահայտման հարցում օգնություն խնդրելու համար: Տարբեր գույներով նշանակված այդ ծանուցումները ունեն տարատեսակ բովանդակություն:

- Կարմիր ծանուցում (red notice) – հանձնման նպատակով ձերբակալման կամ ժամանակավոր ձերբակալման խնդրանք:

---

<sup>593</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 24 սեպտեմբեր 1992 թ. Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությանը (Ինտերպոլ) Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին թիվ 485 որոշումը:

<sup>594</sup> Տե՛ս International Notice System, 2012:

- Կապույտ ծանուցում (blue notice) – հանցագործության հետ կապված անձի ինքնության կամ գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու խնդրանք:
- Կանաչ ծանուցում (green notice) – նախագոյնացումներ և դատաբժշկական տեղեկատվություն տրամադրելու համար հանցագործություններ կատարած անձանց վերաբերյալ խնդրանք:
- Դեղին ծանուցում (yellow notice) – անհետ կորածներին գտնելու խնդրանք կամ ինքնությունը պարզելու խնդրանք:
- Սև ծանուցում (black notice) – անհայտ անձանց մարմինների վերաբերյալ տեղեկատվություն որոնելու խնդրանք:
- Նարնջագույն ծանուցում (orange notice) – նախագոյնացում է ոստիկանությանը և միջազգային այլ կազմակերպություններին թաքնված զենքի, փաթեթավորված ռումբերի կամ այլ վտանգավոր նյութերի հնարավոր սպառնալիքների մասին:
- Մանուշակագույն ծանուցում (purple notice) – հանցագործների կողմից օգտագործվող ռեժիմի, ընթացակարգերի, առարկաների, սարքերի կամ թաքստոցների մասին տեղեկատվություն տրամադրելու խնդրանք:

Ծանուցումները (notice) և տարածումները (diffusion) պարունակում են տեղեկատվության երկու հիմնական տեսակ՝ անձի ինքնության մանրամասներ (ֆիզիկական նկարագրություն, լուսանկար, մատնահետքեր, անձը հաստատող փաստաթղթի համարներ և այլն), դատական տեղեկատվություն (հանցագործություն, որով անձին մեղադրանք է առաջադրվել, հղումներ այն օրենքներին, որոնցով առաջադրվում է մեղադրանքը կամ դատավճիռ է ձեռք բերվել, հղումներ ձերբակալման հրամանի կամ դատարանի դատավճռի վերաբերյալ և այլն):

### 35. Տարածաշրջանային համագործակցություն

Երկրորդ աշխարհամարտից հետո և՛ քաղաքական, և՛ տնտեսական իմաստով անհրաժեշտ էր Եվրոպայում ստեղծել նոր հիմքեր և կանոնակարգեր պետությունների խաղաղ զարգացման և համագործակցության համար: Այս նպատակով ստորագրվել էին այնպիսի համաձայնագրեր, ինչպիսիք են 1951 թ. Եվրոպական աժխի և պողպատի համայնքի, 1957 թ. Եվրոպական ատոմային էներգիայի համայնքի և 1957 թ. Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման պայմանագրերը, որոնք Եվրոպական միության (ԵՄ) ստեղծման առաջին քայլերն էին: Այս պայմանագրերի առարկան ապահովելու նպատակով անհրաժեշտ էր վերահսկել և ապահովել ոչ միայն ինքնին առևտրային գոտին, այլև այդ գոտու շրջանակներում գործող մարդու իրավունքները, որի համատեքստում էլ ստեղծվել էր Եվրոպական խորհուրդը (ԵԽ): Ըստ այդմ ձևավորվել են Եվրոպական տարածաշրջանային երկու կառույցներ՝ ԵՄ և ԵԽ, որտեղ համագործակցության իրավասությունները տարբեր են: 1990 թ. Շենգենի համաձայնագրով, սահմանների բացմանը զուգահեռ մշակվել և ընդլայնվել է հանցագործությունների վերահսկողությունը, որպեսզի կասեցվեն կամ կանխարգելվեն սահմանների ազատականացմանը զուգընթաց զարգացող և տարածվող հանցագործությունները: Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում նույնպես անդամ պետությունների միջև ձևավորվել է քրեական գործերի շուրջ իրավական համագործակցության պահանջ:

#### *35.1 Եվրոպական համագործակցության սկզբունքներ*

Քրեական գործերի շրջանակում համագործակցությունը խարսխվում է մասնավորապես փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա: Փոխադարձ ճանաչման սկզբունքի արմատները կարելի է գտնել ԵԽ անդամ երկրների՝ համագործակցության մասին երկու

կոնվենցիաներում, որոնք հիմնականում առնչվում են հանձնմանը<sup>595</sup> և քրեական գործերով փոխադարձ իրավական օգնությանը<sup>596</sup>: Այս համատեքստում կարևոր է նշել, որ մինչև Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (1957 թ.) ընդունելը իրավաբանական օգնությունը կարող էր տրամադրվել սուբյեկտիվորեն միայն պետության ինքնիշխանության հիման վրա, այսպես կոչված, հայեցողական որոշումներով: Դրանք հիմնականում ընդունվել են կառավարությունների *pouvoir diplomatique* միջև խորհրդակցությունների միջոցով<sup>597</sup>: Իրավական որոշակիությունը բարելավելու նպատակով քննարկվել է հասարակական կարգի և անվտանգության ոլորտում միջպետական համագործակցության ապահովման կանոնների անհրաժեշտությունը: Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին 1959 թ. եվրոպական կոնվենցիան հաստատեց ԵԽ անդամ պետությունների միջև քրեական գործերով համագործակցության առաջին վստահության գործընթացը: Հատկապես կարևոր է ընդգծել հետևյալ սկզբունքները, որոնք ի հայտ են եկել որպես համագործակցության առանցք.

- Փոխադարձ քրեական պատասխանատվության սկզբունք, ըստ որի՝ հայցող և հայցվող կողմերի օրենսդրությամբ նույն արարքը ենթակա է քրեական պատասխանատվության («Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մաս)<sup>598</sup>:
- Փոխադարձության սկզբունք / *do ut des*<sup>599</sup> (Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 7-րդ մաս, Քրեա-

---

<sup>595</sup> CoE, European Convention on Extradition, 1957.

<sup>596</sup> CoE, European Convention on Mutual Assistance in Criminal Matters, 1959.

<sup>597</sup> Sté u M. Wasmeier, Das Strafrecht der Europäischen Union, 2003, էջ 504:

<sup>598</sup> Sté u B. Hencker, Europäisches Strafrecht, 2015, էջ 55:

<sup>599</sup> Lat. «Ես տալիս եմ, որ դու տաս»:

կան գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մաս):

- Կրկնակի պատժի արգելում / *ne bis in idem* («Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդված):
- Հատկության սկզբունքը, ըստ որի՝ հանձնվող անձը ենթակա է պատասխանատվության, որի համար հայցվել է («Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին մաս):

### *35.2 Շենգենյան համագործակցություն*

1990 թ. հունիսի 19-ին Շենգենի իրականացման համաձայնագրի ստորագրումը ստեղծեց եվրոպական փոխադարձ իրավական օգնության նոր սպեկտր: Համաձայնագիրը նախատեսում է Եվրոպայում ճանապարհորդների մուտքի և ելքի կարգավորում: Սահմանները, որոնք հատում էին ճանապարհորդները, կարելի է բնորոշել երկու եղանակով՝ արտաքին ու ներքին: Շենգենի անդամ պետությունների միջև սահմանները (ներքին սահմանները) այլևս «գոյություն չունենին», բայց նրանց արտաքին սահմանները մնացին որպես սահմաններ ոչ անդամ պետությունների համար՝ ըստ Շենգենի համաձայնագրի 1-ին հոդվածի: Սա ստեղծեց վերահսկողության խնդիր, և առանց դրա հնարավոր չէր դիտարկել անդամ պետությունների միջև տարանցիկ հանցագործությունները: Իսկ առանց դրանց մասին տեղեկությունների փոխանակման հնարավոր չէր լինի կանխարգելել այդ հանցագործությունները բաց սահմանների պարագայում: Այդ պատճառով Շենգենի համաձայնագրի 7-րդ հոդվածը անդամ պետություններին հնարավորություն է տալիս ազատ, առանց որևէ դժվարության ստեղծելու միասնական տեղեկատվական համակարգ: Շենգենի իրականացման համաձայնագիրը լրացնում էր ԵԽ կոնվենցիաները և նպաստում եվրոպական ներքին սահմանների բացակայության դեպքում դատական համագործակցությանը: Շենգենյան համաձայնագրի 50-րդ հոդվածը պարտավորեցնում է կողմերին միմյանց տրամադրել անհրաժեշտ իրավաբանական օգնություն:

Մասնավորապես, դատական մարմինների միջև կապն այսուհետ պետք է իրականացվեր ոչ թե անդամ պետությունների նախարարությունների միջոցով, այլ ուղղակիորեն անդամ պետությունների դատական մարմինների: Շենգենի համաձայնագրի միջոցով համագործակցությունը դյուրացնելու մեկ այլ կարևոր նորարարություն պայմանավորված է Շենգենի տեղեկատվական համակարգի (SIS) ստեղծմամբ<sup>600</sup>, որի պատասխանատուն Ֆրանսիայի կառավարությունն է: Այս առցանց համակարգը պայմանագրային կողմերի համար հեշտացնում է տեղեկատվության հասանելիությունն ու մարդկանց և ունեցվածքի որոնումը (տե՛ս համաձայնագրի 92-րդ հոդվածի 1-ին մասը): Այս նոր համակարգը մեծացրեց անդամ պետությունների միջև վստահությունը՝ հետագա համագործակցության մեթոդները զարգացնելու համար:

### *35.3 ԵՄ համագործակցություն*

Չնայած Եվրոպական համայնքների հիմնադրմանը՝ Եվրոպական միությունը, այնպես, ինչպես այսօր գործում է, հիմնադրվել է 1992 թ. Մասստրիխտի պայմանագրով: Ըստ այդմ՝ Եվրոպական միությունը հիմնվում է եռահենասյուն համակարգի վրա.

1. Եվրոպական համայնքների պայմանագրեր,
2. ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն,
3. արդարադատության և ներքին գործերի շրջանակներում համագործակցություն:

Առաջին հենասյունի համեմատ՝ երկրորդ և երրորդ հենասյունները կարգավորվում էին ԵՄ անդամ պետությունների, այսպես կոչված, միջկառավարական համագործակցության հիման վրա: Եթե առաջին հենասյունը ուներ վերագգային նշանակություն, ապա երկրորդ և երրորդ հենասյունների իրավասության խնդիրները չեն տեղափոխվել վերագգային դաշտ, ԵՄ անդամ պետությունները ինք-

---

<sup>600</sup> Schengen Information System.



նուրույն էին պատասխանատու այդ ոլորտների համար: Երկրորդ հենասյունը, այնուամենայնիվ, հիմք է նախապատրաստել ԵՄ անդամ պետությունների միջև համագործակցությունը կառուցվածքային և ինստիտուցիոնալ դաշտ մտցնելու համար, ինչպես, օրինակ՝ Լիսաբոնի պայմանագրի կնքումը: Երրորդ հենասյունի շրջանակներում ԵՄ անդամ պետությունների ջանքերով ստեղծվել էին հետևյալ կառույցները, որոնք աջակցում էին անդամ պետություններին քրեական գործերով համագործակցության հարցում:

- *Եվրոպոլ* – Եվրոպական ոստիկանությունը, ստեղծվելով 1995 թ.<sup>601</sup>, իր առջև նպատակ է դրել աջակցելու անդամ պետություններին ահաբեկչության և ծանր հանցագործությունների դեմ պայքարում այն պարագայում, երբ ԵՄ երկու կամ ավելի անդամներ ներգրավված են այդ պայքարում:
- *Եվրոպական դատական ցանց* (EJN) – այս ցանցը ծառայում է անդամ պետությունների դատական համագործակցության մեջ անմիջական կապեր հաստատելուն:
- *Եվրոջասթ* (Eurojust) – այս կառույցը ստեղծված է անդամ պետությունների միջև քրեական գործերով իրավական օգնությունը հեշտացնելու նպատակով<sup>602</sup>:
- *ՕԼՄՖ* (European Anti-Fraud Office - OLAF) – կառույցը պատասխանատու է ներքին և արտաքին խարդախություններ-

---

<sup>601</sup> EU, Council Act 26 July 1995 drawing up the Convention based on Article K.3 of the Treaty on European Union, on the establishment of a European Police Office (Europol Convention), տե՛ս նաև լրացումները, Council Act of 27 November 2003 (protocol), Council Act of 28 November 2002 (protocol on joint investigation teams), Council Act of 30 November 2000 (protocol on money laundering), Council Decision of 3 December 1998 (trafficking in human beings), Council Decision of 3 December 1998 (terrorism).

<sup>602</sup> EU, Council Decision of 28 February 2002 setting up Eurojust with a view to reinforcing the fight against serious crime (2002/187/JHA).

րի հետաքննությունների, ինչպես նաև դրանց դեմ պայքարի համար<sup>603</sup>:

- *Եվրոպական դատախազություն (European Public Prosecutor's Office - EPPO)* – հիմնականում պատասխանատու է եվրոպական դատախազությունների միջև աշխատանքները համակարգելու համար<sup>604</sup>:

ԵՄ անդամ պետությունների միջև արտահանձնումը և իրավաբանական օգնությունը համակարգելու նպատակով ստորագրվել են հետևյալ պայմանագրերը.

- 1996 թ. «ԵՄ անդամ պետությունների միջև արտահանձնման պարզեցված ընթացակարգի մասին» ԵՄ կոնվենցիա<sup>605</sup>:
- 2000 թ. «Քրեական գործերով փոխադարձ իրավական աջակցության մասին» ԵՄ կոնվենցիա<sup>606</sup>:

ԵՄ անդամ պետությունների միջև համագործակցությունը խորացնելու համար անհրաժեշտություն էր փոխադարձ ճանաչման սկզբունքի ինտեգրումը համագործակցության համաձայնագրերում: Թեև այդ սկզբունքը որոշակի դժվարություններով ընդունելի է դարձել քաղաքացիական գործերում, այնուամենայնիվ անհրաժեշտություն էր առաջացել այս սկզբունքը նույնպես դարձնելու քրեական

---

<sup>603</sup> 999/352/EC, ECSC, Euratom: Commission Decision of 28 April 1999 establishing the European Anti-fraud Office (OLAF) (notified under document number SEC(1999) 802).

<sup>604</sup> EU, Council Regulation (EU) 2017/1939 of 12 October 2017 implementing enhanced cooperation on the establishment of the European Public Prosecutor's Office ('the EPPO').

<sup>605</sup> EU, Convention on extradition between Member States, Council Act of 27 September 1996, adopted on the basis of Article K.3 of the Treaty on European Union, drawing up the Convention relating to extradition between the Member States of the European Union.

<sup>606</sup> EU, Convention established by the Council in accordance with Article 34 of the Treaty on European Union, on Mutual Assistance in Criminal Matters between the Member States of the European Union - Council Declaration on Article 10(9) - Declaration by the United Kingdom on Article 20.

գործերի շրջանակում համագործակցության անքակտելի մաս: Առաջին անգամ այդ մասին խոսվեց 1999 թ. հոկտեմբերի 15-16-ը Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում՝ Եվրոպական խորհրդի նիստից հետո՝ կարևորելով փոխադարձ ճանաչման սկզբունքը որպես ԵՄ անդամ պետությունների կողմից ինչպես քաղաքացիական<sup>607</sup>, այնպես էլ քրեական գործերում դատական համագործակցության «հիմնաքար»<sup>608</sup>: ԵՄ խորհրդի կարծիքով սկզբունքը մեծ դեր ունի համագործակցությունը հեշտացնելու հարցում այնքանով, որ մեկ պետության ձեռք բերած ապացույցները պետք է ընդունվեն այլ անդամ պետությունների դատարանների կողմից:

1999 թ. Ամստերդամի պայմանագրով ԵՄ-ն և Շենգենյան համաձայնագիրը միավորվեցին՝ այդպիսով նոր հնարավորություններ ստեղծելով երրորդ հենասայան շրջանակներում քրեական գործերի շուրջ համագործակցության համար:

- Անդամ պետությունների միջև ձեռքակալման եվրոպական հրամանի և հանձնման ընթացակարգերի մասին 2002 թ. ո-

---

<sup>607</sup> Փոխադարձ ճանաչման սկզբունքն ի սկզբանե նախատեսվում էր որպես տնտեսական ոլորտի սկզբունք՝ անդամ պետությունների միջև քաղաքացիական գործերում համագործակցությունը ապահովելու համար: ECJ Judgment «Cassis de Dijon» 20.02.1979 թ.: Այս վճռով հաստատվեց, որ ըստ հիմնական տնտեսական ազատությունների (ապրանքների տեղաշարժի ազատություն, Եվրոպական տնտեսական համայնքի պայմանագրի 30-րդ հոդված (այժմ հոդված 34՝ Consolidated versions of the Treaty on European Union and the Treaty on the Functioning of the European Union - Consolidated version of the Treaty on the Functioning of the European Union - Protocols - Annexes - Declarations annexed to the Final Act of the Intergovernmental Conference which adopted the Treaty of Lisbon, signed on 13 December 2007 – Լիսաբոնի պայմանագիր)՝ հնարավոր չէ խտրականություն դնել ներքին և ներմուծվող ապրանքների միջև: Դա նշանակում է, որ Ֆրանսիայում 15-20% ծավալով արտադրված լիկյորները պետք է որպես լիկյոր ճանաչվեն յուրաքանչյուր անդամ պետությունում: Այս վճռով հաստատվեց արտադրանքի ստանդարտների փոխադարձ ճանաչման սկզբունքը՝ ըստ ծագման երկրի սկզբունքի, տե՛ս ECJ 1974, 649, 664 («Cassis de Dijon»):

<sup>608</sup> Տե՛ս [https://www.europarl.europa.eu/summits/tam\\_en.htm](https://www.europarl.europa.eu/summits/tam_en.htm):

որոշմամբ<sup>609</sup> սահմանվեց, որ ցանկացած անդամ պետություն որոշման մեջ նշված հանցագործությունների համար կարող է արձակել ձերբակալման հրաման, որը մյուս անդամ պետությունները պարտավոր են իրականացնել<sup>610</sup>:

- Ֆինանսական տույժերի և վարչական տուգանքների փոխադարձ ճանաչման սկզբունքի կիրառման վերաբերյալ 2005 թ. որոշումը<sup>611</sup>:
- Վճիռների և պրոբացիայի որոշումների փոխադարձ ճանաչման վերաբերյալ 2008 թ. որոշումը<sup>612</sup> :
- Քրեական գործերով օգտագործման համար օբյեկտներ, փաստաթղթեր և տվյալներ ձեռք բերելու համար Եվրոպական ապացույցների մասին 2008 թ. որոշումը<sup>613</sup>:

2009 թ. Լիսաբոնի պայմանագրով երեք հենասյունների համակարգի վերացումը և ԵՄ-ի՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի հաստատումը հանգեցրին քրեական գործերով ավելի սերտ համագործակցության: Այդ առանցքում Լիսաբոնի պայմանագրի 82-րդ հոդվածով արձանագրվեց փոխադարձ ճանաչման սկզբունքը: Դրա իմաստն այն է, որ մեկ անդամ պետությունում կայացված դատական

---

<sup>609</sup> 2002/584/JHA: Council Framework Decision of 13 June 2002 on the European arrest warrant and the surrender procedures between Member States - Statements made by certain Member States on the adoption of the Framework Decision.

<sup>610</sup> Տե՛ս, օրինակ, Պուչդեմոնի նկատմամբ արձակած ձերբակալման Եվրոպական հրամանը, Spain issues European arrest warrant for former Catalan head Puigdemont, <https://www.reuters.com/article/us-spain-politics-catalonia-warrant-idUSKBN1WT1KT>:

<sup>611</sup>EU, Council Framework Decision 2005/214/JHA of 24 February 2005 on the application of the principle of mutual recognition to financial penalties.

<sup>612</sup> EU, Council Framework Decision 2008/947/JHA of 27 November 2008 on the application of the principle of mutual recognition to judgments and probation decisions with a view to the supervision of probation measures and alternative sanctions.

<sup>613</sup> EU, Council Framework Decision 2008/978/JHA of 18 December 2008 on the European evidence warrant for the purpose of obtaining objects, documents and data for use in proceedings in criminal matters.

որոշումը նյութական կամ ձևական առումով պետք է ճանաչվի ցանկացած այլ անդամ պետությունում: Որպես ավանդական փոխադարձ իրավական օգնության առարկա, որը հիմնված էր վերանայման բազմաստիճան համակարգի վրա, փոխադարձ ճանաչման սկզբունքը դյուրացնում է եվրոպական քրեադատաարական գործողությունները: Այնուամենայնիվ, այս դերը հիմնված է անդամ պետությունների միջև ստորագրված պայմանագրերի միջոցով վստահության և համագործակցության զարգացման վրա: Որպես ապրանքների ազատ տեղաշարժի ծագման սկզբունք՝ այն պետք է իրականացվի ինչպես ուղղակիորեն, այնպես էլ մեխանիկորեն, առանց հետագա ստուգումների, որով անդամ պետության յուրաքանչյուր օրոշում կայացված է և կիրառելի է յուրաքանչյուր մյուս անդամ պետությունում:

ԵՄ օրենսդրության մեջ փոխադարձ ճանաչումը ի սկզբանե չի տարածվել հատուկ քրեական իրավունքի վրա: Եվրոպական նախադեպային իրավունքը այն օգտագործել է իբրև ներքին շուկայի հիմնարար ազատությունների իրականացման իրավական գործիք: Ըստ այդմ՝ անդամ պետությունում («ծագման երկիր») թողարկված արտադրանքը ԵՄ անդամ մյուս պետություններում պետք է համարվի ԵՄ արտադրություն և ճանաչվի նրանց սահմաններում այնպես, ինչպես ԵՄ արտադրող պետությունում է ճանաչվում:

Կարևոր է նշել, որ փոխադարձ ճանաչումը կիրառելի էր նաև քրեական ոլորտում մինչև այդ ոլորտում այն պաշտոնապես ամրագրելը: ԵՄ Արդարադատության դատարանը իր 1974 թ. վճռով հաստատել է, որ Բելգիայում չեն կիրառվել ներմուծվող ապրանքների ծագման անհայտ կորած անվանումների վերաբերյալ բելգիական քրեական դատավարական օրենսգրքով նախատեսված միջոցառումները<sup>614</sup>: Յուրաքանչյուր անդամ պետություն ցանկանում էր

---

<sup>614</sup> ECJ, Judgment of the Court of 11 July 1974, „the requirement of a member state of a certificate of authenticity which is less easily obtainable by importers of an authentic product which has been put into free circulation in a regular manner in

պաշտպանել իր շուկան և չբացել այն, ուստի սահմանափակումներն օգտագործվում էին ներմուծվող ապրանքների նկատմամբ: Դասոնվիլի որոշումը ապրանքների ազատ տեղաշարժի ճանապարհի առաջին հանգրվանն էր, որով այդուհետ առևտրի սահմանափակումներն արգելվում էին: Չորս տարի անց Կասիս դե Դիժոնի վճռով ԵՄ Արդարադատության դատարանն ընդգծեց, որ անդամ պետության արտադրանքը պետք է կարողանա վաճառվել և սպառվել ԵՄ ամբողջ տարածքում: Դրանով ԵՄ դատարանը բացառեց ԵՄ-ի սահմաններում ներքին և օտարերկրյա ապրանքների տարբերությունը: Այս դատողությունը բխում էր Դասոնվիլի որոշումից: ԵՄ այլ անդամ երկրներից ապրանքների բաշխման արգելքի միակ սահմանափակումն առնչվում էր շահագրգիռ անդամ պետության հանրային շահին: Մա նշանակում էր, որ ապրանքների բաշխումը չպետք է ռիսկային լինի հանրության անվտանգության և կարգի, առողջության կամ սպառողի կյանքի համար:

#### *35.4 ԱՊՀ համագործակցություն*

Տարածաշրջանային առումով քրեական գործերի շուրջ համագործակցություն է ծավալվել նաև Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) տիրույթում: ԱՊՀ անդամ պետությունների միջև քրեական գործերի վերաբերյալ, ինչպես նաև իրավական օժանդակություն ցուցաբերելու նպատակով կնքվել են հետևյալ պայմանագրերը.

- Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 1998 թ. կոնվենցիա:
- ԱՊՀ մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին 2010 թ. պայմանագիր:

---

another member state than by importers of the same product coming directly from the country of origin constitutes a measure having an effect equivalent to a quantitative restriction as prohibited by the treaty“.

ԱՊՀ կոնվենցիայի 4-րդ բաժինը ներառում է բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված են քրեական գործերով անդամ պետություններին իրավական օգնություն ցուցաբերելու ընթացակարգին: Մասնավորապես կոնվենցիան սահմանում է հանձնման պայմանները (տե՛ս 66-90-րդ հոդվածները), քրեական հետապնդում իրականացնելու պայմանները (91-102-րդ հոդվածները), քրեատատավարական գործողություններ իրականացնելը (103-108-րդ հոդվածները), ինչպես նաև դատավճիռները ճանաչելու պարտավորությունը (109-116-րդ հոդվածները):

ԱՊՀ միջպետական հետախուզման մասին պայմանագրի 15 հոդվածներ նախատեսում են այն պայմանները և ընթացակարգը, թե ինչպես են անդամ պետություններն իրականացնում միջպետական հետախուզում:

### **36. Երկկողմ պայմանագրեր**

Ինչպես արդեն նշվել է նախորդ հատվածներում, միջազգային ունիվերսալ և տարածաշրջանային քրեական գործերով համագործակցության պայմանագրերից զատ՝ պետությունները կարող են այդ համագործակցությունը սահմանել նաև երկկողմ պայմանագրերի հիման վրա: Այդ պայմանագրերի հարցում հիմնական խորհրդատվական դերը ստանձնել է ՄԱԿ-ը: Իր Model Treaty on extradition<sup>615</sup> պայմանագրի օրինակով ՄԱԿ-ը ուղեցույց է դարձել երկկողմ հարաբերություններում եվրոպական կարգավորման հարցում: Եվրոպական երկկողմ պայմանագրերի շարքին են դասվում, օրինակ՝

- ՀՀ-ի և Բուլղարիայի Հանրապետության միջև հանձնման մասին 1995 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև հանձնման մասին 2002 թ. պայմանագիրը,

---

<sup>615</sup> Adopted by General Assembly resolution 45/116, subsequently amended by General Assembly resolution 52/88.

- ՀՀ-ի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև քրեական գործերով իրավական օգնության մասին 2002 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Լիտվայի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան ու քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2003 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև հանձնման մասին» 2007 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին 2007 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին 2010 թ. համաձայնագիրը,
- ՀՀ-ի և Սիրիայի Արաբական Հանրապետության հանձնման մասին 2010 թ. պայմանագիրը,
- ՀՀ-ի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հանձնման մասին 2019 թ. պայմանագիրը:

### **37. Քրեական գործերով համագործակցություն**

Քրեական գործերով համագործակցությունը ներառում է բոլոր այն պարտավորությունները, որոնք կողմերը ստանձնում են քրեական գործերի վերաբերյալ համագործակցության պայմանագրերով: Ելնելով միջազգային պրակտիկայից՝ անհրաժեշտ է առանձնացնել երկու տեսակի երկկողմ պայմանագրեր՝

- քրեական գործերով փոխադարձ օգնություն ցույց տալը,
- հանձնման պայմանների վերաբերյալ համաձայնությունը:



### 37.1 Քրեական գործերով փոխադարձ օգնություն

Ըստ պետությունների ձեռք բերած պայմանավորվածությունների՝ իրավական օգնությունը ներառում է այնպիսի քրեադատավարական գործողություններ, ինչպիսիք են՝

- անձանց հետախուզումը և ճանաչումը,
- դատական ծանուցագրերի և դատական այլ փաստաթղթերի հանձնումը,
- կասկածյալների, մեղադրյալների և ամբաստանյալների հարցաքննումը,
- ապացույցների առգրավումը,
- վկաների ու փորձագետների հարցաքննումը, զննումը, խուզարկությունը և առգրավումը,
- փաստաթղթերի և իրերի առաքումը,
- դատավճիռների կամ դատվածության մասին փաստաթղթերի պատճենների առաքումը,
- հանձնումը,
- դատավճիռների վերաբերյալ տեղեկությունը,
- նորմատիվ ակտերի փոխանակումը:

Կարևոր է նաև հաշվի առնել այն, որ անդամ պետությունները կարող են ընդլայնել իրավական օգնությունը ներառող քրեադատավարական գործողությունների ցանկը, եթե դա չի հակասում իրենց ազգային օրենսդրությանը: Ինչպես արդեն նշվել է վերևում, պետությունը իրավական օգնության հայց կարող է ներկայացնել այլ պետությանը, եթե հայցի առարկան երկու պետությունների օրենսդրությամբ դիտարկվում է որպես հանցագործություն:

Իրավական օգնությունը կարող է մերժվել, եթե այն ցուցաբերելը հակասում է հայցվող պետության օրենքներին, մասնավորապես, եթե հանգեցնում է կրկնակի պատժի արգելքի սկզբունքի խախտման կամ ենթադրում է խտրականություն որևէ հողի վրա, ինչպես նաև եթե կարող է վնասել հայցվող պետության պետականությանը և ինքնիշխանությանը:

### 37.2 Հանձնում

Հանձնման մասին պայմանագրերը քրեական գործերով համագործակցության առանցքային մասն են: Այս պայմանագրերով են որոշվում հանձնման հիմքերը և մերժումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է հանձնմանն առնչվող դատական լայն պրակտիկա՝ սահմանելով այն դեպքերը, երբ հանձնումը հակասում է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: ՀՀ-ն, լինելով ԵԽ անդամ պետություն, անկախ այլ՝ երրորդ պետության հետ (ոչ ԵԽ անդամ) ձեռք բերված երկկողմ պայմանավորաձայնություններից, պարտավորված է առաջնորդվել ՄԻԵԴ դատական պրակտիկայով:

Հանձնումը դատապարտված կամ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվողին մեկ պետությունից այլ պետության հանձնելն է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը ի կատար ածելու նպատակով: Հանձնումը իրականացնելու համար անհրաժեշտ է, որ հանձնվող անձը մեղադրվի կամ դատապարտված լինի այնպիսի արարքների կատարման մեջ, որոնք երկու պետությունների օրենքներով պատժելի են համարվում:

Հանձնումը չի կարող տեղի ունենալ, եթե հայցվող անձը հայցվող պետության քաղաքացի է, եթե հայցվող պետությունը քրեական վարույթ է հարուցել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ է կայացրել, եթե հայցվող անձին ներում է շնորհվել, կամ համաներման արդյունքում ազատ է արձակվել, կա՛մ վաղեմության ժամկետի արդյունքում չի կարող հայցվող անձի նկատմամբ վարույթ սկսել, կա՛մ հայցվում է մասնավոր, տուժողի մեղադրանքի հիման վրա: Հանձնումը մերժելու այլ հիմքերից են, երբ առկա են հավաստի տեղեկություններ այն մասին, որ հայցող պետության դատաքննության ժամանակ չեն պահպանվելու պաշտպանության նվազագույն իրավունքներն այն գործով, որով հայցվող անձը մասնակցում է որպես

մեղադրյալ, կա՛մ ենթարկվելու է խտրականության որևէ հոդի վրա, կա՛մ ենթարկվելու է խոշտանգումների:

Հայցվող պետության հայեցողությանն է տրված մերժելու հանձնման հայցը այն պարագաներում, երբ արարքը կատարվել է հայցվող պետության տարածքում կամ այլ պետության սահմաններում, և այդ պետության տարածքում այն չի համարվում հանցագործություն: Հանձնումը այն հայցող պետություն, որտեղ կիրառելի է մահապատիժը, կարող է տեղի ունենալ միայն երաշխիքների դիմաց, որ հայցվող անձը չի ենթարկվի մահապատիժի<sup>616</sup>:

Հանձման մասին պահանջը, որը պարունակում է տվյալներ հայցվող անձի և իր կատարած արարքի մասին, կարող է ներկայացվել երկու ուղղություններով՝ կա՛մ դիվանագիտական ճանապարհով՝ արտաքին գործերի նախարարությունների մակարդակով, կա՛մ արդարադատության նախարարությունների և դատախազությունների մակարդակով: Հանձնման մասին պահանջն ստանալուն պես հայցվող պետությունը անմիջապես իր ազգային օրենսդրությամբ նախատեսված միջոցներ է ձեռնարկում կալանքը վերացնելու կամ անձի նկատմամբ այլ հարկադրական միջոցներ կիրառելու ուղղությամբ, որի հանձնումը պահանջվում է, եթե հանձնումը ի սկզբանե հնարավոր է, և հանձնման համար որևէ խոչընդոտ առկա չէ: Հանձնումը հաստատելուց հետո հայցվող պետությունը հայցողին ծանուցում է հանձնման վայրի և ժամանակի մասին՝ նշելով հայցվող անձի նկատմամբ կիրառված հարկադրական միջոցների մասին:

---

<sup>616</sup> Տե՛ս ECtHR, *Soering v. UK*, Judgement, 7. July 1989, para. 111:

### 38. Գրականության ցանկ

Abdou M. (2017), Article 17. In M. Klamberg (Ed.), FICHL publication series: no. 29 (2017). Commentary on the Law of the International Criminal Court. Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Abtahi H., & Webb P. (2008), *The travaux préparatoires of multilateral treaties: Vol. 2. The Genocide Convention: The travaux préparatoires.* Boston: Martinus Nijhoff Publishers.

Akande D., & Tzanakopoulos A. (2018). The Crime of Aggression before the International Criminal Court: Introduction to the Symposium. *European Journal of International Law*, 29(3), 829-833.

Akçam T. (2007), *A Shameful act: The Armenian genocide and the question of Turkish responsibility.* New York, N.Y., Metropolitan Books: New York, N.Y.; Holt and Company.

Akhavan P. (2008), *Reconciling Crimes Against Humanity with the Laws of War: Human Rights, Armed Conflict, and the Limits of Progressive Jurisprudence.* *Journal of International Criminal Justice*, 6(1), 21-37.

Aksenova M, (2016). *Studies in international law: v. 63. Complicity in international criminal law.* Oxford, Portland, Oregon: Hart Publishing an imprint of Bloomsbury Publishing Plc.

Aldrich G.H. (2000), *The Laws of War on Land.* *The American Journal of International Law*, 94(1), 42.

Ambos K. (2005), *Joint Criminal Enterprise and Command Responsibility.* *Journal of International Criminal Justice*, 5(1), 159-183.

Ambos K. (2006), *Remarks on the General Part of International Criminal Law.* *Journal of International Criminal Justice*, 4(4), 660-673.

Ambos K. (2016), Article 25. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary (3rd ed.).* München: Beck.

Ambos K. (2002), Other Grounds for Excluding Criminal Responsibility. In A. Cassese, P. Gaeta, & J.R. Jones (Eds.), *The Rome Statute of the International Criminal Court: A commentary*; Volume 1-2. Oxford: University Press.

Ambos K. (2013), *Treatise on international criminal law: General Part* (1. ed.). Oxford: Oxford Univ. Press.

Ambos K. (2018), *Kurzlehrbücher für das Juristische Studium. Internationales Strafrecht: Strafanwendungsrecht, Völkerstrafrecht, Europäisches Strafrecht, Rechtshilfe* (5. völlig überarbeitete und erweiterte Auflage). München: C.H. Beck.

Ba O. (2020), *States of Justice: The Politics of the International Criminal Court*. Cambridge Univ. Press.

Babaian S. (2018), *The International Criminal Court - An International Criminal World Court?: Jurisdiction and Cooperation Mechanisms of the Rome Statute and its Practical Implementation*. Cham: Springer International Publishing.

Badar M. E. (2013), *Studies in International and Comparative Criminal: V. 12. The Concept of Mens Rea in International Criminal Law: The Case for a Unified Approach*. Oxford: Hart Publishing Limited.

Balint J. (2013), *The Ottoman state special military tribunal for the Genocide of the Armenians: Doing government business*. In K. Heller & G. Simpson (Eds.), *The Hidden Histories of War Crimes Trials*. Oxford University Press.

Bankas E. K. (2005), *The State Immunity Controversy in International Law: Private Suits Against Sovereign States in Domestic Courts* (1. Aufl.). s.l.: Springer-Verlag.

Banken R. (2014), *Geschichte der internationalen Beziehungen im 20. Jahrhundert: Vol. 5. Die Verträge von Sèvres 1920 und Lausanne 1923:*

Eine völkerrechtliche Untersuchung zur Beendigung des Ersten Weltkrieges und zur Auflösung der sogenannten "Orientalischen Frage" durch die Friedensverträge zwischen den alliierten Mächten und der Türkei. Berlin: LIT-Verl.

Bantekas I., & Nash S. (2003), *International criminal law* (2. ed.). London: Cavendish.

Barett J. (2010), Raphael Lemkin and "Genocide" at Nuremberg, 1945-1946. In C. Safferling & E. Conze (Eds.), *The Genocide Convention sixty years after its adoption*. The Hague: T.M.C. Asser Press.

Bassiouni M. C. (2008), *Principles of legality in international and comparative law*. In M.C. Bassiouni (Ed.), *International criminal law: Volume III: International enforcement* (3rd ed.). Leiden, the Netherlands: M. Nijhoff Publishers.

Bassiouni M. C. (2011) *Crimes against humanity: Historical evolution and contemporary application*. Cambridge: Cambridge Univ. Press.

Bassiouni M. C. (2013), *International criminal law series: Vol. 1. Introduction to international criminal law* (2. rev. ed.). Leiden: Nijhoff.

Batohi S. (2014), *Africa and the International Criminal Court: a Prosecutor's Perspective*. In G. Werle, L. Fernandez, & M. Vormbaum (Eds.), *International criminal justice series: volume 1. Africa and the International Criminal Court*. Den Haag: T.M.C. Asser Press.

Bergsmo M. (2018), *FICHL publication series: no. 13 (2012). Thematic prosecution of international sex crimes*. Beijing: Torkel Opsahl Academic EPublisher.

Bernhardt R. (2014), *Use of Force · War and Neutrality Peace Treaties (A-M)* (1. Aufl.). s.l.: Elsevier Reference Monographs.

Boas G., Bischoff J. L., & Reid N. L. (2008), *International criminal law practitioner library: volume 2. Elements of crimes under international law*. Cambridge: Cambridge University Press.

Boed R., Bohlander M., & Wilson R. J. (Eds.). (2006), *International and comparative criminal law series. Defense in international criminal proceedings: Cases, materials and commentary*. Ardsley, N.Y: Transnational Publishers.

Bogdan I. (2016,. *Puppet States*. In T.D. Gill (Ed.), *Yearbook of International Humanitarian Law: Vol. 18. Yearbook of International Humanitarian Law, Volume 18, 2015* . The Hague, s.l.: T.M.C. Asser Press.

Boister N. (2012), *An Introduction to Transnational Criminal Law*.

Boot M. (2002), *School of Human Rights Research series: Vol. 12. Genocide, crimes against humanity, war crimes: Nullum crimen sine lege and the subject matter jurisdiction of the International Criminal Court* [Teilw. zugl.: Tilburg, Kath. Univ. Brabant, Diss., 2002]. Antwerpen: Intersentia.

Bowman K. (2017), *Article 25*. In M. Klamberg (Ed.), *FICHL publication series: no. 29 (2017). Commentary on the Law of the International Criminal Court* . Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Brouwer A.-M.d. (2005), *School of Human Rights Research series: Vol. 20. Supranational criminal prosecution of sexual violence: The ICC and the practice of the ICTY and the ICTR* [Zugl.: Tilburg, Univ., Diss., 2005]. Antwerpen: Intersentia.

Brown B. S. (2000), *The Statute of the ICC*. In S.B. Sewall, C. Kaysen, G.J. Bass, B.S. Brown, A. Chayes, R.O. Everett, . . . L. Weschler (Eds.), *The United States and the International Criminal Court: National Security and International Law* . Lanham: Rowman & Littlefield Publishers.

Brownlie I. (1992), *Politics and Principle in Major International Settlements*. In R.S. Pathak (Ed.), *International law in transition: Essays in memory of judge Nagendra Singh*. Dordrecht: Nijhoff.

Bucknill J., & Utjian H. (1913), *The Imperial Ottoman Penal Code*.

Calvo-Goller N. K. (2006), *The trial proceedings of the International Criminal Court: ICTY and ICTR precedents*. Boston: Martinus Nijhoff Publishers.

Campana P. (2019), *Migrant Smuggling in M. Natarajan, International and Transnational Crime and Justice*.

Carruthers B. (2013), *SS terror in the east: The Einsatzgruppen on trial*. Barnsley: Pen & Sword Military.

Cassese A., *The Statute of the International Criminal Court: Preliminary Reflections*. EUR. J. INT'L L., 1999.

Cassese A. (2011), *International criminal law: Cases and commentary*. Oxford: Oxford Univ. Press.

Cassese A. (2013), *Cassese's international criminal law (3. ed.)*. Oxford: Oxford Univ. Press.

Chantail V., *Is There any Blood on my Hands? : Deportation as a Crime of International Law*. *Leiden Journal of International Law*, 2016(29).

Citron R. (2006), *The Nuremberg Trials and American Jurisprudence*. In C. Safferling & H.R. Reginbogin (Eds.), *The Nuremberg Trials: International Criminal Law Since 1945: 60th Anniversary International Conference*. s.l.: De Gruyter Saur.

Clark P. (2010), *Cambridge studies in law and society. The Gacaca courts, post-genocide justice and reconciliation in Rwanda: Justice without lawyers*. Cambridge: Cambridge University Press.



Comer C., & Mburu D. (2016), Humanitarian Law at Wit's End. In T.D. Gill (Ed.), Yearbook of International Humanitarian Law: Vol. 18. Yearbook of International Humanitarian Law Volume 18, 2015. The Hague, s.l.: T.M.C. Asser Press.

Cooper J. (2008), Raphael Lemkin and the struggle for the Genocide Convention. Basingstoke, Hampshire: Palgrave Macmillan.

Cryer R., Friman H., Robinson D., & Wilmschurst E. (2010), An introduction to international criminal law and procedure (2. ed., repr). Cambridge: Cambridge Univ. Press.

Cryer R., Friman H., Robinson D., & Wilmschurst E. (2014), An introduction to international criminal law and procedure (Third edition). Cambridge: Cambridge University Press.

Cryer R., Robinson D., & Vasiliev S. (2019), An introduction to international criminal law and procedure (Fourth edition). Cambridge, United Kingdom: Cambridge University Press.

Dadrian V. N., & Akçam, T. (2011), Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials. New York: Berghahn Books.

Damgaard C. (2008), Individual Criminal Responsibility for Core International Crimes: Selected Pertinent Issues. Berlin, Heidelberg: Springer-Verlag Berlin Heidelberg.

Darcy S. (2007), The procedural aspects of international law monograph series: Vol. 27. Collective responsibility and accountability under international law. Ardsley, N.Y.: Transnational Publishers.

Darcy S. (2018), The Principle Of Legality At The Crossroads Of Human Rights And International Criminal Law. In W. Schabas, M.M. DeGuzman, & D.M. Amann (Eds.), Arcs of global justice: Essays in honour of William A. Schabas . New York: Oxford University Press.

Darge T. (2010), Beiträge zum ausländischen öffentlichen Recht und Völkerrecht: Vol. 216. Kriegsverbrechen im nationalen und internationalen Recht: Unter besonderer Berücksichtigung des Bestimmtheitsgrundsatzes [Zugl.: Heidelberg., Univ., Diss., 2008-2009]. Berlin: Springer.

DeGuzman M. M. (2013), Crimes against Humanity. In W. A. Schabas (Ed.), Routledge handbooks. Routledge handbook of international criminal law . London: Routledge.

Dinstein Y., Non-International Armed Conflicts in International Law.

Dive G., Goes B., & Vandermeersch D. (2013), From Rome to Kampala. Cork: Primento Digital Publishing.

Donat-Cattin. (2016). Article 68. In O. Triffterer & K. Ambos (Eds.), Rome Statute of the International Criminal Court: A commentary (3rd ed.). München: Beck.

Dorsey J., & van Oijen F. (2016), Year in Review. In T.D. Gill, R. Geiß, H. Krieger, T. McCormack, C. Paulussen, & J. Dorsey (Eds.), Yearbook of International Humanitarian Law: Vol. 17. Yearbook of International Humanitarian Law, Volume 17, 2014 (1st ed.). The Hague, s.l.: T.M.C. Asser Press.

Doughty K. (2016), The Ethnography of Political Violence. Remediation in Rwanda: Grassroots Legal Forums. Philadelphia: University of Pennsylvania Press.

Drumbl M. A. (2007), Atrocity, punishment, and international law. Cambridge: Cambridge University Press.

Dubler SC R., & Kalyk M. (2018). Crimes Against Humanity in the 21st Century: Law, Practice and Threats to International Peace and Security. Boston: BRILL.

Elleman, B. (2015), Historical Piracy and its impacts in G. Bruinsma *Histories of Transnational Crime*

El Zeidy M.M. (2008), *The principle of complementarity in international criminal law: Origin, development and practice*. Boston: Martinus Nijhoff Publishers.

Elster J. (2004), *Closing the books: Transitional justice in historical perspective*. Cambridge: Cambridge University Press.

Eser A. (2002), *Individual Criminal Responsibility*. In A. Cassese, P. Gaeta, & J.R. Jones (Eds.), *The Rome Statute of the International Criminal Court: A commentary; Volume 1-2*. Oxford: University Press.

Eser A. (2016), Article 31. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary (3rd ed.)*. München: Beck.

Evans M. D. (1997), *Cambridge studies in international and comparative law: Vol. 6. Religious liberty and international law in Europe*. Cambridge: Cambridge University Press.

Federova M. (2016), *Disclosure of Information as an Instrument Ensuring Equity of Arms in International Criminal Proceedings*. In M. Hiéramente & P. Schneider (Eds.), *Demokratie, Sicherheit, Frieden: Vol. 217. The Defence in International Criminal Trials: Observations on the role of the defence at the ICTY, ICTR and ICC (1st ed.)*. Baden-Baden: Nomos.

Fernández R.A.A., & Estapà J. S. (2017), *Towards a Single and Comprehensive Notion of 'Civilian Population' in Crimes against Humanity*. *International Criminal Law Review*, 17(1), 47-77.

Fisher K. (2012), *Moral accountability and international criminal law: Holding agents of atrocity accountable to the world*. London: Routledge.

Funk T.M., & Massidda P. (2010), *Victims' rights and advocacy at the International Criminal Court*. Oxford, New York: Oxford University Press.

Gaeta P., *The Defence of Superior Orders: The Statute of the International Criminal Court versus Customary International Law*. EJIL, 1999(10).

Gaeta P. (2014), *War Crimes and Other International Core Crimes*. In A. Clapham, T. Haeck, & P. Gaeta (Eds.), *Oxford handbooks in law. The Oxford handbook of international law in armed conflict* (1st ed.). Oxford: Oxford Univ. Press.

Gaeta P. (2015), *Grave Breaches of Geneva Conventions*. In A. Clapham, P. Gaeta, & M. Sassòli (Eds.), *Oxford commentaries on international law. The 1949 Geneva Conventions: A commentary*. Oxford: Oxford Univ. Press.

Galand A.S. (2019), *Leiden studies on the frontiers of international law: Volume 5. UN Security Council referrals to the International Criminal Court: Legal nature, effects and limits*. Leiden, Boston: Brill Nijhoff.

Garrod (2014), *Piracy, the Protection of Vital State Interests and the False Foundations of Universal Jurisdiction in International Law in Diplomacy and Statecraft*, Vol. 25, Issue 2,

GIL A.G., & MACULAN E. (2015). *Current Trends in the Definition of 'Perpetrator' by the International Criminal Court: From the Decision on the Confirmation of Charges in the Lubanga case to the Katanga judgment*. *Leiden Journal of International Law*, 28(2), 349-371.

Gillhoff N. (2002), In H. Roggemann (Ed.), *National security and international criminal justice*. The Hague: Kluwer Law Internat.

Gillies P. (1990), *The law of criminal conspiracy* (2. ed.). Sydney: Federation Press.

Gladius M. (2006), *The International Criminal Court*. Taylor and Francis.

Gordon G., *The Trial of Peter Von Hagenbach: Reconciling History, Historiography, and International Criminal Law*, 2012.

Goy B., Jarvis M., & Pinzauti G. (2016). Contextualizing Sexual Violence and Linking it to Senior Officers. In S. Brammertz & M.J. Jarvis (Eds.), *Prosecuting conflict-related sexual violence at the ICTY*. Oxford: Oxford University Press.

Greppi E. (2013), To what extent do the international rules on human rights matter? In F. Pocar, M. Pedrazzi, & M. Frulli (Eds.), *War Crimes and the Conduct of Hostilities: Challenges to Adjudication and Investigation*. Cheltenham: Edward Elgar Publishing.

Gumpert B., & Nuzban Y., What can be done about the length of proceedings at the ICC? *EJIL:Talk!*, 2019.

Hafetz J. (2018), *Punishing atrocities through a fair trial: International criminal law from Nuremberg to the age of global terrorism*. Cambridge: Cambridge University Press.

Hall C. (2010), In M. Bergsmo (Ed.), *FICHL publication series: Vol. 7. Complementarity and the exercise of universal jurisdiction for core international crimes*. Oslo: Torkel Opsahl Academic EPublisher.

Hall C., & Ambos K. (2016), Article 7. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary (3rd ed.)*. München: Beck.

Hecker (2010), Luft-und Seepiraterie (§ 316c StGB) JA 2009, 674, Cohen, *The Analogy between Piracy and Human Trafficking. A Theoretical Framework for the Application of Universal Jurisdiction*, *Buffalo Human Rights Law Review*, Vol. 16, Article 5.

Hencker B. (2015), *Europäisches Strafrecht*.

Heinemann I. (2013), *Moderne Zeit - Band 2. Rasse, Siedlung, deutsches Blut: Das Rasse- und Siedlungshauptamt der SS und die rassenpolitische Neuordnung Europas* (2nd ed.). Göttingen: Wallstein Verlag.

Heller K. J. (2008), Mistake of Legal Element, the Common Law, and Article 32 of the Rome Statute: A Critical Analysis. *Journal of International Criminal Justice*, 6(3), 419-445.

Heller K. J. (2011), *The Nuremberg Military Tribunals and the origins of international criminal law*. Oxford, New York: Oxford University Press.

Holling J. (2015), *Internationaler Strafgerichtshof und Verbrechenprävention*.

Hovannisian R. G. (1991), The historical dimensions of the Armenian Question: 1878-1923. In R.G. Hovannisian (Ed.), *The Armenian genocide in perspective* (4th ed.). New Brunswick, NJ: Transaction.

IMT (Ed.) (1947), *Trial of the Major War Criminals before the International Military Tribunal. Nuremberg*.

Iverson J. (2014), *Jus Post Bellum and Transitional Justice*. In J. Iverson, C. Stahn, & J.S. Easterday (Eds.), *Jus Post Bellum: Mapping the Normative Foundations*. Oxford, UK: Oxford University Press.

Jacobs S. (2019), The Complicated Cases of Soghomon Tehlirian and Sholem Schwartzbard and Their Influences on Raphaël Lemkin's Thinking About Genocide. *Genocide Studies and Prevention*, 13(1), 33–41.

Jakub Basista (2013), *Massacres*. In A. Mikaberidze (Ed.), *Atrocities, massacres, and war crimes: An encyclopedia*. Santa Barbara, California: ABC-CLIO.

Joyce M. (2015), Duress: From Nuremberg to the International Criminal Court, Finding the Balance Between Justification and Excuse. *Leiden Journal of International Law*, 28(3), 623-642.

Jyrkkiö T, Other Inhumane Acts' as Crimes against Humanity. Helsinki Law Review, 2011(1).

Kaul H.-P. (2010), The International Criminal Court and The Crime of Genocide. In C. Safferling & E. Conze (Eds.), The Genocide Convention sixty years after its adoption . The Hague: T.M.C. Asser Press.

Kenny C. (2017), Prosecuting Crimes of International Concern: Islamic State at the ICC? Utrecht Journal of International and European Law, 33(84), 120-145.

Kévorkian R.H. (2011), The Armenian genocide: A complete history. London, New York: I.B. Tauris.

Kirsch S. (2010), The Two Notions of Genocide, Distinguishing Macro Phenomena and Individual Misconduct. In C. Safferling & E. Conze (Eds.), The Genocide Convention sixty years after its adoption. The Hague: T.M.C. Asser Press.

Kirschke L. (1996), Broadcasting genocide: Censorship, propaganda and state-sponsored violence in Rwanda 1990-1994. London: Article 19.

Kirste S. (2017), Naturrecht und Positives Recht. In E. Hilgendorf & J.C. Joerden (Eds.), Handbuch Rechtsphilosophie . Stuttgart: J.B. Metzler.

Klamberg M. (2017), Article 8. In M. Klamberg (Ed.), FICHL publication series: no. 29 (2017). Commentary on the Law of the International Criminal Court . Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Kraska J. (2011), Contemporary Maritime Piracy. International Law, Strategy, and Diplomacy at Sea

Kreß C., Nulla poena nullum crimen sine lege. Max Planck Encyclopedia of Public International Law.

Kress C., Major Post-Westphalian Shifts And Some Important Neo-Westphalian Hesitations In The State Practice On The International Law

On The Use Of Force. *Journal on the Use of Force and International Law*, 2014.

Kreß C. (2006), The Crime of Genocide under International Law. *International Criminal Law Review*, 6(4), 461-502.

Kubiciel M., Rink A. C. (2016), The UN Convention against Corruption and its Criminal Law Provisions in P. Hauck, S. Peterke, *International Law and Transnational Organised Crime*.

Kuczyńska H. (2015), The accusation model before the International Criminal Court: Study of convergence of criminal justice systems. Cham: Springer.

Kuper L. (1982), *Genocide: Its political use in the twentieth century*. New Haven: Yale U.P.

Lemkin R. (1933), *Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations*.

Lemkin R. (2005), *Axis rule in occupied Europe: Laws of occupation, analysis of government, proposals for redress*. Clark, N.J: Lawbook Exchange.

Letschert R., Staiger I. (2010), Introduction and definitions in R. Letschert, I. Staiger, A. Pemberton, *Assisting victims of terrorism*.

Log S. (2003), *The Practical Applications of Ne Bis in Idem in International Criminal Law*. In S. Yee (Ed.), *International Crime and Punishment*. University Press of America.

Luban D. (2008), *The Legacies of Nuremberg*. In G. Mettraux (Ed.), *Perspectives on the Nuremberg Trial*. Oxford: Oxford Univ. Press.

Lüders B. (2004), *Berliner juristische Universitätschriften Strafrecht: Vol. 20. Die Strafbarkeit von Völkermord nach dem Römischen Statut für den*



Internationalen Strafgerichtshof [Zugl.: Berlin, Humboldt-Univ., Diss., 2003]. Berlin: BWV Berliner Wiss.-Verl.

Madsen F. G. (2009), *Global institutions. Transnational organized crime*. London, New York: Routledge.

Maga T. P. (2001), *Judgment at Tokyo: The Japanese War Crimes Trials*. University Press of Kentucky.

Marauhn T., & Ntoubandi Zacharie (2017), *Armed Conflict, Non-International*. In R. Wolfrum & F. Lachenmann (Eds.), *The Max Planck encyclopedia of public international law: thematic series / published under the auspices of the Max Planck Foundation for International Peace and the Rule of Law ; edited under the direction of Frauke Lachenmann, Rüdiger Wolfrum ; volume 2. The law of armed conflict and the use of force*. Oxford: Oxford University Press.

Marchuk I. (2014), *The Fundamental Concept of Crime in International Criminal Law: A Comparative Law Analysis*. Berlin, Heidelberg, s.l.: Springer Berlin Heidelberg.

Martha R. (2010), *The legal foundation of Interpol*.

Matthäus J. (2008), *The Lessons of Leipzig*. In P. Heberer & J. Matthäus (Eds.), *Atrocities on trial: Historical perspectives on the politics of prosecuting war crimes*. Lincoln, Neb.: Univ. of Nebraska Press.

McDougall C. (2013), *Cambridge studies in international and comparative law: Vol. 98. The crime of aggression under the Rome Statute of the International Criminal Court*. Cambridge: Cambridge University Press.

McKeown T. (2014), *The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant's Philosophy*. SSRN Electronic Journal. Advance online publication. doi:10.2139/ssrn.3054346

Meloni C. (2016), *Command Responsibility, Joint Commission and Control over the Crime in the First ICC Jurisprudence*. In Triestino

Mariniello (Ed.), *International criminal court in search of its purpose and identity*. TAYLOR & FRANCIS.

Melvorn L. (2000), *A people betrayed: The role of the West in Rwanda's genocide*. London: Zed.

Melvorn L. (2006), *Conspiracy to murder: The Rwandan genocide* (Rev. ed.). London: Verso.

Melzer N. (2014), *The principle of distinction between civilians and combatants*. In A. Clapham & T. Haeck (Eds.), *Oxford handbooks in law. The Oxford handbook of international law in armed conflict* (1st ed.). Oxford: Oxford Univ. Press.

Mendes E. (2010), *Peace and justice at the International Criminal Court: A court of last resort*. Cheltenham, UK, Northampton, MA: Edward Elgar.

Milanovic, M. (2011), *Oxford Monographs in International Law. Extraterritorial application of human rights treaties: Law, principles, and policy*. Oxford, New York: Oxford University Press.

Moffett L. (2014), *Routledge Research in International Law. Justice for Victims before the International Criminal Court*. Hoboken: Taylor and Francis.

Moloto B.J... (2009), *Command Responsibility in International Criminal Tribunals*". BJIL, 3(12).

Moran C. F. (2018), *A Perspective on the Rome Statute's Defence of Duress: The Role of Imminence*. *International Criminal Law Review*, 18(1), 154-177.

Nersessian D. L. (2010), *Genocide and political groups* [Zugl.: Oxford, Univ., Diss., 2005]. Oxford: Oxford Univ. Press.

Newman G., Clarke R. (2019), *Terrorism* in M. Natarajan, *International and Transnational Crime and Justice*.

Niemann G. (2014), International Criminal Law Sentencing Objectives. In W. de Lint, M. Marmo, & N. Chazal (Eds.), *Routledge Advances in Criminology. Criminal Justice in International Society*. Hoboken: Taylor and Francis.

Obokata T. (2010), *Transnational Organised Crime in International Law*.

Okoth J.R.A. (2014), *The Crime of Conspiracy in International Criminal Law*. The Hague, s.l.: T.M.C. Asser Press.

Olásolo H. (2005), *Legal aspects of international organization: Vol. 43. The triggering procedure of the International Criminal Court*. Leiden: Nijhoff.

Olásolo H. (2012). *Essays on international criminal justice*. Oxford, Portland, Or: Hart Pub.

Omar al-Bashir arrest request rejected by Malawi. Bbc News, 14 October 2011.

Pendas D.O., *Retroactive Law and Proactive Justice: Debating Crimes against Humanity in Germany, 1945-1950*. *Central European History*, 2010(43).

Pendas D.O. (2006), *The Frankfurt Auschwitz trial, 1963-1965: Genocide, history, and the limits of the law*. Cambridge: Cambridge Univ. Press.

Peters A. (2016), *Cambridge studies in international and comparative law: Vol. 126. Beyond human rights: The legal status of the individual in international law (English edition)*. Cambridge: Cambridge University Press.

Peterson I. (2009), *Berliner juristische Universitätsschriften Strafrecht: Vol. 36. Die Strafbarkeit des Einsatzes von biologischen, chemischen und nuklearen Waffen als Kriegsverbrechen nach dem IStGH-Statut [Zugl.: Berlin, Univ., Diss., 2008-2009]*. Berlin: BWV Berliner Wiss.-Verl.

Petrossian G., Elements of Superior Responsibility for Sexual Violence by Subordinates. *Manitoba Law Journal*, 2019(42(3)).

Petrossian G., Transitional Justice und Armenien. *ADK*, 2019(3).

Petrossian G. (2018), Staatenverantwortlichkeit für Völkermord. *Duncker & Humblot*.

Petrossian G. (2020), Opferbeiteligung auf internatioanler Ebene. In M. Abraham, C. Bublitz, J. Geneuss, & P. Krell (Eds.), *Verletzte im Strafrecht. Nomos*.

Petrossian G., Safferling C. (2021), Universal Jurisdiction and International Crimes in German Courts First steps towards exercising the principle of complementarity after the entry into force of the Rome Statute.

Petrossian G., & Safferling, C. (2021). *Victims before the International Criminal Court Berlin*.

Petrossian G., & Safferling C. (2020b), Wiedergutmachung für Opfer von Makroverbrechen. *MenschenRechtsMagazin*, (25).

Piragoff D.K., & Clarke P. (2016), Article 69. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary* (3rd ed.). München: Beck.

Plomp C. (2014), Aiding and Abetting: The Responsibility of Business Leaders under the Rome Statute of the International Criminal Court. *Utrecht Journal of International and European Law*, 30(79), 4-29.

Politi M., & Nesi, G. (2017), *The International Criminal Court and the Crime of Aggression* (1st ed.). Milton: Taylor and Francis.

Posner E., & Vermeule A., *Transitional Justice as Ordinary Justice*. *Harvard Law Review*, 2003(117).

Prunier G. (2010), *The Rwanda crisis: History of a genocide* (7. impression). London: Hurst.

Radbruch G. (1973), *Fünf Minuten Rechtsphilosophie*. In E. Wolf & H.-P. Schneider (Eds.), *Rechtsphilosophie*. Stuttgart.

Radbruch G. (1990), *Rechtsphilosophie III*. Heidelberg: Müller.

Radziwill Y. (2015), *Cyber-Attacks and the Exploitable Imperfections of International Law*. Leiden: BRILL.

Rastan R. (2011), *Situation and case: Defining the parameters*. In C. Stahn & M. M. El Zeidy (Eds.), *The International Criminal Court and Complementarity* (pp. 421-459). Cambridge: Cambridge University Press.

Rice X., *Chad refuses to arrest Omar al-Bashir on genocide charges*. *The Guardian*, 22 July 2010.

Ritscher C. (2014), *Die Ermittlungstätigkeit des Generalbundesanwalts zum Völkerstrafrecht: Herausforderungen und Chancen*. In C. Safferling & S. Kirsch (Eds.), *Völkerstrafrechtspolitik: Praxis des Völkerstrafrechts*. Berlin: Springer.

Robinson D. (1999), *Defining "Crimes Against Humanity" at the Rome Conference*. *The American Journal of International Law*, 93(1), 43.

Rohan, C.M., & Zyberi, G. (2017). *Defense perspectives in international criminal justice*. Cambridge: Cambridge University Press.

Roth, P. (2014) *Historical overview of transnational crime* in P. Reichel, J. Albanese, *Handbook of Transnational Crime and Justice*,

Roxin, C. *Organisationsherrschaft und Tatentschlossenheit*. *Zeitschrift Für Internationale Strafrechtsdogmatik*, 2006(7).

Roxin, C. (2019). *Täterschaft und Tatherrschaft* (10. Auflage).

Rumin, S. (2007). *Gathering and Managing Information in Vetting Process*. In A. Mayer-Rieckh (Ed.), *Advancing transitional justice series*.

Justice as prevention: Vetting public employees in transitional societies .  
New York: Social Science Research Council.

Ruys T. (2010), Cambridge studies in international and comparative law:  
Vol. 74. "Armed attack" and Article 51 of the UN Charter: Evolutions in  
customary law and practice. Cambridge: Cambridge University Press.

Sadat L., Putting Peacetime First: Crimes Against Humanity and the  
Civilian Population Requirement. *Emory International Law Review*, 2017  
(Vol. 31, No. 197).

Safferling, C., Can Criminal Prosecution be the Answer to Massive Human  
Rights Violations? *German Law Journal*, 2010 (Vol. 5 (12)).

Safferling C. (2008), *Vorsatz und Schuld: Subjektive Täterelemente im  
deutschen und englischen Strafrecht* [Zugl.: Erlangen-Nürnberg, Univ.,  
Habil.-Schr., 2006]. Tübingen: Mohr Siebeck.

Safferling C. (2010), The Special Intent Requirement in the Crime of  
Genocide. In C. Safferling & E. Conze (Eds.), *The Genocide Convention  
sixty years after its adoption* . The Hague: T.M.C. Asser Press.

Safferling C. (2011), *Springer-Lehrbuch. Internationales Strafrecht:  
Strafanwendungsrecht - Völkerstrafrecht - Europäisches Strafrecht*.  
Berlin, Heidelberg: Springer-Verlag Berlin Heidelberg.

Safferling C. (2012), *International criminal procedure*. Oxford: Oxford  
University Press.

Safferling C., & Petrossian G. (2019), *Kriegsverbrecher unter den  
Flüchtlingen: Der Umgang der deutschen Justiz mit verdeckt nach  
Deutschland einreisenden Völkerrechtsverbrechern*. JA, 401.

Safferling C., & Petrossian G. (2021), *Victims before the International  
Criminal Court*.

Safferling C., & Petrossian G. (2020b), Völkerstrafrecht. In E. Hilgendorf, H. Kudlich, & B. Valerius (Eds.), *Handbuch des Strafrechts: Gesamtausgabe*. Heidelberg: C.F. Müller.

Sands P. (2016), *East West street: On the origins of "genocide" and "crimes against humanity"* (First edition).

Satzger H. (2016), *Nomos Lehrbuch. Internationales und Europäisches Strafrecht: Strafanwendungsrecht, europäisches Straf- und Strafverfahrensrecht, Völkerstrafrecht* (7. Aufl.). Baden-Baden: Nomos.

Sayapin S. (2014), *The crime of aggression in international criminal law: Historical development, comparative analysis and present state*. The Hague, The Netherlands, Berlin: T.M.C. Asser Press; Springer.

Schabas W. (2000), *Genocide in international law: The crimes of crimes*. Cambridge: Cambridge Univ. Press.

Schabas W. (2002), *The abolition of the death penalty in international law* (Third edition). Cambridge: Cambridge University Press.

Schabas W. (2008), *War crimes and human rights: Essays on the death penalty, justice and accountability*. London: Cameron May.

Schabas W. (2011), *An Introduction to the International Criminal Court*.

Schabas W. (2016a), Article 6. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary* (3rd ed.). München: Beck.

Schabas W. (2016b), *Oxford commentaries on international law. The International Criminal Court: A commentary on the Rome Statute* (Second edition). Oxford: Oxford University Press.

Schabas W. (2020), *An introduction to the International Criminal Court* (Sixth edition). Cambridge, United Kingdom, New York, NY: Cambridge University Press.

Schabas W., & El Zeidy, M.M. (2016), Article 17. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary* (3rd ed.). München: Beck.

Schabas W., & Fliessbach H. (2003), *Genozid im Völkerrecht* (1. Aufl.). Hamburg: Hamburger Ed.

Schabas W. A. (2018), *The trial of the kaiser* [Elektronische Ressource] (First edition). Oxford: Oxford University Press.

Schense J. (2017), *Assessing Deterrence and the Implications for the International Criminal Court*. In J. Schense & L. Carter (Eds.), *Two steps forward, one step back: The deterrent effect of international criminal tribunals*. Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Segesser D., & Gessler M. (2013), *Raphael Lemkin and the International Debate on the Punishment*. In D.J. Schaller & J. Zimmerer (Eds.), *The origins of genocide: Raphael Lemkin as a historian of mass violence*. London: Routledge.

Sellars K. (2017), *The First World War, Wilhelm II, and Article 227: The Origin of the Idea of "Aggression" in International Criminal Law*. In C. Kreß & S. Barriga (Eds.), *Crime of aggression library. The crime of aggression: A commentary*. Cambridge, United Kingdom: Cambridge University Press.

Sluiter G., Friman H., Vasiliev S., Zappalà S., & Linton S. (2013), *International criminal procedure: Principles and rules*. Oxford: Oxford Univ. Pr.

Solis, G.D. (2016), *The law of armed conflict: International humanitarian law in war* (2nd edition). New York, NY: Cambridge University Press.

Sorenson D. (2016), *Praeger Security International. Syria in Ruins: The Dynamics of the Syrian Civil War*. Westport: ABC-CLIO.



Spiga V., Non-retroactivity of Criminal Law: A New Chapter in the Hisse'ne Habre Saga. *Journal of International Criminal Justice*, 2011(9).

Stahn C. (2019), *A critical introduction to international criminal law*. Cambridge, United Kingdom, New York, NY, USA: Cambridge University Press.

Staub, E. (2006), *The roots of evil: The origins of genocide and other group violence* (17th printing). Cambridge: Cambridge University Press.

Steinke R. (2013), *Fritz Bauer: Oder Auschwitz vor Gericht*. München: Piper ebooks.

Stuke M. (2017), *Jus Internationale et Europaeum: v.130. Der Rechtsstatus des Kriegsgefangenen im bewaffneten Konflikt: Historische Entwicklung und geltendes Recht* (1st ed.). Tübingen: Mohr Siebeck.

Tams C. J. (2005), *Cambridge studies in international and comparative law: Vol. 44. Enforcing obligations erga omnes in international law*. Cambridge: Cambridge University Press.

Tams C. J., Berster L. C., & Schiffbauer B. (2014), *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide: A commentary*. München: Beck.

Taylor T. (2013), *The anatomy of the Nuremberg trials: A personal memoir*. New York: Skyhorse Publishing.

Tent J. F. (2007), *Im Schatten des Holocaust: Schicksale deutsch-jüdischer "Mischlinge" im 3. Reich*. Köln: Böhlau.

Tomuschat C. (2006), *The Legacy of Nuremberg*. *Journal of International Criminal Justice*, 4(4), 830-844.

Triffterer O. (2002), *Causality, a Separate Element of the Doctrine of Superior Responsibility as Expressed in Article 28 Rome Statute?* *Leiden Journal of International Law*, 15(1), 179-205.

Triffterer O., & Ohlin, J. D. (2016), Article 32. In O. Triffterer & K. Ambos (Eds.), *Rome Statute of the International Criminal Court: A commentary* (3rd ed.). München: Beck.

Tsilonis V. (2020), *The Jurisdiction of the International Criminal Court*. Cham: Springer.

Urbas G. (2019), *Legal Perspectives on Cybercrime, Research Handbook on Transnational Crime*.

Vagias M., & Dugard J. (2014), *The territorial jurisdiction of the International Criminal Court*. Cambridge: Cambridge University Press.

van den Herik L. J. (2010), *Developments in international law 0924-5332: V. 53. The contribution of the Rwanda Tribunal to the development of international law*. Leiden, Boston: Martinus Nijhoff Publishers.

van der Berg T., Smeulers A., & Hola B. (2013), *Sixty-five years of international criminal justice*. In D.L. Rothe, J. D. Meernik, & T. Ingadóttir (Eds.), *The Realities of International Criminal Justice*. Leiden: BRILL.

van der Vyver J., *The International Criminal Court And The Concept Of Mens Rea In International CriminalLaw*. U. Miami Int'l & Comp. L. Rev. 57, 2005 (12).

van Schaack B., *Legality & International Criminal Law*. American Society of International Law, 2009(103).

van Sliedregt E. (2012), *Oxford Monographs in International Law. Individual Criminal Responsibility in International Law*. Oxford: OUP Oxford.

van Tonder G. (2018), *SS Einsatzgruppen*. Barnsley, South Yorkshire: Pen & Sword Military.

Vardanyan V. (2017), The Armenian genocide and its influence on the development of Rafał Lemkin's concept'. In A. Bieńczyk-Missala (Ed.), *Civilians in contemporary armed conflict: Rafał Lemkin's heritage*. Warsaw: Warsaw University Press.

Viebig P. (2016), *International criminal justice series: Vol. 4. Illicitly Obtained Evidence at the International Criminal Court* (1st ed. 2016). s.l.: T.M.C. Asser Press.

Villa-Vincencio C. (2004), A Difficult Justice'. In E. Doxtader & C. Villa-Vicencio (Eds.), *To repair the irreparable: Reparation and reconstruction in South Africa*. Claremont: David Philip.

Vos C. de., Somone Who Comes between One Person and Another: Lubanga, Local Cooperation and the Right to a Fair Trial. *Melbourne Journal of International Law*, 2011(12).

Wasek-Wiaderek M. (2000), *Leuven law series: V. 13. The principle of "equality of arms" in criminal procedure under article 6 of the European Convention on Human Rights and its functions in criminal justice of selected European countries*. Leuven: Leuven University Press.

Wasmeier M. (2003), *Das Strafrecht der Europäischen Union*.

Weigend T. (2011), Perpetration through an Organization: The Unexpected Career of a German Legal Concept. *Journal of International Criminal Justice*, 9(1), 91-111.

Weigend T., Should We Search for the Truth, and Who Should Do It. *N.C. J. INT'L L. & COM. REG.*, 2011 (Vol. 36 (2)).

Weill S., Seelinger K. T., & Carlson K. B. (2020), *The president on trial: Prosecuting Hissène Habré* (First edition). Oxford, United Kingdom, New York, NY: Oxford University Press.

Weiss-Wendt A. (2019), The Soviet Union and the Gutting of the UN Genocide Convention. *The American Historical Review*, 124(2), 632-634.

Werle G., & Jeßberger F. (2014), *Principles of international criminal law* (3. ed.). Oxford: Oxford Univ. Press.

Werle G., & Jeßberger F. (2016). *Völkerstrafrecht* (4., überarbeitete und aktualisierte Auflage) (J. Geneuss, B. Burghardt, A. Epik, J. Kuner, V. Nerlich, T. Pielow, & L. Steinl, Trans.). Tübingen: Mohr Siebeck.

Werle G., & Vormbaum M. (2018), *Springer-Lehrbuch. Transitional Justice: Vergangenheitsbewältigung durch Recht*. Berlin, Heidelberg: Springer Berlin Heidelberg.

Wet E. de. (2018), *Referrals to the International Criminal Court Under Chapter VII of the United Nations Charter and the Immunity of Foreign State Officials*. *AJIL Unbound*, 112, 33–37.

Wheeler C. H. (2019), *International criminal law series: volume 13. The right to be present at trial in international criminal law*. Leiden, Boston: Brill Nijhoff.

Wong M. (2015), *Crime of Aggression*. In M. Bergsmo (Ed.), *FICHL publication series: no. 22. Historical origins of international criminal law*. Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Worster W.T., *Deporting Dreamers as a Crime Against Humanity*. *Emory International Law Review*, 2019 (Vol. 33, No. 3).

Yanev L. D. (2018), *International Criminal Law Ser. Theories of Co-Perpetration in International Criminal Law*. Boston: BRILL.

Yves Sandoz, Christophe Swinarski, Bruno Zimmermann. (1987). *Commentary on the Additional Protocols of June 8 1977 to the Geneva Conventions of 12 August 1949*. Geneva: Martinus Nijhoff Publishers.

Zahar A., & Sluiter G. (2008), *International criminal law: A critical introduction*. Oxford: Oxford Univ. Press.

Zimmermann D. (2017), *Article 12*. In M. Klamberg (Ed.), *FICHL publication series: no. 29* (2017). *Commentary on the Law of the*

International Criminal Court. Brussels: Torkel Opsahl Academic EPublisher.

Անուսյան Մ. (2013), Ճանաչում և դատապարտում: Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թթ.), Երևան:

Առաքելյան Ս. (2007), Հանցագործության օբյեկտիվ կողմը / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան (խմբ.), Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան: ԵՊՀ:

Գաբուզյան Ա. (2007), Հանցավորությունը բացառող հանգամանքներ / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան (խմբ.), Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ:

Ղազինյան Գ. (2007), Հանցագործության սուբյեկտիվ կողմը / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան (խմբ.), Քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան: ԵՊՀ:

Փափազյան Ա. (1988), Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:  
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 21.04.2021:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 21.25:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)



ՄԱՍՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2021  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)